ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՇԻՐԱԿԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Աղանյան Թորգոմ Գրիգորի

# ԵՐԿՐԱՇԱՐԺԸ ՎԵՐԱՊՐԱԾՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱԴԱՊՏԱՑՈՒՄԸ

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն

Երևան - 2018

ՀՏԴ 391/395(=19)
ԳՄԴ 63.5 (5 Հ)
Ա 441

Ժողովածուն հրատարակության է երաշխավորել
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի
գիտական խորհուրդը:

Գլխավոր խմբագիր՝
բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Սերգո Հայրապետյան**
Գիտական խմբագիր՝
պատմ. գիտ. թեկնածու **Համլետ Սարգսյան**

Գեղարվեստական ձևավորումը՝ **Լիանա Կոստանյանի**

**Աղանյան Թորգոմ Գրիգորի**

Ա 441 Երկրաշարժը վերապրածների սոցիալ-մշակութային ադապտացումը / Թ. Աղանյան.-Երևան, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, 2018, 228 էջ + ներդիր:

Մենագրությունը նվիրված է 1988 թ. Սպիտակի երկրաշարժը վերապրած Աղետի գոտու բնակչության սոցիալ-մշակութային ադապտացիայի (հարմարվողականության) գործընթացի ուսումնասիրությանը: Առաջին անգամ ազգագրական հետազոտության է ենթարկվել աղետը վերապրած բնակչության փոփոխված իրականությանը հարմարվելու գործընթացն ու դրա հոգեբանական, սոցիոմշակութային, ժողովրդագրական հետևանքները, որոնք բերեցին արժեհամակարգային փոփոխությունների: Ուսումնասիրությունն իրականացվել է ՀՀ Շիրակի և Լոռու մարզերի քաղաքային և գյուղական բնակավայրերի աղետը վերապրած բնակչության ադապտացիոն պրակտիկայի հետազոտության հիման վրա:

Գիրքը նախատեսված է մասնագետների, բուհերի հումանիտար ֆակուլտետների դասախոսների, ուսանողների և ոլորտով հետաքրքրվող անձանց համար:

ՀՏԴ 391/395(=19)
ԳՄԴ 63.5 (5 Հ)

ISBN 978-5-8080-1364-3

© Թորգոմ Աղանյան, 2018
© «ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոն» ՊՈԱԿ, 2018

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
ШИРАКСКИЙ ЦЕНТР АРМЕНОВЕДЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ
SHIRAK CENTRE OF ARMENOLOGICAL STADIES
NATIONAL ACADEMY OF SCIENCES RA

**Аганян Торгом Григорович**

# СОЦИАЛЬНО-КУЛЬТУРНАЯ АДАПТАЦИЯ ПЕРЕЖИВШИХ ЗЕМЛЕТРЯСЕНИЕ

**Torgom Aghanyan**

# SOCIAL AND CULTURAL ADAPTATION OF THE EARTHQAKE SURVIVORS

Ереван 2018 Yerevan

Издательство “Гитутюн” НАН РА “Gitutyun” Publishers NAS RA

# Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ներածություն ……………………………………………………………………………5

**Գլուխ առաջին.**

**Աղետի գոտին մինչ և հետերկրաշարժյան շրջանում**

Աղետի գոտու սոցիալ-տնտեսական, մշակութային և
ժողովրդագրական դրությունը մինչ երկրաշարժը ………………………………..18

Փրկարարական աշխատանքները Աղետի գոտում
և աղետյալներին տրամադրված օգնության ձևերը ………………………………37

Աղետի հետևանքների վերացման տնտեսական,
քաղաքական և սոցիոմշակութային հիմնախնդիրները ……………………………44

**Գլուխ երկրորդ**

**Հարմարվողականության ձևերը**

**բնակչության կենսապահովման մշակույթում**

Աղետի գոտու բնակչության սոցիալ-տնտեսական դրությունը
անկախության տարիներին...........................................................................................56

Անօթևանության և բնակարանային խնդիրները..........................................................89

Միգրացիան որպես ադապտացիոն այլընտրանքային եղանակ..............................102

**Գլուխ երրորդ**

**Հարմարվողականության առանձնահատկություններն**

**աղետյալների սոցիոնորմատիվ մշակույթում**

Ընտանիքի հարմարվողականության առանձնահատկությունները…....................116

Ներընտանեկան հարաբերություններն ու դերային
վարքի փոփոխությունները ..........................................................................................132

Ազգակցական հարաբերությունները..........................................................................170

**Գլուխ չորրորդ.**

**Հարմարվողության ձևերն ու դրսևորումները**

**Աղետի գոտու բնակչության հումանիտար մշակույթում**

Մշակութային էկոլոգիայի և մշակութային ադապտացիայի
խնդիրները հետաղետյան շրջանում.........................................................................175

Արվեստն ու գեղարվեստական արհեստագործությունը հետաղետյան
Գյումրու բնակչության հարմարվողականության գործընթացներում.......................181

**Եզրակացություններ**.......................................................................................................197

**Ամփոփում (ռուսերեն)** ....................................................................................................203

**Ամփոփում (անգլերեն)** ...................................................................................................208

**Սկզբնաղբյուրների և գրականության ցանկ**................................................................213

*Նվիրում եմ աղետին զոհ դարձած*
*հորաքրոջս՝ Աստղիկ Թորգոմի Աղանյանի*
*պայծառ հիշատակին*

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տարատեսակ ծագում ունեցող աղետները ֆիզիկական իրադարձություններ են՝ հասարակական համատեքստում: Ինչպես ցույց են տալիս ՄԱԿ-ի տվյալները, բոլոր տեսակի աղետների շարքում զոհերի թվով առաջին տեղում ջրաօդերևութաբանական աղետներն են (ջրհեղեղներ, ցունամիներ և այլն), երկրորդ տեղում՝ երկրաբանականը (երկրաշարժեր, հրաբուխներ և այլն), իսկ երրորդ տեղում՝ տեխնածին աղետները:[1] Երկրաշարժերը բնական աղետների շարքում երրորդ տեղն են զբաղեցնում զոհերի քանակով (16% զոհերի ընդհանուր թվից):[2] Ինչպես բնական, այնպես էլ տեխնածին աղետները հսկայական նյութական վնասներ պատճառելուց զատ, թողնում են խորը սոցիալական հետևանքներ, քանի որ մարդկային զոհերի պատճառ են դառնում, իսկ արհավիրքից փրկվածները երկար ժամանակ գտնվում են հոգեկան, ֆիզիկական և սոցիալական ծանր վիճակում: Փոխվում է մարդու ապրելակերպը՝ նա հայտնվում է սոցիալական ճգնաժամի մեջ, ու հարցը միայն նրանում չէ, որ անձը զգայաբար է վերապրում տեղի ունեցածը: Ցնցումը և' միաժամանակյա իրադարձություն է, և' գործընթաց, որն անդրադառնում է

---

[1] *Բնական և տեխնածին աղետների նշված բաժանումն ամրագրված է միջազգային մի շարք փաստաթղթերում, մասնավորապես՝ Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի գործունեության կազմակերպման Համաձայնագրում, որը ստորագրվել է 1997 թ. Սևիլիայում:www.icrc.org/rus/resources/documents/misc/sevilleagreement-cooperation-261197.htm*

[2] *Осипов В., Катастрофы в центре внимания ученых, //Вестник РАН, т. 65, № 6, М., 1995, с.486.*

ոչ միայն մարդ անհատի, այլև մարդկային մեծ խմբերի հետագա կյանքի վրա:

Ճակատագրի բերումով հայ ժողովուրդը տուն է կառուցել երկրաշարժավտանգ գոտում, որտեղ տեղի են ունեցել տարբեր ուժգնության երկրաշարժեր: 1988թ. դեկտեմբերի 7-ի Սպիտակի երկրաշարժը հայ ժողովրդի համար աննախադեպ էր իր տնտեսական, սոցիալ-ժողովրդագրական, մշակութային հետևանքներով: Ընդամենը 40 վայրկյանում Հայաստանի հյուսիսային շրջանները վերածվեցին «Աղետի գոտու»: Աղետը ոչ միայն տվյալ տարածքում, այլև ողջ հանրապետությունում առաջ բերեց տնտեսական խիստ ծանր կացություն, բարոյահոգեբանական նոր մթնոլորտ, նոր մտածելակերպ, աշխարհայացք ու աշխարհընկալում, նոր արժեքներ, սոցիալական նոր երևույթներ, երկրաշարժից ածանցված նոր սովորույթներ և նորմեր, ժամանակի նոր պարբերացում:

Երկրաշարժի հետևանքով հազարավոր մարդիկ ոչ միայն նյութական և ֆիզիկական կորուստներ ունեցան, այլև կրեցին բարոյահոգեբանական, սոցիալական զրկանքներ, քանի որ կանգ առավ հասարակական, քաղաքական զարգացումը, նեղացավ միջանձնային փոխհարաբերությունների շրջանակը, մարդկանց մեջ առաջացավ  սոցիալական օտարում (ապագայի, վաղվա օրվա նկատմամբ հուսալքություն, կյանքի իմաստի արժեզրկում և այլն), ինչի արդյունքում սկսվեց զանգվածային արտագաղթ:

Երկրաշարժին հաջորդած Հայաստանի Հանրապետության անկախացումը՝ պետական, քաղաքական, տնտեսական կառավարման համակարգերի, հասարակական հարաբերությունների, մշակութային կյանքի արմատական վերափոխումներով հանդերձ, ավելի բարդացրեց աղետից տուժած բնակավայրերի վերականգնումն ու աղետյալների ադապտացման գործընթացը:

Ստեղծված նոր իրադրությունը, երբ խաթարվեց կյանքի տասնամյակներով հաստատված բնականոն ընթացքը, վերացան նախկին մշակութային համասեռությունը, փոխադարձ համաձայնվածությունը և կայունությունը, փոխեց մարդկային կյանքի ենթատեքստն ու սոցիալական գործողությունները, հասարակության նորմերը, արժեքները, համոզմունքները: Բնական աղետն ու սոցիալտնտեսական ճգնաժամը առաջ բերեցին գործելակերպի և մտածելակերպի բնականոն ընթացքի շեղումներ, խեղեցին մարդկանց վարքը և ներաշխարհը՝ առաջ բերելով մեծ լարվածություն՝ կապված ծանր սոցիոմշակութային իրադրության ու ապագայի ակնկալիքների հետ: Էական և նշանակալի ադապտացիոն փոփոխություններ կատարվեցին մշակութային-արժեքային կողմնորոշումներում, անհատական և խմբային վարքի ռազմավարություններում, առողջության և կենսական այլ արժեքների նկատմամբ վերաբերմունքում, ընտանեկան, ազգակցական հարաբերություններում և այլ ոլորտներում: Այս ամենը պահանջում է խորը և բազմակողմանի հետազոտություն՝ սահմանելու աղետյալների հարմարողական գործընթացի փուլերը, գնահատելու ընտրած ռազմավարությունը, ներկայացնելու ադապտացիոն պրակտիկաները: Հատկապես կարևոր է հիշյալ հիմնախնդիրների ազգագրական վերլուծությունը:

Տարաբնույթ աղետների սոցիալական հետևանքների ուսումնասիրությունը սկսվել է ԱՄՆ-ում XXդ. 60-70-ական թթ., շնորհիվ աղետների սոցիոլոգիա-sociology of disaster նոր գիտաճյուղի հիմնադիր Էնրիկո Քարանտելլիի (Enrico Quarantelli), ում ջանքերով Օհայոյի համալսարանում հիմնվեց Աղետների ուսումնասիրության կենտրոնը (Disaster Research Center): Հետագայում այս գիտաճյուղը

լայն տարածում գտավ եվրոպական մի շարք երկրներում, իսկ 90-ականներից նաև Ռուսաստանում:[3]

Մեզանում աղետների հետևանքների, դրանց հաղթահարման մեխանիզմների, աղետը վերապրածների հարմարվողականության եղանակների և աղետի հետ կապված այլ հիմնախնդիրների ու-սումնասիրությունը դեռևս գտնվում է սաղմնային վիճակում: Մինչ օրս արժանի ուշադրություն չի դարձվել աղետների և արհա-վիրքների սոցիալ-մշակութային հետևանքներին, այսինքն այն իրո-ղությանը, թե ինչպես են առանձին մարդիկ վերապրում սոցիալ-մշա-կութային դրամատիկ փոփոխությունները, որոնց մասնակիցն ու ականատեսն են իրենք, և թե ինչպես է դա դրսևորվում նրանց առ-օրյա կենցաղում ու մշակույթում: Դեռ բավարար ուսումնասիրված չեն ընտանիքի՝ փոփոխվող սոցիալ-տնտեսական, քաղաքական և սոցիոմշակութային պայմաններին հարմարվելու հիմնախնդիրները:

Սույն մենագրությունը փորձ է ազգաբանական տեսանկյու-նից լրացնելու այդ բացը և ներկայացնել Սպիտակի երկրաշարժի սոցիալ-մշակութային հետևանքներն ու սոցիումի (հանրույթի) հար-մարվողականության դրսևորումները հետաղետյան շրջանում:

Հետազոտության հիմնական նպատակն է քննարկել Աղետի գոտու բնակչության ադապտացիոն մարտավարությունները կենսա-պահովման, սոցիոնորմատիվ և հումանիտար մշակույթի առանձին ոլորտներում՝ հետերկրաշարժյան տնտեսական, սոցիալական և մշակութային արմատական փոփոխությունների համատեքստում,

---

*[3] Белова Е. А., Модели социальной адаптации пострадавших от природных катастроф (Региональный аспект). Автореферат диссертации на соискание ученой степени кандидата социологических наук, Хабаровск, 2004, с.4; Катастрофическое сознание в современном мире в конце XX века, /ред. В.Шляпентох, В.Ядов/, Московский общественный научный фонд, Издательский центр научных и учебных программ, М., 2002; Осипов В., Катастрофы в центре внимания ученых//Вестник РАН, т. 65, № 6, М., 1995.*

բացահայտել հարմարողականության հիմնական ձևերը՝ սոցիո-մշակութային, սոցիալ-հոգեբանական, տնտեսական, ժողովրդագրական և այլ դրսևորումներով: Առաջադրված նպատակին հասնելու համար կարևորվել են հետևյալ խնդիրները.

- Ներկայացնել Աղետի գոտու սոցիալ-տնտեսական, մշակութային և ժողովրդագրական դրությունը մինչ երկրաշարժը և դրանից հետո, բնութագրել վերափոխումների գործընթացն ու դրանք պայմանավորող գործոնները:
- Ուսումնասիրել աղետը վերապրածների մտածողության արժեքային-նորմատիվ կառուցվածքի ձևափոխություններն ու վարքագծային-մոտիվացիոն արժեքները:
- Պարզաբանել բնակչության մեջ ձևավորված «գոյատևման մարտավարության» երևույթը՝ որպես նոր սոցիոմշակութային իրողություններին հարմարվելու հիմնական ձև:
- Ներկայացնել ադապտացիոն պրակտիկաների կոնկրետ դրսևորումներն ու առանձնահատկությունները տնտեսական գործունեության և զբաղմունքների մեջ՝ գյուղ-քաղաք կտրվածքով, ինչպես նաև բնակարանային խնդիրներն ու դրանց լուծման ձևերը:
- Բնութագրել ընտանիքն ու դրանում կատարված կառուցվածքային, գործառութային, վարքագծային փոփոխությունները՝ ընտանիքը դիտարկելով որպես հասարակական օրգանիզմի այն բաղկացուցիչ մասը, որը կրում է տվյալ ժամանակաշրջանի հիմնախնդիրների ողջ ծանրությունը: Ընտանիքը ներկայացվում է ավանդական և նոր մշակութային իրողությունների համատեքստում՝ վեր հանելով ներընտանեկան հարաբերություններում կատարված և ընթացող փոփոխությունները:
- Ուսումնասիրել սոցիալական և սեռատարիքային տարբեր խմբերի ադապտացիայի առանձնահատկությունները:

- Ներկայացնել Աղետի գոտու բնակչության հումանիտար մշակույթում տեղի ունեցած փոփոխությունները:

Ադապտացիան (հարմարվողականությունը) միջգիտաճյուղային, բազմիմաստ եզրույթ է, որն օգտագործվում է բնագիտության և հասարակագիտության մեջ որպես շրջապատող միջավայրի հետ սոցիալական և բնական համակարգերի փոխներգործության առանձին կերպերի ճանաչման գործիք: Եթե զուտ կենսաբանական առումով ադապտացիան օրգանիզմների ձևափոխումն ու նոր որակների ձեռքբերումն է, որոնք հնարավորություն են տալիս կենդանի մնալ որոշակի պայմաններում, ապա ազգաբանության համատեքստում որպես արտաքին միջավայրի և կենսապահովման փոխներգործության արդյունք է դառնում մշակույթը: Սոցիոմշակութային փոփոխությունները մարդկության զարգացման կարևոր նախապայմաններ են հանդիսանում, սակայն դրանք հնարավոր են կյանքի կոչել, երբ գործում են ադապտացիոն համակողմանի մեխանիզմները, որոնց միջոցով պահպանվում ու փոխանցվում է նախորդ սերնդի փորձը, ապահովվում է սոցիալական որոշակի համակարգի կենսունակությունն ու կայունությունը և յուրացվում են նոր հասարակական իրողությունները: Այլ կերպ ասած ադապտացիան հասարակության սոցիալ-մշակութային վերակառուցման եղանակներից մեկն է:

Հասարակական ադապտացիոն խնդիրներին համաշխարհային հումանիտար գիտական միտքն առաջին անգամ անդրադարձել է XX դ. սկզբներին: Մեր ժամանակներում սոցիալական և մշակութային ադապտացիայի հիմնահարցերի ուսումնասիրությունը դարձել է յուրատեսակ «mainstream» հիմնական հոսանք, ուղղություն, որի շրջանակներում բավական արդյունավետ համագործակցում են պատմաբանները, ազգագրագետները, մշակութաբանները,

սոցիոլոգները, փիլիսոփաները և հումանիտար ոլորտի այլ ներկայացուցիչներ: Սոցիալ-մշակութային ադապտացիան մշակույթի վերափոխման կամ տրանսֆորմացիայի կարևորագույն և անբաժանելի մասնիկն է: Ադապտացիոն հիմնախնդիրների ուսումնասիրության մեթոդաբանության օգտագործման միջոցով կարելի է վերհանել պատմամշակութային և սոցիալական գործընթացներին բնորոշ բազմաթիվ երևույթների ընդհանուր և տեղական առանձնահատկությունները, նմանություններն ու տարբերությունները, որոնք հատկապես արդյունավետ են արտակարգ իրավիճակներում հայտնված տարածաշրջանների, ի մասնավորի՝ Սպիտակի երկրաշարժը վերապրած բնակչության ազգաբանական ուսումնասիրության հարցում: Սոցիալ-մշակութային ադապտացիան կոնկրետ մշակութային արժեքների շրջանակներում անհատի հարմարվողական վարքագծի դրսևորումներից է նաև: Ն. Մախանկոյի բնութագրմամբ, սոցիալ-մշակութային ադապտացիայի էությունը կայանում է ոչ միայն մարդու և արդեն գոյություն ունեցող համակարգի վերափոխման, այլև նոր մշակութային և սոցիալական ֆենոմենների (երևույթ) առաջացման մեջ: Ցանկացած հասարակության համար սահմանազատիչ և ճգնաժամային փոփոխությունների ընթացքում այս նոր ֆենոմեններով (երևույթներով) են պայմանավորվում հիմնական սոցիալ-մշակութային գործընթացները, որոնց արդյունքում կատարելագործվում և առաջանում են նոր սոցիալական կապեր և ինստիտուտներ:[4]

Սոցիալ-մշակութային ադապտացիան ինքնին դրական երևույթ է, սակայն ճգնաժամային պայմաններում, երբ խաթարվում են տվյալ

[4] *Маханько Т. В., Социокультурная адаптация в трансформационных процессах культуры, диссертация на соискание ученной степени кандидата философских наук, с.3, Краснодар, 2001. http://www.dissercat.com/ content/sotsiokulturnaya-adaptatsiya-v-transformatsionnykh-protsessakh-kultury*

հասարակության ավանդական հաստատուն մշակութային արժեք-ները, այն կարող է արտահայտվել նաև բացասական դրսևորումների տեսքով: Տնտեսական և սոցիալական հին համակարգերի փլուզումը, մշակութային և սոցիալական ավանդական կապերի այլակերպումը և տվյալ հասարակությունում երկար ժամանակ տիրապետող արժեհամակարգերի վերացումը, կարող են հանգեցնել նաև այսպես կոչված ավերիչ ադապտացիայի, որի բազմաթիվ դրսևորումներ վերհանվել են աշխատության համապատասխան բաժիններում:

Սոցիալ-մշակութային ադապտացիայի խնդիրների ուսում-նասիրությանը նվիրված հետազոտություններում առաջադրվող հարմարողականության հիմնական ձևերը հետևյալն են. ինքնակամ և հարկադիր, ստեղծարար և ավերիչ, ակտիվ և պասիվ, կայունացնող և վերափոխվող, միջանկյալ և վերջնական, մասնագիտական, ձևա-կան և սոցիալ-հոգեբանական ադապտացիա:[5] Հիմք ընդունելով վե-րը հիշված տիպաբանական մոդելը, մենագրությունում փորձ է արվել վերհանել Աղետի գոտու բնակչության կենսապահովման և սոցիո-նորմատիվ մշակույթներում արձանագրված թե՛ դրական և թե՛ ավերիչ ադապտացիայի էական կամ նկատելի դրսևորումները: Մեր հետազոտությունները ցույց են տալիս, որ Սպիտակի երկրա-շարժից հետո ստեղծված որոշակի տնտեսական, քաղաքական և սոցիալ-մշակութային բացասական երևույթների պատճառով Աղե-տի գոտու բնակչության սեռա-տարիքային և սոցիալական բոլոր խմբերի ադապտացիան նոր պայմաններին երկարաձգվեց շուրջ երեք տասնամյակ և միջանկյալ վիճակից չվերաճեց ավարտուն ձևի: Հիշյալ գործոնների բացասական ազդեցության արդյունքում մինչ այժմ չի ձևավորվել «հարմարվող» և «հարմարվողական միջավայր»

---

[5] *Маханько Т. В., նույն տեղում:*

հասկացությունների ներդաշնակությունը, ինչը նույնպես փաստում է սոցիալ-մշակութային գործընթացի անավարտ լինելը:

Ադապտացիայի հիմնախնդիրների լուծումը կարևոր տեսական նշանակություն ունի պատմամշակութային գործընթացների անհատական և ընդհանուր հանրային չափորոշիչները հասկանալու, ինչպես նաև միջմշակութային պատմահամեմատական ուսումնասիրություններ կատարելու համար:

Հետազոտությունը կատարվել է հիմք ընդունելով Է.Ս Մարգարյանի, Յու. Ի. Մկրտումյանի և Ս.Ա Հարությունովի կողմից առաջադրված մշակույթի տեսությունն ու դրանում սահմանված «կենսապահովման մշակույթ» հասկացությունը:[6] Նրանց կարծիքով «բնական միջավայրին հասարակության էկոլոգիական հարմարվողականության գործընթացը տեղի է ունենում համապատասխան տարածքի սոցիալապես կազմակերպված յուրացմամբ, որն արտահայտվում է առօրյա կյանքի համար անհրաժեշտ բնակելի կացարանների և մշտական բնակավայրերի կառուցմամբ, սննդամթերքի, կահկարասու, հագուստի և այլ անհրաժեշտ առարկաների կազմակերպված արտադրությամբ»:[7]

Էթնիկ հանրությունների կենսապահովումն ուսումնասիրելու ժամանակ անհրաժեշտ է ֆիզիկականից (նյութականից) բացի, հաշվի առնել նաև հարմարվողականության հոգեբանական կողմը: Առաջինն, ինչպես նշվեց, ներառում է և' մարդկանց կենսաբանական հարմարումը բնական միջավայրին, և' տնտեսավարման գործու-

---

[6] *Арутюнов С. А., Маркарян Э. С., Мкртумян Ю. И. Проблемы исследования культуры жизнеобеспечения этноса//СЭ, 1983, № 2, СС.22-31; Культура жизнеобеспечения и этнос. Опыт этнокультурологического исследования (на материалах армянской сельской культуры) Ереван, 1983.*

[7] *Арутюнов С. А., Маркарян Э. С., Мкртумян Ю. И., Проблемы исследования культуры жизнеобеспечения этноса // СЭ, 1983, № 2, с. 24.*

նեության հետ կապված սոցիալ-մշակութային հարմարողականությունը, որը նյութական մշակույթի մեջ դրսևորվում է որոշակի առանձնահատկություններով: Երկրորդը վերաբերում է մարդկանց հոգեբանական հարմարողականությանը անձնական և խմբային մակարդակներում՝ շրջակա բնական ու սոցիալ-մշակութային միջավայրի նկատմամբ, ինչպես նաև սթրեսային իրավիճակների կանխարգելման կամ թուլացման ավանդական եղանակներին: Իսկապես, շրջակա միջավայրը ազդում է ոչ միայն մարդու օրգանիզմի, այլ նաև հոգեկան վիճակի վրա, իսկ դրա միջոցով՝ նաև ֆիզիոլոգիայի: Անբարենպաստ ազդեցության դեպքում դա բերում է ոչ միայն հոգեկան, այլև, այսպես կոչված հոգեսոմատիկ հիվանդությունների:

Եթե կենսապահովում եզրույթը ցույց է տալիս էթնոսի բացարձակ կապը բնության հետ, ապա մյուսը՝ հարմարողականությունը կամ հարմարվելը (ադապտացիան) արտահայտում է էթնիկական մշակույթի դինամիզմը (հարատև շարժընթացը):

Հարմարվողականությունը մարդու մասին գիտությունների կարևորագույն հիմնախնդիրներից է: Սակայն բուն եզրույթը գիտնականների կողմից օգտագործվում է տարբեր իմաստներով, ինչը բերում է վերջինիս ընկալման բարդությունների: Այն հաճախ օգտագործվում է հարմարվողականության վիճակը նկարագրելու համար կամ նշելու այն գործընթացը, որի ժամանակ մարդու օրգանիզմը փոխվում է և հարմարվում շրջական միջավայրին: Հարմարվողականություն-հարմարումը դիտվում է և՛ որպես մի քանի սերունդների կենսագործունեության ընթացքում բնական ընտրության արդյունք, և՛ որպես պատասխան հակազդեցություն՝ ձեռք բերված կամ յուրացված կարճ ժամանակում: Եզրույթն օգտագործվում է նաև արտահայտելու մարդու օրգանիզմի և շրջակա միջավայրի համապատասխանությունը:

Հարմարողությանը կարելի է հասնել ամենատարբեր եղանակերով, տարբեր կերպ՝ կապված բնական ընտրության հետ, սկսած ուղիղ գենետիկական վերահսկումից մինչև սովորելու ունակությունները: Այդուհանդերձ հարմարվողականության իրական բնույթը հստակ չէ:

Թեմայի իրականացման համար կարևոր ենք համարում Վ.Ի. Կոզլովի կարծիքն այն մասին, որ «նոր միջավայրի նկատմամբ էթնոմշակութային հարմարողության գործընթացներն ունեն համակարգային և բազմամակարդակ բնույթ: Ըստ էության շոշափելով հանրության մշակույթի և կենցաղի բոլոր ոլորտները՝ դրանք արտահայտվում են նաև խմբի հոգեբանական, ժողովրդագրական և բժշկակենսաբանական առանձնահատկություններում, սակայն՝ տարբեր ինտենսիվությամբ և ոչ միաժամանակ: Ավելին, հարմարողականության գործընթացները կյանքի տարբեր ոլորտներում աչքի են ընկնում հարաբերական ինքնուրույնությամբ: Սրանից հետևում է, որ աննպատակահարմար է բնակելի միջավայրի նկատմամբ էթնոմշակութային խմբերի հարմարումը գնահատել որևէ մեկ միասնական ցուցանիշով»:[8] Իրապես, բնակչության սոցիալ-մշակութային, ժողովրդագրական և բժշկա-կենսաբանական բնութագրերը, դրանց համալիր վերլուծությունները հստակ պատկերացում են տալիս հարմարողականության գործընթացի հաջող իրականացման մասին, ուստի թեմայի հետազոտության ժամանակ հատուկ ուշադրություն է դարձվել այդ խնդիրներին:

Հետազոտությունն իրականացնելիս նկատի ենք ունեցել նաև սոցիոմշակութային ադապտացիայի փիլիսոփայական վերլուծությունները, որոնցում այն դիտարկվում է միաժամանակ և՛ որպես

[8] *Козлов В. И. Методологические основы этнической экологии и вопросы их практического применения, Методы этноэкологической экспертизы. М., 1999, с. 26.*

գործընթաց, և՛ որպես վիճակ: Որպես գործընթաց հարմարողականությունն ուղղված է անհատի վարքը տիրող նորմերի և արժեքների հետ համապատասխանության բերելուն: Ադապտացիայի վիճակը անհատի՝ արտաքին միջավայրի հանդեպ վերաբերմունքի բնութագրությունն է, որը ծառայում է հարմարման՝ որպես գործընթացի, հաջողության ցուցանիշ:

Անցումային հասարակություններում տեղի ունեցող գործընթացների համատեքստում սոցիալական ադապտացիան կարելի է բաժանել հետևյալ փուլերի՝ սոցիալական ցնցման վիճակ, հարմարողական ռեսուրսների մոբիլիզացում, պատասխան սոցիալական միջավայրին: Այդ իսկ պատճառով հասարակության մեջ ադապտացիայի այս երեք փուլերը անցնում են ծայրահեղորեն անհավասարաչափ. որոշ խմբեր անցնում են առաջ, մյուսները սոցիալական վարքի նոր մոդելները յուրացնում են շատ դանդաղ, երրորդներն ընդհանրապես մնում են ցնցման վիճակում՝ չկարողանալով ոչ հարմարվել, ոչ էլ մշակել իրենց դերային փոփոխություններին քիչ թե շատ համարժեք վարքի սոցիալական և սոցիալ-հոգեբանական ռացիոնալ ծրագիր: Հայաստանում և ընդհանրապես հետխորհրդային միջավայրում ադապտացիայի բարդ պրոբլեմներից մեկն էլ այն է, որ այս գործընթացները տեղի են ունենում մի քանի սերունդ շարունակ գոյություն ունեցող հասարակական ինստիտուտների, նորմերի և արժեքների արմատական տրանսֆորմացիաների պայմաններում:[9]

Ադապտացիայի գործընթացն ուսումնասիրելու համար մեթոդաբանական հիմք է ծառայել ոչ միայն դրա պայմանների ու գործոնների դիտարկումը, այլև հարմարվողականության՝ որպես մար-

---

[9] *Ա. Ղարագուլյան, Սոցիոմշակութային անորոշությունը տրանսֆորմացիոն գործընթացների համատեքստում, «Անցումային հասարակություն. Սոցիոմշակութային փոխակերպումներ» ժողովածու, Եր., 2002, էջ 89-104:*

դու հոգեզգայական վիճակի գնահատումը: Ըստ այդմ, սոցիոմշակութային ադապտացիան դիտարկվել է որպես մի քանի գործընթացների ամբողջություն.

ա/ սոցիալական ադապտացիա. սա սոցիալական բազային երևույթների (արժեքներ, նորմեր, աղքատություն, կրթություն և այլն) նկատմամբ հարմարվողականությունն է:

բ/ մշակութային ադապտացիա. սա մարդու հարմարվելն է նյութական, բնական և սոցիալական միջավայրին:

գ/ սոցիալ-հոգեբանական ադապտացիա. Սա անհատի սոցիալ-հոգեբանական մոդալության փոփոխություններն են միջավայրի ազդեցության տակ:

Հիշյալ խնդիրների ազգագրական վերլուծությունն իրականացվել է ՀՀ Շիրակի և Լոռու մարզերի քաղաքային և գյուղական բնակավայրերի՝ աղետը վերապրած բնակչության ադապտացիոն պրակտիկայի հետազոտության հիման վրա: Որպես ուսումնասիրության օբյեկտ ընտրվել է ընտանիքը, քանի որ հենց նրանում տեղի ունեցող փոփոխություններն են դառնում հասարակական գործընթացների զարգացման բնույթը որոշող ցուցիչներ:

Աշխատանքի հետազոտական հիմքը կազմում են հարցաթերթային և խորացված հարցումները, որոնք իրականացվել են 2015-2016 թթ. Լոռու և Շիրակի մարզի գյուղական մի շարք բնակավայրերում և Վանաձոր, Սպիտակ և Գյումրի քաղաքներում: Օգտագործվել են նաև տարբեր կազմակերպությունների կողմից իրականացված սոցիոլոգիական հարցումների արդյունքները, որոնք լուսաբանում են Աղետի գոտու բնակչության կենսագործունեության մի շարք ոլորտները:

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

## ԱՂԵՏԻ ԳՈՏԻՆ ՄԻՆՉ ԵՎ ՀԵՏԵՐԿՐԱՇԱՐԺՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

### *Աղետի գոտու սոցիալ-տնտեսական, մշակութային և ժողովրդագրական դրությունը մինչ երկրաշարժը*

1988 թ. դեկտեմբերի 7-ի ավերիչ երկրաշարժի արդյունքում առաջացած այսպես կոչված «Աղետի գոտին» ընդգրկեց Հայաստանի հանրապետության համարյա ողջ հյուսիս-արևմուտքը՝ ներկայիս Լոռու և Շիրակի մարզերն ամբողջությամբ և Արագածոտնի մարզը՝ մասամբ: Աղետի գոտում էր գտնվում երկու խոշոր քաղաք՝ Լենինական (այժմ՝ Գյումրի), Կիրովական (այժմ՝ Վանաձոր), նախկին վարչական 10 շրջաններ՝ Սպիտակի, Ստեփանավանի, Կալինինոյի (այժմ՝ Տաշիր), Գուգարքի, Թումանյանի, Ախուրյանի, Ամասիայի, Ղուկասյանի (այժմ՝ Աշոցք), Անիի, Արթիկի:[10] Երկրաշարժն ընդգրկեց ՀՀ տարածքի 40%-ը, ուր ապրում էր շուրջ 1 մլն. մարդ: Ավերման գոտին, որտեղ երկրաշարժի ուժգնությունը կազմել էր 8 բալ և ավելի, ընդգրկում էր 3000 քառ. կմ տարածք: Երկրաշարժից տուժեցին 21 քաղաք, 342 գյուղ, անօթևան մնացին 514 հազար մարդ: Ավերվեց ՀՀ-ի ամբողջ բնակֆոնդի 17%-ը, դադարեցին գործել 170 արդյունաբերական ձեռնարկություն, մեծ վնաս հասցվեց գյուղերին

[10] *Գյուղական և քաղաքային շրջանները մինչև 1995 թ. ՀՀ առաջին սահմանադրության ընդունումը և նոր վարչա-տարածքային բաժանումը հանդիսանում էին հիմնական վարչական միավորներ: 1988 թ. դրությամբ ՀԽՍՀ-ում կար 37 գյուղական շրջան, տե՛ս՝ Լ.Վալեսյան, Հայկական ՍՍՀ տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, Եր., 1988, էջ 108:*

և ագրոարդյունաբերական համալիրին, ինչպես նաև ճարտարապետական, պատմական, արվեստի հուշարձաններին:[11]

Անդառնալի հարված հասցվեց երկրի արդյունաբերական պոտենցիալի մի զգալի հատվածին, որը տեղակայված էր ներկայիս Լոռու և Շիրակի մարզերում: Մինչ Սպիտակի երկրաշարժը այս տարածաշրջաններում էին կենտրոնացված քիմիական, սննդի և թեթև արդյունաբերության հանրապետական և միութենական նշանակության բազմաթիվ ձեռնարկություններ, որոնք ծանրակշիռ տեղ ունեին երկրի արդյունաբերության մեջ` միևնույն ժամանակ աշխատատեղերով ապահովելով տասնյակ հազարավոր մարդկանց: Վերը բերվածը հիմնավորելու համար ներկայացնենք Աղետի գոտու երեք խոշոր բնակավայրերի արդյունաբերական, գիտա-կրթական և մշակութային ներուժի համառոտ նկարագիրը՝ մինչև Սպիտակի երկրաշարժը:

Դեռևս XXդ. 20-30-ական թթ. սկսած ՀԽՍՀ ինդուստրալիզացիայի գործընթացում որոշակի տեղ հատկացվեց Լենինականին, որն ըստ Ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանի մտահղացման պետք է դառնար թեթև արդյունաբերության կենտրոն: Արդեն 1924թ. նոյեմբերին շահագործման հանձնվեց Լենինականի տեքստիլ կոմբինատը, որը պետք է զբաղվեր բամբակյա գործվածքների արտադրությամբ և նպաստեր ԽՍՀՄ հարավային տարածաշրջաններում բամբակաբուծության զարգացմանը: Տեքստիլ կոմբինատը մինչև երկրաշարժը վերածվել էր հզոր արտադրական միավորման, ուներ բազմաթիվ մասնաճյուղեր, միջնակարգ մասնագիտական երկու ուսումնարան, մարզական ակումբ, մշակույթի պալատ, պիոներական ճամբար, հիվանդանոց և բազմաբուժարան: Կոմբինատի բանվոր-

---

[11] *Թ.Աղանյան, 1926 թ. Լենինականի և 1988 թ. Սպիտակի երկրաշարժների համեմատական վերլուծության փորձ, ՇՀՀԿ Գիտական աշխատություններ, հ. XIX, Եր., 2016, էջ 168:*

ծառայողների թիվը 1988 թ. դրությամբ հասնում էր շուրջ 9000-ի: Տեքստիլ կոմբինատը տարեկան թողարկում էր 11 տոննա բամբակի մանվածք և 81մլն մետր գործվածք:[12] Քաղաքի թեթև արդյունաբերական ներուժի մյուս բաղադրիչներն էին Գուլպա-նասկեղենի արտադրական միավորումը, Տրիկոտաժի ֆաբրիկան, երկու կոշիկի ֆաբրիկաները, «Շիրակ» միավորումը, Չկալովի անվ. կարի արտադրական միավորումը, որոնք ունեին մասնաճյուղեր տարածաշրջանի բազմաթիվ գյուղերում: Լենինականի արդյունաբերական հզորության մի զգալի հատվածն էին կազմում սննդի արդունաբերության ձեռնարկությունները, որոնց մեջ իր արտադրանքի ծավալով և բազմազանությամբ աչքի էր ընկնում դեռևս 1934 թ. հիմնված Մսի-պահածոների կոմբինատը, որի արտադրած մսեղենի տեսականին կազմում էր ավելի քան 114 միավոր (երշիկեղեն, պահածոներ, ենթամթերք, կիսապատրաստուկներ և այլն): Դեռևս 1912 թ. ալեքպոլցի Հեքիմյան ընտանիքի հիմնած մեխանիկական արհեստանոցի ազգայնացումից հետո ստեղծվեց քաղաքի ծանր արդյունաբերության առաջին ձեռնարկությունը՝ Դարբնոցա-մամլիչային սարքավորումների գործարանը: Հետագայում հիմնվեցին արդյունաբերական նույն ճյուղի այլ ձեռնարկություններ՝ Հղկող հաստոցների, Հայէլեկտրակոնդենսատոր, Հեծանիվի, Հայէլեկտրակենցաղսարք, Միկրոէլեկտրոշարժիչ, Հղկող հաստոցների, Սառնարանային կոմպրեսորների և այն: Վերոհիշյալների շարքում առնձնանում էր Ստրոմմաշինա (հետագայում՝ Հայքարհատմեքենա) միութենական նշանակության գործարանը, որը մենաշնորհային դիրք ուներ ողջ ԽՍՀՄ տարածքում:[13] 1988 թ. հունվարի 1-ի տվյալներով Լենինականի արդյունաբերական ձեռնարկությունների թիվը հասնում էր 54-ի,

[12] *Գյումրի. Քաղաքը և մարդիկ, Գյումրի, 2012, էջ 100:*

[13] *Գյումրի. Քաղաքը և մարդիկ, էջ 100-104:*

որոնցում աշխատում էր շուրջ 48 000 մարդ: Ընդհանուր առմամբ մինչև երկրաշարժը Գյումրիում այս կամ այն աշխատանքի մեջ էին ներառված շուրջ 72,3 հզ մարդ: Քաղաքի ձեռնարկություններում արտադրվում էր շուրջ 370 մլն. ռուբլի ընդհանուր արժեքով 700 տեսակ արտադրանք, որից միայն սննդի արդյունաբերության մասնաբաժինը կազմում էր 218 մլն ռուբլի:

1988թ. դրությամբ Լենինականի արդյունաբերական հզորություններն ապահովում էին ՀԽՍՀ ներքին համախառն արդյունքի շուրջ 21%-ը:[14] Լենինականի տնտեսության մեջ հատուկ տեղ էր զբաղվում երկաթուղային հանգույցը, որի հիմնական միավորը դեռևս 1900 թ. հիմնված լոկոմոտիվային դեպոն էր, որտեղ կենտրոնացված էր Անդրկովկասյան երկաթուղու Երևանի բաժանմունքի քարշային հզորության մեծ մասը:[15]

Մինչերկրաշարժյան Լենինականը Խորհրդային Հայաստանի ոչ միայն խոշոր արդյունաբերական, այլև գիտա-կրթական և մշակութային կենտրոն էր: Քաղաքում գործում էր 50 հանրակրթական դպրոց, շուրջ երկու տասնյակ պրոֆտեխնիկական ուսումնարան և տեխնիկում, 8 երաժշտական և մեկ նկարչական դպրոց, գեղագիտական դաստիարակության կենտրոն: 1934 թ. քաղաքում հիմնվում է առաջին ԲՈւՀ-ը՝ Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտը (2016 թվականից՝ Մ. Նալբանդյանի անվան Շիրակի պետական համալսարան հիմնադրամ),[16] իսկ 1959 թ. բացվեց Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի (այժմ՝ Հայաստանի պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամ) Լենինականի մասնաճյուղը:[17] 1961թ. Հայաստանի Գիտությունների

---

[14] *Նույն տեղում, էջ 104:*

[15] *Հայկական սովետական հանրագիտարան (հետայսու՝ ՀՍՀ),հ. 4.,Եր., 1978, էջ 554:*

[16] *http://gspi.am/pages/135.html*

[17] *http://polytech.am/wpolytech/?page_id=1134*

ակադեմիայի նախագահ ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի նախաձեռնությամբ Լենինականում հիմնվեց մայրաքաղաքից դուրս գտնվող առաջին գիտահետազոտական հիմնարկը՝ Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտը (այժմ ՀՀ ԳԱԱ Արմեն Նազարովի անվ. Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ, ՊՈԱԿ): Ինստիտուտի հատուկ կոնստրուկտորական բաժնի բազայի վրա 1976 թ. ստեղծվեց Լենինականի երկրորդ ակադեմիական կառույցը՝ Հայաստանի ԳԱ հատուկ փորձակոնստրուկտորական տեխնոլոգիական ինստիտուտը։[18]

Մինչ երկրաշարժը քաղաքում գործում էին 1928 թ. հիմնված Ա. Մռավյանի անվան պետական դրամատիկական (այժմ՝ Վ. Աճեմյանի անվան) թատրոնը և 1935 թ. հիմնված ՀԽՍՀ-ում առաջին տիկնիկային թատրոնը։[19] Բացի քաղաքապատկան հիմնարկներից Լենինականի մշակութային կյանքում կարևոր դերակատարում ունեին նաև խոշոր արդյունաբերական հիմնարկներին և կազմակերպություններին պատկանող մշակույթի պալատներն ու ակումբները, որոնցից առավել հայտնի էին տեքստիլագործների մարզա-մշակութային պալատը, երկաթուղայինների Սևյանի անվան, Գուլպանասկեղենի ֆաբրիկայի, Շինարարների արհմիության, Մսի-պահածոների կոմբինատի և այլ ակումբները։ Քաղաքում մինչև երկրաշարժը գործում էր չորս կինոթատրոն («Հոկտեմբեր», «Երևան», «Հայաստան», «Շիրակ»)։ 1930 թ. հիմնվում է Լենինականի (այժմ՝ Շիրակի) երկրագիտական թանգարանը,[20] 1975թ.՝ Ավ.Իսահակյանի տուն-թանգարանը, 1984-ին՝ Լենինականի ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարանը, 1985թ.՝ Ս. Մերկուրովի տուն-թանգարանը։

---

[18] *Գյումրի. Քաղաքը և մարդիկ, էջ 302-303։*

[19] *ՀՍՀ, հ.4, էջ 555։*

[20] *http://www.shirakmuseum.am/main.php?menu_id=2&sub_menu_id=0&lang=1*

Իր բնակչությամբ և արդյունաբերական պոտենցիալով ՀԽՍՀ երրորդ քաղաք Կիրովականում գործում էին շուրջ երեք տասնյակ արդյուաբերական ձեռնարկություններ, որոնցում աշխատում էին 20 հազարից ավելի մարդ:[21] 1924 թ. քաղաքի կարգավիճակ ստանալուց հետո, դառնալով խոշոր բազմաճյուղ արդյունաբերական կենտրոն, Կիրովականի բնակչությունը հետագա 60 տարում աճեց շուրջ 20,6 անգամ: Քաղաքի գործարաններում թողարկվող համախառն արտադրանքը կազմում էր ՀԽՍՀ համախառն արդյունքի մի զգալի հատվածը:[22] Դեռևս 1933 թ. հիմնված Կիրովականի Ալ. Մյասնիկյանի անվան քիմկոմբինատը, լինելով արդյունաբերության տվյալ ճյուղի առաջնեկներից մեկը Հայաստանում, ապահովում էր քաղաքի արդյունաբերական արտադրանքի շուրջ 30%-ը: Կոմբինատն արտադրում էր կարբիտ, մելամին, ամոնիակ, ցիանաթթու և մատակարարում էր ԽՍՀՄ արդյունաբերության տարբեր ճյուղերին անհրաժեշտ սինթետիկ կորունդի հիմնական մասը:[23] 1946թ. շահագործման հանձնվեց Կիրովականի ՋԷԿ-ը, որի էներգահզորությունների շնորհիվ ընդլայնվեցին քաղաքի արդյունաբերական հզորությունները: Կիրովականի ծանր արդյունաբերական հիմնարկների շարքում ուրույն տեղ ունեին նաև «Ավտոմատիկա», «Ավտոգենմաշ», Քիմիական մանրաթելերի, Բարձր ջերմային տաքացուցիչների, Ճշգրիտ հաստոցների, Լուսատեխնիկական, Պոլիմերային սոսինձների գործարանները:[24] Թեթև արդյունաբերական ձեռնարկությունների շարքում հատուկ տեղ ուներ Կիրովականի մորթու-մուշտակի գործարանը:

---

[21] *Գ.Կոզմոյան, Քաղաքների զարգացումը Սովետական Հայաստանում 1920-1970, Եր.,1977, էջ 88-89:*

[22] *ՀՍՀ, հ.5, Եր., 1979, էջ 464:*

[23] *Գ.Կոզմոյան, նշվ. աշխ., էջ 63:*

[24] *Նույն տեղում, էջ 88-89:*

Մինչերկրաշարժյան Կիրովականը նաև գիտակրթական աչքի ընկնող կենտրոն էր: Քաղաքում գործում էին շուրջ երեք տասնյակ հանրակրթական, հատուկ, երեկոյան և հերթափոխային, չորս երաժշտական և մեկ նկարչական դպրոցներ, մեկ տասնյակից ավելի ուսումնարաններ և տեխնիկումներ: 1959 թ. հիմնվում է Երևանի Կ. Մարքսի անվ. պոլիտեխնիկական ինստիտուտի (այժմ՝ Հայաստանի պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամ) Կիրովականի մասնաճյուղը:[25] 1969 թ. Հայկական հեռակա մանկավարժական ինստիտուտի հիման վրա ստեղծվեց Կիրովականի մանկավարժական ինստիտուտը (այժմ՝ Հովհաննես Թումանյանի անվան Վանաձորի պետական համալսարան հիմնադրամ):[26] Կիրովականում մինչ երկրաշարժը գործում էին երկու ճյուղային գիտա-հետազոտական հիմնարկներ՝ Է.Տեր-Ղազարյանի անվան պոլիմերային սոսինձների պետական գիտա-հետազոտական ինստիտուտը և «Ավտոմատիկա» ինքնուրույն կոնստրուկտորական բյուրոն:[27] Քաղաքի մշակութային կյանքում մեծ դերակատարում ուներ 1931 թ. հիմնված Հ. Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնը: Կիրովականում գործում էին մի քանի մշակույթի պալատներ ու կինոթատրոններ, 19 գրադարան՝ ավելի քան 480 հազար կտոր գրքով:[28] 1938 թ. հիմնվեց քաղաքի երկրագիտական թանգարանը (այժմ Լոռի-Փամբակի երկրագիտական թանգարան),[29] իսկ 1974թ. Կիրովականում բացվեց Հայաստանի ազգային պետական պատկերասրահի Կիրովականի մասնաճյուղը, որը 1979թ. վերակազմավորվել է որպես կերպարվեստի ինքնուրույն թանգարան:[30]

---

[25] *http://polytech.am/wpolytech/?page_id=1134*

[26] *http://www.vsu.am/index.php/hy/buhi-masin/patmakan-aknark*

[27] *Կ.Կոզմոյան, նշվ. աշխ., էջ 89:*

[28] *http://lori.mtad.am/about-communities/463/*

[29] *http://lorivisit.com/AM/lori-pambak-geological-museum/*

[30] *http://vanadzor.am/tangaraner/*

Ոչ պակաս արդյունաբերական ներուժ ուներ նաև մինչերկրաշարժյան Սպիտակը, որտեղ գործում էին հանրապետությունում իրենց տեսակի մեջ միակը համարվող երկու գործարան՝ Շաքարի և Վերելակների: Սպիտակի շաքարի գործարանի կիտրոնաթթվի ($C_6H_8O_7$) արտադրամասը իր թողարկման ծավալներով երրորդն էր նախկին ԽՍՀՄ-ում:[31] Սպիտակում գործում էին նաև թեթևարդյունաբերական երեք խոշոր ձեռնարկություններ՝ Կաշվի փոխարինիչների գործարանը, Կարի արտադրական միավորումը և Տրիկոտաժի ֆաբրիկան: Մինչերկրաշարժյան Սպիտակում գործում էին 7 հանրակրթական, գեղարվեստի, երաժշտական, մարզական դպրոցներ, տեխնիկում,պրոֆտեխուսումնարան, 10 մսուր-մանկապարտեզ, հիվանդանոց, զբոսայգի, մշակույթի տուն, գրադարան, կինոթատրոն, երկրագիտական թանգարան և մարզադաշտ:

ՀԽՍՀ գյուղատնտեսության մեջ ևս զգալի էր Աղետի գոտում հայտնված տարածաշրջանների ներդրումը, որտեղ արտադրվում էր հացահատիկի, բանջարանա-բոստանային և հատկապես տեխնիկական կուլտուրաների զգալի բաժինը: Ժամանակակից Շիրակի մարզում ընդգրկված նախկին վարչական շրջանների տարածքի 63%-ը մինչև երկրաշարժը կազմում էին գյուղատնտեսական հողահանդակները: Այս տարածաշրջանը հանրապետությունում զգալի տեղ էր գրավում մսի ու կաթի արտադրության ոլորտում, տալիս էր հանրապետությունում արտադրվող շաքարի ճակնդեղի 75 և հացահատիկի 35%-ը:[32] Ավերման գոտու էպիկենտրոնում հայտնված Սպիտակի նախկին վարչական շրջանի կոլեկտիվ և պետական տնտեսությունները մասնագիտացված էին հիմնականում կաթնամսատու

---

[31] *Գ.Կոզմոյան, նշվ. աշխ., էջ 103:*

[32] *Լ.Վալեսյան, Հայկական ՍՍՀ տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, Եր.,1988, էջ 404:*

անասնապահության բնագավառում, որն ապահովում էր գյուղատնտեսկան համախառն արտադրանքի 58,7%-ը, զգալի տեղ էր հատկացված նաև դաշտավարությանը: Վերջինիս գլխավոր ճյուղերն էին հացահատիկի մշակությունն ու ճակնդեղագործությունը, որոնք ապահովում էին գյուղատնտեսական արտադրանքի 41,3%-ը: Սակայն Սպիտակի երկրաշարժը հսկայական վնաս հասցրեց տարածաշրջանի տնտեսության այս ճյուղին:Գրանցվեց անասնագլխաքանակի և թռչնի հսկայական կորուստ, ավերվեցին անասնաֆերմաներ, գյուղատնտեսական արտադրական հզորություններ, վնասվեց նաև խորհրդային տարիներին ստեղծված ոռոգման համակարգի խիտ ցանցը:

Աղետի գոտու երեք խոշոր քաղաքային համայնքներում 2015-2016 թթ. սեռատարիքային և մասնագիտական տարբեր խմբերի շրջանում մեր կողմից անցկացված սոցիոլոգիական հարցումների արդյունքները մինչերկրաշարժյան իրողությունների վերաբերյալ արձանագրել են հետևյալ պատկերը: Հարցաթերթիկի «Ինչպիսի՞ն էր Ձեր բնակավայրը մինչև երկրաշարժը» հարցին ավագ տարիքային խմբի գյումրեցիների 80%-ը պատասխանել է «Բարեկարգ և հարմարավետ», 15%-ը՝ «Ոչ այնքան բարեկարգ էր, բայց հարմար ապրելու համար» և 5%-ը՝ «Անբարեկարգ»: Հարցված վանաձորցիների 90%-ը իրենց բնակավայրը համարում են «Բարեկարգ և հարմարավետ», իսկ 10%-ը՝ «Ոչ այնքան բարեկարգ էր, բայց հարմար ապրելու համար»: Տոկոսային առումով նույն պատկերն է գրանցվել Սպիտակ քաղաքում: «Ինչպե՞ս եք գնահատում Ձեր ընտանիքի սոցիալական և տնտեսական ապահովվածության աստիճանը մինչև երկրաշարժը» հարցին վերոհիշյալ տարիքային խմբի գյումրեցիների 70%-ը պատասխանել է «Բարձր», 30%-ը՝ «Միջին», վանաձորցիների 35%-ը՝ «Բարձր», 65%-ը՝ «Միջին», սպտակցիների 55%-ը՝ «Բարձր»,

45%-ը «Միջին»: Հարցաթերթիկի տվյալ բլոկում ընդգրկված «Միջինից ցածր» և «Ցածր կամ անապահով» հարցերի պատասխանները զրոյական են: Բավական բարձր ցուցիչներ են արձանագրվել մեզ հետաքրքրող ժամանակահատվածում առողջապահական, սոցիալական ապահովության, կրթական և մշակութային իրավիճակի գնահատման պարագայում: Գյումրեցի հարցվողների 30%-ը առողջապահական և սոցիալական ապահովության նախաերկրաշարժյան մակարդակը գնահատել են «Գերազանց», 50%-ը՝ «Լավ», 20%-ը՝ «Բավարար»: Վանաձորում պատկերը հետևյալն է. 60%-ը՝ «Լավ», 30%-ը՝ «Բավարար», 10%-ը՝ «Անբավարար»: Սպիտակցի հարցվողների պատասխաններն ունեն հետևյալ տեսքը. «Գերազանց»՝ 10%-ը, «Լավ»՝ 90%-ը: Մինչև երկրաշարժը կրթության դրվածքի գնահատման հարցում երեք քաղաքներում գրանցվել է միևնույն արդյունքը. 50%-ը՝ «Գերազանց», 40%-ը՝ «Լավ», 10%-ը՝ «Բավարար»: Մինչերկրաշարժյան մշակութային կյանքին մասնակցության մասին՝ «Հաճախու՞մ էիք արդյոք մշակութային հիմնարկներ կամ մասնակցե՞լ եք միջոցառումներին» հարցին, Գյումրիում արձանագրվել է հետևյալ պատկերը. թատրոն հաճախել է հարցվողների 65%-ը, կինոթատրոն՝ 70%-ը, համերգներ և զանգվածային մշակութային միջոցառումներ՝ 75,5%-ը, գրադարաններ, թանգարաններ և ցուցահանդեսներ՝ 60%-ը: Վանաձորում հարցման մասնակիցների 70%-ը հաճախել են թատրոն և կինոթատրոն, 40%-ը՝ համերգներ և զանգվածային մշակութային միջոցումներ, գրադարաններ, թանգարաններ և ցուցահանդեսներ: Սպիտակցի հարցվողների շրջանում պատկերը հետևյալն էր. թատրոն հաճախել են 70%-ը, կինոթատրոն՝ 80, իսկ 40%-ը՝ համերգներ և զանգվածային մշակութային միջոցառումներ, գրադարաններ, թանգարաններ և ցուցահանդեսներ: Մեր կողմից անցկացված հարցումների արդյունքները ևս վկայում են աղետի գոտում

հայտնված բնակավայրերի տնտեսական, սոցիալ-առողջապահական և կրթամշակութային բարձր մակարդակը, որն արձանագրվել էր վերը բերված խորհրդային շրջանի պաշտոնական վիճակագրական և մասնագիտական գրականության մեջ:

ՀԽՍՀ մասշտաբներով զգալի էր նաև Աղետի գոտու բնակավայրերի մարդկային ռեսուրսների տեսակարար կշիռը: Խորհրդային տարիներին տարածաշրջանի՝ հատկապես քաղաքային բնակավայրերում, գրանցվեցին բնակչության աճի աննախադեպ տեմպեր. այսպես, Լենինականում՝ 5,2 անգամ, Կիրովականում՝ 20,6 և Սպիտակում՝ 4,5 անգամ: Իրերի նման դրությունը պայմանավորված էր հիշյալ քաղաքների լայնածավալ արդյունաբերականացմամբ, շրջակա գյուղական վայրերից աշխատուժի մեծ ներհոսքով, բնակկենցաղային պայմանների անընդհատ բարելավմամբ և ինչու չէ նաև բնական աճի բավական բարձր տեմպերով:[33]

Աղետի գոտու երեք խոշոր քաղաքների բնակչության աճի շարժընթացը խորհրդային տարիներին մինչև 1988թ. տե՛ս աղյուսակ 1-ում:

Խնդրո առարկա տարածաշրջանում 1988 թ. Սպիտակի երկրաշարժն առաջինը չէր XXդ., սակայն իր հետ բերած ավերածությունների և հետևանքների ծավալների առումով այն գերազանցեց դրանից վեց տասնամյակ առաջ տեղի ունեցած՝ այսպես կոչված, Լենինականի երկրաշարժին: Բնական աղետի հետևանքների հաղթահարման գործում խորհրդային տարիներին կուտակվել էր որոշակի փորձ, որը հատկապես տեսանելի էր Լենինականի վերաշինման և վերականգնման պարագայում: Մեր պնդումն առավել առարկա-

---

[33] *Լ.Վալեսյան, նշվ.աշխ., էջ 113:*

յական դարձնելու համար փորձենք համառոտ ներկայացնել Լենինականի երկրաշարժի հետևանքների հաղթահարման գործում ձեռնարկված միջոցառումներն ու ձեռք բերված արդյունքները:

Աղյուսակ 1

***Աղետի գոտու բնակչության աճի շարժընթացը 1926-1988 թթ.*** [34]

| Քաղաքներ | | Կազմավորման տարեթիվը | Հաշվառման տարեթվերը | | | | | | Բնակչության աճը (անգամ) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 1926 թ. | 1939թ. | 1959թ. | 1970թ. | 1979թ. | 1988թ.[35] | |
| 1. | Լենինական | 1840 թ. | 42313 | 67729 | 108446 | 164966 | 206613 | 226000[36] | 5,2 |
| 2. | Կիրովական | 1924 թ. | 8640 | 17607 | 49423 | 106624 | 146036 | 178000[37] | 20,6 |
| 3. | Սպիտակ | 1960 թ. | 4078 | 5035 | 8667 | 11913 | 14591 | 18400[38] | 4,5 |

1926 թ. հոկտեմբերի 22-ին տեղի ունեցավ Լենինականի երկրաշարժը, որն ավերեց քաղաքի զգալի մասը: Աղետից անմիջապես հետո ստեղծվեց Ռեսպուբլիկական (Հանրապետական) արտակարգ հանձնաժողով, որը լծվեց ավերված քաղաքի վերականգնման և վերաշինման հարցերի լուծմանը: Համաձայն տեխնիկական հանձնաժողովի ներկայացրած զեկույցի՝ Լենինական քաղաքում երկրաշարժից տուժել էր 8800 տուն, որից ավերված էր 5517-ը, իսկ գավառի 44

---

[34] *1926, 1939, 1959 թթ. տվյալները վերցված են Населенные пункты и население Армянское ССР за 1831-1959 годы, Статистический сборник, составители: А.П.Манвелян и Г.М.Мартиросян, Армянское госиздательство, ЦСУ при Совмине АрмССР, Ереван, 1962, էջ 7, 48; 1970,1979 թթ. տվյալները՝ Итоги всесоюзной переписи населения 1979 года по Армянской ССР, том 1, Ереван, 1980, էջ 28-29:*

[35] *1988 թ. տվյալները մոտավոր են, քանի որ բացակայում են պաշտոնական վիճակագրական նյութերը:*

[36] *Լ. Վալեսյան, նշվ.աշխ., էջ 140:*

[37] *http://lori.mtad.am/about-communities/463/;Լ.Վալեսյանի տվյալներով 167 hq.,էջ 141:*

[38] *http://lori.mtad.am/about-communities/463/*

գյուղերում տուժել էր 6018 տնտեսություն:[39] Թե՛ քաղաքին և թե՛ գավառին հասցվել էր հսկայական նյութական-տնտեսական վնաս: Քաղաքում և գավառում եռանդուն աշխատանքներ էին ծավալել նաև Կարմիր Խաչը և ԱՄԵՐԿՈՄ-ը[40], իսկ այն բնակելի շրջանները, որոնք դուրս էին մնացել այդ օգնության ցուցակներից, կառավարության որոշմամբ օգնություն էին ստանում պետական միջոցներից: Կառավարության որոշմամբ երկրաշարժից չվնասված գավառամասերում պետք է տեղակայվեին տուժած շրջանների բնակարանազուրկ ընտանիքները, ինչպես նաև նրանց համար պետք է կազմակերպվեր օգնություն բնամթերքի տեսքով՝ տեղի գյուղացիների միջոցներով: Արագ տեմպերով վերականգնվում էին նաև վնասված գործարանները, որոնք շտապ կարգով վերսկսել էին իրենց աշխատանքները:[41] Ցավոք, պետք է նշենք, որ 1926թ. երկրաշարժի զոհերի ճշգրիտ կամ գոնե մոտավոր թիվը մեզ պարզել չհաջողվեց: Տվյալ ժամանակաշրջանի մեզ հասանելի ո՛չ արխիվային նյութերում և ո՛չ էլ մամուլում զոհերի թվի մասին հստակ տեղեկություններ չկան: Գյումրու պատմությանը և մշակույթին նվիրված կոլեկտիվ մենագրության մեջ խոսվում է շուրջ 300 զոհի մասին,[42] որը մեր կարծիքով արժանահավատ չէ և, բացի այդ, բացակայում է տեղեկատվության աղբյուրը:

Վերականգնման, բնակիչների տարհանման, նրանց ունեցվածքի անձեռնմխելիության ապահովման ու առաջին օգնության գործում անգնահատելի էր տեղի բերդապահ զորքի ներդրումը:Վերջինիս զինվորները անձնական արիության շնորհիվ թույլ չտվեցին

---

*[39] Թ.Աղանյան, 1926 թ. Լենինականի և 1988 թ. Սպիտակի երկրաշարժների համեմատական վերլուծության փորձ, էջ 164:*

*[40] «Բանվոր» թերթ, Լենինական, 1926, № 448 (հետայսու՝ Բանվոր):*

*[41] Բանվոր, 1926, № 448:*

*[42] Գյումրի. Քաղաքը և մարդիկ, էջ 105:*

քաղաքի թալանին, բժշկական անձնակազմը վիրավորներին ցույց տվեց առաջին օգնությունը, զինվորական խոհանոցները կարիքավորներին ապահովում էին ուտելիքով, իսկ հասարակ զինվորները պահակություն էին անում բնակչության տներում՝ ապահովելով ունեցվածքը, օգնում փլատակներից հանել վիրավորներին, ոգնորում էին ծանր վիճակում գտնվող բնակչությանը՝ կասեցնելով խուճապը: Թբիլիսիից Լենինական ժամանած Անդրկովկասյան ժողկոմխորհի կողմից առանձնացված տեխնիկական հանձնաժողովը պարզել էր, որ երկրաշարժի պատճառած վնասը, նախնական հաշվարկներով կազմել է. Լենինականի գավառում՝ 25 մլն ռուբլի, որից միայն քաղաքին պատճառված վնասը՝ 20 մլն ռուբլի:[43]

Լենինականի երկրաշարժը ծանր հարված էր հասցրել նաև գավառի գյուղական բնակչությանն ու բնակավայրերին, մի շարք գյուղեր ամբողջովին ավերվել էին, օրինակ՝ Դահառլուն (այժմ՝ Գետք), Բայանդուրը, Խլի Ղարաքիլիսան (այժմ՝ Ազատան), իսկ մի շարք գյուղեր վնասվել էին մասնակի: Տուժած գյուղերի վիրավոր բնակիչներին իրենց օգնությունն էին ցույց տալիս Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի, ինչպես նաև Երևանից և Թբիլիսիից ժամանած սանիտարական գնացքների անձնակազմերը:[44]

Աղետից հետո Լենինական էին ժամանել և գործում էին ԽՍՀՄ կուսակցական օրգանների աշխատակիցներ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետական արտակարգ հանձնաժողովը: Սրան առընթեր գործում էր տեխնիկական հանձնաժողովը, որի գործունեությունը արծարծվում և լուսաբանվում էր Հանրապետությունում հրատարակվող թերթերում,մասնավորապես՝ «Բանվոր» թերթում:[45]

---

[43] *Կ. Կոզմոյան, Լենինական, Եր., 1957, էջ 52:*

[44] *Նույն տեղում:*

[45] *Բանվոր, 1926 թ., № 452:*

Լենինականին օգնելու համար ԽՍՀՄ հանրապետություննե-րի քաղաքների մի շարք թերթեր ստեղծեցին քաղաքի վերաշինման համար նախատեսված ֆոնդեր, որոնք իրենց հավաքած գումարները ուղարկում էին Լենինականի վերաշինման կոմիտե:[46] Լենինականի վերաշինման ֆոնդին օգնելու գործում իրենց լուման ներդրեցին ԽՍՀՄ հանրապետությունների մի շարք քաղաքների բնակիչները՝ օգնելով գումարով և գույքով: Աղետի գոտու բնակչությանը մեծապես օգնում էին նաև ՀԽՍՀ-ի այլ շրջանների և ԽՍՀՄ հանրապետու-թյուններում ապրող հայերն ու հայկական կազմակերպություն-ները:[47]

1927թ. փետրվարի 22-ին ԽՍՀՄ Ժողկոմխորհը հատուկ նիստ գումարեց, որտեղ քննարկվեց Լենինական քաղաքի վերականգնման, ինչպես նաև գավառի բնակիչներին ցույց տրվելիք օգնության հարցերը: Նիստում ընդունվեցին քաղաքի վերականգնմանն ուղղ-ված կոնկրետ քայլերի ու միջոցառումների ծրագրեր: ԽՍՀՄ Ժողկոմ-խորհը այդ նպատակների համար 1926-1929 թթ. հատկացրեց 18 մլն ռուբլի: Այս հսկայական գումարը հատկացվեց վարկի տեսքով՝ մոտ 50 տարով: Ծրագրերն իրագործելու համար կազմվեց քաղաքի վե-րակառուցման ու ընդարձակման նախագիծ:[48]

---

*[46] Այդ թերթերից էին Ստալինգրադի (այժմ՝ Վոլգոգրադ) "Голос Пахаря", Ղրիմի "Красный Крым", Անդրֆեդերացիայի "Заря Востока", "Коммунист", "Красное Знамя" ու տասնյակ այլ թերթեր:*

*[47] Օրինակ՝ Ախալքալաքի թեմերում կազմակերպվել էին երկրաշարժից տուժածնե-րին օգնելու հանձնաժողովներ, կազմակերպվել էին նաև հացկերույթներ, որտեղ հավաքված գումարը, մոտ 1000 ռուբլի, տրամադրվելու էր քաղաքի վերա-կանգնման նպատակների համար: Մի այլ օրինակ. Համամլու (Սպիտակ) կայա-րանի արհմիության 1926 նոյեմբերի 17-ին կայացած ժողովում որոշվեց Լենինա-կանի աղետյալների օգնության համար հատկացնել իրենց երեք՝ նոյեմբեր, դեկ-տեմբեր, հունվար ամիսների մեկօրյա աշխատավարձը: Բանվոր, 1926, № 453:*

*[48] Վ. Կոզմոյան, Լենինական, էջ 55:*

Ծրագրավորված վերակառուցողական աշխատանքների ու տեղական արդյունաբերական ձեռնարկությունների վերականգնման և հետագա զարգացման խնդրի հետ կապված բոլոր հարցերը բազմակողմանի ուսումնասիրելու համար կազմվեց հանձնաժողով (նախագահ՝ Հ.Մինասյան, անդամներ՝ Ս.Ստեփանյան, Դ.Չիսլ, Ս.Ալմազյան և Ա.Համբարձումյան), որը պետք է աշխատեր մինչև ապրիլի 15-ը:[49]

1926թ. երկրաշարժի հետևանքների վերացման գործընթացը շարունակվեց մինչև 1930-ականները, երբ տեղական, հանրապետական և միութենական իշխանությունների ջանքերով վերականգնվեցին քաղաքի արդյունաբերական ներուժն ու բնակֆոնդը: Ավելին, այդ ընթացքում ոչ միայն վերականգնվեցին ավերված արտադրամասերը, այլև կառուցվեցին նորերը. մասնավորապես մինչև 1930 թ. շահագործման հանձնվեցին գործվածքային ֆաբրիկան, որի արդյունավետ շահագործման համար նույն 1930 թ. բացվեց տեքստիլ տեխնիկումը (հետագայում՝ թեթև արդյունաբերության տեխնիկումը): 1934թ. շահագործման հանձնվեց նաև Մսի-պահածոների կոմբինատը (շինարարական աշխատանքները սկսվել էին 1930 թ.): 1936 թ. ավարտվեց հացի գործարանի կառուցումը: Այս ամենի հետ մեկտեղ վերականգնվել ու նորացվել էին երկաթուղային գիծը և կայարանը, բացվել ու շահագործման էին հանձնվել քաղաքը խմելու ջրով ապահովող նոր ջրատարը: Հիմնվում էին նաև նոր կրթական համալիրներ (հիմնականում Ֆաբրիկա-գործարանային ուսումնարաններ՝ բանֆակեր) և տեխնիկումներ՝ արդյունաբերական արտադրամասերն ու գործարանները բարձր որակավորմամբ տեղական մասնագետներով ապահովելու համար:[50] Հիմնվեցին մինչ այդ Ալեքսանդրապոլ-

---

[49] *Բանվոր, 1926, № 489:*

[50] *Թ.Աղանյան, 1926 թ. Լենինականի և 1988 թ. Սպիտակի երկրաշարժների համեմատական վերլուծության փորձ, էջ 166:*

Լենինականին ոչ հատուկ թաղամասեր, այսպես կոչված բանավաններ,[51] որոնցում սկզբնական շրջանում կառուցվեցին փայտե կամ քարե ժամանակավոր շենքեր (բնակչության շրջանում սրանք առավել հայտնի էին «բարաքներ» անվամբ), որոնցում հիմնականում բնակեցվեցին բանփակերի ու ֆաբրիկա-գործարանային ուսումնարանների (ՖԳՈՒ) (լենինականցիների շրջանում առավել գործածական էր ռուսերեն ФЗУ-անվանումը) շրջանավարտները: Բանավանների բնակչության մեծ մասը կազմում էին Լենինականի որբանոցների սաները և գավառի տարբեր գյուղերից քաղաք տեղափոխված աշխատուժը: Մեկ ու կես տասնամյակի ընթացքում, փաստորեն, Լենինականն ավանդական արհեստավորա-առևտրական քաղաքից աստիճանաբար վերածվեց ՀԽՍՀ-ի խոշոր արդյունաբերական կենտրոնի:

Այսպիսով, 1926-1940 թթ. ընթացքում քաղաքի վերակառուցման համար պետության կողմից ներդրվեցին հսկայական գումարներ, որոնց շնորհիվ քաղաքը ոչ միայն վերականգնվեց, այլև ամբողջովին նորացվեց, ընդարձակվեց ու ձևափոխվեց: Քաղաքի ու գավառի ակտիվ ու լայնամասշտաբ վերականգնման շնորհիվ հնարավոր դարձավ խուսափել ժողովրդագրական աղետից, ինչը որպես կանոն հետևում է ավերիչ երկրաշարժին, սակայն մարդկային կորուստներից ու բնակչության բնական ու մեխանիկական շարժերի հետագա ոչ բարենպաստ հետևանքներից խուսափել չհաջողվեց: Որպես մեր պնդման հիմնավորում, բերենք վիճակագրական մի քանի տվյալներ, որոնք ընդգրկում են նախաերկրաշարժյան և հետերկրաշարժյան մեկ տասնամյակը: Այսպես. Լենինականի բնակչությունը 1923թ. համաքաղաքային վիճակագրության տվյալներով

---

[51] *Հիշյալ նորաստեղծ թաղամասերից առավել հայտնի էին Տեքստիլ կոմբինատի, Երկաթգծի և Մսի-կոմբինատի բանավանները:*

կազմում էր 48086 մարդ, 1926 թ. դեկտեմբերի 17-ի մարդահամարի արդյունքներով նվազել էր 5773 մարդով կամ 13,6%-ով և կազմում էր 42313 մարդ, սակայն երկու տարի անց՝ 1928թ. հունվարի դրությամբ բնակչության թիվը հասել է 48 հզ. սահմանին, իսկ ահա 1931թ. Ավելացել էր 11075 մարդով ու կազմել ավելի քան 59 հզ. մարդ:[52] Երկրաշարժից տաս տարի անց քաղաքի բնակչությունը հատեց 70 հազարի սահմանը:[53] Ուսումնասիրողների կարծիքով հետերկրաշարժյան շրջանում, հատկապես Երկրորդ աշխարհամարտից հետո, բնակչության բնական աճի բարձր ցուցանիշներից բացի, Լենինականի բնակչության աննախադեպ աճին նպաստել է նաև դեպի քաղաք գյուղական բնակչության ներհոսքը:[54] Լայնածավալ բնակարանային և հատկապես արդյունաբերական շինարարությունը, հազարավոր աշխատատեղերի ստեղծումը Լենինականը գրավիչ էին դարձնում գյուղական շրջաններից այստեղ ձգտող աշխատուժի համար: Աղետյալ քաղաքը ոչ թե լքվեց բնակիչների կողմից, այլ ընդհակառակը, դարձավ հազարավոր «նորաթուխ քաղաքացիների» բնակատեղին: Հետագա տարիներին ևս քաղաքի բնակչության աճը շարունակվեց և Սպիտակի երկրաշարժի նախօրյակին հատեց 200 հզ. սահմանը, ինչը մոտ հինգ անգամ ավել է 1920-ականների համեմատ:[55]

Հարկ է նշել, որ խորհրդային իշխանությունները աղետի բերած ավերածությունների մեջ հիմնականում մեղադրում էին մինչխորհրդային շրջանի շինարարներին՝ նշելով, որ նրանք քաղաքի կառուցապատման ժամանակ հաշվի չէին առել տարածաշրջանի

---

[52] *Ա. Բոյաջյան, Ժողովրդագրական գործընթացները Շիրակում 1926-1959 թթ., ՇՀՀԿ Գիտական աշխատություններ, XIV, Գյումրի, 2011, էջ 111:*

[53] *Հ. Գաբրիելյան, Լենինական, Եր., 1984, էջ 36:*

[54] *Ա. Բոյաջյան, նշվ.աշխ., էջ 111:*

[55] *Հ. Գաբրիելյան, նշվ. աշխ., էջ 36-37; Տե՛ս նաև աղյուսակ 1:*

սեյսմակայունության հանգամանքը և շենք-շինությունների սեյսմակայունության ապահովման խնդիրը: Լենինականում սկսված շինարարական աշխատանքների ժամանակ դրանք հաշվի առնվեցին, ուստի 1920-30-ականների բնակելի և այլ տիպի կառույցները, որոնք քաղաքաբնակների շրջանում հայտնի էին «Չիսլևի տներ» անվամբ, աչքի էին ընկնում իրենց արտակարգ ամրությամբ: Պատահական չէր, որ 1988 թ. Սպիտակի երկրաշարժի ժամանակ այս կառույցները կանգուն մնացին:[56] Հետագայում սեյսմակայունության և հատկապես շինարարության որակի խնդիրը մղվեց հետին պլան: Քաղաքի ակտիվ կառուցապատումը 1960-80-ականներին իրականացվեց շինարարական նորմերի կոպիտ խախտումներով և սեյսմավտանգության անհիմն իջեցման հաշվին, որոնք հսկայական մարդկային և նյութական կորուստների պատճառ հանդիսացան:[57]

Լենինականը, 1930-ականերից մինչև 1988 թթ. ապրելով խաղաղ աշխատանքի և զարգացման կեսդարյա մի ժամանակաշրջան, 1980-ականների վերջին իրենից ներկայացնում էր տարածաշրջանի խոշորագույն արդյունաբերական քաղաքներից մեկն ու ՀԽՍՀ տեքստիլ և սննդի արդյունաբերության կենտրոնը: Դա նպաստեց քաղաքի բնակչության ինչպես քանակական ու որակական աճին, այնպես էլ ֆինանսական, սոցիալական, մշակութային վիճակի բարելավմանը: Այս ամենի հանրագումարում քաղաքը ձեռք բերեց նոր դիմագիծ, որն ամբողջացնում էր նրա արդյունաբերական պոտենցիալն ու մշակութային հզոր ներուժը:

---

[56] *Թ.Աղանյան, 1926 թ. Լենինականի և 1988 թ. Սպիտակի..., էջ 168:*

[57] *Спитакское землятрясение. Зона бедствия вчера и сегодня, взгляд через 20 лет, Сборник документов,Протокол собрания республиканского партийно-хозяственного актива, от 17 января 1989г., Ереван, 2008, с. 264.*

## *Փրկարարական աշխատանքները Աղետի գոտում և աղետյալներին տրամադրված օգնության ձևերը*

1988թ. դեկտեմբերի 7-ի Սպիտակի սարսափազդու և կործանարար երկրաշարժից հետո փոխվեց ոչ միայն Աղետի գոտու, այլև հանրապետության ամբողջ ժողովրդի կյանքը՝ բաժանելով այն երկու մասի՝ «աղետից առաջ և հետո»: Երկրաշարժի էպիկենտրոնում՝ Սպիտակ քաղաքում, ցնցումների ուժգնությունը կազմել էր 10, Լենինականում՝ 9, Կիրովականում՝ 8 բալ: Ավելին, հզոր հետցնցումներն էլ ավելի մեծացրին ավերածությունների մասշտաբները: Սպիտակում ոչնչացվեց համարյա ողջ բնակֆոնդը, Լենինականում ավերվեց կամ վթարային դարձավ բնակֆոնդի 80%-ը: Աղետի գոտում ընդհանուր առմամբ շարքից դուրս եկավ մոտ 4,7 մլն. քառակուսի մետր տարածքով բնակֆոնդ:[58] Երկրաշարժի հետևանքով ավերվեցին և շարքից դուրս եկան 210 աշակերտ-տեղով հանրակրթական դպրոց, 47 հազար տեղով նախադպրոցական հիմնարկ, առողջապահական 416 օբյեկտ, 14 թանգարան, 391 գրադարան, 42 կինոթատրոն, 349 ակումբ և մշակույթի տուն: Շարքից դուրս եկան շուրջ երկու միլիարդ ռուբլու համախառն արտադրանք ապահովող արդյունաբերական ձեռնարկություն՝ 82 հազար աշխատատեղով: 1988թ. գներով ընդհանուր նյութական կորուստը կազմում էր մոտ 10 միլիարդ ռուբլի:[59] Համաձայն ՀԽՍՀ առողջապահության նախարարության հրապարակած պաշտոնական տվյալների՝ զոհերի թիվը կազմում էր 24 985, վիրավորվել էր շուրջ 17000 մարդ:[60] Հարկ է նշել, որ մինչ այժմ զոհերի թվի վերաբերյալ մասնագիտական և այլ տիպի գրականության մեջ տարակարծությունները շատ են, ուստի որպես

---

*[58] Спитакское землятрясение. Зона бедствия вчера и сегодня, с. 5-6.*

*[59] Նույն տեղում, էջ 7:*

*[60] Նույն տեղում, էջ 6:*

հիմք վերցրել ենք պաշտոնական տեղեկատվությունը: Երկրաշարժին զոհ գնացածների մեծ մասը բաժին է ընկնում Լենինականին և որոշ հետազոտողների պնդմամբ դրանց թիվը տատանվում է 16 հազարի և 20 հազարի միջև:[61] Սպիտակում զոհվեց քաղաքի յուրաքանչյուր չորրորդ բնակիչը: Անօթևան մնացածների թիվը կազմում էր 514 հազար մարդ:[62]

Երկարաշարժից ժամեր անց ՀԿԿ Կենտկոմի 1988 թ. դեկտեմբերի 7-ի որոշմամբ ստեղծվեց երկրաշարժի, նրա հետևանքների վերացման և տուժածներին օգնություն ցուցաբերելու կոմիտե: Նույն օրը նույնպիսի՝ բայց համախորհրդային մասշտաբով կոմիտեի ստեղծման հրաման արձակեց ԽՍՀՄ մինիստրների խորհուրդը՝ Ն. Ռիժկովի նախագահությամբ:[63] Դեկտեմբերի 9-10-ը հանրապետությունում և 10-ին՝ ողջ ԽՍՀՄ տարածքում համապետական սուգ հայտարարվեց ի հիշատակ զոհերի:

ԽՍՀՄ կենտրոնական կառվարությունը ՀԽՍՀ ուղարկեց մեծ քանակությամբ տեխնիկական միջոցներ՝ փրկարարական աշխատանքներ կատարելու նպատակով: Արդեն դեկտեմբերի 20-ի դրությամբ աղետի գոտում աշխատում էին ավելի քան 1000 ամբարձիչ, 1600-ից ավել ավտոմեքենա, 350 բուլդոզեր և այլն: Այս ընթացքում աղետյալներին օգնության էին եկել ավելի քան 1000 ինքնաթիռ՝ տարբեր տեսակի բեռներով, 31 հզ. երկաթուղային վագոն և 8000 բեռնատար մեքենա:

---

[61] *Ա.Մխիթարյան, 1988 թ. դեկտեմբերյան երկրաշարժը և աղետի գոտու վերականգնման գործընթացն ու արդյունքները Շիրակի մարզում, «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2006, էջ 11:*

[62] *Сптакское землятрясение, Зона бедствия…, с. 6.*

[63] *Նույն տեղում, էջ 17-18.*

Բժիշկներ էին ժամանել ԽՍՀՄ բոլոր հանրապետություններից:[64] Միայն առաջին ժամերի ընթացքում զինվորական բժիշկները բժշկական օգնություն ցուցաբերեցին շուրջ 1200 մարդու, իսկ աշխատանքների ընթացքում ընդհանրապես օգնության էին դիմել մոտ 6000 մարդ:

Ինչպես ԽՍՀՄ տարբեր հանրապետություններից, այնպես էլ աշխարհի տարբեր երկրներից, ինչպես նաև աշխարհասփյուռ հայության կողմից մեծ թափ առավ եկող օգնությունը: Աղետից անմիջապես հետո, շաբաթներ ու ամիսներ շարունակ, դեպի Հայաստան էր գալիս հումանիտար օգնությունը:[65] Տարբեր տեսակի նյութական և տեխնիկական օգնություն ստացվեց 110 օտարերկրյա տարբեր երկրներից ու մի շարք միջազգային կազմակերպություններից: Օգնությունը գալիս էր անընդհատ. միայն ինքնաթիռներով շուրջ 44 տարբեր երկրնեցից 346 չվերթ էր կատարվել, որոնցով ժամանել էին օտարերկրյա փրկարարները և տեղ էին հասցվել աղետյալներին որպես օգնություն ուղարկված բեռները: Տարբեր երկրներից Աղետի գոտի էր ուղարկվում նաև մեծ քանակությամբ ֆինանսական օգնություն՝ անհատներից, բարեգործական հիմնադրամներից, ֆինանսական կազմակերպություններից:

Արտերկրից օգնություն ցուցաբերելու համար Աղետի գոտի էին ժամանում հատուկ մասնագետներ, որոնք իրենց հետ բերում էին դոնորական արյուն, հատուկ մեքենաներ, դեղամիջոցներ և այլն:[66]

---

[64] *Դեկտեմբերի 8-ին Մոսկվայից եկել էր բժիշկների բարձր որակավորում ունեցող բրիգադ, բաղկացած 98 մարդուց՝ առողջապահության նախարար Ե.Ի Չազովի ղեկավարությամբ: Դեկտեմբերի 9-ին Թբիլիսիից աղետի գոտի ժամանեց քաղաքացիական պաշտպանության բանակի առաջին գումարտակը մայոր Ռ. Սեմյոնովի գլախավորությամբ:*

[65] *Ռ. Ազիզբեկյան, Սպիտակի երկրաշարժը և համաշխարհային հանրության օգնությունը (1988-1990 թթ.), ՇՀՀԿ Գիտական աշխատություններ, XII,Գյումրի 2004, էջ 168-171:*

[66] *Сптакское землятрясение, Зона бедствия…, с. 11.*

Աղետյալ բնակավայրերին իրենց օգնության ձեռքը մեկնեցին բազմաթիվ երկրներ՝ ԱՄՆ-ը, Ֆրանսիան, Գերմանիան, Շվեյցարիան, Ավստրիան, Մեծ Բրիտանիան, Իսրայելը, Իտալիան, Հարավսլավիան, Նորվեգիան, Ճապոնիան, Չինաստանը և այլն: Նման բնույթի լայնածավալ նյութական և բարոյական օգնություն արտերկրի պետական, հասարակական և բարեգործական կազմակերպությունների կողմից Խորհրդային միության բնական կամ տեխնածին աղետի ենթարկված որևէ տարածաշրջանի (օրինակ՝ 1948թ. Աշգաբադի, 1966թ. Տաշքենդի երկրաշարժեր և 1986 թ. Չեռնոբիլի տեխնածին աղետը) մինչ Սպիտակի երկրաշարժը չէր գրանցվել: Աղետի գոտի այցելեցին բազմաթիվ նշանավոր հասարական-քաղաքական գործիչներ, որոնցից հարկ ենք համարում նշել Մեծ Բրիտանիայի նախկին վարչապետ բարոնուհի Մարգարեթ Թետչերին, որի ջանքերի շնորհիվ բրիտանական կառավարության միջոցներով Գյումրիում կառուցվեց Ջորջ Բայրոնի անվան դպրոցը: Իրենց աջակցությունն աղետյալներին բերեցին ամերիկյան նշանավոր կոնգրեսականներ Ռոբերտ Դոուլը, Ջեսի Ջեքսոնը, այն ժամանակվա ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշի որդին և թոռը, Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Միտերանի տիկինը՝ «Ֆրանս Լիբերտե» հումանիտար ֆոնդի նախագահ Դանիել Միտերանը, Իտալիայի նախկին վարչապետ Ամինտորե Ֆանֆանիի տիկինը՝ Մարիա Պիա Տավացաննի-Ֆանֆանին: Վերջինիս ջանքերով Սպիտակում հիմնվեց «Իտալական ավանը»՝ 204 բարեկարգ հավաքովի տնակներով:[67] Աղետի գոտի այցելած մարդասիրական առաքելությունների ղեկավարներից հարկ է նշել նաև աշխարհահռչակ Մայր Թերեզային, որի միաբան քույրերը իրենց անշահախնդիր ծառայությունն էին մատուցում աղետից տուժածներին: Առաջ ընկնելով նշենք, որ Մայր Թերեզայի բարեխնամ

---

[67] *Спитакское землетрясение, Зона бедствия…, с. 11-12:*

գործունեությունը Աղետի գոտում և հատկապես Շիրակի մարզում, շարունակեցին «Անարատ հղության հայ քույրերի միաբանության» միանձնուհիները (մեծավորուհի՝ քույր Արուսյակ Սաճոնյան), որոնց ջանքերով Գյումրիում հիմնվեց «Տիրամայր Հայաստանի Պողոսյան» կրթա-մշակութային և մարզական համալիրը ծնողազուրկ և կարիքավոր ընտանիքների երեխաների համար:

Մայր հայրենիքին պատուհասած աղետին անմիջապես արձագանքեց աշխարհասփյուռ հայությունը: Առաջիններից մեկը Աղետի գոտի այցելեց ֆրանսահայ մեծանուն երգիչ-երգահան Շառլ Ազնավուրը, ում ջանքերով ստեղծվեց «Aznavour pour l'Arménie» («Ազնավուրը Հայաստանին») բարեգործական հիմնադրամը, որտեղ սփյուռքի և օտարերկրյա կազմակերպություններից ու անհատներից հավաքվեց հսկայական դրամական միջոցներ՝ հօգուտ աղետյալների: Ազնավուրը մեկ այլ հռչակավոր հայորդու՝ երգահան Ժորժ Կառվարենցի հետ հեղինակեց «Pour toi Arménie» («Քեզ համար Հայաստան») երգը, որը կատարեց երգարվեստի և կինոյի համաշխարհային աստղերի կողմից: Երգի ձայնասկավառակի վաճառքից ստացված հասույթն ամբողջովին փոխանցվեց աղետից տուժվածների հիմնադրամին: Աղետյալներին իրենց օգնությունը բերեցին սփյուռքի հայկական ավանդական կուսակցությունները, բարեգործական և բարեխնամ կազմակերպությունները («Հայ բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ), «Հայ օգնության միությունը» (ՀՕՄ), Ամերիկայի «Հայկական համագումարը» և այլք) և տարբեր երկրներում ապրող հայ մեծահարուստները, որոնց շարքում հատկապես պետք է նշել ամերիկահայ գործարար Քըրք Քըրքորյանին, ում միջոցներով հիմնված «Լինսի հիմնադրամը» հսկայածավալ բնակարանաշինական աշխատանքներ իրագործեց Աղետի գոտում:

Յուրաքանչյուր արհավիրք, յուրաքանչյուր բնական կամ տեխնածին աղետ, բացի ավերածություններից, մարդկային և նյութական կորուստներից, իր հետ բերում է ոչ պակաս սոցիալական, հոգեբանական և մշակութային վնասներ: Վերջինների հաղթահարումը շատ դեպքերում առավել դժվար է, քան նյութական և նույնիսկ ժողովրդագրական վնասների փոխհատուցումը: Այստեղ հատուկ դերակատարում ունի նաև եկեղեցին իր հոգևոր-կրոնական կառույցներով և հավատացյալների վրա ունեցած ազդեցությամբ:[68] Երկրաշարժի առաջին իսկ օրերից, գիտակցելով Աղետի գոտու բնակչությանը նեցուկ կանգնելու խնդրում սոցիալ-հոգեբանական գործոնի դերն ու նշանակությունը, Հայոց եկեղեցին և նրա գլուխ՝ Ամենայն հայոց կաթողիկոս Տ.Տ Վազգեն Ա-ը նախաձեռնեցին առաջին կոնկրետ քայլերն այդ ուղղությամբ: Երկրաշարժի չորրորդ օրը Վազգեն Ա Վեհափառն այցելեց Աղետի գոտում հայտնված բնակավայրեր և նրա հոգևոր հովվի խոսքն ու ներկայությունը իսկայական հոգեբանական ազդեցություն ունեցան բնակչության վրա: Վազգեն Ա կաթողիկոսի՝ ի լուր աշխարհասփյուռ հայության հնչեցված կոչում կարմիր թելով անցնում էր Աղետի գոտու բնակչությանը հասցվելիք օգնության հոգեբանական կարևորության և աղետյալների սոցիալ-մշակութային վերածնության համար նպաստավոր պայմաններ ստեղծելու մասին միտքը:[69] 1988 թ. դեկտեմբերի կեսերին Ամենայն Հայոց կաթողիկոսը Աղետի գոտուն օգնության ձեռք մեկնելու կոչով դիմեց հայկական սփյուռքին և միջազգային կազմակերպություններին: Ամենայն Հայոց Հայրապետի կոչին միացան Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ-ը (հետագայում Ամենայն Հայոց

---

[68] *Т. Аганян, Вклад Армянской Апостольской церкви в деле социаль-культурной адаптации населения Зоны бедствия, The fundamentals of our spirituality, Proceedings of the VIII International Scientific conference, Tbilisi, 2016, p.19.*

[69] *Т. Аганяна, Вклад Армянской Апостольской церкви…, с. 23.*

կաթողիկոս Տ.Տ Գարեգին Ա) և Հայ կաթողիկե եկեղեցու կաթողիկոս-պատրիարք Հովհաննես-Պետրոս ԺԸ-ը: Շվեյցարական բանկում Վազգեն Վեհափառի անունով բացվեց արտարժութային հաշիվ, իսկ Սբ. Էջմիածնում ստեղծվեց հոգաբարձուների խորհուրդ, որում ընդգրկվեցին բարձր հոգևորականության և հայ ականավոր մտավորականության ներկայացուցիչներ:[70] Հոգաբարձուների խորհուրդը պարբերաբար ներկայացնում էր ֆինանսական հաշվետվություններ, որոնք հրապարակվում էին «Էջմիածին» ամսագրում: Պետք է փաստել, որ երկրաշարժին հաջորդած առաջին ամիսներին Մայր Աթոռի հասցեին ողջ աշխարհի եկեղեցիներից, եկեղեցական և կրոնական կազմակերպություններից, հասարակական կազմակերպություններից, հայկական սփյուռքի հայրենակցական միությունների կողմից ուղարկվեց նաև ֆինանսական մեծ օգնություն: Հայոց եկեղեցին Վազգեն Ա կաթողիկոսի պահանջով ի սկզբանե գործում էր բաց և թափանցիկ, որը չտեսնված երևույթ էր, հատկապես խորհրդային իրականության մեջ արմատավորված ժողովրդից ամեն ինչ թաքցնելու կամ կիսաճշմարտություններ ներկայացնելու իշխանությունների սովորության ֆոնի վրա: Հարկ է նշել, որ եկեղեցու խողովակներով ուղարկված ֆինանսական օգնությունը մինչև վերջին ցենտը ուղղվեց Աղետի գոտու կարիքներին, ինչ չի կարելի ասել խորհրդային պետական ֆինանսական կառույցների հաշվին փոխանցված գումարների մասին: Խորհրդային «Վնեշտորգբանկը» և «Սբերբանկը» ոչ միայն փոշիացրին տարբեր երկրներից աղետյալ տարածաշրջանի կարիքների համար փոխանցած հսկայական արտարժութային միջոցները, այլև ԽՍՀՄ փլուզումից հետո փաստորեն յուրացրին դրանք:[71]

*[70] «Էջմիածին», 1989, Ա, էջ 5:*

*[71] Т.Аганян, Вклад Армянской Апостольской церкви…, с. 21.*

## *Աղետի հետևանքների վերացման տնտեսական, քաղաքական և սոցիոմշակութային հիմնախնդիրները*

Փրկարարական և վերականգնողական աշխատանքներն Աղետի գոտում իրենց ծավալներով աննախադեպ էին ԽՍՀՄ պատմության մեջ: Արդեն 1989 թ. ամռանը վերականգնողական աշխատանքներում ներգրավվել էին ավելի քան 150 հզ մարդ, իսկ ավերված գյուղերն ու ավանները սկսել էին հետզհետե վերականգնվել: Վերականգնողական աշխատանքների կազմակերպման համար հատկապես քաղաքային բնակավայրերում, անհրաժեշտ էր հստակ նախանշել դրանց վերակառուցման մարտավարությունը: Սպիտակի պարագայում մասնագետների՝ նախագծող ճարտարապետներ, շինարարներ, երկրաբաններ և այլն, տարակարծությունները մեծ չէին, և արդեն 1989 թ. հունվարի 15-ին ՀԽՍՀ մինիստրների խորհուրդը հաստատեց 20 հազար բնակչի հաշվով Սպիտակ քաղաքի գլխավոր հատակագիծը, որը մշակվել էր «Հայպետնախագիծ» ինստիտուտի կողմից:[72] Հատկանշական է, որ այս հատակագծի իրականացման արդյունքում երբեմնի բավականին հոծ բնակեցված Սպիտակ քաղաքը «փռված» տեսք ստացավ: Նորակառույց թաղամասերը քաղաքի ավանդական միջուկից բավականին հեռու և կտրված լինելու պատճառով մինչ այժմ էլ մեկուսացված են քաղաքային ենթակառուցվածքներից: Սպիտակում անցկացված հարցազրույցներում մեր բանասացներից շատերն իրենց դժգոհությունն էին հայտնում վերոհիշյալ նորակառույց թաղամասերի վերաբերյալ՝ հատուկ նշելով, որ դրանք այդպես էլ չդարձան քաղաքի լիարժեք հատված:[73]

---

[72] *Спитакское землятрясение, Зона бедствия…, с. 249-250.*

[73] *ԴԱՆ, Սպիտակ, 2016:*

Լենինականի դեպքում տեղական և միութենական մասնագետների մոտեցումները տրամագծորեն հակառակն էին: Ի սկզբանե որոշվել էր քաղաքի պատմական կենտրոնը դեռևս ակտիվորեն չկառուցապատել բնակելի բազմաբնակարան շենքերով և անօթևան մնացածների խնդիրը լուծել նոր թաղամասերի կառուցման միջոցով: Տեղի մասնագետներից շատերը այդ թաղամասերի կառուցապատման համար տարբերակ էին համարում քաղաքից հարավ և հարավ-արևելք ընկած գյուղատնտեսական ոչ բարձրակարգ հողատարածքների վրա: Սակայն միութենական իշխանությունների ճնշման տակ հապշտապ «Երևաննախագիծ» ինստիտուտում մոսկովյան և լենինգրադյան մասնագետների մասնակցությամբ մշակվեց քաղաքի հյուսիսային և հյուսիս-արևմտյան կողմում 660 հեկտար բերրի սևահողերի վրա նոր թաղամասերի կառուցապատման շինարարական նախագիծը, համաձայն որի այս տարածքներում պետք է բնակեցվեին շուրջ 120 հազար մարդ: Նախատեսվում էր ամբողջ ծավալով վերականգնել քաղաքի բնակելի, արտադրական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների բոլոր օբյեկտները: 1989 թ. սկսվեց «Անի», «Մուշ 1», «Մուշ 2», «Աշոցք» թաղամասերի զանգվածային շինարարությունը: Լենինականի վերականգնման այս ծրագիրը մնաց անավարտ, իսկ դրա որոշ դրույթներ հետագայում անլուծելի խնդիրներ առաջացրին քաղաքի համար: Նախատեսված կառուցապատման հսկայական ծավալներից ինչ-որ չափով ավարտին հասցվեց միայն 58 հեկտար տարածք զբաղեցնող «Անի» թաղամասը, որը գյումրեցիների շրջանում առավել հայտնի է «58 թաղամաս» անվամբ: 4-5 հարկանի բնակելի շենքերի կառուցման համար հիմնականում օգտագործվեցին սեյսմակայունություն ապահովող միձույլ երկաթբետոնյա կառուցվածքներով և փոքրածավալ կաղապարամածերով շինարարական մեթոդները: Բետոնյա գորշ, լավագույն դեպքում

աղյուսով երեսապատված կամ ներկված շենքերը, տեղական պայմանների հետ կապված չլինելու պատճառով ստեղծում էին բավականին ցածրարժեք ճարտարապետական միջավայր:[74] Նմանատիպ մոտեցմամբ կառուցապատվեց նաև Վանաձորի «Տարոն» թաղամասը: Անհիմն շտապողականությամբ մշակվեց նաև Լենինականի գլխավոր հատակագիծը, որում չէին առանձնացված կանաչ գոտիները, կառուցապատմանը ոչ ենթակա տարածքները, «Կումայրի» արգելոցի տարածքի կառուցապատման չափանիշները և այլն: Արդյունքում քաղաքում սկսվեց հապճեպ և անվերահսկելի կառուցապատում, որը խաթարեց Լենինական-Գյումրու քաղաքաշինական պատկերը: Միայն 2004թ. «Հայնախագիծ» ինստիտուտի ստեղծագործական խումբը վաստակավոր ճարտարապետ Ս.Քալաշյանի գլխավորությամբ մշակեց և հաստատման ներկայացրեց Գյումրու նոր գլխավոր հատակագիծը, որում քաղաքի տարածքը հստակ բաժանվում էր գոտիների, որտեղ նախանշվում էին թույլատրելի կառուցապատումներն ու սահմանափակումները:[75]

Աղետի գոտու գյուղական բնակավայրերի վերականգնման և բնակարանաշինական աշխատանքներն ի տարբերություն քաղաքների, առավել արագ տեմպերով իրականացվեց: Խորհրդային տարբեր հանրապետությունների շինկազմակերպությունների կողմից կառուցվեցին բարեկարգ և սեյսմակայուն գյուղական առանձնատներ և շատ գյուղերում ի հայտ եկան նոր թաղեր, որոնք հատկապես շիրակցիների շրջանում անվանվում էին «անկեսուր մայլաներ» (առանց սկեսրոջ թաղեր),[76] որոնցում բնակվում էին հիմնականում գյուղական մեծ ընտանիքից բաժանված երիտասարդ ընտանիքները: Վերականգնվեցին համարյա բոլոր գյուղական կրթօջախները:

---

[74] *Գյումրի. Քաղաքը և մարդիկ, էջ 189:*

[75] *Գյումրի. Քաղաքը և մարդիկ, էջ 192:*

[76] *ԴԱՆ, Շիրակի մարզ, 2015:*

Աղետի գոտու երկու տարում վերականգնման ծրագիրը, որի մասին հայտարարել էր Մ. Գորբաչովը տարածաշրջան այցելելուց հետո, նույնիսկ ԽՍՀՄ ամբողջ տնտեսական ներուժի օգտագործման պարագայում՝ քիչ հավանական էր թվում: Երկրաշարժից յոթ ամիս անց արդեն նշմարվեցին այս ծրագրի անիրատեսական լինելու առաջին նախանշանները: ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Ս. Հարությունյանը 1989 թ. հուլիսին նամակով դիմել էր ԽՍՀՄ մինիստրների խորհրդի նախագահ Ն. Ռիժկովին, որում հայտնում էր, որ անցած յոթ ամիսների ընթացքում «...ավերված բնակարանների, կենցաղսպասարկման օբյեկտների և ձեռնարկությունների կառուցման և վերականգնման աշխատանքները դեռևս գտնվում են սկզբնական փուլում»:[77] ԽՍՀՄ տարբեր հանրապետություններից ժամանած շինարարական կազմակերպությունները հիմնականում գործում էին չհամակարգված և շատ դեպքերում ոչ արդյունավետ: Չնայած ընդհանուր կառավարման համար Աղետի գոտի գործուղված ԽՍՀՄ մինիստրների խորհրդի նախագահի տեղակալների առկայությանը, այդպես էլ, առանձնապես քաղաքային բնակավայրերում չհաջողվեց միասնական ծրագրով իրականացնել վերականգնման և կառուցապատման աշխատանքները: Այսպիսի պայմաններում առավել թեական և անիրագործելի էր դառնում Աղետի գոտու տնտեսական ներուժի վերականգնման խնդիրը: Վերակառուցման ծրագրերում տեխնիկապես հնացած համակարգերի օգտագործման և արտակարգ կամ շոկային պայմաններում ընթացող սոցիալ-տնտեսական փոփոխությունների պատճառով արդյունաբերական, կոմունալ և պահեստային տնտեսության օբյեկտների լոկ ֆիզիկական վերականգնումը չունեցավ որևէ լուրջ տնտեսական ներգործություն: Նորակառույց կամ վերականգնված արդյունաբերական ձեռնարկություններն

[77] *Сптакское землятрясение, Зона бедствия…, с. 420.*

այլևս չաշխատեցին նախկին հզորությամբ, որը պայմանավորված էր ԽՍՀՄ-ում ընթացող տնտեսական և քաղաքական ապաինտեգրացման (դեզինտեգրացիա) հետևանքով սկսված պլանային տնտեսության քայքայման և նոր տնտեսակարգի հատուկ իրողություններին հարմարված չլինելու պատճառով:

Դրությունն էլ ավելի վատթարացավ ԽՍՀՄ փլուզումից հետո, երբ օգնության եկած շինարարներն ու ամբողջ տեխնիկան հեռացվեցին Աղետի գոտուց, կտրուկ կրճատվեցին միջազգային օգնությունն ու դրամական հատկացումները: Վիճակը բարդացավ նաև սկսված Ղարաբաղյան պատերազմի (1991-1994թթ.) ու դրան հաջորդած տնտեսական շրջափակման հետևանքով, որն ավելի էր վատթարանում վրաց-աբխազական ու վրաց-օսեթական հակամարտությունների սրման պատճառով: Ստեղծված իրավիճակի արդյունքում մեծացավ արտագաղթը և 1999թ. հունվարի 1-ի դրությամբ աղետի գոտու բնակչության թիվը հազիվ հասավ 1985թ. մակարդակին:

ԽՍՀՄ փլուզումից հետո մինչև 1998թ., տնտեսական ու քաղաքական ծանր պայմաններից ելնելով, աղետի գոտում լայնածավալ շինարարություն գրեթե չէր իրականացվում: Միայն 1998թ. մինչև 2008թ. սփյուռքահայ բարերարների ու կազմակերպությունների միջոցով Աղետի գոտում վեսկսվեցին շինարարական աշխատանքներն ու Շիրակի մարզում բնակարաններով ապահովվեցին 1965 ընտանիք, Լոռու մարզում՝ 1460 ընտանիք, իսկ 6000 ընտանիք նոր բնակարան ստացավ հասարակական կազմակերպությունների և տարբեր ծրագրերի միջոցով: Այս գործում հսկայական դեր ունեցավ ամերիկահայ բարերար Քըրք Քըրքորյանի միջոցներով իրականացրած բնակարանաշինական ծրագիրը: Հիմնադրամի միջոցներով կառուցվեցին տեղական շինանյութով՝ տուֆով երեսապատված, երկաթբետոնե կմախքի և քարի շարվածքի համադրությամբ շենքեր, որոնց կառուցապատման որակը, ներքին հարդարումն ու ջեռուցման

ավտոնոմ համակարգի առկայությունը նորություն էին Աղետի գոտու բնակարանաշինության մեջ: Մի կարևոր նկատառում ևս. «Լինսի հիմնադրամի» միջոցներով իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում, Աղետի գոտում աշխատանքով ապահովվեցին շուրջ յոթ հազար մարդ: Աղետի գոտու բնակֆոնդի ընդլայնման և անօթևանության խնդիրների լուծման գործում կարևոր ներդրում կարելի է համարել նաև ԱՄՆ զարգացման գրասենյակի (USAID) կողմից իրականացված «Բնակարանների գնման վկայագրեր» ծրագրի ներդրումը: ԲԳՎ շահառու հանդիսացող անօթևան ընտանիքներին հնարավորություն տրվեց ՀՀ ցանկացած բնակավայրում, սեփական հայեցողությամբ, ձեռք բերել բնակարան: Ճիշտ է, ծրագիրն իր բնույթով շինարարական չէր, սակայն Աղետի գոտու մի քանի հազար անօթևաններ ամերիկյան «Ուրբան ինստիտուտի» դրամական աջակցությամբ կարողացան գնել բնակարաններ կամ առանձնատներ: Այս ծրագիրն ունեցավ նաև քաղաքաշինական արդյունք: Սպիտակի և հատկապես Գյումրիի կենտրոնական տարածքները ձերբազատվեցին բազմաթիվ ժամանակավոր կացարաններից, որը հնարավորություն տվեց դրանցում իրականացնել բարեկարգման և կառուցապատման աշխատանքներ: Սպիտակում սկիզբ առած բնակարանաշինական աշխատանքներում մեծ ներդրում բերեցին ֆրանսիական «Հույս Հայաստանի համար» բարեգործական կազմակերպության, ՄԱԿ-ի զարգացման և «Հայաստան» համահայկական հիմնադրամները: 2009 թ. սկսվեց պետական բյուջեի միջոցներով բնակարանաշինական աշխատանքների նոր փուլը, որի արդյունքները դեռևս ամփոփված չեն:

Աղետի գոտու երեք խոշոր բնակավայրերում մեր կողմից անցկացված հարցումների արդյունքները, կապված հետերկրաշարժյան շրջանի որոշ իրողությունների հետ, բավական ուշագրավ պատկեր են ներկայացնում: Հարցին՝ «Ինչպե՞ս եք գնահատում

Աղետի գոտու վերականգնման աշխատանքները ՀՀ անկախ պետականության տարիներին (1991-2015 թթ.)» գյումրեցի հարցվողների 2,5%-ը գնահատել է «լավ», 40%-ը՝ «բավարար», 57,5%-ը՝ «անբավարար», վանաձորցիների շրջանում պատկերը հետևյալն էր. «լավ»՝ 0%, «բավարար»՝ 40%, «անբավարար»՝ 60%, սպիտակցիների գնահատականները. «լավ»՝ 0%, «բավարար»՝ 83%, «անբավարար»՝ 17%: Այն հարցին, թե. «Ձեր կարծիքով ո՞ր գործոնները խանգարեցին ՀՀ իշխանություններին Աղետի գոտու վերականգնման խնդրում», որպես պատասխան ներկայացվել էր 6 հավանական տարբերակ, որոնցից հարցվողները կարող էին նշել մի քանի պատասխան 1. Խորհրդային միության փլուզումը, 2. Արցախյան պատերազմը և շրջափակումը, 3. Էներգետիկ ճգնաժամը, 4. ՀՀ իշխանությունների ոչ լիարժեք քայլերը, 5. Աղետի գոտուն վերաբերվող օրենսդրական փաստաթղթերի անկատարությունը, 6. Այլ պատասխան կամ մեկնաբանություն: Գյումրեցի հարցվողները որպես խանգարող գործոն են համարել ԽՍՀՄ փլուզումը 45%, պատերազմը և շրջափակումը՝ 37,5%, էներգետիկ ճգնաժամը՝17,5%, ՀՀ իշխանությունների ոչ լիարժեք քայլերը՝ 75%, Աղետի գոտուն վերաբերվող օրենսդրական փաստաթղթերի անկատարությունը՝ 12,5%, որպես այլ պատասխան նշվել են կոռուպցիան և կաշառակերությունը՝10%: Վանաձորում պատկերը հետևյալն էր. Խորհրդային միության փլուզումը՝ 40%, Արցախյան պատերազմը և շրջափակումը՝ 90%, էներգետիկ ճգնաժամը՝ 60%, ՀՀ իշխանությունների ոչ լիարժեք քայլերը՝80%, Աղետի գոտուն վերաբերող օրենսդրական փաստաթղթերի անկատարությունը՝10%, որպես այլ պատասխան նշվել է կոռուպցիան և կաշառակերությունը՝ 20%: Սպիտակում հարցման արդյունքներն էապես տարբերվում են վերը նշված քաղաքներում արձանագրված՝ միմյանց բավական նման պատկերից: Սպիտակցի հարցվողները որպես խանգարող գործոն համարել են. Խորհրդային միության փլուզումը՝ 30%, Արցախյան

պատերազմը և շրջափակումը՝ 60%, էներգետիկ ճգնաժամը՝60%, ՀՀ իշխանությունների ոչ լիարժեք քայլերը՝ 20%, Աղետի գոտուն վերաբերվող օրենսդրական փաստաթղթերի անկատարությունը՝10%: Հարցման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ Աղետի գոտու վերականգնման համար մեր ռեսպոնդենտները (հարցվողները) ամենաքիչ խանգարող հանգամանք են համարում (միջին հաշվով 10,8%) Աղետի գոտուն վերաբերվող օրենսդրական փաստաթղթերի անկատարությունը: Սպիտակի երկրաշարժից հետո անցած տասնամյակներում ընդունված օրենքների, ենթաօրենսդրական ակտերի, որոշումների և նմանատիպ փաստաթղթերի մեծ մասը համաձայն մեր բանասացների միայն ցանկություններ էին և իրական ազդեցություն չեն թողել Աղետի գոտու վերականգնման գործընթացի վրա: ԽՍՀՄ փլուզումը որպես խանգարիչ գործոն նշել են հիմնականում 60 և բարձր տարիքային խմբում ընդգրկված հարցվողները:

Մեր կարծիքով տեղին է համեմատական անցկացնել XXդ. երկու բնական արհավիրքների միջև, քանի որ ինչ-ինչ հանգամանքներից ելնելով, Լենինականի 1926թ. երկրաշարժի հետևանքները գրեթե հաջողվեց լիովին հաղթահարել բավականին կարճ ժամանակահատվածում,իսկ 1988թ. Սպիտակի երկրաշարժի ծանր հետևանքները մինչ այսօր իրենց զգացնել են տալիս: Ճիշտ է, տարածքի ընդգրկմամբ և ավերածությունների աստիճանով դրանք տարբեր են, սակայն աղետի հետևանքների հաղթահարման և հատկապես Աղետի գոտու բնակչության ադապտացիայի խնդիրների առումով ունեին բազմաթիվ ընդհանրություններ: Նշված երկու երկրաշարժերից հետո ստեղծված իրավիճակն ու աղետի հետևանքները վերացնելուն ուղղված գործողությունները կարելի է քննարկել երկու տեսանկյունից. որո՞նք էին դրանց ընդհանրություններն ու տարբերությունները և ինչո՞վ էին դրանք պայմանավորված: Որպես ընդհանրություն

կարելի է դիտարկել աղետից անմիջապես հետո ՀԽՍՀ կառավարության, ԽՍՀՄ պետական կառույցների՝ մասնավորապես բանակի անմիջական օգնությունը, ապա նաև միութենական մյուս հանրապետությունների աջակցությունը աղետյալներին փրկելու, աղետի հետևանքները վերացնելու և վերականգնման աշխատանքներն իրականացնելու ուղղությամբ: Քանի որ Սպիտակի երկրաշարժը տեղի ունեցավ խորհրդային իշխանության օրոք, ուստի սկզբնական շրջանում մոտեցումներն ու գործողությունները նույնն էին, ինչ 1926թ. երկրաշարժի ժամանակ:

Ինչ վերաբերում է տարբերություններին, ապա դրանք առավել ակնառու են երկրաշարժի հետևանքների վերացման ու աղետի գոտու վերականգնման գործընթացներում:Եթե Լենինականի 1926թ. երկրաշարժի հետևանքներն ամբողջությամբ վերացվեցին մեկուկես տասնամյակում (մինչև Հայրենական պատերազմի սկիզբը), ապա Սպիտակի երկրաշարժի հետևանքները լիովին վերացված չեն և «Աղետի գոտի» հասկացությունը դեռևս մնում է արդիական: Մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ դրանք պայմանավորված էին քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային գործոններով:

Ինչ վերաբերում է քաղաքական գործոնին, ապա առաջին կարևոր պայմանը համակարգային տարբերությունն էր. 1926թ. երկրաշարժից հետո վերականգնողական գործընթացներն իրականացվեցին խորհրդային իշխանության ու գաղափարախոսության պայմաններում, իսկ 1988թ. երկրաշարժը տեղի ունեցավ նորանկախ հայկական պետականության կայացման սոցիալ-տնտեսական ու քաղաքական դժվարին պայմաններում: Երկրորդ կարևոր հանգամանքը Արցախյան շարժումն էր, Հայաստանի հանրապետության շրջափակումն ու պատերազմը, որոնք հնարավորություն չէին տալիս

պետության ողջ ուշադրությունը սևեռել Աղետի գոտու վրա, օգտագործել առկա ֆինանսական ու մարդկային ողջ ռեսուրսները:

Երկրաշարժի հետևանքների վերացման գործում մեծ նշանակություն ուներ նաև տնտեսական քաղաքականությունը: Եթե Լենինականի դեպքում վերականգնողական աշխատանքներն իրականացվեցին երկրում ընթացող արդյունաբերականացման (ինդուստրալիզացիայի) պայմաններում, որոնց արդյունքում քաղաքում կառուցվեցին բազմաթիվ ֆաբրիկաներ ու գործարաններ, ապա Սպիտակի երկրաշարժից հետո տնտեսության ազատականացումն ու անցումը ազատ շուկայական հարաբերությունների, կազմալուծեցին առանց այդ էլ ավերված տնտեսական համակարգը:

Սոցիալական առումով ևս կային տարբերություններ: Լենինականի 1926թ. երկրաշարժից հետո բնակչության մեծ ներհոսք սկսվեց քաղաք՝ նոր բացված ձեռնարկություններում աշխատողների պակասը լրացնելու համար, ուստի կարճ ժամանակում քաղաքային բնակչության թիվը կրկնապատկվեց, փոխվեց դրա սոցիալ-պրոֆեսիոնալ կազմը: Արհեստավորներին ու նրանց աշակերտներին փոխարինելու եկան հզոր արտադրական կենտրոններում աշխատող վարպետներն ու բանվորները: Ժողովրդագրական զարգացումներին նպաստում էր նաև բնակչության սոցիալական պայմանների բարելավումը՝ բնակարանաշինությունը,կոմունալ-կենցաղային պայմանների ստեղծումը, հասարակության տարբեր խմբերի սոցիալական ապահովումը և այլ գործոններ: Սպիտակի երկրաշարժից հետո բնակչության մեջ խուճապային տրամադրություններ սկսվեցին, որոնք օբյեկտիվ պատճառներ ունեին՝ անօթևան մնացած հազարավոր մարդիկ, սոցիալական ծանր պայմաններ, ղարաբաղյան հակամարտություն և այլն: Հատկապես Աղետի գոտուց և մասամբ ՀՀ այլ վայրերից սկիզբ առավ զանգվածային արտագաղթը, որի հետևանքով, հիմնականում երկրաշարժին հաջորդող տարիներին (1989-

1995թթ.) բնակչության բնական աճի ցուցանիշներն աստիճանաբար նվազեցին: Չնայած արտագաղթի տեմպերի նվազմանը, որոշ վերապահումներով միգրացիայի սալդոն մինչ օրս ունի բացասական գործակից, որը հանգեցրեց Աղետի գոտու բնակչության ժողովրդագրական երբեմնի բնականոն ընթացքի խաթարմանը:

Բնակարանաշինության դանդաղ տեմպերի հետևանքով ձևավորվեցին կոմունալ-կենցաղային տարրական հարմարություններից զուրկ տնակային թաղամասեր՝ իրեն բնորոշ «դոմիկային» մշակույթով: Աշխատատեղերի բացակայությունն առաջացրեց սոցիալական անապահով վիճակ, մասնավորապես՝ չքավորության բարձր տեսակարար կշիռ: Ավելին, աղքատության, տնանկության և գործազրկության ամենաբարձր մակարդակը գրանցվել է Շիրակի մարզում: Ըստ պաշտոնական տվյալների, Գյումրիում աղքատության մակարդակը կազմում է 44%:[78]

Ինչ վերաբերում է մշակութային գործընթացներին, ապա Լենինականի մշակութային պատկերը երկրաշարժից առաջ այսպիսին էր. քաղաքն արհեստավորականից դարձավ արդյունաբերական քաղաք, որտեղ ձևավորվեց մի նոր՝ «բանվորական մշակույթ», որի արդյունքում առաջացավ «լենինականցու» տեսակը՝ իր բնորոշ հատկանիշներով, սկսվեց լայնածավալ մշակութային շինարարություն: Ձևավորվեց նոր ինտելեկտուալ-մտավորական էլիտա, որի մեջ ներառված էին բժիշկներ, մանկավարժներ, արվեստի ու մշակույթի գործիչներ: 1988 թ. աղետը խաթարեց նաև խորհրդային տարիներին

[78] *Աղքատության պատկերը Հայաստանում 2008-2014 թթ. Հայաստանի աղքատության նկարագիրը և աշխատանքային շուկայի զարգացումները: Հայաստանի Ազգային վիճակագրական ծառայություն, էջ 44: Դիտվել է հետևյալ կայքից՝ http: //armstat.am/file/article/5.poverty_2015a_2.pdf (վերջին անգամ դիտվել է 2016թ. հոկտեմբերի 10-ին)*

իր մտավոր ներուժով բարձր մակարդակի հասած Կիրովական-Վանաձորի կրթա-մշակութային պատկերը:

Սպիտակի երկաշարժից հետո արմատապես փոխվեց Աղետի գոտու բնակչության ողջ կենսամշակութային համալիրը՝ բնակարանը, տնտեսական գործունեության ձևերն ու եղանակները, սոցիոնորմատիվ մշակույթը, հոգևոր մշակույթն ու ամբողջությամբ վերցրած՝ արժեհամակարգը: Այդ է պատճառը, որ Լենինականը քաղաքացիների հիշողության մեջ մնացել է որպես առատության քաղաք, իսկ Գյումրին՝ որպես ավանդական, այսինքն ճիշտ քաղաքի մոդել: Ուստի ոչ միայն կարոտախտն ու վիրավորանքն է հնչում, այլև այսօրվա գյումրեցու հույսն ու հավատը՝ «Լեննականը գնաց, Գյումրին մնաց» խոսքերում:[79]

Վանաձորցիների կարծիքով մի ժամանակ բարձր ինտելեկտուալ մակարդակ ունեցող քաղաքը վերածվել է գավառական բնակավայրի և «*հիմա՝ XXIդ. սկզբին, Վանաձորը նոր է սկսել աղետի գոտի դառնալ*»:[80]

Սպիտակի երկրաշարժի հետևանքները դեռևս շարունակում են մնալ որպես երկրի սոցիալ-տնտեսական և սոցիալ-մշակութային կյանքը ուղղորդող, մոտ ապագայի տեսլականով տնտեսության զարգացման ուղղությունը նշմարող կարևոր ու ազդեցիկ գործոններ:

---

[79] *Шагоян Г., Город как рай и рай как город (о некоторых восприятиях Гюмри до и после землетрясения), ՇԴՄԺ հանրապետական յոթերորդ գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2007:*

[80] *ԴԱՆ, Վանաձոր, 2016:*

# ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

# ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՊԱՀՈՎՄԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ

## *Աղետի գոտու բնակչության սոցիալ-տնտեսական դրությունը անկախության տարիներին*

Կենսապահովման մշակույթը՝ որպես էթնիկական մշակույթի առավել դիմացկուն բաղկացուցիչ, սահմանում է էթնիկական խմբի հարմարողականության հնարավորության մակարդակը և փոխհարաբերությունները շրջապատող բնության ու սոցիալ-մշակութային միջավայրի հետ:

Աղետալի երկրաշարժը, անցումը շուկայական հարաբերություններին, սոցիալ-տնտեսական և քաղաքական բարդ իրադրությունը ծանր հետևանքներ ունեցան Աղետի գոտու բնակչության վրա: Երկրաշարժին հաջորդած ժամանակաշրջանում ինչպես Աղետի գոտու, այնպես էլ ողջ հանրապետության տնտեսության հետագա առաջընթացին խոչընդոտեց արդյունավետ շուկայական տնտեսության զարգացման համար անհրաժեշտ պատշաճ պայմանների և պետության խելամիտ ու արդյունավետ քաղաքականության բացակայությունը: Տնտեսական աճն արգելակող հանգամանքներ դարձան մի կողմից ժառանգություն մնացած ֆիզիկապես ու բարոյապես մաշված արդյունաբերական ենթակառուցվածքները, մյուս կողմից՝ արդյունավետ կառավարման բացակայությունը: Բազմաթիվ գործարաններ սեփականաշնորհվելուն պես մաս-մաս վաճառվեցին, ինչն

ուղեկցվեց աշխատատեղերի և արտադրություն կազմակերպելու հնարավորությունների կրճատումով:[81]

Ներկայումս տարածքի զարգացման գլխավոր առանձնահատկություններն են. տնտեսության բազմաճյուղայնությունը, կախվածությունն էներգակիրների ներկրումից, տնտեսության համախառն արդյունքում գյուղատնտեսական մթերքների արտադրության գերակշռությունը և միջշրջանային տնտեսական համեմատաբար թույլ կապերը: Տարածքային առումով մարզերի բնակչության զբաղվածությունը կենտրոնացված էր քաղաքային բնակավայրերում և արդյունաբերական ձեռնարկություններում, իսկ 1990-ական թվականներից՝ գյուղական բնակավայրերում՝ գյուղատնտեսության մեջ և ոչ արտադրական ոլորտում (կրթություն, առևտուր, առողջապահություն և այլն): Շիրակի և Լոռու մարզերում էապես խախտվել է խորհրդային տարիներին ձևավորված արտադրահարաբերությունների և աշխատունակ բնակչության զբաղվածության համակարգը, իսկ Գյումրիում և Վանաձորում՝ հիմնավորապես: Այսպես, ՀՀ 2001թ. մարդահամարի տվյալներով Շիրակի մարզում գործազուրկների թիվը կազմել է 52646 մարդ, այդ թվում քաղաքայինը՝ 44456 մարդ, կամ գործազուրկների ամբողջ թվի 84,5 %-ը, որ ամենաբարձր ցուցանիշն է հանրապետությունում:[82]

Ստեղծված ծանր սոցիալ-տնտեսական պայմաններում երկրաշարժի գոտու բնակչությունն ըստ զբաղվածության ոլորտների ընտրեց «գոյատևման մարտավարություն», որը տարբեր ձևերով է

---

*[81] Հայաստանի բնակչության թվի անկումը (Ճգնաժամի ակունքները և դրանց հաղթահարման ուղիները), Զեկույց, Եր., 2013, էջ 31: Դիտվել է հետևյալ կայքից. http://www.depop.am/wp-content/uploads/2013/10/THE-DEPOPULATION-CRISIS-OF-ARMENIA_THE-KOLOLIAN FOUNDATION_ARM_Oct2013.pdf վերջին դիտումը 10.01.2017 թ.*

*[82] Ա. Բոյաջյան, Շիրակի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման մի քանի հարցեր, (մաս II), ՇՀՀԿ Գիտական աշխատություններ, IX, Գյումրի, 2006, էջ 121:*

դրսևորվում տարածաշրջանի գյուղական ու քաղաքային բնակավայրերում:

Աղետի գոտու բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի պատկերը փորձենք ներկայացնել նաև երեք խոշոր բնակավայրերում մեր կողմից իրականացված սոցհարցման տվյալների հիման վրա: «Ինչպե՞ս եք գնահատում Ձեր ընտանիքի սոցիալական և տնտեսական ապահովվածության աստիճանը անկախության տարիներին (1991-2015թթ.)» Գյումրիում հարցվողների 2,5%-ը պատասխանել է «բարձր», 50%-ը՝ «միջին», 37,5%-ը՝ «միջինից ցածր», 10%-ը՝ «ցածր կամ անապահով»: Վանաձորում պատկերը հետևյալն էր. «միջին»՝ 50%, նույնքան էլ «միջինից ցածր»: Սպիտակցի հարցվողների պատասխաններն ունեն հետևյալ տեսքը. «միջին»՝ 66%, «միջինից ցածր»՝ 34%: Բնակչության տնտեսական և սոցիալական ապահովվածության անկումն ակնհայտ է դառնում, երբ համեմատում ենք համանման հարցերին տրված պատասխանների հետ, որոնք վերաբերում էին մինչերկրաշարժյան շրջանին (տե՛ս նախորդ գլխում): Եթե հարցվող գյումրեցիների 70%-ը միչերկրաշարժյան շրջանում իրենց սոցիալական և տնտեսական ապահովվածության մակարդակը գնահատել էին «բարձր», ապա անկախության տարիներին այդ ցուցանիշը կազմել է 2,5%, «միջին»՝ 30%-ի փոխարեն 50% էր, «միջինից ցածր»՝ 0%-ի փոխարեն՝ 37,5%, «ցածր կամ անապահով»՝ 0%-ից 10%: Նույնը դիտարկենք Վանաձորի դեպքում. եթե մինչերկրաշարժյան շրջանում իրենց սոցիալական և տնտեսական ապահովվածությունը «բարձր» են գնահատել քաղաքաբնակների 35%-ը, ապա անկախության տարիներին այդ ցուցանիշը հավասար է 0%-ի, «միջին» գնահատականը 65%-ի փոխարեն 50% էր, «միջինից ցածր»՝ 0%-ի փոխարեն 50%: Եթե սպիտակցիների 55%-ը մինչերկրաշարժյան շրջանում իրենց սոցիալական և տնտեսական ապահովվածության մակարդակը գնահատել են «բարձր», ապա անկախության տարիների համար

գնահատվել է 0%, «միջին» գնահատականը՝ 45%-ի փոխարեն 66%, «միջինից ցածր»՝ 0%-ի փոխարեն՝ 34%: Ինչպես տեսնում ենք վերը բերված համեմատությունից, Աղետի գոտու երեք քաղաքներում բնակչության կենսամակարդակի և սոցիալական ապահովվածության անկման ցուցանիշը շատ բարձր է: Հետերկրաշարժյան շրջանում սոցիալական և տնտեսական ապահովվածության «բարձր» գնահատականը համարյա բոլոր հիշյալ քաղաքներում զրոյականի մոտ է: Մտահոգիչ է, որ կենսապահովման «միջինից ցածր» գնահատականը երեք քաղաքներում մինչերկրաշարժյան շրջանի բացարձակ զրոյական արդյունքից վերաճել և կազմել է համապատասխանաբար Գյումրիում՝ 37,5%, Վանաձորում՝ 50%, Սպիտակում՝ 34%: Վերջին տվյալները ևս փաստում են անկախության տարիներին ՀՀ պատկան մարմինների կողմից որդեգրած Աղետի գոտու սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարության և մարտավարության անարդյունավետությունը:

**Տնտեսական զբաղմունքները**

***Տնտեսական գործունեության ձևերը գյուղում.*** Հետխորհրդային տարիներին գյուղում իրականացված վերափոխումները նպատակ էին հետապնդում տնտեսական նոր հարաբերությունների յուրացման ու արմատավորման համար: Սեփականատեր դարձած գյուղացու համար անհրաժեշտ գոյամիջոցների ապահովման կարևոր պայման դարձավ գյուղատնտեսական զբաղմունքները շուկայական հարաբերություններին համապատասխանեցնելը, որը, ինչպես ցույց տվեց կյանքը, բավականին բարդ գործընթաց էր: Վերափոխումները ոչ թե ապահովեցին շուկայական հարաբերությունների ձևավորումը գյուղում, այլ ընդհակառակը, հետ մղեցին գյուղի զարգացումը դեպի XX դարի կեսեր:

Ինչպես նշում են մասնագետները, խոշոր կոլտնտեսություն-ների բաժանման արդյունքում կտրուկ նվազեց գյուղատնտեսական արտադրության արդյունավետությունը: Գյուղացիական տնտեսու-թյունների համեմատաբար փոքր չափերը դարձան դրանց բնա-տնտեսացման պատճառ:[83] Միաժամանակ նշանակալիորեն ընկավ գյուղատնտեսության մեքենայացման մակարդակը, քանի որ կոլ-տնտեսություններում և սովետական տնտեսություններում (սովխոզ) եղած ողջ տեխնիկան վաճառքի արդյունքում կենտրոնացվեց առան-ձին անհատների ձեռքում, ովքեր նախկինում այդ տեխնիկայով էին աշխատել: Տնտեսությունները, զրկվելով սեփական տեխնիկայից, ստիպված էին դրանցից օգտվել ՝ որոշակի վճարի դիմաց: Ընդ որում, տեխնիկական միջոցների քանակն անբավարար էր, դրանց մեծ մասը մաշված էր, ավելին, գործածությունը սահմանափակ էր նաև վառելիքի թանկության պատճառով: Այժմ գյուղատնտեսական աշ-խատանքների մեքենայացման մակարդակը շատ համայնքներում ավելի ցածր է, քան 1950-60-ական թվականներին: Աշխատանքները մեծ մասամբ կատարվում էին պապենական եղանակներով՝ գերա-կշռող էր ձեռքի ֆիզիկական աշխատանքն ավանդական երկրագոր-ծական գործիքներով (գերանդի, մանգաղ, եղան, փոցխ, բահ և այլն), որի հետևանքով խիստ երկարեց աշխատանքային օրվա տևողու-թյունը՝ շատ հաճախ անցնելով մարդկային կարողությունների բնա-կան սահմանը:[84]

Կատարված հարցումների վերլուծությունից պարզվեց, որ հանրապետության անկախացումից հետո գյուղերը նոր գյուղա-

---

[83] *Մ.Գաբրիելյան, Հայաստանի Հանրապետության արդի գյուղացիությունը, Եր.,2001:*

[84] *Վ. Խոջաբեկյան, Խ. Փափազյան, Ա. Գալստյան, Մ. Պետրոսյան, Կ. Ստեփանյան, Մ. Մարկոսյան, Հայաստանի բարձրադիր գոտիներում զբաղվածության բարելավ-ման հիմնախնդիրները, «Նորավանք» ԳԿՀ, 21-րդ ԴԱՐ, Եր., 2008, հ. 3 (21), էջ 111:*

տնտեսական մեքենասարքավորումներ չեն ստացել, եղածն էլ խորհրդային տարիների արտադրանք են և գտնվում են կիսասարք վիճակում, ինչն էլ իր բացասական ազդեցությունն էր ունենում գյուղմթերքների արտադրության աճի վրա: Ըստ որում, եթե հարթավայրային գոտում բնակվող ընտանիքներին հատկացված փոքր հողաբաժինները մեծ մասամբ հնարավոր է մշակել ձեռքի գործիքներով, ապա լեռնային և նախալեռնային շրջաններում հողատարածքները մշակելու համար պահանջվում են նոր գյուղատնտեսական մեքենասարքավորումներ:[85]

Գյուղացիների դրամական միջոցների չափազանց անբավարարության պատճառով վերացվեց հանքային պարարտանյութերի կիրառումը, սկսեց զգացվել որակյալ սերմացուի, տնկիների ու սածիլների պակաս: Այս բոլորի հետևանքով կտրուկ նվազեց գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը:

Այսօր գյուղացու աշխատանքի արդյունավետության բարձրացման միակ երաշխիքը պետության օժանդակությամբ ֆինանսական ներդրումների և արտադրված գյուղմթերքի իրացման խնդիրներին լուծում տալն է: Աղետի գոտու գյուղացիական տնտեսությունների հարցումներից պարզվել է, որ գյուղացիներին տրվող պետական օժանդակությունն՝ աննշան է: Գյուղատնտեսական վարկերը, որոնք ուղղված են օգնելու գյուղացիական տնտեսություններին, ուղղակի կապ ունեն գյուղմթերքի սպառողական շուկայի հետ և քիչ չեն դեպքերը, երբ վարկերի հետ հույսը կապած մարդիկ չեն կարողանում իրացնել ծանր աշխատանքով ստացված գյուղատնտեսական ապրանքը, և չմարված վարկը ծանր բեռ է դառնում աղքատ ընտանիքների համար: Երկրագործական վարկերի հեռանկարը

[85] *Ա. Բոյաջյան, Շիրակի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման մի քանի հարցեր (մաս III), ՇՀՀԿ Գիտական աշխատություններ, X, Գյումրի, 2007, էջ 127:*

բարդանում է նաև Հայաստանում հաճախ կրկնվող եղանակային անբարենպաստ պայմաններից հետո: Ահա թե ինչպես են բնութագրել իրավիճակը հարցվողները.«*Բոլորս թաղված ենք վարկերի մեջ, պետությունը գրեթե ոչնչով չի օգնում, միայն լավը այն է, որ անօթևան մարդիկ չկան, բոլորին հատկացվել է բնակարան, հավանաբար դա նրանից է, որ գյուղը աղետի գոտու կենտրոնն է, ու լավ ղեկավարներ է ունեցել ժամանակին»*:[86] *«Ուզում ենք վերականգնվել, ձեռներս զցում ենք այս ու այն հողին, ոչինչ չի ստացվում, վարկերի մեջ թաղված ենք, շատ վատ վիճակում ենք, հացի տեղը (*սնունդ գնելու փոխարեն-Թ.Ա.*) մարդիկ գումարները օգտագործում են տոկոսները տալու համար»*:[87]

Շիրակում գյուղատնտեսության առաջատար ճյուղը ավանդաբար եղել է բուսաբուծությունը, մասնավորապես հացահատիկային տնտեսությունը: Վերջինիս բաժին է ընկնում մարզի ցանքատարածությունների գրեթե 69 %-ը: Մարզում մշակվող հացահատիկային հիմնական մշակաբույսը աշնանացան ցորենն է, որի մշակությամբ առավել հայտնի են Ախուրյանի, Անիի և Արթիկի տարածաշրջանների գյուղացիական տնտեսությունները: Առավել բարձրադիր Ամասիայի և Աշոցքի տարածաշրջաններում՝ 1800-2000մ բարձրության գոտիներում մշակում են գարնանացան ցորեն ու գարի: 1990-ական թվականներից մարզում վերացել է ծխախոտի, շաքարի ճակնդեղի, կտավատի և եգիպտացորենի մշակությունը:[88]

Գյուղատնտեսական հողերի զգալի հատվածի չմշակելը պայմանավորված է ոչ միայն գյուղսարքավորումների մեքենայացման

---

[86] *ԴԱՆ, Շիրակամուտ, Լոռու մարզ, 2016:*

[87] *ԴԱՆ, Լուսաղբյուր, Լոռու մարզ, 2016:*

[88] *Ա. Բոյաջյան, Շիրակի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման մի քանի հարցեր (մաս III), էջ 130:*

ցածր մակարդակով, այլև ոռոգման համակարգում գոյություն ունեցող բարդություններով: Շիրակի լեռնային և նախալեռնային շրջաններում այդ պատճառով չեն մշակվում զգալի քանակությամբ բերրի հողատարածքներ և դրանք պարզապես օգտագործվում են որպես արոտավայրեր: Աշոցքի նախկին վարչական շրջանի Ղազանչի գյուղի մի բնակչի պատմելով՝ մինչև 1988 թ. Մեծ Սեպասար և Ղազանչի գյուղերի ոռոգվող հողերում մշակում էին շաքարի ճակնդեղ, որտեղ մեկ հա-ից ստացվել է 220-250 ց. բերք և այն առաքվել է հիմնականում Սպիտակի շաքարի գործարան, ինչպես նաև օգտագործվել է որպես անասնակեր: Հիմա այդ հողերն արոտավայրի են վերածվել: Ավելին, 2006 թ. ապամոնտաժվել են ոռոգման ջրագծերն ու վաճառվել, սրան գումարվում են նաև ոռոգման հետ կապված ծախսերը, սակայն ոչ բոլորն են կարողանում վարձը վճարել: Այսպես է բնութագրում իրավիճակը բանասացներից մեկը. «*Խնդիրը նրանում է, որ հողը մշակելով գումար չես աշխատի, հողերի մեծ մասը խոպան է այդ պատճառով, մյուս մասն էլ ոռոգման խնդիր ունի, երկրաշարժից առաջ ոռոգման համակարգ կար, բայց երկրաշարժի պատճառով այն ավերվեց: Այդ հողերը հիմա արոտավայրեր են դարձել, իսկ դրանց մշակման փորձերը բերում են նրան, որ մարդիկ մինուսի մեջ են մնում*»:[89]

Շիրակի հարթավայրային շրջաններում բանջարաբոստանային մշակաբույսերի աշխատատարության պատճառով գյուղացին ի վիճակի չէ ձեռքով մշակել, աճեցրած բերքի մի մասն էլ շուկայում պահանջարկ չունի, ուստի չի վաճառվում: Օրինակ, Արթիկի տարածաշրջանի Գետափի գյուղում, բնակիչներից մեկի պատմելով, տարեկան միջինը 200 տոննա խնձոր չեն կարողանում իրացնել և դրա զգալի մասը թափում են, մյուս մասն էլ օգտագործում որպես

[89] *ԴԱՆ, Հարթաշեն, Լոռու մարզ, 2016:*

անասնակեր: Մինչդեռ գյուղն ունի շենքային պայմաններ խնձորի վերամշակման և հյութեր արտադրելու համար: Մանր, փոշիացած տնտեսությունները հիմնականում խուսափում են պետությանը վճարել համապատասխան հարկեր: Ոչ արդյունավետ մանր ապրանքային արտադրության պայմաններում էապես կաղում է նաև պետության հարկային քաղաքականությունը. մարզի գյուղերում հողի հարկի հավաքումը 2006 թ. միջին հաշվով կազմել է 45%:[90]

Այսպես է գնահատում վիճակը փորձագետներից մեկը. *«Օրինակ, երբ ես մեկնում եմ Վայոց ձոր ու համեմատում եմ այստեղի հետ, տարբերությունները ահավոր են. այնտեղի համայնքները կարող են տարեկան 200-300 մլն.-ի բյուջե ունենալ, իսկ այստեղ ընդամենը 5-6 մլն է: Այնտեղի բյուջեն պայմանավորված է նրանով, որ մարդը աշխատում է ու մուծումներ է անում, իսկ մեր մոտ գյուղացին չի աշխատում, ուստի և հարկեր չի մուծում, ամեն ինչ արտագնա աշխատանքի վրա է հիմնված: Այնտեղ բերքատու հողերը շատ են ու հանքարդյունաբերությունն է զարգացած, և եթե համեմատում ես Սիսիանը, Արարատի մարզն ու Վայոց ձորը այստեղի հետ՝ տարբերությունները ահավոր են: Աղետի գոտին ու նրա մեջ մտնող Լոռու ու Շիրակի մարզերը ամենաաղքատն են հանրապետությունում, այստեղ աղքատությունը կապված է ոչ միայն աղետի հետ, այլև նրա, որ մինչև երկրաշարժը այս տարածաշրջանը արդյունաբերական էր, իսկ հիմա այդ կոմպլեքսները բոլորովին չեն աշխատում, նաև գյուղատնտեսությունն է անկման մեջ գտնվում: Առանց այդ էլ մեր գյուղերը առաջ ինքնուրույն չեն եղել գյուղատնտեսական արտադրանք արտադրելու գործում և կախված են եղել ներդրումներից, մեծ շա-*

[90] *Ա. Բոյաջյան, Շիրակի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման մի քանի հարցեր (մաս III), էջ 132:*

*հույթ չեն բերել, իսկ շրջանի տնտեսության հիմքը արդյունաբերական ձեռնարկություններն էին, ուր գյուղացիները ևս գալիս ու աշխատում էին»:*[91]

Ավելի վատ էր անասնապահության վիճակը: Սեփականաշնորհման ժամանակ անասնագոմերն ու այլ շինություններ գնեցին հիմնականում անասնապահները կամ անասնագլխաքանակի մեծ մասը սեփականաշնորհած անհատները: Գյուղացիների մեծ մասը զրկվեց դրանց օգտագործման հնարավորությունից: Մի քանի տարի անց անասնագոմերի, այլ կառույցների մեծ մասն ավերվեց, թալանվեց, շինանյութը վաճառվեց: Արդյունքում հետռեֆորմյան առաջին իսկ տարիներին տեղի ունեցավ անասունների զանգվածային սպանդ: Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 1985 թ. համեմատությամբ կրճատվեց ավելի քան 40%-ով, իսկ խոզերինը, ոչխարներինն ու այծերինը՝ 70%-ով: Այս ամենը հանգեցրեց նրան, որ անասնամսի և թռչնամսի մատակարարումը ներքին շուկայում կրճատվեց շուրջ 40 անգամ, իսկ ձվինը՝ մի քանի հարյուր անգամ:[92]

Անասնապահությունը Լոռու և Շիրակի մարզերի նախալեռնային ու լեռնային գոտու գյուղերի տնտեսությունների մեծ մասի համար շարունակում է մնալ որպես հիմնական զբաղմունք: Սակայն կատարված փոփոխությունները և, հատկապես կերային մշակաբույսերի ցանքատարածությունների էական կրճատումը դժվարություններ են ստեղծում այս ոլորտում և սահմանափակում անասնագլխաքանակն ավելացնելու հնարավորությունները: 4-5 գլուխ խոշոր եղջերավոր անասուն պահող ընտանիքները պետք է առնվազն 8-10 տոննա անասնակեր պաշարեն ձմեռվա համար:

---

[91] *ԴԱՆ, փորձագետ Արմենուհի Կյուրեղյան, Վանաձոր, 2016:*

[92] *А. Тер-Саркисянц, Адаптация армян к новым условиям постсоветского времени // Исследования по прикладной и неотложной этнологии, Вып. 211, М. 2009, с. 5.*

Լոռիում տարածված է հեռագնա անասնապահությունը: Անասունները տեղափոխվում են գյուղերից բավականին մեծ հեռավորության վրա գտնվող ամառանոցներ: Շիրակի մարզում նույնպես այս պրակտիկան կիրառվում է, սակայն հիմնականում ֆերմերային տնտեսությունների կողմից, որոնք անասունները տեղափոխում են Ամասիայի շրջանում գտնվող արոտավայրեր: Շիրակում բավականին տարածված է նաև Ամասիայի լքված գյուղական բնակավայրերի տարածքներում խոտհունձ կատարելու և ձմռան համար անհրաժեշտ անասնակերը նաև այս ճանապարհով ապահովելու պրակտիկան: Ախուրյանի, Աշոցքի շրջաններում կան բազմաթիվ ընտանիքներ, որոնք անասնակերը ձեռք են բերում հենց այս ճանապարհով:

Անասնապահության զարգացումը պայմանավորված է նաև մսամթերքի և կաթնամթերքի իրացման հնարավորությունով: Տարածաշրջանում գրեթե չկան գնման ու մթերման կազմակերպություններ, իսկ քաղաքների շուկաները տնօրինում են հիմնականում վերավաճառողները, որոնք էլ թելադրում են գները: Այս իրավիճակում որպես իրացման հիմնական տարբերակ հանդես է գալիս փոխանակությունը: Շատ ընտանիքներ մեկ կամ երկու գլուխ անասուն են պահում առաջին անհրաժեշտության սննդամթերքի հետ փոխանակելու նպատակով:[93]

Տնտեսական ընդհանուր համակարգի փլուզման և համարժեք այլընտրանքային տարբերակների բացակայության պայմաններում, այսպիսով, գյուղացիությունը հարկադրված փոխեց տնտեսական գործունեության հիմքում դրվող սկզբունքներն ու չափանիշները: Ընդհանուր (պետական) տնտեսական նպատակահարմարության գործոնը փոխարինվեց անձնական (ընտանեկան), լավա-

---

[93] *Մ. Գաբրիելյան, Հայաստանի Հանրապետության արդի գյուղացիությունը, էջ 47:*

գույն դեպքում՝ ազգակցական կամ դրացիական տնտեսական նպատակահարմարության գործոնով, ինչը, բնականաբար, շատ ավելի սահմանափակ հնարավորություններ է ընձեռում գյուղատնտեսության զարգացման համար: Ելնելով այս սկզբունքից՝ գյուղացին կարող է սահմանափակվել միայն կենսապահովման գյուղատնտեսությամբ՝ արտադրելով միայն այն և այնքան, որքան հարկավոր է ընտանիքի գոյության նվազագույնն ապահովելու համար:[94]

Գյուղատնտեսության ճգնաժամը անմիջապես տարածվեց վերամշակող արդյունաբերության վրա, որտեղ նախկինում գործում էր 160 ձեռնարկություն: Ամբողջությամբ վերցրած, 1996թ. զարնանը գյուղատնտեսության բնատնտեսացումը հասավ այնպիսի չափերի, որ համեմատած զարգացած երկրների, որտեղ գյուղատնտեսական արտադրանքով յուրաքանչյուր գյուղացի ապահովում է 20-50 մարդու, այդ ցուցանիշը կազմեց 1:1: Գյուղացիների կողմից արտադրվող ապրանքի 70%-ը իրենք էին օգտագործում: Հետագայում գյուղատնտեսության վիճակն աստիճանաբար սկսեց լավանալ:[95]

***Տնտեսական գործունեության ձևերը քաղաքում.*** Քաղաքներում աշխատավարձը գոյատևելու հիմնական միջոցն է բնակչության զգալի մասի համար: Հետերկրաշարժյան տարիներին տնտեսական բարեփոխումների արդյունքում սկսված գների ազատականացումը բերեց աշխատավարձի էական կրճատման, ինչը երկրաշարժի, շրջափակման, միութենական հանրապետությունների հետ տնտեսական կապերի խզման հետ միասին դարձավ բնակչության աղքատացման հիմնական պատճառներից մեկը: Գրեթե բոլոր ապրանքների գներն աճեցին, բացի աշխատուժից: Բնակչության այն սո-

---

[94] *Մ.Գաբրիելյան, նշվ.աշխ.,էջ 41:*

[95] *А.Тер-Саркисянц,Адаптация армян к новым условиям постсоветского времени, с. 5.*

ցիալական խմբերը (բարձր որակավորում ունեցող բանվորներ, ծառայողներ, մտավորականություն), որոնք նախկին համակարգում համարվում էին ապահովված խմբեր, նոր տնտեսական պայմաններում համալրեցին գործազուրկների, անապահովվածների և աղքատների շարքերը:[96]

Հայաստանի բնակչության հիմնական մասը, կտրուկ և անսպասելի փոփոխությունների հետևանքով կորցնելով նախկին կենսական կողմնորոշիչները, այդ թվում նաև պետության կողմից պաշտպանվածությունը, ենթարկվեց «սոցիալական շոկի» և բավականին բարոյազրկվեց: Քաղաքների փողոցներում հայտնվեցին չքավորները՝ երկրի սոցիալական անբարեկեցության առաջին նշանները: Դրանք հիմնականում միայնակ թոշակառուներն էին, որոնք չէին կարողանում ապրել չնչին թոշակով: Գործազրկությունն ու չքավորությունը հանգեցրին մուրացկանության և այլ երևույթների: Բնակչության ճնշող մեծամասնությունը ստիպված էր մտածել միայն իր ընտանիքի տարրական գոյատևման մասին՝ այսինքն ինչ-որ ձևով հարմարվելու սոցիալ-տնտեսական անկայուն այն իրավիճակի հետ, որում հայտնվել էր ոչ իր կամքով: Հայաստանում դրա իրականացումը ավելի քան բարդ էր: Մարդիկ բողոքում էին, որ իրենց ոչ ոք չի օգնում, որ իրենք մնացել են միայնակ իրենց խնդիրների հետ: Այսպիսով, պահպանվել էր դեռ խորհրդային տարիներին ձևավորված ավանդույթը, որ պետությունը պետք է հոգ տանի իրենց մասին: Այդ պատճառով կյանքի նոր պայմաններին հարմարվելը բավականին ցավագին էր ընկալվում:[97]

Տնտեսական ճգնաժամի, զանգվածային գործազրկության, կենսամակարդակի կտրուկ անկման այդ բարդ պայմաններում քչերին

---

[96] *Է. Մինասյան, Հայաստանի Հանրապետության սոցիալական քաղաքականությունը (1990-2003թթ.), Լրաբեր հասարակական գիտությունների, N 2, Եր., 2003, էջ 12:*

[97] *А. Тер-Саркисянц, նշվ. աշխ., էջ 8:*

հաջողվեց ավել կամ պակաս հաջող ադապտացվել նոր կյանքի իրողություններին: Դրանք, որպես կանոն, այն մարդիկ էին, որոնք, ապահովված ընտանիքներից էին, ունեին անշարժ գույք և ֆինանսական միջոցներ, որը կարող էին ներդնել սեփական գործ սկսելու համար: Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ էր մեծ աշխատանք կատարել և ունենալ ձեռներեցության որոշակի ունակություններ: Միաժամանակ կրթությունը, մասնավորապես, բարձրագույն կրթությունը, որը հայ հասարակության մեջ ավանդաբար միշտ համարվում էր որպես գերակա ազգային արժեք, սկսեց կորցնել իր դերը, քանի որ ստեղծված պայմաններում արագ կողմնորոշվեցին ու սեփականաշնորհումից օգտվեցին այնպիսի մարդիկ, ովքեր նախկինում սոցիալական ցածր աստիճանի վրա էին: Բանասացներից մեկն այսպես է գնահատել իրավիճակը աղետից 25 տարի հետո. *«Եթե ամեն ինչին կարգին տեր լինեին, Գյումրին էս օրին չէր լինի, հմի, օրինակ, մենք էս վարսավիրանոցին տեր ենք կանգնել, չէ՞: Սաղ ծախեցին, սաղ քանդին, կերան... Տեքստիլը տվին մեկին, ով պանրի գործարանում կաշխատեր, թե ինչը՞խ էղ մարդը հասավ ըդոր, հեչ խաբար չեղանք... եթե սրտացավ էղնեին, կաշխատեին: Գյումրեցոնց մեջքը երկրաշարժը չէր կոտրի, եթե էս գործարանները չքանդեին, ժողովուրդը աշխատանքի տեղ կունենար ու չէր փախնի»:*[98]

Նախկինում եղած աշխատատեղերի վերացումը կամ անհամեմատ կրճատումը, ինչպես նաև հասարակարգի փոփոխությունը նպաստեցին առևտրական մանր հարաբերությունների առաջացմանը: Հետազոտության արդյունքում մեզ համար պարզ դարձավ, որ մանր առևտուրը քաղաքում և ապրանքափոխանակությունը գյուղե-

[98] *Գյումրի 1988-2013 թթ., ամենահին վարսավիրանոցի ամենատարեց վարսավիրի պատմությունը և հիշողությունները, https://www.armenianow.com/.../armenia_earthquake_anniv*

րում, ամենատարածված նոր զբաղմուքներն էին. Բոլոր փորձագետները զբաղմունքներից առաջինը նշում էին հենց առևտրական գործունեությունը: Այս պարագայում հետաքրքրականն այն է, որ խորհրդային արժեհամակարգով դաստիարակված քաղաքացիների մեծամասնության համար անհատական մանրածախ առևտուրը, որն առաջ նույնանում էր *սպեկուլիացիայի* հետ՝ պարսավելի երևույթ էր համարվում: Մարդիկ, ովքեր նախկինում հաջողության էին հասել՝ ունեին աշխատանք, կրթական բարձր ցենզ և համապատասխան դաստիարակություն,հիմնականում շատ դժվարությամբ էին մտնում առևտրի դաշտ, խուսափում էին, ամաչում, ճկուն չէին, նոր երևույթները դժվար էին ընկալում, չէին պատկերացնում և այդ ամենին լուրջ չէին վերաբերվում: Սրան հակառակ, այն մարդիկ, որոնք նախկինում ոչնչի չէին հասել, կարողացան արագ կողմնորոշվել և հասնել լուրջ հաջողությունների: Փորձագետներից մեկը դա բացատրում է հետևյալ կերպ. «*Բնակչության այն շերտը, ով չուներ բարձր կրթություն և միտքը կաղապարված չէր նախկին գաղափարներով (փողոցի տղեքը), կարողացան շատ արագ կողմնորոշվել և, կապիտալիզմի ձևավորման փուլում, արմունկներով իրենց համար տեղ ազատելով, հասնել հաջողության: Իսկ նրանք, ովքեր սկսեցին օգնել բարեկամներին, հարազատներին, խղճով գործունեություն ծավալել, ոչնչի չհասան*»:[99] Սրանով է նա բացատրում մականունավոր մեծահարուստների առկայությունը մեր երկրում: 1990-ականների առաջին կեսի մանր առևտուրը կատարվում էր փողոցային սեղանիկների տեսքով, սկզբնական շրջանում վաճառում էին իրենց տան իրերը, հետո որևէ տեղից ձեռք բերած ապրանք: Այդպես սկսվեց *սեղանիկների մշակույթը*: Գրեթե ողջ հանրապետության քիչ թե շատ բանուկ վայրերում վաճառասեղաններ էին դրված: Հիմնականում վաճառում

[99] *ԴԱՆ, փորձագետ Ալլա Խաչատրյան, Գյումրի, 2015:*

էին պարսկական էժան ապրանք՝ ծամոն, էժանագին շոկոլադե սալիկներ, կենցաղային ապրանքներ և այլն. «…*հավաքած օժիտը, սպիտակեղենը, ոսկեղենն էին վաճառում, զանազան իրեր, աման-չաման, բյուրեղապակյա իրեր, նոր կոշիկներ*» :[100] Ապրանք էին բերում նաև Թուրքիայից, որի վաճառքը կազմակերպելու համար Գյումրիում մեծ շուկա բացեցին ու անվանեցին «Ստամբուլի բազար»: Հասարակությունը շատ սահուն ձևով անցում կատարեց առևտրական ոլորտ, բնակչության մի զգալի հատված զբաղված էր առևտրով ու դրա միջոցով կարողանում էր օրվա հացի խնդիրը լուծել: Իսկ ավելի հմուտները կամ դրա մեջ մասնագիտացածներից ոմանք կարողացան այդ սեղանիկները հետագայում դարձնել փոքրիկ խանութներ:

Ժամանակակից ազգաբանական և էթնոսոցիոլոգիական հետազոտությունները ցույց են տալիս, որ անցումային շրջանում նշանակալիորեն մեծանում է տնային տնտեսությունների ինքնապահովող-ինքնաբավ գործառույթի կամ բնատնտեսական նշանակությունը: Եթե տնտեսության զարգացման տեսանկյունից ամբողջությամբ վերցրած այն բացասական նշանակություն ունի և անհամեմատ նվազ արդյունավետ է, քան հասարակական արտադրությունը, ապա գոյապահպանության իրավիճակում այն հնարավորություն է տալիս ապահովել ընտանիքի կենսական պահանջների նվազագույն մակարդակը: Շուկայական հարաբերությունների պայմաններում նման տնտեսական գործունեությունը, ինչպես նշվեց, կրում է թե՛ բնամթերքային ապրանքափոխանակության և թե՛ ապրանքադրամային բնույթ:

[100] *ԴԱՆ, փորձագետ Աննա Եգորյան, Ախուրյան, 2015:*

Տնային տնտեսությունների գործունեության ընդհանուր տնտեսական նշանակության համակողմանի ազգաբանական և տնտեսագիտական գնահատանքը բարդ խնդիր է:[101] Այն ընդգրկում է գյուղատնտեսական մթերքների տարբեր տիպերի արտադրություն՝ ընտանեկան սպառման, բնատնտեսական փոխանակման և ապրանքադրամային իրացման նպատակով, ինչպես նաև ապրանքային արտադրություն և սպասարկում՝ ինչպես ձեռնարկատիրության, այնպես էլ անհատական աշխատանքային գործունեության շրջանակներում և վերջապես՝ տնային տնտեսության ներքին սպասարկմանն ուղղված արտադրության և սպառման վերլուծություն և գնահատում:

Խորհրդային տարիների ընտանիքի բարեկեցությունը որոշվում էր նրա անդամների՝ հասարակական արտադրության գործընթացում ունեցած մասնակցությամբ և շատ քիչ էր կախված տնային տնտեսության մեջ նրանց ներդրումից: Ներկա փուլում, անշուշտ, դրությունը նկատելիորեն փոխվել է: Հարմարվելով նոր պայմաններին՝ տնային տնտեսությունները ստիպված ակտիվացնում են իրենց գործունեությունը աշխատանքային և տնտեսական գործառույթներում:

Տնտնտեսական գործունեության ամենատարածված ձևերը դարձան զանազան մանր արդյունաբերական ապրանքների արտադրությունն ու սպասարկման աշխատանքների իրականացումը՝ անհատական աշխատանքային գործունեության ձևով: Քաղաքներում և մասնավորապես Գյումրիում արհեստավորական ավանդույթների պահպանումը հնարավորություն տվեց շատերին իրենց նախկին մասնագիտական հմտություններն օգտագործել անհատական ձեռ-

[101] *Գ. Աղանյան, Կ. Բազեյան, Տնային տնտեսությունները Շիրակի բնակչության արդի կենցաղում, ՇՀՀԿ Գիտական աշխատություններ, հ. V, Գյումրի, 2002, էջ 71:*

նարկությունների կազմակերպման գործում: 1980-ական թթ. երկրորդ կեսին սկսված տնտեսության ազատականացման քաղաքականության արդյունքում ի հայտ եկան առաջին կոոպերատիվները, որոնք մարզում հիմք դրեցին մանր ու միջին ձեռնարկատիրությանը: Անկախության առաջին տարիներից ի վեր ազատական տնտեսության օրենսդրական ապահովումը և ՀՀ իշխանության կողմից հիշյալ գործունեության հովանավորումն ու խրախուսումը նպաստեցին մանր արտադրողների թվի աճին: Սրանց շարքում հատկապես մեծ թիվ են կազմում անհատ ձեռներեցներն ու արտադրողները, որոնք աշխատում են ընտանեկան կապալի սկզբունքով: Արտադրության գործընթացի մեջ, որպես կանոն, բացի տվյալ ընտանիքի անդամներից ներգրավված են նաև ազգական-բարեկամներն ու ընկեր-ծանոթները: Այսպիսի երևույթներ առավել հաճախ հանդիպում ենք սննդի փոքր օբյեկտներում՝ հացի փուռ, հրուշակեղենի, աղանդերի արտադրություն, խորտկարաններ, ինչպես նաև սպասարկման ոլորտներում՝ բենզա-գազալցակայաններ, մանր կրպակներ ու խանութներ: Այս ամենով չի ավարտվում ընտանեկան տնտեսական գործունեությունը: Շուկայական հարաբերությունների տարածման և զանգվածային գործազրկության պայմաններում ծնվում են նաև ընտանեկան տնտեսավարման նոր ձևեր՝ տարբեր կարգի միջնորդական գործունեություն, ընտանեկան բիզնես, որը ըստ էության հիմնված էր սպեկուլյատիվ գործարքների վրա (ուրիշի ստեղծած ապրանքներով առք ու վաճառք): 90-ականներին և 2000-ականների սկզբին առավել տարածված էր վերջինս՝ մաքոքային առևտրի եղանակով: Մաքոքային առևտրականների մի զգալի մասը արդյունաբերական ապրանքներ ու սննդի որոշակի տեսակներ էին ներմուծում «մոտակա արտասահմանից»՝ հիմնականում Վրաստանի Հանրապետության Սադախլո և Լիլո բնակավայրերի մեծածախ շուկաներից, երկրորդները գյուղա-

տնտեսական արտադրանք ներկրում ՀՀ տարբեր մարզերից (հիմնականում Արարատյան դաշտից ու հատկապես Արմավիրի մարզն ընդգրկող շրջաններից), իսկ երրորդները, որոնց թիվը զգալիորեն փոքր էր, այս գործառույթները իրականացնում էին հանրապետության սահմաններից դուրս՝ «հեռավոր արտասահման» (Բուլղարիա, Լեհաստան, Հունաստան, Թուրքիա, Սիրիա, Միացյալ Արաբական էմիրություններ, Չինաստան և այլն) այցելելու ճանապարհով:[102]

Վերջին տարիներին կատարված փոփոխությունները ստիպեցին Հայաստանի Հանրապետության և, ի մասնավորի, Շիրակի ու Լոռու բնակչությանը ինչ-որ չափով վերադառնալու դեպի ավանդական տնտեսաձևերը՝ անհատական տնտեսավարմանը, տնայնագործությանը, օժանդակ տնտեսական զբաղմունքներին և տնտեսության յուրացնող ձևերին:

Վերոհիշյալ տնտեսական գործընթացներում ընդգրկված է ոչ միայն գյուղական, այլև քաղաքային բնակչության մեծ մասը: Հայոց քաղաքային կենցաղում ավանդաբար արհեստների հետ զուգահեռ զբաղվել են նաև գյուղատնտեսությամբ: Մասնավորապես Ալեքպոլ-Լենինականի քաղաքային կենցաղում գյուղատնտեսական զբաղմունքները գրեթե մշտապես զուգորդվել են քաղաքին բնորոշ արհեստավորական արտադրական, առևտրի և այլ զբաղմունքների հետ:[103] Քաղաքի արդի կենցաղում դրա հարատևումը ապացուցում է ոչ միայն իր գյուղական շրջապատի և գյուղացիության հետ քաղաքային բնակչության ու շուկայի սերտ կապի, այլև հողի և գյուղատնտեսության հետ նրա ավանդական առնչությունների մասին:

---

[102] *Ա.Բոյաջյան, Գյումրու բնակչության աշխատանքային տեղաշարժերը XX դ. Վերջին, ՇՊՄԺ հանրապետական V գիտաժողովի զեկուցումների նյութեր, Գյումրի, 2002, էջ 40-41:*

[103] *Կ.Մեղրոսյան, Գյուղատնտեսական զբաղմունքները Ալեքսանդրապոլ-Լենինականի կենցաղում, ՇՊՄԺ հանրապետական IV գիտաժողովի զեկուցումներ, Գյումրի, 2000, էջ 39-40:*

Հետերկրաշարժյան տարիներին, հատկապես 1990-2000-ական թթ. Գյումրիում և Վանաձորում լայն տարածում ստացավ մուրային անասնապահությունը և տնամերձ հողամասերի մշակումը, բարձրացավ դրանց տնտեսական դերը: Տնամերձերից ստացվող գյուղմթերքները նույնպես հարմարեցվեցին առնին ընտանիքների առօրյա սննդի կարիքների բավարարմանը, ուստի սկսեցին մշակել առաձնապես բանջարաբոստանային կուլտուրաներ: Հատկանշական է, որ հողագործությամբ զբաղվում էին ոչ միայն առաձնատուն ունեցողները, որոնք դրա համար ունեին որոշակի հարմարություններ (փակ բակ, տնամերձ հողակտոր), այլև բազմաբնակարան շենքերի բնակիչները, որոնք շենքերի բակերում՝ հարակից տարածքներում, անգամ մոտակա գյուղերում ստեղծում էին իրենց տնտեսությունները՝ դրանց մշակման արդյունքներով ապահովելով իրենց ընտանիքների կենսական պահանջները ամռան-աշնան սեզոնին:[104] Հարկ է նշել, որ քաղաքաբնակների կյանքում ձևավորվեց նոր գործելակերպ: Եթե նախկինում գյուղաբնակներն էին քաղաք գալիս արդյունաբերական ձեռնարկություններում աշխատելու, ապա ներկայումս քաղաքաբնակները չնչին վարձատրությամբ, երբեմն բնամթերքով, գնում են գյուղ՝ ուրիշի հողը մշակելու, ընտանիքի ապրուստը հոգալու նպատակով: Ըստ որում, նրանց թվում քիչ չեն մասնագիտական որակավորում և նախկինում մասնագիտական աշխատանք ունեցողները:

Եթե տնամերձ հողակտորների մշակումը համամասնորեն տարածված է ողջ քաղաքում, ապա մուրային անասնապահությունը գերակշռում է քաղաքի ծայրամասային թաղերում: Քաղաքամերձ գոտում ընկած մոտակա արոտավայրերի առկայությունը հնա-

[104] *ԴԱՆ, Գյումրի, 2015:*

րավորություն է տալիս մի քանի տասնյակ կենդանիներով նախիրներ ու հոտեր արածեցնել: Հարկ ենք համարում արձանագրել, որ այս գործընթացներում ևս զբաղված են ոչ միայն առանձնատների, այլև բազմաբնակարան շենքերի բնակիչները, որոնք համապատասխան հարմարություններ (գոմեր, խոտանոցներ և այլ անասնապահական շինություններ) են ստեղծում մոտակայքում՝ հաճախ օգտագործելով ավտոտնակներն ու դատարկված ժամանակավոր կացարանները (տնակները):[105] Շատ ընտանիքների համար անասնապահության արդյունքում ստացված կաթնամթերքն ու մսամթերքը կենսապահովման գլխավոր միջոցն են, որոնք արտադրվում են ոչ միայն սեփական գործածության համար, այլև վաճառվում կամ փոխանակվում են՝ դառնալով նրանց համար եկամուտի լրացուցիչ աղբյուր: Անասնապահության մյուս կարևոր արդյունքը ձմռան վառելիքի (աթարի ձևով) նախապատրաստումն է, որը շատերի համար ջեռուցման միակ միջոցն է:

Թռչնաբուծությունը ավանդաբար կարևոր տնտեսական նշանակություն ունեցող զբաղմունք է եղել ինչպես գյուղաբնակների, այնպես էլ քաղաքային բնակչության այն հատվածի համար, որոնք տնամերձ հողատարածքներ ունեին: Սակայն վերջին տասնամյակի սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակը ստիպեց թռչուններ պահել նաև դրա համար համապատասխան պայմաններ չունեցողներին: Քաղաքներում, երկրաշարժից հետո, բնականաբար պակասեց բազմաբնակարանային շենքերի և մեծացավ տնակների թիվը, որոնք լրացուցիչ կառուցապատվեցին՝ իրենց մեջ ներառելով տնամերձ փոքրիկ հողակտորներ և օժանդակ շինություններ՝ հիմնականում հարմարեցված հատկապես թռչնաբուծության համար: Սրանց ավե-

---

[105] *ԴԱՆ, Գյումրի, 2015:*

լանում են բազմաբնակարանների այն բնակիչները, որոնք դրա համար օգտագործում և հարմարեցնում են բոլոր հնարավոր օժանդակ տարածքները՝ պատշգամբները, ձեղնահարկերն ու նկուղները:

Թռչնաբուծության լայն տարածվածությունը պայմանավորված է նրանով որ, այն չի պահանջում առանձնապես ընդարձակ տարածքներ և դրամական մեծ ներդրումներ: Եթե գյուղական բնակավայրերում պահվող թռչնատեսակներն աչքի են ընկնում բազմազանությամբ՝ հավ, հնդկահավ, լողացող թռչուններ, ապա քաղաքային պայմաններում հատկապես վերջինները լայն տարածում չունեն՝ ջրային ավազանների, հոսող ջրերի և սագերի ու բադերի համար արածելու տարածքների բացակայության պատճառով:

***Օժանդակ տնտեսաձևեր.*** Ավանդական տնտեսավարման վերոհիշյալ ձևերի հետ միասին ուսումնասիրվող շրջանում մեծացել է նաև օժանդակ տնտեսաձևերի և տնտեսական զբաղմունքների այն խմբերի նշանակությունը, որոնք ուղղակի առնչվում են կենսապահովման մշակույթի հետ՝ հանդիսանալով սննդի հայթհայթման լրացուցիչ միջոց: Այս առումով առանձնապես կարևորվում են մեղվաբուծությունը, ձկնորսությունը և հավաքչությունը:

Մեղվապահությունը շիրակցիների ու լոռեցիների ավանդական այն օժանդակ տնտեսական զբաղմունքներից էր, որի զարգացման համար առկա էին բնակլիմայական բարենպաստ պայմաններ՝ ուղղաձիգ գոտիների (հարթավայրային, նախալեռնային և լեռնային) առկայությունը, մշակովի դաշտավարական ծաղկող կերակրաբույսերի և տեխնիկական մշակաբույսերի (կորնգան, առվույտ, արևածաղիկ, կտավատ և այլք) լայնատարած մշակումը և ամենակարևորը՝ ալպիական մարգագետինների և վայրի մեղրատու բույսերի առկայությունը: Դաշտային ազգագրական նյութերը և ՀՀ ԱՎԾ

տվյալները[106] վկայում են, որ Լոռու մարզի գրեթե բոլոր բնակավայրերում և Շիրակի գյուղերի մեծ մասում բազմաթիվ ընտանիքներ զբաղվում էին մեղվապահությամբ, իսկ նրանց մի մասը նույնիսկ մասնագիտացել էր նոր մեղվաընտանիքների բուծման և իրացման մեջ: Մեղվապահության զարգացման արդի վիճակը նաև պայմանավորված է օժանդակ տնտեսական զբաղմունքների դերի բարձրացման հանգամանքով: Բարենպաստ կլիմայական պայմանների դեպքում մարզում արտադրվող մեղրը լիովին բավարարում է բնակչության պահանջները:

Մեր ունեցած տվյալները ցույց են տալիս, որ հատկապես Գյումրիում պահվող մեղվաընտանիքների քանակն ավելի մեծ է, քան ներկայացվում է պաշտոնական աղբյուրներում:[107] Մեղվապահությամբ զբաղվող շատ ընտանիքներ պաշտոնապես չեն գրանցված պատկան մարմիններում, կամ մասնագիտացված կազմակերպություններում՝ խուսափելով գործ ունենալ պետական կառույցների հետ: Ի դեպ, նմանատիպ երևույթ նկատվում է տնային տնտեսություն վարող շատ մանր ձեռներեցների պարագայում, որոնք չեն ձգտում ժամանակ առաջ կամովին գրանցվել որևէ պետական կառույցում կամ ֆիսկալ մարմնում: Իրերի այսպիսի վիճակը ծնում է «ծպտյալ գործազրկություն» և բնակչության թաքնված եկամտի իրական չափերի կոծկում, ինչն ընդունվում է նաև պատկան մարմինների ղեկավարների կողմից:

---

*[106] Շիրակի մարզում 880 ընտանիք (որից 21-ը Գյումրիում), իսկ Լոռիում 1794 ընտանիք (որից 67-ը Վանաձորում): Հայաստանի Հանրապետության 2014 թ. Գյուղատնտեսական համատարած հաշվառման Լոռու և Շիրակի մարզերի հիմնական արդյունքները: Գյուղատնտեսական կենդանիներ և թռչուններ:*

*[107] Համաձայն ՀՀ ԱՎԾ Շիրակի մարզային գործակալության տվյալների մեղվաընտանիքների քանակը մարզկենտրոնում և նախկին վարչական շրջաններում հետևյալ պատկերն ունի. Գյումրի-295, Ախուրյան-2346, Ամասիա-623, Անի-1435, Աշոցք-468 և Արթիկ-2690:*

Ձկնորսությունը Շիրակի և Լոռու բնակչության օժանդակ տնտեսական զբաղմունքների մեջ ավանդաբար մեծ կշիռ չի ունեցել:[108] Պատահական չէ, որ համաձայն XIXդ. և XXդ. սկզբի աղբյուրների՝ ձկնեղենը նշվում է Ալեքսանդրապոլի գավառի ներմուծվող սննդամթերքների թվում:[109] Ձկնորսության թույլ զարգացվածությունը Շիրակում բացատրվում է բաց բնական ջրավազանների բացակայությամբ և գետային նոսր ցանցով: Դրանով հանդերձ Ախուրյան գետի հովտում գտնվող բնակավայրերում որոշ չափով տարածված էր ուռկանային և ծուղակ-կողովով («տուզախով») ձկնորսությունը: Ախուրյանում և նրա վտակներում բազմանում էին կարմրախայտ, կապույտ ձկնատեսակները, իսկ Կարս գետի հետ խառնարանում, ըստ մեր բանասացների՝ հանդիպում էր նաև լոքո: Ալեքսանդրոպոլում, ինչպես նաև Աշոցքի և Ամասիայի տարածաշրջանի որոշ գյուղերում, նախկինում կային անվանի ձկնորսներ, որոնց զբաղմունքից առաջացել էր ազգատոհմի մականունը՝ Թոռջոնք:[110] Խորհրդային շրջանում կառուցված արհեստական ջրամբարներում (Ազատանի, Կառնուտի, Սառնաղբյուրի, Մանթաշի, Ջաջուռի, Ախուրյանի, Արփի լճի) սկսեցին զբաղվել ձկնաբուծությամբ՝ ներմուծվեցին լճային կարպ,ծածան ու կարաս ձկնատեսակները: Այս հանգամանքի շնորհիվ բավական մեծ տարածում ստացավ նաև սիրողական՝ կարթով ձկնորսությունը: Վերջին տասնամյակի սոցիալ-տնտեսական իրավիճակն իր կնիքը դրեց նաև ձկնորսական զբաղմունքերի վրա՝ բարձրացնելով դրանց տնտեսական արժեքը, որը նախորդ շրջանում չնչին էր: Հատկապես Ախուրյանի ջրամբարի հարուստ ձկնային

---

[108] *Ա. Բոյաջյան, Ձկնորսությունն ու ձկնաբուծությունը Շիրակի արդի տնտեսական կենցաղում, ՇՊՄԺ հանրապետական վեցերորդ գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2004, էջ 63:*

[109] *Վ.Աբրահամյան, Հայ համքարությունները Անդրկովկասի քաղաքներում (18-20-րդ դարի սկիզբ), Եր, 1971, էջ 53:*

[110] *Վ.Աբրահամյան, Հայ համքարությունները..., էջ 53:*

ռեսուրսները դարձան «հին» և «նորաթուխ» ձկնորսների ընտանիքների համար եկամտի զգալի աղբյուր: Շիրակի մարզի շուկաներում ներմուծվող սևանյան ծագում ունեցող ձկնատեսակների (հատկապես սիգի) կողքին վաճառվում են մարզի ջրամբարներից որսած ծածան, կարպ, կարաս և այլ ձկներ: Մի կարևոր դիտարկում ևս, որ անհրաժեշտ ենք համարում նշել, դա խեցգետինների որսն ու դրանց աշխույժ վաճառքն է շուկայում: Մինչև վերջին տարիները խեցգետինների օգտագործումը ավանդական ուտեստի համակարգում բացակայում էր, սակայն ներկայումս գարեջրի հետ մատուցվող չորացված և ծխահարված ձկների կողքին լայնորեն օգտագործվում է նաև եփված խեցգետին, որի պահանջարկը մեծ է հատկապես մարզում տեղակայված ռուսական կայազորի անձնակազմի շրջանում: Շիրակցի ձկնորսների մի մասը մասնագիտացել է կոթավոր ուռկաններով խեցգետինների որսի մեջ, որը պահանջում է յուրահատուկ հմտություններ ու հնարքներ:[111] Մեզ հետաքրքրող շրջանում, երբ պետական ձկնատնտեսությունները մարզում փաստորեն քայքայվեցին, ի հայտ եկան ձկնաբուծական մասնավոր՝ հիմնականում ընտանեկան տիպի փոքր ձեռնարկություններ, որոնցում բուծում են թանկարժեք և աղանդերային ձկնատեսակներ, մասնավորապես լճային ֆորել (կարմրախայտ) և թառափ:[112]

---

[111] *Ա. Բոյաջյան, Ձկնորսությունն ու ձկնաբուծությունը… էջ 64:*

[112] *Ըստ ԱՎԾ տվյալների 2014 թ. Շիրակի մարզում ձկնաբուծությամբ զբաղվել է 5 ֆիզիկական (Մարմաշեն, Ամասիա, Արփի, Աշոցք, Սառնաղբյուր գյուղերում) և 1 իրավաբանական (Մարմաշեն) անձ՝ ընդհանուր 7733 քառ. մետր ջրավազանով: Լոռու մարզում ձկնաբուծությամբ զբաղվել է 17 ընտանիք՝ ընդհանուր 17 656 քառ. մետր ջրավազանով, որից 2-ը Վանաձորում, 2-ը՝ Շիրակամուտում: Հայաստանի Հանրապետության 2014 թ. Գյուղատնտեսական համատարած հաշվառման Լոռու և Շիրակի մարզերի հիմնական արդյունքները: Ձկնաբուծություն:*

***Հավաքչություն.*** Աշխատանքի միջոցով իրենց ապրուստը վաստակելու հնարավորություն չտեսնելով կամ չուզենալով՝ մարդիկ գերադասում են վաստակի այլ միջոցների դիմել, մասնավորապես հավաքչության: Թե' քաղաքային, թե' գյուղական բնակչությունը հավաքչության տարբեր ձևեր է կիրառում, որոնցից ամենահինը վայրի կանաչեղենի (սինդրիկ, ավելուկ, ծնեբեկ, շուշան, սիբեխ և այլն), սնկի ու հատապտուղների (մոշ, մոռ) հավաքումն է: Վերջին երկու տասնամյակում հավաքչությունը ձեռք է բերել ոչ միայն կենցաղային-կիրառական, այլև կոմերցիոն նշանակություն: Հավաքչությամբ զբաղվողների մի մասը վայրի բուսատեսակներն օգտագործում են ինչպես սննդի համակարգը լրացնելու, այնպես էլ վաճառքի համար: Ընդ որում վաճառում ինչպես թարմ, այնպես էլ պահածոյացված (հիմնականում մարինացված): Շատ ընտանիքների համար դա ապրուստը ապահովելու հիմնական միջոց է: Օրինակ, Լոռիում սունկ հավաքողներն իրենց հաճախորդներն ունեն, ձևավորվել է սունկ հավաքողներ-վերավաճառողներ և սունկ հավաքողներ-մարինադ պատրաստողներ յուրօրինակ շղթա:[113] Գարնանը սկսվող այս հավաքչությունը տանելի է դարձնում կյանքը մինչև աշուն: Աշնանը անցնում են բերքահավաքից հետո դաշտերում մնացած բանջարաբոստանային մշակաբույսերի չհավաքված բերքի (կարտոֆիլ, կաղամբ, ճակնդեղ և այլն) հավաքմանը, որը բնակչության մեջ հայտնի է որպես «պլեճ անել», ինչից ստացված արդյունքով էլ հոգում են սննդի հարցը:

---

[113] *Ա. Ամիրխանյան, Սունկը լոռեցիների հավաքչական մշակույթում, Հայ ժողովրդական մշակույթ XVI, Ավանդականն ու արդիականը հայոց մշակույթում, Դերենիկ Վարդումյանի ծննդյան 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., 2014, էջ 100:*

Հավաքչության ձևերն, ինչպես ասվեց, խիստ բազմազան են հատկապես աղքատների միջավայրում, որոնք գերակշռում են քաղաքներում: Մարդիկ սկսեցին զբաղվել զանազան պիտանի իրերի (հումք, մթերք, աթար, շշեր և այլն) հավաքմամբ՝ դաշտերում, գերեզմանոցներում, աղբանոցներում: Քաղաքում և գյուղերում սկսեցին ի հայտ գալ գունավոր մետաղների ընդունման կետեր: Մարդիկ տանում էին ինչ պատահեր, նույնիսկ դեպքեր են գրանցվել, որ գերեզմաններից գողացել են այլումինից եզրաշերտերը (մետաղի ընդունման կետերում հարցեր չէին տալիս, թե սա որտեղից, չնայած լավ գիտեին), կամ այլ բաներ, որոնք հանձնում էին գունավոր մետաղների կետեր և դրա դիմաց ստանում որոշակի գումար: Դրանով զբաղվում էին բոլորը, նույնիսկ փոքր երեխաները մի փոքրիկ կտոր, կամ մի քանի 100 գրամ հանձնում էին՝ ծամոն, «Յուպի» հյութեր կամ շոկոլադե սալիկներ, շաքարաքլոր գնելու համար: Զբոսայգիների ցանկապատները, զանազան երկաթեղեն գողանալու կամ զրեթե բացահայտ քանդել տանելու դեպքեր շատ են եղել և' գյուղում, և' քաղաքում: Մետաղ հանձնելով գոյությունը պահպանելը բնորոշ է հատկապես աղքատ ընտանիքներին: Այսպես է նկարագրում իր ապրելակերպը 2 երեխա ունեցող գյումրեցի կինը. «*Երկաթ կհավաքեմ, կիլոյի համար 20 դրամ, հեչ բան... Ուրդեղ ըսես՝ դոմիկ կքանդեն, կերթամ-կհանեմ: Ավտո կբռնեմ, 3 հազար դրամ փող կուտամ, կտանիմ-կհանձնեմ, տակը մե հազար դրամ մնա կամ չմնա հացի, հերիք է, էլի, գոյությունս էղ է»*:[114] Հավաքչության՝ որպես ապրուստի հիմնական միջոցի մասին են վկայում նաև Հայաստանի աղքատ բնակչության մեջ 1997-2007 թթ. իրականացված ուսումնասիրությունները՝ հիմնված քաղաքային ու գյուղական տարբեր սեռատարիքային խմբերից

[114] *ԴԱՆ, Գյումրի, 2015:*

վերցրած հարցազրույցների վրա:[115] Այսպես օրինակ՝ Սպիտակի «Գերեզմանոցում ուտելիք հավաքողները» վերնագրով զրույցի մասնակիցները պատմել են, որ գերեզմաններում սնունդ հավաքողները շատացել են: Գյումրիի աղբանոցից երկաթ ու ապակի հավաքողներն իրենց վաստակածն ավելի շատ են համարել, քան հավաքարարությունը կամ շինարարության մեջ աշխատելը, քանի որ այդ տարիներին գունավոր մետաղների առք ու վաճառքը մեծ տարածում ուներ:[116]

Այդ տարիներին չաշխատող արդյունաբերական ձեռնարկությունների հաստոցները ևս, մեծավմասամբ, որպես ջարդոն ուղարկվեցին հիմնականում Իրան՝ գումարի կամ ապրանքների փոխարեն: Ինչպես հիշում է բանասաց Թամարա Դարչինյանը. *«Արդյունաբերական ամբողջ կապիտալը սեփականաշնորհեցին ու որպես մետաղի ջարդոն էժան վաճառեցին: Պարսիկների մեքենաները ամեն օր Սպիտակից հաստոցներ էին տանում ու մնացած ամեն ինչը: Հայրս 45 տարի աշխատել էր շաքարի գործարանում, ասում էր՝ հաստոցները նույն ձևով մնացել էին, հնարավոր էր վերականգնել և աշխատեցնել, մինչդեռ Հայաստանը այսօր դարձել է շաքարավազ ներմուծող երկիր»:*

Օրվա հաց որոնելու այլընտրանքային տարբերակներից մեկը, որը կարելի է համարել հավաքչության յուրատեսակ ձև, լայն տարածում գտավ 1992-1995 թթ.: Դա այսպես կոչված «արդիբաշն» էր, երբ մարդիկ գնում էին Ռուսաստան, այնտեղից թանկարժեք մե-

---

[115] *Պատմություններ աղքատության մասին, գիրք առաջին, Եր., 2001; Գիրք երկրորդ, Եր., 2007:*

[116] *Հ. Խառատյան, Աղքատության միջավայրը Հայաստանում, Պատմություններ աղքատության մասին, գիրք երկրորդ, Եր., 2007, էջ 507-508:*

տաղներ (ոսկի, պալադիում) պարունակող սարքավորումների դետալներ էին բերում, տեղում զտում, վաճառում էին ու դրանով գոյատևում:

***Օգնության ձևերը.*** Աղետի գոտու աղքատ բնակչության մեծ մասի համար մինչ օրս կենսապահովման հիմնական միջոցը շարունակում է մնալ նպաստն ու բարեգործական կազմակերպությունների, առանձին անհատների կողմից ստացված օգնությունները: «Օգնությունը»՝ որպես հասարակական հարաբերությունների ձև, տարածված է աշխարհով մեկ: Ուստի դիտելով այն իբրև համակարգ՝ պետք է հաշվի առնել, որ «օգնությունը» ոչ միայն նյութական նվիրատվությունն է, այլև այն ձեռնարկումները, որոնց արդյունքում բարելավվում է չքավորների նյութական և հոգևոր վիճակը: Ընդ որում, «օգնությունը» կարող է լինել ինչպես միակողմանի, անշահախնդիր բարեգործության, այնպես էլ փոխօգնության՝ «երկկողմանի պայմանագրի» ձևով:[117]

Հայաստանում «օգնություն» բառն իր ներկայիս ընկալմամբ շրջանառության մեջ դրվեց Սպիտակի երկրաշարժից հետո, երբ օգնությունն իրականացվում էր համընդհանուր սգո պայմաններում: Ըստ սգո ավանդական սովորույթի՝ կորուստ կրած ընտանիքը մասնակիորեն մեկուսացվում է հասարակական կյանքի եռուզեռից: Ինչպես գիտենք, սգից հանելու կարգը բարեկամների և հարազատների որոշակի վարվելակարգ է նախատեսում, ընդհուպ մինչև սգավորներին առաջին անգամ «աշխատավայր ուղեկցելը»՝ հասարակական կյանքին մասնակից դարձնելը: Ուստի զարմանալի չէ, որ հետերկրաշարժյան «օգնություն» ստանալու իրարանցմանն ավելի շատ սգավորների բարեկամներն ու ազգականներն էին մասնակցում, քան

*[117] Գ. Շագոյան, Օգնություն. Կամեցողություն, թե՞ բարի կամք, Պատմություններ աղքատության մասին, գիրք առաջին, Եր., 2001, էջ 353-354:*

անմիջական կորուստ կրած ընտանիքները: Ինչպես Գյումրիում էին իրավիճակը բնորոշել, «ում՝ ժաժք, ում՝ հրաշք»:[118] Աղետից տուժածներին ուղղված պետական սոցիալական քաղաքականությունը հիմնված էր փոխհատուցման վրա: Փոխհատուցման սկզբունքն իրականացվում էր այնպիսի միջոցառումներով, որոնք ուղղված էին կրած վնասի փոխհատուցմանը՝ դրամական կամ այլ ձևով. նպաստի, թոշակի, արտոնությունների տրամադրմամբ: Բացի այդ, տուժածների մի շարք պահանջներ չէին կարող արտահայտվել դրամական ձևով, քանի որ հասարակության մեջ լիարժեք ինտեգրացիան միջնորդավորված ձևով է կապվում նյութական գործոնի հետ: Աղետի հետևանքները մեղմելու պետական այդ կարգը, որը «փոխհատուցում» էր սահմանում՝ ըստ ունեցած կորուստների, փոխեց օգնություն ստացողների վերաբերմունքը. «օգնությունը» դիտվեց իբրև «տալու» պարտավորություն: Ավանդական փոխօգնության հասարակական համերաշխության սկզբունքը՝ «տալիս եմ, որ ստանամ», այստեղ վերաիմաստավորվեց «կորցրել եմ՝ ուրեմն պիտի ստանամ» բանաձևի:[119]

Աղետների զոհերի կամ իրենց աղետի զոհ համարողների շրջանում այդպիսով ձևավորվեցին կյանքի յուրահատուկ նորմեր, որոնք կարելի է անվանել *ռենտային*: Մարդիկ, գիտակցելով, որ իրենք զոհ են, համարում էին, որ իրենց պետք է օգնեն: Շատ հաճախ օգնության էին դիմում նույնիսկ նրանք, որոնք աղետի հետ ոչ մի կապ չունեին: Կորսվածի փոխհատուցման սպասումներն, ըստ էության, բավական նվազեցնում են մարդու ակտիվությունը և նրանք իրենց կյանքը բարելավելու նպատակով դադարում են անհրաժեշտ

---

*[118] Գ. Շագոյան, նշվ. աշխ., էջ 356:*

*[119] Գ. Շագոյան, Հետերկրաշարժյան օգնությունը «տվողների և վերցնողների» համատեքստում, ՇՊՄԺ հանրապետական հինգերորդ գիտաժողով, զեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, 2002, էջ 69:*

քայլերից՝ սպասելով որ ամեն ինչ կլուծվի «վերևում»: Իսկ երբ առաջարկված օգնությունը պակաս է լինում կանխատեսածից, որոշ մարդկանց մոտ առաջանում է անձնական վիրավորանքի չդադարող զգացում կամ ավելի հաճախ՝ ագրեսիվ պահվածք: Պահվածքի նման մոդելներն առաջանում են որպես հոգեբանական հետևանք՝ յուրաքանչյուր աղետից հետո:[120]

Մյուս կողմից օգնությունն առաջացնում է նաև այլ խնդիր՝ սպառողական հոգեբանության ձևավորումը: Ինչպես նշում են փորձագետները, *«Պետությունը պարտք էր անում ու գումար բաժանում այդ մարդկանց, որպեսզի սոցիալական ընդվզումներ տեղի չունենային, ուստի մարդկանց մոտ առաջացավ ուզվորի հոգեբանություն, առաջացավ մի խավ,որը հետ վարժվեց աշխատելուց, ես նրանց ասում եմ կամավոր գործազուրկ, այսինքն եթե այդ մարդուն առաջարկես մի գործ, նա կհրաժարվի, որովհետև այլևս չի սիրում աշխատել, նույնը տեղի ունեցավ նաև գյուղական բնակավայրերում»*:[121]

*«Դա կարող է հասնել ընդհուպ մինչև զավեշտի մակարդակի, երբ հագած-կապած կանայք կարող են դիմել օգնություն-նպաստ խնդրելու: Ուզվորությունը դարձավ ապրելակերպ, ինչը միայն սոցիալական հետևանք չէ, այլ նաև հոգեբանություն՝ իր ողջ բացասական ազդեցությամբ, քանի որ մի ողջ սերունդ սա է համարում ճիշտ ապրելակերպը. «բաշարելը», «շուստրիությունը» դարձան մարդկանց գնահատման որակի նշան»* :[122]

Ինքնըստինքյան արտոնություններն անհրաժեշտ են, սակայն լինելով օգնության միակ մեխանիզմ, դրանք, փաստորեն, չնպաստեցին աղետյալների ինտեգրմանը հասարակության մեջ և ստեղծեցին

---

[120] *Белова Е., Модели социальной адаптации пострадавших от природных катастроф (Региональный аспект), автореферат кандидатской диссертации, Хабаровск, 2004.*

[121] *ԴԱՆ, փորձագետ Արտաշես Բայաջյան, Գյումրի, 2016:*

[122] *ԴԱՆ, փորձագետ Սեյրան Մարտիրոսյան, Գյումրի, 2016:*

նրանց համար գոյատևման չափազանց ցածր ստանդարտներ (կեցության մինիմալ կամ դրանից ցածր մակարդակ):

***Հասարակական կազմակերպություններ.*** Աշխատատեղերի բացակայության, գործազրկության ու աղքատության պայմաններում սոցիալական լարվածությունը թուլացնող գործոն են դառնում ոչ կառավարական կազմակերպությունները կամ հասարակական կազմակերպությունները (այսուհետ՝ ՀԿ): ՀԿ-ները կարևոր դերակատարում ունեն հատկապես աղետի գոտու արտակարգ իրավիճակում, քանի որ դրանց գործունեություն ուղղված է օժանդակելու բնակչության սոցիալական և մշակութային ադապտացիային:

ՀԿ-ների դերակատարումը երկու առումով պետք է դիտարկել. նախ՝ որպես գործունեության ձև, որն ինչ-որ չափով մեղմացնում է աշխատաշուկայի բացակայության պատճառով ստեղծված լարվածությունը՝ ոլորտում ներգրավելով բնակչության առավել ակտիվ ու գրագետ հատվածին, երկրորդ՝ որպես անապահով խավերի կյանքը տանելի դարձնելու համար որոշակի ծրագրեր իրականացնող կազմակերպություններ:

ՀԿ-ները որպես զբաղվածության ձև դիտարկելիս պետք է նկատի ունենալ, որ համատարած գործազրկության մատնված հայ հասարակությունը ինքնադրսևորման նորանոր ոլորտներ գտնելու փնտրտուքի մեջ, որոշակի ֆինանսավորման հնարավորությունների հետ մեկտեղ, ընտրեց հասարակական գործունեությունը:[123] Բիզնեսի ասպարեզում ինչ-ինչ պատճառներով իրենց տեղը չգտած մարդիկ, բարձրագույն կրթություն ունեցողները, գիտնականները և այլոք,

---

[123] *Լ.Խառատյան, Գ.Շագոյան, «Ընտանիք»-ն արդի հասարակական կազմակերպությունների համատեքստում, Ընտանիքի հետազոտման հիմնախնդիրները, Եր., 2001, էջ 52:*

որոնք արագ կողմնորոշվեցին ստեղծված իրադրության մեջ, փորձեցին եկամուտ հայթայթել ՀԿ-ների միջոցով, ինչին հատկապես խթանեց Արևմուտքից ներմուծված դրամաշնորհային համակարգը:

Աղետի գոտում դրանց առաջացման ու տարածմանը նպաստող գործոն էր երկրաշարժը: Փորձագետների վկայությամբ *«ՀԿ-ները երկրաշարժից հետո շատացան, ու ստեղծվում էին հիմնականում կապված դրսից եկող գրանտների ու դրամաշնորհների հետ, և օգնում են ընչազուրկ ընտանիքներին՝ երեխաներին ապահովելով կրթությամբ, իսկ ծերերին՝ սնունդով, բացի սրանից ՀԿ-ները ոչ միայն աշխատատեղերով են ապահովում, այլև բարձրացնում են հասարակական ակտիվության ու մարդկանց տեղեկացվածության մակարդակը»* :[124]

*«Երբ երկրաշարժից հետո աշխարհի տարբեր երկրներից եկան օգնության, տեսանք, որ օգնողներն ավելի շատ ոչ կառավարական կազմակերպություններն էին: Դա էր պատճառը թերևս, որ Գյումրում ու Շիրակի մարզում արագ ստեղծվեցին ու բավականին ակտիվ գործունեություն ծավալեցին տարաբնույթ հասարակական կազմակերպություններ, որոնք հետերկրաշարժյան տարիներին մեծ աշխատանք կատարեցին բնակչության սոցիալ-հոգեբանական, մշակութային, իրավական և այլ խնդիրների լուծման ուղղությամբ: Այս առումով դա ունեցել է դրական հետևանքներ»*:[125]

*«ՀԿ-ի ստեղծումը երկրաշարժից հետո՝ անհույս և վատ տարիներին էր, երբ Արմինեն (կազմակերպության ղեկավարը-Թ.Ա) տեսավ, որ հասարակական գործունեության հնարավորություն կա,*

---

[124] *ԴԱՆ, փորձագետ Արմենուհի Կյուրեղյան, Վանաձոր, 2016:*

[125] *ԴԱՆ, փորձագետ Սեյրան Մարտիրոսյան, Գյումրի, 2016:*

*հավաքվեցինք սեյսմիկ ծառայության մի քանի գործընկերներով, համագործակցեցինք տարբեր ՀԿ-ների հետ, հետո առանձնացանք ու ինքուրույն ծրագրեր արեցինք»* :[126]

Շիրակի և Լոռու մարզերում գործող ՀԿ-ների դաշտի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ դրանց մեծ մասը տեղակայված է Գյումրիում և Վանաձորում, իսկ զուտ բարեգործություններով զբաղվող ՀԿ-ների քանակը, ի տարբերություն հետերկրաշարժյան տարիների, այնքան էլ մեծ չէ: Փոխարենը այլ ոլորտի ՀԿ-ները, հարմար առիթի դեպքում, ամենայն սիրով են զբաղվում հումանիտար օգնություն բաժանելով:[127] Այսօր տարածաշրջանում ակտիվ գործունեություն են ծավալում ինչպես միջազգային՝ «Վորլդ Վիժն Հայաստան» զարգացման և բարեգործական, «Հայկական Կարիտաս» բարեսիրական կազմակերպությունները, «Կազա» շվեյցարական մարդասիրական հիմնադրամը, այնպես էլ տեղական բազմաթիվ կազմակերպություններ,[128] որոնք մեծ աշխատանք են տանում բնակչության անապահով խավերի շրջանում:

## *Անօթևանության և բնակարանային խնդիրները*

Երկրաշարժն ու դրան հաջորդած տնտեսական ճգնաժամն զգալի հարված հասցրեց հայ ինքնության գլխավոր հարացույցներին՝ ընտանիքին և տանը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայի համար տունն այն տիեզերքն է, որից դուրս, ինչպես ժամանակակից տիեզերաբանական տեսություններում է, ոչինչ գոյություն

---

[126] *ԴԱՆ, փորձագետ Սուսաննա Ղազարյան, Գյումրի, 2016:*

[127] *Տեղեկատու 2009. Շիրակի մարզում գործող քաղաքացիական հասարակության կառույցների տեղեկատու, Գյումրի, 2009, էջ 11:*

[128] *Օրրան, Շիրակ կենտրոն, Ընտանիք և այլն:*

չունի՝ դրա հանդեպ վերաբերմունքի ամեն մի ձևափոխում վկայում է հայ ազգի հոգեբանական լուրջ շեղումների ու ազգային արժեհամակարգի խաթարման մասին:[129]

Ցավալի է, սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երկրաշարժից հետո աղետը վերապրածների մեջ փոխվել է տան՝ որպես աշխարհի մոդելի ավանդական ընկալումը, տունն այլևս առաջնային արժեք չէ աղետի գոտու բնակչության համար: Փորձենք պարզաբանել, թե ինչով է դա պայմանավորված:

Երկրաշարժը տնից զրկեց տասնյակ հազարավոր մարդկանց: Խորհրդային տարիներին հարմարավետ տներ ունեցող մարդկանց համար սկսվեց նոր իրողությունների հետ ադապտացման աննախադեպ ծանր ու բարդ գործընթաց: Արտակարգ իրավիճակում անբարենպաստ մշակութային պայմաններին (կործանված բնակավայր, լքված տներ, սանիտարական պայմանների բացակայություն) հարմարվելու աղետյալների առաջին հիմնախնդիրը հոգեբանականն էր: Հարազատների կորստի ցավը սրտում, տարիների ընթացքում ստեղծած ապրուստը կորցրած մարդիկ սկզբում հավատում էին, որ Աղետի գոտին կվերականգնվի երկու տարում, քանի որ երկրաշարժից անմիջապես հետո խորհրդային իշխանությունների կողմից ընդունվեց մի որոշում, որով նախատեսվում էր 1989-1990 թթ. ամբողջովին վերականգնել Աղետի գոտին:

Երկրաշարժից մի քանի տարի անց, երբ հայտնի դարձավ, որ Աղետի գոտին երկու տարում վերականգնելու խորհրդային իշխանությունների խոստումները իրականության հետ որևէ առնչություն չունեն, շատերին սկսեց հուզել այն հարցը, թե այնուամենայնիվ ե՞րբ

---

[129] *Լ. Աբրահամյան, Ազգ-պետություն, թե՞ ընտանիք-պետություն. Հայ ինքնության ընտանեկան առանձնահատկությունները, Ընտանիքի հետազոտման հիմնախնդիրները, Եր., 2001, էջ14:*

է Աղետի գոտին ու դրանից հատկապես տուժած Գյումրին ու Սպիտակը վերականգնվելու և ազատվելու տնակներից: Առավել խոհեմ և հարուստ կենսափորձով մարդիկ դեռևս այդ տարիներին էին պնդում, որ քաղաքների վերականգնման և ժամանակավոր կացարաններից ազատման համար տասնամյակներ կպահանջվեն: Կյանքը ցույց տվեց, որ նրանք ճիշտ էին: Չնայած մեծ ծավալի աշխատանքներին և համաշխարհային հանրության աջակցությանը՝ Աղետի գոտու վերականգնման այդ ծրագիրը չիրականացավ:[130]

ԽՍՀՄ փլուզումից հետո, երբ դադարեցվեց շինարարությունը, մարդիկ ստիպված էին մտածել իրենց կենցաղը նորովի կառուցելու՝ այսինքն հարմարողական նոր մեխանիզմներ մշակելու մասին: Առաջին հերթին դա ապրելու համար քիչ թե շատ ընդունելի պայմանների ստեղծումն էր, որն արտահայտվեց աղետից հետո ստացած ժամանակավոր կացարանները կամ վագոն-տնակներն (*դոմիկներ*՝ ինչպես դրանք անվանում է ժողովուրդը) ամրակայելու, կցակառույցներ ավելացնելու, մի քանի տնակ միացնելով ընդարձակելու, սանհանգույց կառուցելու ձևով: Տարիների ընթացքում այդ տնակներն աղյուսապատելով ի վերջո դարձնում էին հիմնավոր տներ՝ հարաբերականորեն հարմարեցնելով երկարաժամկետ բնակության համար:

Այսպես են բնութագրում այդ ժամանակաշրջանը բանասացները. *«Սկզբում որ ասել էին, թե շենքը կհանձնեն* (վերականգնեն-Թ.Ա.) *6 ամսից, պայմանները հարմարեցված էին 6 ամսվա համար, սակայն երբ շենքը քանդեցին ու նորը կառուցելու հեռանկար չկար, մենք դոմիկին կից կառույցներ սարքեցինք, որտեղ շատ վատ պայմաններ էին: Ժամանակի ընթացքում քարից կառուցվեցին կողային*

[130] *Ա. Մխիթարյան, Երկրաշարժի հետևանքների վերացման հիմնախնդիրները Շիրակի մարզում, Լրաբեր հասարակական գիտությունների, Եր., 2006, N 1, էջ 219-224:*

*շինություններ, բայց վատորակ. ջրի խնդիր կար, ունեինք բաղնիք, զուգարան, սակայն գազ չկար և դրանք չէինք կարող օգտագործել ըստ պատշաճի, իսկ բաղնիքի պատը հետագայում փախնող հողի պատճառով ճեղք էր տվել, ու այդտեղ այնքան էր ցրտել որ չէինք կարողանում լողանալ»:*[131] *«Երբ երկաշարժից հետո վերադարձանք Գյումրի, եղբայրս ասեց, որ եթե նույնիսկ 2 տարի ենք ապրելու տնակում, միևնույն է պետք է ստեղծել նորմալ կենցաղային պայմաններ՝ բաղնիք, զուգարան և այլն: Սկզբից մեզ համար էլ էր դժվար, բայց եղբայրս հետո մեր տնակի կողքին նոր շինություններ կառուցեց՝ ընդհուպ հասել էինք մինչև Մանուշյան փողոցի եզրը»:*[132]

ՀՀ կառավարությունը 1994թ. հոկտեմբերի 7-ին, թիվ 17 որոշմամբ ընդունեց Աղետի գոտու վերականգնման նոր ծրագիր, ըստ որի Աղետի գոտու բնակավայրերը պետք է վերականգնվեին մինչև 2001 թվականը՝ մինչ երկրաշարժն ունեցած ծավալներով: 1998 թ. հաստատվեց Աղետի գոտու վերականգման նոր ժամկետ՝ 1998-2001 թթ., որից ելնելով վերանայվեցին ելակետային տվյալները և ձևավորվեցին պետական պարտավորություններ երկրաշարժից տուժած անօթևան բնակիչների համար: Երկու անգամ պակասեցնելով Շիրակի մարզի բնակավայրերի վերականգման աշխատանքների ծավալները՝ կազմվեց նոր ծրագիր: 2001 թ. ՀՀ իշխանությունները աղետի գոտու վերականգման ևս մեկ՝ երրորդ ժամկետն էլ հայտարարեցին՝ 2001-2003 թթ.:[133] 2008 թ. ՀՀ կառավարությունը, «Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտա-

---

*131 ԴԱՆ, Լիանա Կոստանյան,Գյումրի, 2015:*

*132 ԴԱՆ, փորձագետ Ռոզա Հովհաննիսյան, Գյումրի, 2016:*

*133 ՋԵԿՈՒՑ, Աղետի գոտում բնակարանների բաշխման գործընթացի մոնիտորինգ, Քաղաքական մշակույթի և համաձայնությունների զարգացման «Շիրակ կենտրոն» ՀԿ, Գյումրի 2010 թ., էջ 11:*

նիքների բնակարանային խնդիրների լուծման հայեցակարգի» համաձայն, Աղետի գոտու անօթևան ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման վերջնաժամկետ հայտարարեց 2013 թվականը: Վերոհիշյալ ծրագրերը կամ չիրականացվեցին կամ կատարվեցին մասնակի: Երկրաշարժից հետո անցած 20 տարիների ընթացքում, մոտավոր հաշվարկներով, Գյումրիում կառուցվեցին 18.000–19.000 բնակարան, որից 3000-ը՝ 2001-2008 թվականներին: 2009թ. միայն Գյումրիում 100-ից ավելի փոքր ու մեծ տնակային ավան կար:[134]

Երկրաշարժին հաջորդած ավելի քան երկու տասնամյակում բնակարանաշինության ամենամեծ ծրագիրն (524 բնակարան) իրականացվել է ամերիկահայ բարերար Քըրք Քըրքորյանի հովանավորությամբ: Սպիտակում բնակարաններ են կառուցել՝ Շվեյցարիան՝ 180, Ուզբեկստանը՝ 230, Ռուսաստանը՝ 43, Էստոնիան՝ 78, «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով կառուցվել է 110, ՀՀ պետբյուջեի միջոցներով 145 բնակարան:[135] Գյումրիում իրենց բնակարանները վերանորոգելու և բարելավելու համար ֆինանսավորում են ստացել տարբեր աղբյուրներից 13347 ընտանիք (ԱՄՆ ՄԶԳ-ից՝ 6596, Լինսի Հիմնադրամից՝ 4126, ՀՀ կառավարությունից՝ 2282, համայնքային միջոցների հաշվին՝ 251, Ջոն և Հանթսման հիմնադրամից՝ 64, և Հայաստան Համահայկական Հիմնադրամից՝ 28 ընտանիք):[136]

---

[134] *ՁԵԿՈՒՅՑ, Աղետի գոտում բնակարանների բաշխման գործընթացի մոնիտորինգ, էջ 42:*

[135] *Սպիտակը 25 տարի անց. «Երբ ընտանիքդ սաղ ընդեղ ա (գերեզմանում), ո՞ւմ թողնենք-գնանք»www.armenianow.com/hy/society/features/50129/ spitak earthquake reconstruction_ki_krikorian_lori_province*

[136] *ՁԵԿՈՒՅՑ, Աղետի գոտում բնակարանների բաշխման գործընթացի մոնիտորինգ*

Վանաձորում և Սպիտակում վիճակը մի փոքր ավելի բարվոք է, ըստ մամուլում հրապարակված տեղեկության անօթևան ընտանիքների թիվը մոտ 120-130 է:[137] Համաձայն Լոռու մարզպետարանի 2009թ. տվյալների «Մինչ 2013թ. Սպիտակում մնում է կառուցել 49 մեկսենյականոց բնակարան, և այնտեղ բազմաբնակարանային շենքերում բնակարան կորցրած ընտանիքների բնակապահովման խնդիրը կավարտվի: Ստեփանավան քաղաքում պետական բյուջեի ֆինանսավորմամբ կառուցվեց և շահագործման հանձնվեց 56 բնակարան, և բազմաբնակարանային շենքերում բնակարան կորցրած ընտանիքների խնդիրը իսպառ վերացվեց: Վանաձոր քաղաքում նույն կատեգորիայի ընտանիքների համար մնում է կառուցել մեկ բնակելի շենք՝ 16 բնակարանով»: Գյուղական բնակավայրերում էլ 440 ընտանիքների բնակապահովման խնդիրը դեռևս ընթացքի մեջ է:[138]

Այդուհանդերձ, Աղետի գոտում անօթևանության խնդիր ունեն դեռևս հազարավոր ընտանիքներ, որովհետև ժամանակավոր կացարաններում բնակվում են նաև հարյուրավոր այնպիսի ընտանիքներ, որոնց հանդեպ պետությունը բնակարանով ապահովելու պարտավորություն չի ստանձնել: Դրանք հիմնականում այն ընտանիքներն են, որոնք երկրաշարժին բնակարան չեն կորցրել կամ նախկինում մեկ անգամ արդեն բնակարաններ են ստացել: Համաձայն փորձագետի *«Գլխավոր խնդիրը 1998թ. Արմեն Դարբինյանի ժամանակ ընդունված որոշումն է, ըստ որի՝ բնակարան կորցրածներին փոխհատուցվում է այնքան մակերեսով բնակարան, որքան իրենք կորցրել են ու կապ չունի՝ ընտանիքն աճել է, թե ոչ, սակայն, եթե պակասել է ընտանիքի անդամների թիվը՝ ավելի փոքր բնակարան են*

[137] *http://armlur.am/627871/*

[138] *http://www.azatutyun.am/a/25193224.html*

*տալիս: Այսինքն, եթե հինգ հոգանոց ընտանիքը 25 տարի հետո դարձել է 15 հոգանոց, իրենք տալիս են երկու սենյակ ու ասում՝ փոխհատուցեցինք, պետությունն այլևս պարտավորություն չունի այս ընտանիքի առաջ: Արդյունքում, 15 հոգանոց ընտանիքի մի մասը գնում է շենք, իսկ մյուս մասը մնում է տնակում»:*[139]

Վագոն-տնակներում բնակվող ընտանիքները, որոնք հիմնականում ներկայացնում են բնակչության աղքատ խավը, զրկված են կոմունալ-կենցաղային և հիգիենիկ տարրական պայմաններից: *«Էս ծաղկանոցի պատերը ժեշտից է, շուշից ու զարդոնից... Շներն ու կատուները մեր հետ կքնին, օր կռիսները էրեխեքի ականջը կամ քիթը չտանին»* - պատմում է երկրաշարժից մեկ տարի անց ծնված, երկու երեխաների մայր 24-ամյա Արևը: Նրա խոսքը լրացնում են հարևանները. *«Շուշեքի կեսը տաք ու պաղից ջարդել է: Մե օրըմ կըլի մեր վրեն, էս տարի լատարե խաղցա, շիֆր եմ քցել կռիշը, անձրևը չոարզը, հըմի տեսնինք էս տարի ինչը՞ղ կէղնի, կչոա՞, թե՞ չէ: Է՛, ժաժքին տունս լրիվ քանդվավ...»:*[140]

Պետք է նշել, որ կեցության անհրաժեշտ պայմաններ չկան նույնիսկ բարվոք տնակներում. *«Երբ դոմիկում ամուսնացող է լինում, առաջին գիշերը նորապսակներին մենակ են թողնում ու գնում բարեկամների տուն, քանի որ նորապսակներին ու ընտանիքի մյուս անդամներին մի վարագույր է բաժանում: Իսկ երբ տնակում մարդ է մահանում, հաճախ չեն կարողանում դագաղը դռնից հանել, լուսամուտից են հանում»:*[141]

---

[139] *ԴԱՆ, փորձագետ Վահան Թումասյան, Գյումրի, 2016:*

[140] *Տնակային կյանք. երկրաշարժից 25 տարի անց 4 հազար մարդ «ժամանակավոր կացարաններում»www.armenianow.com/hy/society/the_spitak_quake/50503/domiks_gyumri_earthquake_shirak_province*

[141] *ԴԱՆ, փորձագետ Լևոն Բարսեղյան, Գյումրի, 2016:*

Տնակներում բնակվողներն, ընդհանուր առմամբ, իրենց վերաբերմունքն այսպես են արտահայտում. «*Դոմիկը տուն չէ, օջախ չէ, ուր կարող ես մարդ հրավիրել*»: Թե՛ քաղաքներում, թե՛ գյուղերում, նկատելի է բնակչության շերտավորումը: Բարեկեցիկ ընտանիքները, որոնք հիմնականում բարձր աշխատավարձով աշխատողների, հաջողակ արտագաղթողների կամ ձեռնարկատերերի, ՏԻՄ կառույցների ադմինիստրացիայի ներկայացուցիչներն են, կարողացել են ստացված եկամուտով հեշտ ու հաջող ադապտացվել նոր պայմաններին ու կյանքի նոր չափորոշիչներին: Սրանք ապրում են ինչպես բազմաբնակարան շենքերում, նախկինում կառուցված առանձնատներում, այնպես էլ նորակառույց տներում: Ընդ որում, գյուղերում դրանց թե՛ արտաքին տեսքը, թե՛ ներքին հարդարումը չեն զիջում քաղաքային հարուստ բնակարաններին՝ ունեն ներքին սանհանգույց, ջեռուցման համակարգ, թանկարժեք կահույք, ապահովված են ժամանակակից տեխնիկայով, հարդարված են նորաձև վարագույրներով ու ծածկոցներով:

Միջին ընտանիքներն ապրում են երկրաշարժից հետո ստացված կամ դեռևս խորհրդային տարիներին կառուցված տներում, որոնց հարդարումը մեծ փոփոխությունների չի ենթարկվել տասնամյակների ընթացքում: Վերջին տարիներին, սակայն, նկատելի է, որ այս ընտանիքները ևս սկսում են աստիճանաբար հարմարվել նոր սոցիալական չափանիշներին, ինչն արտահայտվում է կենցաղում նոր կահույքի, հարդարման առարկաների ու ժամանակակից կենցաղային տեխնիկայի առկայությամբ, որոնք ձեռք են բերվում գերազանցապես ապառիկ՝ վարկերի միջոցով:

Ծայրահեղ աղքատ ընտանիքներն, ինչպես նշվեց, ապրում են հիմնականում տնակներում, որոնց թիվը գյուղերում ևս քիչ չէ, իսկ աղքատները՝ նաև երկրաշարժից հետո ստացած նորակառույցնե-

րում կամ իրենց նախկին տներում: Տնակներում բնակվողները գերազանցապես նորաստեղծ, երիտասարդ այն ընտանիքներն են, որոնք ամուսնանալուց հետո բաժանվել են ծնողներից ու, տան հարցը լուծելու հնարավորություն չունենալով, ապրում են ժամանակավոր կացարաններում: Սրանց թվին են պատկանում նաև միայնակ մայրերի կամ միայնակ թոշակառուների ընտանիքները, որոնք չնայած ապրում են քարե առանձնատներում, բայց ապրուստի միջոց չունենալով, ապահովված չեն կենցաղային տարրական պայմաններով:

***Լուսավորություն, ջեռուցում.*** Մշակութային ադապտացիայի գործընթացն աղետի գոտում համընկավ պատերազմական ու հետպատերազմյա «ցուրտ ու մութ» տարիների հետ: Մնալով միայնակ իրենց խնդիրների հետ՝ մարդիկ վերադարձան կենցաղավարման ավանդական մոդելին, ինչը բնութագրական է «գոյատևման մարտավարություն» ընտրած բնակչության համար:

1992թ. աշնանից սկսվեց էներգետիկ ճգնաժամը և հանրապետությունն անցավ հովհարային էլեկտրամատակարարման, իսկ ավելի ուշ դադարեցվեց նաև գազամատակարարումը: Օրեր էին լինում, որ ընդհանրապես լույս չկար, իսկ լինելու պարագայում՝ անկանոն ռեժիմով: Այդ պայմաններում արդեն սկսվեց իրավիճակին հարմարվելու գործընթացը: Ինչպես նշում է փորձագետը *«Էներգետիկ ճգնաժամը հենց առաջին հարվածը հասցրեց, զանգվածային արտագաղթը սկսվեց ոչ թե այն օրը, երբ արդյունաբերական ձեռնարկությունները փակվեցին, այլ էներգետիկ ճգնաժամը: Ձմեռը ցուրտ էր, մարդիկ վառելու բան չունեին, Մայր Հայաստանի հետևի ծառերը կտրեցին, քաղաքում համարյա ինչքան ծառ կար կտրեցին: Էլ ռեզին, էլ ինչ պատահեր մարդիկ կվառեին տնակների մեջ, իսկ քաղաքն ամբողջությամբ տնակների մեջ էր թաղված»* :[142]

---

[142] *ԴԱՆ, Գյումրի, 2016:*

Մարդիկ չէին կարողանում պլանավորել լույսի հետ կապված գործերը, էլեկտրականության սարքերը հետին պլան մղվեցին և բնակարանը լուսավորելու համար ասպարեզ եկան հին մոռացված ձևեր՝ նավթի լամպեր, մոմեր, որոնք մեծ մասսայականություն էին վայելում և պարսկական սարքեր, որոնք և' լույս էին տալիս և' ջերմություն: Նմանատիպ սարքերը (*ֆուջիկա, ալադի)* բաժանում էին հիմնականում հատուկ կարիքավոր խմբերին՝ պետական միջոցներով, իսկ ավելի հաճախ հումանիտար օգնություններով:

Հմուտ ձեռքեր ունեցողները կամ էլեկտրականությունից տեղյակ մարդիկ տարբեր ինքնաշեն միջոցներով փորձում էին լուսավորող սարքեր պատրաստել. *«Ես էլ ինժեներ էլեկտրոնչիկ էի, բան էի սարքել հոսանքով, որ 12 վոլտ ակումուլյատորից ստանայի 220 վոլտ: Հեռուստացույց էինք նայում»*:[143] Օրինակ՝ հյութի մետաղյա տարաների մեջ պատրույգ էին իջեցնում կամ քարից տաշած հարմարանքների մեջ պատրույգ էին դնում մետաղալարը բարձրացնում էին՝ լույս էր տալիս: Վաճառքում հայտնվեցին տարբեր տեսակի լամպեր, որոնցից հարգի էին չինական լամպերը, քանի որ երկար էին լույս տալիս՝ գրեթե էլեկտրական լամպի նման և աշխատում էին կերոսինով: Ամենահարգին, սակայն, համարվում էր էլեկտրականություն արտադրող շարժիչը (դվիժոկը), որը հասանելի էր շատ քչերին, քանի որ թանկ էր և շատ վառելիք էր ծախսում:

Այդ պայմաններում շատ դժվար էր առօրյա կենցաղը (ուտելիքի պատրաստում, լվացք, արդուկ, լոգանք և այլն) կազմակերպելը: Տնային տնտեսուհիները պատմում են. «*Հենց լույսը տալիս էին, բոլորն անցնում էին եփելու, արդուկելու, լվացք անելու գործին, կենցաղային գործերը ցանկանում էին հասցնել էդ 2-3 ժամում…որոշ դեպքում հասցնում էինք, որոշ դեպքում չէ, արդեն մտածում էինք, որ ինչ*

---

[143] *ԴԱՆ, Գյումրի, 2015:*

*որ գործեր արվի, լույսի հետ կապված էլ թողում էինք, որ լույսը գա էդ ժամանակ անենք: Արդեն պլանավորում էինք, չէինք խառնվում իրար, արդեն սովորում էինք»*:[144]

Դեռևս խորհրդային տարիներին ոչ այնքան իդեալական խմելու ջրի մատակարարման համակարգը հանրապետությունում ավելի վատացավ: Վերացան նախկին վերահսկողական և վերանորոգման համակարգերը, բացի այդ այժմ արդեն պետք է բնակչությունը վճարեր նման ծառայությունների համար, իսկ բնակչության մեծամասնությունը հիմնականում վճարունակ չէր և չէր վճարում:

Խմելու ջրից բացի, նաև ջուր էր անհրաժեշտ սննդի, լվացքի, լողանալու համար: Նմանատիպ պայմաններում լողանալը դարձել էր հազվադեպ երևույթ. բացի էլեկտրականությունից, ջուրը տաքացնում էին հնարավոր բոլոր եղանակներով՝ օջախների, նավթավառների վրա, ձմռանը՝ վառարաններով, իսկ ամռանը՝պլաստիկ շշերի մեջ արևի տակ դնելով: Ամենամաքրասեր մարդը, եթե շաբաթը մեկ անգամ լողանում էր, համարվում էր մեծ նվաճում, իսկ ավելի վատ պայմաններում կամ ոչ մաքրակենցաղ մարդիկ շաբաթներով չէին լողանում՝ մանավանդ գյուղում և հատկապես ձմռանը: Լույս լինելու պարագայում անգամ, հազիվ հասցնում էին երեխաներին լողացնել, ճաշ եփել: Իսկ գյուղերում մեծահասակների համար ջուրը բակերում էին տաքացնում՝ աթարով ու ցախով, որով մի ամբողջ օրվա ընթացքում 4-5 հոգանոց ընտանիք հազիվ էր լողանում:

1995-2002թթ. Գյումրու Անի թաղամասում, որն ապահովված էր կենտրոնացված ջեռուցմամբ, ձմռանը լոգանքի համար օգտագործում էին այդ ջուրը: Այդ տարիներին թաղամասի բնակիչների բոլոր հարազատները լողանում ու լվացք էին անում նրանց տներում:

[144] *ԴԱՆ, Վանաձոր, 2016:*

Ավելի բարդ էր ջեռուցման հարցը: Խորհրդային տարիներին գրեթե ամբողջությամբ լուծված էր հանրապետության ջեռուցման համակարգի խնդիրը: Քաղաքներում հիմնականում կենտրոնացված ջեռուցում էր, իսկ գյուղերում տները տաքացնում էին քարածխի վառարաններով կամ ջեռուցման լոկալ համակարգով: Էներգետիկ ճգնաժամի պայմաններում այդ համակարգը դադարեց գործել, ուստի բնակարանների ջեռուցումը սկսվեց կատարվել բոլորովին այլ կերպ: Գյուղական բնակավայրերում սկսեցին վառել փայտ, աթար: Քանի որ նախօրոք փայտի պաշարներ մարդիկ գրեթե չունեին, իսկ սեփականաշնորհումից հետո էլ ոչ բոլորն ունեին անասուն, որպեսզի աթար վառեին, համատարած բնույթ կրեց ծառերի ու թփերի հատումը, որից հետո մարդիկ անցան իրենց պտղատու այգիների չորացած ծառերի ու ճյուղերի հատմանը: Լոռու մարզի անտառային գոտում ապրողները մեծապես օգտվում էին անտառներից:

Քաղաքներում ևս ջեռուցումն իրականացվում էր վառարանների միջոցով: Այդ տարիներին հարգի էին համարվում դիզվառելիքով աշխատող սիրիական վառարանները, որը շատ քչերը կարող էին ձեռք բերել՝ թանկության պատճառով (հատը 40 դոլար): Կային նաև ինքնաշեն նմանատիպ վառարաններ, որոնք համարվում էին ավելի լավը, քան փայտինը, սակայն զիջում էին գործարանային արտադրության վառարաններին: Դիզվառելիքով վառարանի ավելի ձեռնտու լինելն այն էր, որ կաթիլային համակարգով էր աշխատում և անընդհատ ուշադրություն չէր պահանջում, հնարավորություն կար ուժեղացնել կամ թուլացնել և բացի այդ, դիզվառելիք ճարելն այդ ժամանակ համեմատաբար հեշտ էր:

Իրավիճակն անտանելի էր հատկապես խստաշունչ կլիմա ունեցող Շիրակում, որտեղ բնակչության մեծ մասը ապրում էր մետաղյա տնակներում, որոնցում պատսպարված աղքատ խավի հա-

մար վառելիքի հայթայթման վայրեր էին դառնում հիմնականում աղբանոցներն ու այլ տարածքները, որտեղից բերում էին ամեն բան, ինչ հնարավոր էր վառել՝ հնամաշ շորեր և կոշիկներ, սինթետիկ նյութեր, պլաստմասե շշեր, թուղթ, թերթ, գրքեր, անվադողեր, ինչի պատճառով տնակային ավաններում ծխնելույզների ծխից կարելի էր շնչահեղձ լինել: Հետագա տարիներին իրավիճակը բարելավվեց, սակայն այսօր էլ տնակներում ապրող շատ ընտանիքներ նույն կերպ են լուծում ջեռուցման խնդիրը: *«Բացի վառելիքից, ամեն ինչ կվառենք՝ շոր, կոշիկ, պլաստմասե իրեր, էս կողքը դոմիկներ-բան կքանդեն, փեդ է, տոլ է, կկրենք-կբերենք:»* - ասում են գյումրու տնակային թաղամասի բնակիչները:[145]

Քաղաքում եղած սուղ միջոցների պայմաններում, չկարողանալով տաքացնել ամբողջ բնակարանը, հավաքվում էին մի փոքր սենյակում կամ խոհանոցում: Այդ տարիներին շատերն անցան պապենական քուրսիով տաքանալու միջոցին, կենսակերպ դարձավ շուտ և շատ քնելը: Նրանք, ովքեր չէին աշխատում, շատ էին քնում նաև ցերեկները, դուրս չէին գալիս անկողիններից՝ այդպես ավելի տաք էր: Սառը անկողինը տաքացնելու համար վառարանի վրա աղյուս էին տաքացնում կամ շշերի մեջ տաք ջուր էին լցնում ու դնում քնողների ոտքերի տակ: Էներգետիկ ճգնաժամից հետո էլ, երբ վերականգնվեցին էլեկտրամատակարարումն ու գազամատակարարումը և բարելավվեցին մարդկանց կոմունալ-կենցաղային պայմանները, մինչ օրս թե' տնակների, թե' բազմաբնակարան շենքերի ու առանձնատների բազմահազար անապահով ընտանիքներ շարունակում են ապրել նախկին ձևով:

Այսօր էլ կենսապահովման նվազագույն պայմանների խնդիրը ոչ միայն լուծված չէ, այլև չի պակասել նրանից, ինչ եղել է ի

*[145] ԴԱՆ, Գյումրի, 2015:*

սկզբանե: Մինչ օրս Աղետի գոտու 4000-ից ավել ընտանիք ապրում է տնակներում, իսկ տնակային կյանքը հոգեբանության վրա ազդող գործոն է: Տարիների ընթացքում նրանց մեջ ձևավորվել է յուրատեսակ «տնակային մշակույթ», որը, ցավոք սրտի, ոչնչով չի համապատասխանում ազգային ավանդական մշակույթի՝ ժողովրդի մեջ եղած պատկերացումներին:

## *Միգրացիան՝ որպես աղապտացիոն այլընտրանքային եղանակ*

Բնակչության միգրացիան համարվում է մարդկանց տարածքային տեղաշարժերի ձևերից մեկն է: Միգրացիայի չափորոշիչ է համարվում պետական կամ վարչական սահմանների հատումը՝ ընդմիշտ կամ երկարաժամկետ, որից ելնելով՝ առանձնացվում է միգրացիայի երկու ձև՝ ներգաղթ և արտագաղթ: Միգրացիայի պատճառները տարբեր են՝ սոցիալ-տնտեսական, քաղաքական, հոգեբանական և այլն: Այն ածանցվում է երկրում տիրող վիճակից, որը որպես կենսագործունեության միջավայր անտանելի կամ անընդունելի է դառնում բնակչության լայն շերտերի համար:[146] Ժամանակակից միգրացիաները պայմանավորող գործոնները հիմնականում երկուսն են՝ քաղաքականը և տնտեսականը, սակայն մասնագետների կողմից առանձնացվում է ևս մեկ լոկալ խումբ՝ բնական աղետները:[147]

---

[146] *Միգրացիայի կառավարման գործոնները Հայաստանում http://www.noravank.am /upload/pdf/2013_Migration_Control_Factors.pdf*

[147] *Ն.Գաբրիելյան, Շիրակի մարզի բնակչության միգրացիոն շարժերի աշխարհագրական վերլուծությունը, Եր., 2006, էջ 46:*

Վերջին տարիների պաշտոնական վիճակագրական տվյալները, անկախ փորձագիտական գնահատականները,[148] սոցիոլոգիական հարցումների վրա հիմնված մասնագիտական հետազոտությունները[149] արձանագրել են, որ հանրապետության անկախացումից հետո ակտիվացած միգրացիոն գործընթացներն ընդգրկել են բոլոր մարզերը, հասարակության գրեթե բոլոր սոցիալ-մասնագիտական ու սեռատարիքային խմբերը՝ կապված սոցիալ-տնտեսական ծանր ճգնաժամի, 1990-ականներին իրականացվող տնտեսական վերափոխումների ազդեցության, զանգվածային գործազրկության, բնակչության կենսամակարդակի կտրուկ անկման և բազմաթիվ այլ գործոնների հետ: Ինչպես հայտնի է, նման իրավիճակում հենց արտագաղթն է դառնում բնակչության ադապտացման կարևոր ձևերից մեկը:[150]

Շիրակի և Լոռու մարզերի բնակչության միգրացիոն շարժերի հիմնական միտումները ձևավորվել են երկրաշարժից անմիջապես հետո, որոնք, սակայն, ինչպես վկայում են փորձագետները, չեն դիտարկվում որպես միայն աղետի հետևանք: *«Դա երկրաշարժի հետ ուղղակի կապելը սխալ է, քանի որ երկրաշարժից հետո մարդիկ նոր սթրեսներ են տարել, ու եթե միայն երկրաշարժի առաջացրած սթրեսը լիներ, կարող է որոշ ժամանակ անց, երբ մարդիկ կարգավորեին իրենց կյանքը, կկարողանային նորից հունի մեջ ընկնել: Բայց դրանից հետո մարդկանց գլխին ուրիշ սթրեսներ եկան (պատերազմը,*

---

[148] *Արտագաղթը Հայաստանում, խմբ. Հ. Խառատյան, Եր., 2003: Մարգարյան Ն., Ժողովրդագրական գործընթացները Շիրակի մարզում 1989-1998 թթ., Եր., ՌԱՀՀԿ հրատ., 2000, էջ 56:*

[149] *Սարգսյան Հ., Բոյաջյան Ա., Ժողովրդագրական գործընթացները Գյումրի քաղաքում (1990-1999 թթ.), ՊԲՀ, 2002, N 2, էջ 233-242: Հայ աշխատանքային միգրանտները Ռուսաստանի Դաշնությունում: Դժվարությունները արտասահմանում և մարտահրավերները տանը, Եր., 2016:*

[150] *А. Тер-Саркисянц, Адаптация армян к новым условиям постсоветского времени,с.8.*

*ցուրտը, սովը), դրա համար էլ դժվար դուրս եկանք: Մեր սոցիալական վիճակը կապված է դրա հետ, քանի որ մարդիկ հիասթափված էին ու դրա պատճառով մատների արանքով էին նայում իրենց բիզնեսը դնելու ու նորը ստեղծելու գործին, ավելի շատ մտածում էին երկրից հեռանալու մասին: Սթրեսները շատ էին, եթե միայն մեկը լիներ՝ դա կարելի էր հաղթահարել, բայց եթե մեկը չհաղթահարած գալիս է երկրորդը, հետո երրորդը… Մարդն ունի սթրեսադիմադրողականության որոշակի պաշար, ու եթե առաջին սթրեսը տանում է այդ պաշարի մի մասը, պետք է ունենալ հաճելի պահեր՝ այդ պաշարը վերականգնելու, բայց երբ դա տեղի չի ունենում, և ընդհակառակը, մարդ միայն սպառում է այդ պաշարը, ապա որոշ ժամանակ անց դառնում է հուսահատված ու ձգտում է հեռանալ, քան թե մնալ ու մի բան փոխել, քանի որ մտածում է, թե միևնույն է ոչինչ չի ստացվի՝ ասելով. «մեր քաղաքում կյանք չկա, գործ չկա, շարժ չկա»: Բնականաբար եթե մարդիկ այսպես մտածեն, հենց այդպես էլ կստացվի: Նույնիսկ այժմ, երբ ինչ-որ առաջընթաց կա, մարդիկ դա չեն տեսնում, բացասական վերաբերմունքն ավելի է շատացել, թերարժեքության, պրովինցիայի գաղափարն ավելի է ուժեղացել մարդկանց մեջ, ինչը առաջ՝ մինչերկրաշարժյան շրջանում չկար»:*[151]

Մասնագետները աղետի գոտում զանգվածային արտագաղթի երեք շրջան են առանձնացրել՝ 1988-2002թթ., 2002-2008թթ. և 2008թ-ից մինչ օրս: 1988-2002 թթ. աղետի գոտու միգրացիայի ծավալի մեջ ավելի բարձր է եղել Լոռու մարզի ցուցանիշը՝ 45,3%, Շիրակում այն կազմել է 31,6%: Միգրացիոն ակտիվության տեսանկյունից 1988-2002 թթ. իր հերթին բաժանվում է երեք փուլի՝ 1988-1991թթ., 1992-1994 թթ. և 1995-2002 թթ., որոնց արտագաղթի ծավալները տարբեր են: Եթե 1988-1991թթ. միգրացիայի շարժը սալդոն (եկողների և մեկնողների

[151] *ԴԱՆ, փորձագետ Նինա Հովհաննիսյան, Վանաձոր, 2016:*

հարաբերակցությունը) համապատասխանաբար 49,8% և 50,2% է, ապա հաջորդիվ պատկերը փոխվում է՝ 1992-1994 թթ.՝ 38,1% և 61,9%, 1995-2002 թթ՝ 33,9 և 66,1%։[152] Այս երևույթն առաջին հերթին կապված է վերականգնողական աշխատանքների տեմպերի թուլացման, առանձին դեպքերում՝ նաև դադարեցման հետ։ Բնական է, որ որոշ դեպքերում բնակչության մի մասը հեռանում էր կենսապահովման անտանելի պայմանների բարելավման նպատակով, սակայն ոչ պակաս նշանակություն ուներ նաև զանգվածային գործազրկությունն ու ծանր բարոյահոգեբանական մթնոլորտը։ Բացի դրանից՝ երկրաշարժից հետո տարհանված բնակչության մի մասը ևս խուսափում էր վերադառնալ, քանի որ խոստացած ժամկետներում չէին վերականգնվում հատկապես առավել տուժած քաղաքային բնակավայրերը։ 2001-2002 թթ. վերականգնողական աշխատանքների ակտիվացման հետ կապված նկատվել է եկողների որոշակի աճ, սակայն աստիճանաբար սրվող սոցիալ-տնտեսական ճգնաժամը դառնում էր արտագաղթի հիմնական պատճառ։ Փաստորեն բնակարանային հիմնախնդրի լուծումը չկանխեց աղետը վերապրածների արտահոսքը, քանի որ շատերը նոր ստացած բնակարանը վաճառում ու հեռանում էին երկրից։[153]

Ըստ արտագաղթի տևողության ժամկետի առանձնացվում է դրա երկու տիպ՝ ժամանակավոր (սեզոնային) և մշտական (անվերադարձ)։ Ժամանակավոր արտագաղթողները գերազանցապես աշխատանքային միգրանտներն են։ Եթե նախկինում նրանք արտագնացության էին մեկնում վաղ գարնանը և վերադառնում ուշ աշնանը, ապա ներկայումս այդ ժամկետները հաճախ չեն պահպանվում ու

[152] *Ն. Գաբրիելյան, Աղետի գոտու բնակչության միգրացիոն գործընթացների զարգացման ընդհանուր միտումները, ՇՀՀԿ Գիտական աշխատություններ, հ. VII, Գյումրի, 2004, էջ 93-94։*

[153] *Արտագաղթը Հայաստանից, Երևան, 2003։*

նրանց շուրջ մեկ քառորդը մեկ տարուց ավելի գտնվում է հանրապետությունից դուրս:[154]

Աղետի գոտու մեջ ընդգրկված որոշ վարչատարածքային միավորներ նախկինում էլ աչքի են ընկել սեզոնային միգրացիայի ավանդական ուղղություններով: Դրանցում, ինչպես ցույց են տալիս վիճակագրական տվյալները, ավելի շատ ընդգրկված է եղել գյուղական բնակչությունը, որը հիմնականում ամռան, ինչպես նաև գարնան ու աշնան որոշ ամիսներին մեկնել է արտագնա շինարարական աշխատանքների: Սպիտակի երկրաշարժն ազդեց նաև սեզոնային միգրացիայում ընդգրկվածների թվի, միգրացիայի բնույթի և տարածական ընդգրկման վրա: Սեզոնային միգրացիայում ընդգրկվեցին բնակչության նոր շերտեր՝ մասնավորապես քաղաքաբնակները:[155] Դա պայմանավորված էր ոչ միայն քաղաքներում կենտրոնացած արդյունաբերական ձեռնարկությունների ոչնչացմամբ, այլև տարածաշրջանի առանձին քաղաքային բնակավայրերի կարգավիճակի փոփոխությամբ, որտեղ չկային գյուղատնտեսական աշխատանքներով զբաղվելու պայմաններ:

Խորհրդային շրջանի հետ համեմատած՝ փոխվել են նաև միգրանտների սոցիալ-մասնագիտական կազմը և զբաղվածության ոլորտները: Նախկինում արտագնացների 58%-ը ոչ ինդուստրիալ (ծեփագործ, հյուսն, ատաղձագործ, պատշար և այլն) և 30%-ը ինդուստրիալ (մեխանիզատոր, վարորդ, էլեկտրիկ և այլն) որակավորում ունեցողներն էին, որոնք տիրապետում էին 2-3 մասնագիտությունների, և շատ ցածր էր ծառայողների և բարձր որակավորում ունեցող

---

[154] *Մ. Գալստյան, Շիրակի մարզի բնակչության աշխատանքային միգրացիոն գործընթացներն արդի շրջանում, ՇՊՄԺ հանրապետական յոթերորդ գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2007, էջ 179:*

[155] *Ն. Գաբրիելյան, Աղետի գոտու բնակչության միգրացիոն գործընթացների զարգացման ընդհանուր միտումները, էջ 93-94:*

մտավոր աշխատանքով զբաղվողների թվաքանակը: Մինչդեռ 1990-ական թթ. հետո, ինչպես ցույց են տալիս հետազոտությունները, կտրուկ ավելացել է բարձրագույն կրթություն ունեցող միգրանտների թիվը՝ 22,8%, ովքեր նախկինում չեն ունեցել նման փորձ, և մինչև արտագնացության մեկնելը նրանց որոշ մասը զբաղված է եղել գիտության, կրթության, մշակույթի, արդյունաբերության ոլորտներում:[156]

Աշխատանքային միգրանտների տեղաշարժերի ուղղությունից ելնելով դրանք կարելի է բաժանել երկու խմբի՝ միջպետական (արտագնա) և ներհանրապետական: Միջպետական աշխատանքային տեղաշարժերի մեջ ընդգրկված են ինչպես սեզոնային արտագնա աշխատանքի մեկնածները, այնպես էլ ճոճանակային միգրացիայում ներգրավվածները:[157]

Սեզոնային աշխատանքային միգրանտների համար ամենագրավիչ երկիրը շարունակում է մնալ Ռուսաստանի Դաշնությունը, այնուհետ ԱՊՀ այլ երկրներ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հայ միգրանտների համար դրանք ունեն որոշակի ձգող պայմաններ: Դրանք են՝ աշխատաշուկայում ազատ աշխատատեղերի առկայությունը, կարճ ժամկետում բարձր եկամուտ ձեռք բերելու հնարավորությունը, այդ երկրների վերաբերյալ համեմատաբար բարձր տեղեկացվածությունը և այնտեղ հասնելու մատչելիությունը, լեզվական արգելքների բացակայությունը, ինչպես նաև ՌԴ-ում շուրջ 1,5 միլիոնանոց հայկական համայնքի առկայությունը:

---

[156] *Մ. Գալստյան, Շիրակի մարզի բնակչության աշխատանքային միգրացիոն գործընթացներն արդի շրջանում, էջ 176:*

[157] *Ա. Բոյաջյան, Գյումրու բնակչության աշխատանքային տեղաշարժերը XX դ. վերջերին (ըստ էթնոժողովրդագրական հետազոտության նյութերի), ՇՊՄԺ 5-րդ հանրապետական գիտաժողովի նյութեր, էջ 42-43:*

Միգրանտների մեծ մասը սկզբում զբաղվում էր շինարարական աշխատանքներով, սակայն 1990-ական թթ. սկզբից նրանց միացան առևտրականները, տարբեր մակարդակի գործարարները և այլք: Այս շրջանում ձևավորվեցին նաև Հայաստանից ապրանք արտահանողների խմբերը, որոնք տեղական արտադրատեսակների իրացմամբ բավականին մեծ գումարներ էին վաստակում: Ի տարբերություն շինարարական աշխատանքով զբաղվողների, սրանք երկրից բացակայում էին ավելի կարճ ժամանակով՝ մի քանի շաբաթից-մեկ ամիս: Սրան զուգահեռ կամ անմիջապես հետո ձևավորվեց նաև սեզոնային միգրանտների մանրածախ կամ մեծածախ առևտրով զբաղվողների խումբը, որոնց արտագնացության աշխարհագրությունը շատ հաճախ դուրս է գալիս ՌԴ սահմաններից՝ Կին, Մինսկ, եվրոպական որոշ պետությունների խոշոր քաղաքներ, հատկապես Լեհաստան (Վարշավա, Լոձ, Վրոցլավ): Մեծ է նաև Թուրքիա և արաբական երկրներ մեկնող առևտրականների թիվը, որոնք զբաղվում են հիմնականում հագուստեղենի և արդյունաբերական ապրանքների ներկրմամբ: Ընդ որում սրանց մեջ, տղամարդկանց հետ միասին, սեզոնային միգրացիայի մեջ են ընդգրկվում նաև կանայք:[158] Կանանց աշխատանքային միգրացիան հայ իրականության մեջ բոլորովին նոր երևույթ է և չի տեղավորվում ընտանիքի, կանանց ու տղամարդկանց դերա-վարքային կատարումների մասին ավանդական պատկերացումների շրջանակներում:

Նոր տնտեսական հարաբերությունների հաստատումը Հայաստանում էական ազդեցություն թողեց Աղետի գոտու տնտեսության, մասնավորապես արդյունաբերության ոլորտում միջճյուղային

[158] *Ն. Գաբրիելյան, Աղետի գոտու բնակչության միգրացիոն գործընթացների զարգացման ընդհանուր միտումները, էջ 96:*

և ներձյուղային աշխատանքային տեղաշարժերի վրա: Հետազոտությունները ցույց են տվել, որ դրանք տեղի են ունենում քաղաք-գյուղ, գյուղ-քաղաք, գյուղ-գյուղ և քաղաք-քաղաք ուղղություններով:[159]

Քաղաքից գյուղ ուղղությունը ակտիվացավ երկրաշարժից անմիջապես հետո՝ պայմանավորված կեցության նվազագույն պայմանների ու աշխատատեղերի բացակայությամբ: Այն կապված էր նաև հողի սեփականաշնորհմանը մասնակցելու և գոյատևման նվազագույն պահանջմունքներն ապահովելու ձգտման հետ: Դա հատկապես նկատելի էր Գյումրիում, որի գործազուրկ բնակչության այն մասը, որ միջոցներ չուներ հանրապետությունից դուրս գնալու, տեղափոխվեցին գյուղ: Քանի որ 1988-1989 թթ. Ամասիայի շրջանից ադրբեջանցիների հեռանալուց հետո բազմաթիվ ազատ բնակարաններ առաջացան, գյումրեցիների մի մասը տեղափոխվեց այդտեղ:

Գյուղից քաղաք ուղղությունը շատ ակտիվ էր դեռ խորհրդային տարիներին: Աղետից հետո առաջին տարիներին այն կապված էր ընթացող շինարարական աշխատանքների հետ, երբ գյուղաբնակները ևս մասնակցում էին դրանց: Այս շրջանում Գյումրի տեղափոխվեցին ընտանիքներ Աշոցքի,Ամասիայի, Ախուրյանի շրջաններից: Ավելի ուշ որպես այս ուղղությանը նպաստող գործոն կարելի է համարել այն, որ արտագնացության մեկնած և գումարներ վաստակած գյուղական ընտանիքները սկսել են քաղաքներում բնակարաններ գնել: Վերջին տարիներին բնակչության ներհոսք է դիտվում հատկապես ծայրամասային, բարձրլեռնային և նախալեռնային գյուղերից: Սրան նպաստում է գյուղերից մարզկենտրոնների բուհերում կրթություն ստանալու եկած ու այստեղ մնացած երիտասարդների դիրքո-

[159] *Ն. Գաբրիելյան, Շիրակի բնակչության միգրացիոն շարժերի աշխարհագրական վերլուծություն, էջ 63:*

րոշումը, որոնք իրենց բնակավայրերը համարում են անհեռանկարային: Մեկ այլ գործոն է Գյումրիում ռուսական կայազորի առկայությունը, որտեղ մեծ է գյուղերից պայմանագրային հիմունքներով ծառայողների թիվը:

Գյուղից գյուղ տեղափոխությունը նույնպես ակտիվացավ 1980-ական թթ. վերջին, երբ ծայրամասային, լեռնային գյուղերից բնակչությունը տեղափոխվեց ադրբեջանցիների կողմից ազատված տները: Մյուս կողմից շատ քաղաքացիներ վերադարձան հայրենի գյուղեր՝ սեփականաշնորհման գործընթացին մասնակցելու և հող ստանալու համար:

Քաղաքից քաղաք ուղղությունը նույն տրամաբանությունն ունի՝ ապրուստի նվազագույն միջոցների ապահովում: Վերջին տարիներին տարածաշրջանի քաղաքներից մեծ է հոսքը դեպի Երևան, քանի որ այստեղ են կենտրոնացած գործող հիմնարկ-ձեռնարկությունների մեծ մասը, պետական կառավարման համակարգը, միջազգային կազմակերպությունները, սպասարկման ոլորտի բազմաթիվ կառույցներ, որտեղ աշխատանք գտնելու հնարավորությունն ավելի մեծ է հատկապես կրթական բարձր ցենզ ունեցողների համար:[160] Թվարկված ուղղությունների մեջ է մտնում նաև ճոճանակային միգրացիան, որին պատկանում էին այն առևտրական-վերավաճառողները, որոնք Բագրատաշենի մաքսակետից թեթև արդյունաբերական ապրանքներ, նաև՝ Արարատի, Արմավիրի մարզերի շուկաներից գյուղատնտեսական մթերքներ ու սննդամթերք էին ներկրում, որն իրացվում էր ողջ տարածաշրջանում: Շատ տարածված էր կենցաղային ու թեթև արդյունաբերական ապրանքները գյուղատնտեսական մթերքներով փոխանակելու և դրանք շուկայում

[160] *Ն. Գաբրիելյան, նշվ. աշխ., էջ 63-70:*

իրացնելու նպատակով քաղաքներից գյուղական բնակավայրեր և հակառակը գնալ-գալը:[161]

Անվերադարձ կամ մշտական արտագաղթի երևույթը նույնպես կապված է երկրաշարժի անմիջական ազդեցության հետ: Աղետից անմիջապես հետո բնակչության մի ստվար զանգված ժամանակավորապես թողեց մշտական բնակության վայրը, որի մի մասն այդպես էլ չվերադարձավ: Դրանք Երևանում, ԱՊՀ երկրներում, Եվրոպայում և ԱՄՆ-ում հարմար տեղավորված ընտանիքներն էին, որոնց համար արտոնյալ պայմաններ էին ստեղծվում:[162]

Անվերադարձ արտագաղթի մի նոր ալիքի առաջացումը որոշ չափով պայմանավորված էր այլ երկրներում պետական ապահովության ծառայությունների կողմից միգրանտներին տրվող տարբեր տեսակի օգնություններով: Ի տարբերություն տեղական սոցիալական ծառայությունների «օգնության», որը լավագույն դեպքում փորձում է գոյատևման որոշ խնդիրներ լուծել, արտերկրի օգնությունն իբրև աղքատությունից դուրս գալու բացառիկ հնարավորություն է ընկալվում: Եվ քանի որ այսօր կանանց ավելի հեշտ են տեղ հատկացնում փախստականների ճամբարներում, երբեմն, ի տարբերություն արտագաղթի նախկին ձևերի, երբ օտարության մեջ «տնավորվելու» հող նախապատրաստողը գերազանցապես տղամարդն էր, հենց կանայք են դառնում ընտանիքից առաջին հեռացողները:[163]

Հրապարակում առկա հետազոտությունների արդյունքներից կարելի է եզրակացնել, որ աշխատանքային տեղաշարժերը դարձել են մարզի բնակչության եկամուտների գոյացման կարևոր աղբյուր և աղքատության դիմակայության ռազմավարություն: Խորհրդային

---

[161] *Ա. Բոյաջյան, Գյումրու բնակչության աշխատանքային տեղաշարժերը XX դ. վերջերին, էջ 42-43:*

[162] *Ն. Գաբրիելյան, նշվ. աշխ., էջ 48-52:*

[163] *Գ. Շագոյան, Օգնություն. Կամեցողություն, թե՞ բարի կամք, էջ 353-354:*

շրջանում, եթե ձեռք բերված այդ գումարները հիմնականում ուղղվում էին բնակարանի կառուցման, հարսանիքի, օժիտի և երկարատև օգտագործման այլ առարկաների ձեռքբերման, ապա 2005թ. հետազոտության արդյունքներով՝ հարցվածների 34,7%-ը դրանով հոգում է ընտանիքի առաջնային կարիքները՝ սննդի, հագուստի ձեռքբերման և ընթացիկ այլ ծախսերը, իսկ 24,6%-ը՝ գյուղատնտեսական աշխատանքներ կատարելու համար անհրաժեշտ ծախսերը: Արտագնացների ընտանիքների կողմից դեռևս այդ գումարների միայն չնչին մասն է ներդրվում նոր արտադրության միջոցների ձեռբերման և փոքր ու միջին բիզնեսի զարգացման ոլորտներում: Աշխատանքային միգրանտների որոշ մասը մարզի մի շարք բնակավայրերում զբաղվում է նաև բարեգործությամբ:[164]

Սկսած 2008թ. արտագաղթը նորից աճում է: Այս երևույթի հիմնական պատճառ կարող է դիտվել այն, որ 2000-ականներին մուտքի երկրներում, մասնավորապես Ռուսաստանում, արդեն կայացել էին «նոր» հայկական գաղութները, նվազել էին արտագաղթողների ադապտացման հետ կապված անորոշությունները: Մյուս կողմից, չնայած 2012թ. մասնավոր տրանսֆերտների ծավալն անվանական արժեքով հավասարվեց 2008թ. մակարդակին, սակայն, եթե հաշվի առնենք դրամական և դոլարային ինֆլյացիան 5 տարվա ընթացքում, ապա պատկերը կփոխվի. արտագնա աշխատողների ընտանիքների եկամուտները տրանսֆերտներից չեն հասել 2008թ. մակարդակին: Հետևաբար, տնտեսական արդյունավետության տեսակետից ավելի շահավետ է դառնում ընտանիքներով արտագաղթը, քան տրանսֆերտները: Մյուս կողմից՝ պարզվեց, որ մուտքի երկրներում (հիմնականում Ռուսաստանում) տնտեսական պայմանները

---

[164] *Մ. Գալստյան, Շիրակի մարզի բնակչության աշխատանքային միգրացիոն գործընթացները.., էջ 176:*

շարունակաբար ավելի բարենպաստ են, իսկ Հայաստանում շարունակաբար չի ձնավորվում ապագայի դրական տեսլականը: Արդյունքում՝ արտագաղթն ինտենսիվացավ:[165]

Իրենց ընտանիքի ապրուստը հոգալու համար հիմա նույն ընտանիքից ավելի շատ մարդիկ են արտագաղթում: Որակական վերլուծության այս տվյալները նաև հաստատվում են «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի կողմից 2015թ. իրականացված հետազոտության տվյալները՝ մեկ ընտանիքից մեկ միգրանտ տարբերակը այլևս գործող չէ. մեկ ընտանիքից ավելի շատ մարդիկ են մեկնում, եթե ոչ ամբողջ ընտանիքը:[166]Այսպես են գնահատում իրավիճակը փորձագետները. *«Շիրակի մարզի Սեպասար գյուղում մի տարեց մարդ ասաց, որ ձմռանը պետք է գնա երեխաների մոտ, քանի որ ճանապարհածախսը վճարելն ավելի էժան է, քան ձմեռվա վառելիքի ծախսը: Այսինքն եթե այն ժամանակ աշխատատեղերի բացակայությունն էր, հիմա սոցիալ-տնտեսական ծանր պայմանները. մարդը ապրելու հնարավորություն չունի, դրա համար էլ ստիպված արտագաղթում է: Բացի սրանից ազդում է նաև սոցիալական անարդարության խնդիրը, նաև քաղաքական պրոցեսներն են ինչ որ ձևով ազդում, որովհետև մարդը մի բան է ընտրում, բայց արդյունքը լինում է մի այլ բան, ուստի մարդը հիասթափվում է, նաև դրանով պայմանավորված է, որ մարդիկ արտագաղթում են»*:[167] *«Այս վերջին ճգնաժամից հետո հատկապես նկատվում է օգնության պակասը. մինչ այդ ամուսինները երեխաներին թողնում էին ծնողների հետ, արտագնա աշխատանքի մեկնում, այնտեղից գումարներ ուղարկում, իսկ այժմ, երբ փողն*

---

[165] *Միգրացիայի կառավարման գործոնները Հայաստանում, էջ 7:*

[166] *Հայ աշխատանքային միգրանտները Ռուսաստանի Դաշնությունում: Դժվարությունները արտասահմանում և մարտահրավերները տանը, Երևան, 2016, էջ 23: http://www.caritas.am/images/stories/downloads/Armenian%20Labour%20Migrants%20in%20RF_Report_Armenian%20Caritas_VG_June%2014%202016*

[167] *ԴԱՆ, փորձագետ Արտաշես Բոյաջյան, Գյումրի, 2016:*

*արժեզրկվել է, ձգտում են երեխաներին էլ իրենց մոտ տանել, քանի որ այնտեղ էլ է դժվար, այստեղ էլ, ուստի ձգտում են մեկտեղվել: Եթե մի քանի տարի առաջ երեխաների հոսքը քիչ էր, իսկ մեծերինը շատ, հիմա երեխաներինն էլ է մեծացել: Եթե, չնայած ծանրությանը, մարդիկ առաջ հնարավորություն ունեին հարազատներին օգնելու, այժմ չունեն. հիմա այնտեղ էլ է դժվար, բայց այստեղ նրանք պետք է պահեն ոչ միայն երեխաներին, այլև երեխաներին պահողներին, ուստի նախընտրում են երեխաներին իրենց հետ տանել: Աղետի գոտու թե՛ գյուղում և թե՛ քաղաքում մեծ են և՛ աշխատանքի և՛ բնակարանային խնդիրները: Նույնիսկ եթե վերականգնել են տունը, սակայն հեռացել են աշխատանքի պատճառով, ու ըստ իս, աղետի գոտին մեծացրեց արտագաղթի ծավալը»:*[168]

Արտագաղթն իր բոլոր ձևերով, մարզային, համայնքային, անհատական մակարդակներով ունենում է տնտեսական, սոցիալ-ժողովրդագրական և մշակութային լուրջ հետևանքներ: Այսպես է գնահատում իրավիճակը գյումրեցի մտավորականը. *«Մեր սերնդի համար կարծես ցավագին իրողության է վերածվում՝ դառնալու «մահացող քաղաքի» ականա ականատեսն ու վկան: Քաղաքների «մահացության» գլխավոր պատճառներից մեկը հոգևոր աղետն է՝ հուսահատությունն ու հուսալքումը: Զուրկ ստեղծագործելու և աշխատելու վերջին հնարավորությունից, հուսալքված բնակչությունը երես է թեքում հայրենիքից,սեփական սրբություններից ու ազգային երազանքներից և դիմում զանգվածային արտագաղթի: Իհարկե, նման պարագաներում արտագաղթի ճանապարհը առաջին հերթին բռնում է մտավորական խավը, ինչը և տեղի ունեցավ մեր պարագայում: Ակնհայտ է, որ Գյումրին ևս ենթարկվել է մտավոր աղետի» :*[169]

---

*[168] ԴԱՆ, փորձագետ Քնարիկ Գրիգորյան, Սպիտակ, 2016:*

*[169] ԴԱՆ, փորձագետ Սիրանուշ Խաչկալյան, Գյումրի, 2016:*

Արտագաղթը սպիտակցիների համար ևս զգայուն թեմա է: Նրանք քաղաքը չլքեցին աղետի ժամանակ, երբ անտուն էին, կորցրել էին հարզատներին, սակայն այսօր, երբ քիչ թե շատ լավացել են պայմանները, արդեն հեռանում են ընտանիքներով՝ ընդմիշտ: Որպես այս պնդման հիմնավորում բերենք մեր կողմից անցկացված սոցհարցման տվյալները. «Ունե՞ք ընտանիքի անդամներ կամ հարազատներ, ովքեր արտագաղթել են ՀՀ-ից անկախության տարիներին, եթե ունեք խնդրեմ նշեք տարեթիվը» հարցին դրական պատասխան են տվել սպտակցիների 100%-ը, որոնց մեջ 40%-ը բաժին է ընկնում 1992-1998թթ., իսկ 60%-ը՝ 2008-2015թթ. մեկնածներին: Վանաձորում ևս պատկերը հուսադրող չէ, դրական պատասխան են տվել հարցվողների 80%-ը, որոնց մեջ 25%-ը բաժին է ընկնում 1992-1998 թթ., 50%-ը՝ 1998-2008 թթ., իսկ 25%-ը՝ 2008-2015 թթ. մեկնածներին: Աղետի գոտու երեք խոշոր քաղաքային բնակավայրերից արտագաղթի պատկերը ամբողջացնելու համար բերենք նաև Գյումրիում անցկացրած հարցման տվյալները: Ինչպես Վանաձորում՝ Գյումրիում ևս հարցվողների 80%-ի ընտանիքի անդամներն ու հարազատներն արտագաղթել են,որոնցից 32%-ը՝ 1992-1998թթ., 44%-ը՝ 1998-2008 թթ., 24%-ը՝ 2008-2015թթ.:

# ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

# ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՂԵՏՅԱԼՆԵՐԻ ՍՈՑԻՈՆՈՐՄԱՏԻՎ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ

## *Ընտանիքի հարմարվողականության առանձնահատկությունները*

Ընտանիքը՝ որպես հասարակության միկրոբջիջ, մի կողմից ուղղակի կամ անուղղակի արտացոլում է տվյալ հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխությունները, մյուս կողմից ինքն է ազդում այդ հասարակության զարգացման վրա՝ որպես անհատի դաստիարակման, նրա արժեքային համակարգի, իդեալների, մշակութային ժառանգության նկատմամբ վերաբերմունքի ձևավորման, աշխատանքային հմտությունների փոխանցման կարևոր ինստիտուտ: Հատուկ նշանակություն ունի ընտանիքը բնակչության վերարտադրության գործում: Որպես հասարակական օրգանիզմի բաղկացուցիչ մաս, ընտանիքը կրում է տվյալ ժամանակաշրջանի հիմնախնդիրների ողջ ծանրությունը, իսկ նրանում տեղի ունեցող փոփոխությունները դառնում են հասարակական գործընթացների զարգացման բնույթը որոշող ցուցիչներ:[170]

Աղետի գոտու բնակչությունը պատմական համեմատաբար կարճ ժամանակահատվածում գրեթե միաժամանակ վերապրել է արտակարգ իրավիճակների բազմաթիվ տեսակներ՝ երկրաշարժ, իշխանական քաոս, պատերազմ, շրջափակում, աղքատություն և

[170] *Р. Карапетян, Армянская семья в контексте переходного периода, Ընտանիքի հետազոտման հիմնախնդիրները, Հանրապետական գիտաժողովի նյութեր նվիրված Էմմա Կարապետյանի հիշատակին, Եր., 2001, էջ 54-59:*

այլն, որոնցից յուրաքանչյուրն առանձին վերցրած կարող է ապակառուցողական ազդեցություն ունենալ հասարակության սոցիոմշակութային իրադրության վրա և ապակայունացնել ցանկացած հասարակություն: Սակայն ծայրահեղ անբարենպաստ հանգամանքների կուտակումը կործանարար ազդեցություն չունեցավ հայ հասարակության վրա՝ շնորհիվ ընտանիքի կողմից իրականացվող սոցիալականացման ու բարձր սոցիալական վերահսկողության գործառույթների: Ընտանիքը՝ որպես սոցիոմշակութային վերարտադրության առաջնային և հիմնական ինստիտուտ, կենտրոնացավ ստեղծված իրավիճակում ելք գտնելու և գոյատևելու խնդրի վրա՝ փորձելով պահպանել և շարունակել կուտակված սոցիալական ավանդույթի փորձառությունը: Սակայն ստեղծված իրադրությունը բացասական ազդեցություն ունեցավ նաև ընտանիքի վրա՝ ձևափոխելով նրա կառուցվածքը, գործառույթները, փոխհարաբերությունների մշակույթը:

Ներկա դրությամբ հայկական ընտանիքի համար բնութագրական են այնպիսի ճգնաժամային երևույթներ, ինչպիսիք են ցածր ծնելիությունն ու մահացության աճը, անապահով ընտանիքների թվի աճը, առողջական, կրթական ծառայությունների անհասանելիությունը և մակարդակի անկումը, ամուսնալուծությունների ու ոչ ամբողջական ընտանիքների թվի աճը և այլն: Նշված բոլոր երևույթները պայմանավորված են երկու գործոնով. նախ ավերիչ երկրաշարժով, որը խաթարեց ընտանիքների նորմալ կենսագործունեությունը՝ բերելով դրանց ամբողջական կամ մասնակի քայքայման, ապա տնտեսական նոր հարաբերություններով, որի արդյունքում ընտանիքը՝ որպես հասարակության բջիջ, առաջինն ընկավ շուկայական վերափոխումների տակ և մտավ ճգնաժամի երկարատև փուլ: Սոցիալական ադապտացիայի նախկին մեխանիզմները, որոնք մշակվել ու փորձարկվել էին խորհրդային տարիների մի քանի

սերնդի կողմից, հասարակության զարգացման արդի փուլում դադարեցին գործել, իսկ նորերը բավականին տարերայնորեն են ձևավորվում՝ մեծավ մասամբ ուղղվելով գոյատևման խնդիրների լուծմանը:[171]

Ժամանակակից հայ ընտանիքի սոցիալական ադապտացիայի առանձնահատկությունը դրա ճգնաժամային տիպն է, ինչը նշանակում է ընտանիքի վերարտադրողական և սոցիալականացման գործառույթների անկում: Ընտանիքի՝ որպես ինստիտուտի և հասարակության փոքր խմբի երկվությունը ենթադրում է սոցիալական ադապտացիայի պարզաբանում և ուսումնասիրում միկրո և մակրո մակարդակներում: Մակրոմակարդակային ադապտացիան ենթադրում է ընտանիքի ինստիտուտի հարմարումը հասարակության կյանքի սոցիալ-տնտեսական պայմաններին, երբ տեղի է ունենում ընտանիքի կենսապայմանների փոփոխություն, տվյալ դեպքում՝ անկում: Իսկ միկրոմակարդակային ադապտացիան իրենից ներկայացնում է ներընտանեկան հարաբերությունների հարմարեցումը փոփոխված հասարական պայմաններին, որին բնորոշ է ամուսնական, ծնողական, ազգակցական ավանդական հարաբերությունների թուլացումը: Հարկ է նշել, որ արդի ընտանիքի անբարեկեցությունը վտանգավոր է ոչ միայն իր ներկայով, այլև ապագայի տեսլականով, քանի որ ձևավորվող կենսակերպը յուրացվում է երեխաների կողմից և փոխանցվում իրենց ապագա ընտանիքներին: Ընտանեկան կյանքի միկրոմակարդակում մեծանում են ներընտանեկան կապերի, ընտանեկան կյանքի արժեքների փոխանցման ուղիների քայքայման միտումները և վերանում է ընտանիքի անդամների սոցիալական վարքը կարգավորելու գործառույթը, ինչը ցայտուն

[171] *Մ. Գաբրիելյան, Հայկական ընտանիքն անցումային շրջանում (ազգաբանական ուսումնասիրություն), Եր., 2005, էջ 86:*

երևակվում է արտակարգ իրավիճակներում հայտնված տարածաշրջաններում:

Աղետը վերապրած ընտանիքների հարմարվողականության ձևերն ու եղանակները պարզաբանելու համար անհրաժեշտ է դրանք դիտարկել փուլային տարբերակով. առաջինը հոգեբանական ադապտացիայի փուլն էր, որը տևեց մոտ 4 տարի (1988-1992թթ.), այնուհետև մշակութային ադապտացիայի (1993-1998թթ.) և սոցիալական ադապտացիայի փուլերը (1998-2010թթ.):

Աղետից անմիջապես հետո առաջնայինը ծանր հոգեբանական վիճակից մարդկանց դուրս բերելն էր: Ցանկացած աղետի, այդ թվում երկրաշարժի դեպքում, փոխվում է մարդու ապրելակերպը և ի հայտ է գալիս սոցիալական ճգնաժամ՝ սոցիալական լավատեսության անկում: Յուրաքանչյուր ոք իր կյանքի ընթացքում ձգտում է ամբողջ ուժով և գիտակցությամբ հասնել որոշակի հաջողությունների, բայց երբ մի քանի վայրկյանում տակնուվրա է լինում ամեն ինչ, այլևս ոչինչ չի մնում, անձն ընկնում է տարակուսանքի, անորոշության մեջ, հայտնվում է անելանելի վիճակում, նրա մեջ տեղի են ունենում ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական, բարոյական փոփոխություններ: Արտակարգ պայմաններն իրենց հզորությամբ, հանկարծակիությամբ, տևողականությամբ, ավերածությունների, զոհերի մասշտաբայնությամբ մարդու հոգեկանի վրա թողնում են խորը հետևանքներ, որոնք դրսևորվում են հուզական ապրումների տարբեր ձևերով:

Այսպիսի պայմաններում անձը, ենթարկվելով բազմաթիվ գործոնների ազդեցության, հաճախ փոխում է իր վերաբերմունքը միջավայրի, մարդկանց նկատմամբ՝ չտեսնելով իրավիճակից ելք գտնելու ուղիներն ու միջոցները: Նրա մեջ առաջանում է բացասական հոգեվիճակների բազմազանություն: Վերջինները հաճախ արտահայտվում են սեփական անձի և միջավայրի մարդկանց, երևույթների

նկատմամբ չարության, ագրեսիայի, բռնությունների, ինքնամփոփության, հուսալքության (երբեմն ինքնասպանության) ձևերով, որոնք սեփական ուժերով գրեթե անհնար է հաղթահարել: Այդ պատճառով էլ, Սպիտակի աղետալի երկրաշարժից հետո հոգեբանների մեծ պահանջ զգացվեց: Եվ պատահական չէ, որ հենց դեկտեմբերյան երկրաշարժից հետո Հայաստանում մեծ ուշադրություն դարձվեց հոգեբանությանը: Աղետի գոտում ստեղծված հոգեբանական կենտրոնները մեծ աշխատանք ծավալեցին՝ հոգեբանական օգնություն ցույց տալով տուժածներին: Այդ կենտրոններն օգնեցին ստեղծելու նորմալ հոգեբանական կլիմա, ինչը թույլ տվեց որոշ չափով դիմադրել կործանարար, քայքայիչ սթրեսածին գործոններին և մեղմացնել անելանելիության բարդույթի ազդեցությունը:

Հոգեբանական աշխատանքները առավել արդյունավետ իրականացնելու համար մասնագետների կողմից առանձնացվեցին աղետից հետո առաջացած «վերակազմավորված ընտանիքների» նոր տիպեր, որտեղ արտահայտված էին ներընտանեկան հարաբերությունների նոր ձևեր: Համաձայն էթնոհոգեբան Կ.Սահակյանի դասակարգման՝ դրանք հետևյալներն են. ա/ լրիվ կազմով ընտանիքներ, բ/ կորուստ ունեցող կամ վերակազմավորված ընտանիքներ, գ/ եզակի ծնողով ընտանիքներ, դ/ երկկողմանի որբերով ընտանիքներ, ե/որդեկորույս ընտանիքներ, զ/ որդեգիր ունեցող ընտանիքներ, է/խնամակալ ունեցող ընտանիքներ, ը/ հաշմանդամ ունեցող ընտանիքներ, թ/ մեկ անձով ընտանիքներ, ժա/ օտարված անձով ընտանիքներ, ժբ/ օթևան կորցրած ընտանիքներ:[172]

[172] *Կ. Սահակյան, Վերակազմավորված ընտանիքների տիպաբանական առանձնահատկությունները հետաղետյան շրջանում /ազգահոգեբանական ակնարկ/, Արդի էթնոմշակութային գործընթացները Հայաստանում, հանրապետական գիտական նստաշրջան, զեկուցումների հիմնադրույթներ, Եր., 1997, էջ 37-39:*

Լրիվ կազմով ընտանիքներում առերևույթ դերային փոփոխություններ չէին կատարվել, պահպանվել էին ավանդական փոխհարաբերությունները, թեև ընտանիքի յուրաքանչյուր անդամի ներաշխարհը և ներընտանեկան փոխհարաբերությունները հիմքում խաթարվել էին, քանի որ անմասն չէին մնացել աղետի հետևանքներից:

Կորուստ ունեցող կամ վերակազմավորված ընտանիքների բարոյական վարքագծի ամենաբնորոշ դրսևորման ձևը ապրումակցման կամ էմպաթիայի հոգեբանական երևույթն էր: Այս առումով հետաքրքիր է փորձագետ Կ. Սահակյանի բերած օրինակը. *«Որոշ դեպքերում միայնակ կանայք գտնում էին նույն վիճակում գտնվող տղամարդկանց և կարողանում էին կրկին ամուսնանալ, այդպիսի մի ընտանիք ապրում էր ուսումնարանի շենքում, ուրեմն մի պատը պատկանում էր տղամարդուն, մյուսը՝ կնոջը: Կինը իր կողմի պատի վրա էր փակցրել նախկին ընտանիքի անդամների նկարները, իսկ տղամարդը մյուս կողմից իր ընտանիքինը, նույնիսկ հասել էր նրան, որ սկսվել էր չհայտարարված մրցակցություն, թե ում ընտանիքն էր լավը, հետո նրանք իրար հետ երեխա ունեցան, սակայն ամուսինը անընդհատ դժգոհում էր, թե այս ինչ երեխա ես ունեցել, ով իր մահացած երեխաներին նման չէ, այսինքն նա դա անում էր ոչ թե սիրուց ելնելով, այլ իր նախկին ընտանիքը վերարտադրելու ցանկությամբ, որը սակայն նորում չկարողացավ իրականացնել»:*[173]

Առանձնակի դժվարություն էր ներկայացնում երկկողմանի որբերով ընտանիքների հիմնախնդիրը: Այդ երեխաները մեկուսանում էին հարազատներից, որովհետև այլևս չկան իրենց և մերձավորներին կապող օղակները, ուստի նրանց մոտ առկա էին ինքնօտարման, սոցիալական մեկուսացման փաստեր: Մասնագետների

[173] *ԴԱՆ, փորձագետ Կարինե Սահակյան, Գյումրի, 2016:*

կարծիքով *«այս երեխաների վերաբերյալ լուրջ հետազոտություններ չեն արվել, նրանք տարբեր ձևերով են փորձել փոխհատուցել ծնողների կորուստը: Ոմանք հետագայում հաջող կարիերա կառուցեցին, որոշները, որոնց որդեգրել էին, չհարմարվեցին նոր պայմաններին և հեռացան երկրից. օրինակ Թոմիկի տղան մեկ գնում էր հորական հարազատների մոտ մեկ մորական, սակայն չկարողանալով ստանալ իր ծնողների ջերմությունը, հետո ստիպված մեկնեց ԱՄՆ»*:[174]

Միայնակ ծերերի ընտանիքներում անձն ավելի ուժգին էր զգում իր ուժերի անկումն ու թուլացումը, նրանց մոտ սրված էր անպաշտպանության զգացումը, ընդ որում, հոգեբանական արգելքների անհաղթահարելիության զգացումն ավելի խորն է, իսկ անձը՝ սահմանային իրավիճակների մերձ: Այստեղ նկատվել են փոփոխություններ արժեքային կողմնորոշումների, դիրքորոշումների և հակումների մեջ: Միայնակ ծերերի կախվածության զգացումը շրջապատից ավելի է արտահայտված:

Օտարված անձով ընտանիքներում անձը կորցրել էր նրան, ում առավել սերտորեն է կապված եղել, որում ընդօրինակել էր: Աղետը երկար ժամանակ բազմաթիվ ամուսինների հարկադրեց ապրել տարբեր օթևաններում՝ իրարից հեռու: Այս դեպքում, ինչպես ցույց են տվել ուսումնասիրությունները, օտարումն իրեն սպասել չի տալիս: Այն կարող է լինել կարճատև, միակողմանի, անշրջելի, իսկ երբեմն՝ ընդհուպ հասնել ինքնօտարման կամ ինքնասպանության:

Տիպաբանական այս մոդելը հոգեբանների կողմից կառուցվել էր ընտանիքներում ամբողջական հարաբերություններ պահպանելու, ներընտանեկան դերային կարգավիճակ հաստատելու և ավանդական փոխհարաբերությունները նոր ձևի մեջ դնելու սկզբունքով: Ու-

---

*[174] ԴԱՆ, փորձագետ Կարինե Սահակյան, Գյումրի, 2016:*

ուսումնասիրությունները ցույց են տվել, որ սկզբնական փուլում գերակշռողը նախկին կայուն հարաբերությունների պահպանումն էր՝ պայմանավորված սոցիալ-հարմարվողականության գործընթացի բարդություններով, ինչպես նաև անհատական առանձնահատկություններով:

Հետաղետյան շրջանի ընտանիքների հոգեբանական ադապտացիայի համար կարևորվել են այնպիսի հարաբերությունների վերականգնումը, որոնք օգնել են անձին մտնելու հոգեվերականգնման գործընթացի մեջ: Այս պարագայում հոգեբանները ցուցաբերել են յուրատիպ, անհատական և շերտավորված մոտեցումներ՝ սոցիալ-հոգեբանական, տարիքային, սեռատարիքային առանձնահատկությունների հաշվառմամբ: Հոգեվերականգնողական, սոցիալ վերականգնման ուղղությամբ աշխատանքների արդյունավետությունը մեծապես պայմանավորված է աղետյալ անձի համակողմանի ճանաչումով, նրա վրա աղետի ունեցած հոգեբանական հետևանքների իմացությամբ:[175]

Հոգեբանական հարմարվողականության աչքի ընկնող դրսևորումը կարելի է համարել այս փուլում գրանցված ծնունդների աննախադեպ աճը՝ ուղղված կորուստների փոխհատուցմանը:

Ընդհանուր առմամբ պետք է նշել, որ աղետի գոտու բնակչությունը ոչ միայն տոկունությամբ դիմակայեց դաժան փորձությանը, այլև ազգապահպանման փայլուն օրինակ ցուցաբերեց: Ծանր կորուստներ կրած ընտանիքների ողջ մնացած անդամների վերամիավորումը դարձավ պարտադիր երևույթ: Մոտ և հեռու ազգականներն

---

[175] *Գ. Սահակյան, Հետաղետյան ընտանիքում միջանձնային հարաբերությունների ախտորոշման մեթոդիկայի հարցեր, ՇՀՀԿ Գիտական աշխատություններ, հ. XI, Գյումրի, 2008, էջ 158-162:*

իրենց խնամքի տակ վերցրին հարազատների որբացած երեխանե-րին: Երկրաշարժից հետո ազգականների վարքը որպես բացառիկ երևույթ է գնահատվել օտարազգի մասնագետների կողմից:[176]

Հետերկրաշարժյան իրողություններին ընտանիքի հարմար-վողականության հաջորդ փուլը բնութագրվում է նրա կենսագործու-նեության վրա ազդող բազմաթիվ այլ՝ քաղաքական, սոցիալ-տնտե-սական և մշակութային գործոնների ազդեցությամբ: ԽՍՀՄ-ի փլու-զումը և արցախյան պատերազմն իրենց ողջ հետևանքներով եկան լրացնելու աղետի բաց թողածը: Կորուստների ցավը, հոգեկան ընկճ-վածությունը, առողջությունից ու կենցաղային պայմաններից դժգո-հությունը, հոգևոր ու նյութական մինիմում պահանջները բավա-րարելու հնարավորության բացակայությունը բարդացրին աղետյալ ընտանիքների ադապտացման գործընթացը՝ արդյունքում բերելով այն խորքային փոփոխություններին, որոնք հատուկ են նաև արդի ընտանիքներին:

Բնական է, որ ստեղծված ճգնաժամն ամենազգալի հարվածը հասցրեց հենց ընտանիքին՝ հայ ինքնության գլխավոր կրողին ու արտահայտիչին: Ընտանիքն իրականացնում է մի քանի գործառույթ, որոնցից առաջինն ու ամենակարևորը սերնդի վերարտադրությունն է՝ այսինքն հասարակությունը կազմող անհատների փոփոխության հիմնական մեխանիզմը: Եվ եթե ադապտացման առաջին փուլում արձանագրվեց ծնելիության աճ, ապա հաջորդ բոլոր տարիներին արձանագրվեց միայն անկում: Այսօր ընդունված է ծնելիության անկ-ման հիմնական գործոն համարել սոցիալ-տնտեսական ճգնաժամի հետևանքով բնակչության կենսապայմանների վատթարացումը, կենսամակարդակի ու կյանքի որակի անկումը: Ծնելիության կտրուկ

---

[176] *Թ. Զաքարյան, Գյումրիի ներընտանեկան և ազգակցական փոխհարաբերություն-ների մի քանի հարցեր (ըստ 1980-1990-ական թթ. էթնոսոցիոլոգիական հետա-զոտությունների), ՇՀՀԿ Գիտական աշխատություններ, հ. XI, էջ 210-212:*

նվազման մյուս պատճառը ամուսնական տարիքի տղամարդկանց, մասամբ նաև կանանց արտագաղթն է, որը հանգեցրեց տղամարդկին համամասնության խախտման:[177] Որպես պատճառ կարելի է դիտարկել նաև ամուսնությունների թվի նվազումը, որի հիմքում ևս ընկած են սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակով պայմանավորված գործոններ: Շիրակի մարզում թվարկված պատճառներին պետք է հավելել ևս մի քանիսը. երկրաշարժի զոհերի մեջ բարձր էր ինչպես վերարտադրողական տարիքի կանանց և տղամարդկանց, այնպես էլ դեռ վերարտադրողական տարիք չմտածների տեսակարար կշիռը, ինչը նույնպես ազդում է ծնելիության ցուցանիշի վրա: Այսինքն, հերթական անգամ ստիպված ենք արձանագրել, որ աղետի գոտում շարունակում են կարևոր մնալ երկրաշարժի հետանքներով ու ազդեցությամբ պայմանավորված իրողությունները:[178]

Այստեղ անհրաժեշտ է նշել, որ համաձայն փորձագետների կարծիքի՝ հատկապես քաղաքներում դիտարկվում է հակառակ երևույթ. ծնելիության բարձր մակարդակ գրանցվում է հիմնականում այն ընտանիքներում, որտեղ առկա են ծայրահեղ պայմաններ, գործազրկության, աղքատության գերխնդիր: Այսպիսի ընտանիքները հիմնականում բազմազավակ են: Անապահով կամ կյանքի դժվարին պայմաններում գտնվող նման ընտանիքներն ունեն նաև մեկ այլ առանձնահատկություն: Սրանք հիմնականում ապրում են հասարակությունից մեկուսացված միկրոհամայնքներում (տնակային ավաններ, շինարարների կողմից լքված հանրակացարանային համալիրներ և այլն), ժամանակավոր կացարաններում և ունեն շփման, հաղորդակցման խնդիրներ:

---

[177] *Հ. Սարգսյան, Ա. Բոյաջյան, Ժողովրդագրական գործընթացները Գյումրի քաղաքում (1990-1999 թթ), ՊԲՀ, 2002, N 2, էջ 233-242:*

[178] *Ն. Գաբրիելյան, Շիրակի մարզի բնակչության միգրացիոն շարժերի աշխարհագրական վերլուծությունը, Եր., 2006, էջ 35:*

Գյուղը ավանդաբար եղել է նահապետական ընտանեկան հարաբերությունների և ավանդույթների պահպանման կարևորագույն վայրը: Այժմ ընտանեկան ավանդույթների ձևավորման գործում առաջնային դեր է ստանձնել քաղաքը: Քաղաքային կենսակերպը դառնում է այն չափանիշը, որին ձգտում են գյուղաբնակները: Շատ ընտանիքների և հատկապես երիտասարդների արտագաղթի փաստը գյուղից, որտեղ նրանք սովորաբար թողնում են իրենց ծեր ծնողներին, ինչպես նաև ընտանիքի ղեկավարի երկարատև մեկնումը բացասաբար է ազդում ընտանիքների կառուցվածքի վրա՝ դրսևորվելով թվաքանակի նվազում ու դրա հետևանքով ամուսնական տարիքի տղաների ու աղջիկների համամասնության խախտում, ծնելիության անկում,[179] ամուսնական տարիքի բարձրացում[180] կամ ամուսնալուծված, կիսատ ընտանիքների (երեխաների հետ միայնակ մնացած կանանց) ձևավորում: Ըստ փորձագետի կարծիքի. *«Այսօրվա ամենամեծ պրոբլեմը, գործազրկությունից ու արտագաղթից հետո, աղջիկների չամուսնանալն է, որը նոր գենոցիդ կարելի է համարել»* :[181]

[179] *Այս առումով հետաքրքիր է Շիրակի մարզի Վարդաքար գյուղի դեպքը, երբ մի կին բողոքել է հարսից՝ ասելով որ չբեր է, քանի որ 2 տարի է ամուսնացած է ու երեխա չի ունենում: Հարսի հետ զրույցից պարզվել է, որ ամուսինը գյուղում չէ, ամուսնանալուց հետո գնացել է Ռուսաստան և այնուհետ այլևս չի հայտնվել գյուղում, ԴԱՆ, փորձագետ Գոհար Մարկոսյան, Գյումրի, 2016:*

[180] *Ըստ վիճակագրական տվյալների 2015 թ. գրանցված ամուսնության միջին տարիքը տղամարդկանց համար կազմել է 30.7, իսկ կանանց համար՝ 27.1, 2014թ.՝ համապատասխանաբար՝ 30.8 և 27.3 տարեկանի համեմատ: Առաջին ամուսնության միջին տարիքը 2015 թ. տղամարդկանց համար կազմել է 29.4, իսկ կանանց համար՝ 26.2, 2013 թ.՝ համապատասխանաբար՝ 29.4 և 26.3 տարեկանի համեմատ: Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2016, էջ 29: http://armstat.am/file/article/poverty_2016a_2.pdf*

[181] *ԴԱՆ, փորձագետ Սուսաննա Ղազարյան, Գյումրի, 2016:*

Ընտանիքից երկարատև բացակայությունն առաջ է բերում հոգեբանական և բարոյական մի շարք լուրջ հիմնախնդիրներ: Ելնելով այն հանգամանքից, որ արտագաղթողները համարվում են ընտանիքին նյութական միջոցներով հիմնական ապահովողը՝ նրանց կողմից երբեմն ցուցաբերվող ոչ նորմալ վարքագիծը հաճախ հանդուրժվում է ընտանիքի մյուս անդամների կողմից: Այդ կապակցությամբ կանանց կողմից հաճախ կարելի է լսել՝ *«դրսում ինչ ուզում են թող անեն, կարևորը որ կարողանում են պահել իրենց ընտանիքը»* արտահայտությունը:[182]

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ նույնիսկ այն ընտանիքներում, որտեղ արտագաղթողներ չկան, հասարակական փոփոխությունների և սոցիալ-տնտեսական նոր հարաբերությունների հետ դժվարությամբ ադապտացվելու հետևանքով, նկատվում են ժողովրդագրական վարքագծի որոշակի հարմարվողական փոփոխություններ: Այդ փոփոխությունները վերաբերում են այնպիսի կարևոր սոցիալ-ժողովրդագրական ինստիտուտների, ինչպիսիք են ամուսնությունը, ընտանիք կազմելը և երբեմն ուղղված են ընտանիք կազմելուց և երեխաներ ունենալուց հրաժարվելուն, ամուսնալուծության մակարդակի բարձրացմանը, այսինքն հայ ավանդական ընտանեկան արժեքներից հրաժարվելուն:[183]

Այսպիսով, համաձայն սոցիալական ադապտացիայի տեսության, ծնելիությունը դառնում է ընտանիքի ադապտացման մեխանիզմի այն ցուցիչը, որը կարող է դիտվել որպես արդի սոցիալ-տնտեսական պայմաններում նրա ապահարմարվողականության (դեզ-

---

[182] *Մ. Գալստյան, Ընտանիքի հիմնախնդիրները տնտեսական տեղաշարժերի համատեքստում, Ընտանիքի հետազոտման հիմնախնդիրները, Եր., 2001, էջ 29:*

[183] *А. Тер-Саркисянц, Адаптация армян к новым условиям постсоветского времени… с. 19.*

ադապտացիոն) գործոն՝ նկատի ունենալով պետության և հասարակության համար դրա ժողովրդագրական ու սոցիալական հետևանքները: [184]

Ընտանիքի կենսապահովումը նրա գործունեության տնտեսական բազան է ու հաջորդ կարևորագույն գործառույթը: Հետերկրաշարժյան տարիներին՝ մասնավորապես 1990-ական թթ. սկզբին, իրավիճակի կտրուկ փոփոխության պայմաններում, փաստորեն դուրս մղվեց ընտանիքում դերերի ու գործառույթների տարանջատումը պայմանավորող տնտեսական բաղկացուցիչը: Ընտանեկան բյուջեի ձևավորման հիմնական մասնակիցները՝ աշխատունակ կանայք ու տղամարդիկ, իսկ եռասերունդ ընտանիքներում՝ նաև կենսաթոշակառուները, միանգամից հայտնվեցին գործազուրկի ու կենսաթոշակով նույնիսկ հացի խնդիր լուծել չկարողացողի կարգավիճակում: Կարելի է ասել, որ 1990-ական թթ. բազմաթիվ ընտանիքների համար գոյություն չուներ ընտանեկան բյուջե որպես այդպիսին, կային պարզապես գոյության ապահովմանն ուղղված դիպվածային, միանգամյա գործողություններ: Այսինքն ընտանիքի անդամների հիմնական մասը, զրկվելով ընտանիքում սեփական տեղն ու դերը պայմանավորող տնտեսական բաղկացուցիչից, կանգնեց բավականին բարդ խնդրի առջև:[185]

Եկամուտների կտրուկ անկումը և աղքատությունը լուրջ հարված հասցրին ընտանիքին՝ առաջ բերելով երկու միտում: Առաջինը ընտանիքների մեծացումն էր՝ պայմանավորված համախմբվելու վարքով: Հետերկրաշարժյան և հետագա, ինչպես ժողովուրդն է

---

[184] *Кабарухина И. А., Социальная адаптация российской семьи в современных социально-экономических условиях, автореферат кандидата социологических наук, Новочеркасск, 2007, Научная библиотека диссертаций и авторефератов disserCat http://www.dissercat.com/content/sotsialnaya-adaptatsiya-rossiiskoi-semi-v-sovremennykh-sotsialno-ekonomicheskikh-usloviyakh#ixzz46vv524VH*

[185] *Մ. Գաբրիելյան, Հայկական ընտանիքն անցումային շրջանում, էջ 111-112:*

բնութագրում «ցուրտ ու մութ» տարիներին, տեղի ունեցավ նախկինում տարանջատված ընտանիքների միավորում: Այսպես, Հայաստանի միգրացիոն խմբի 17 %-ը այդ ժամանակաշրջանում ուղղված էր դեպի գյուղական բնակավայրեր, որի արդյունքում վերամիավորվում էին քաղաքներում ամուսնացած երեխաները գյուղում ապրող ծնողների հետ:[186] Նման միավորում տեղի էր ունենում նաև քաղաքում, որը թելադրված էր ռեսուրսների համախմբման անհրաժեշտությամբ: Փաստորեն մեծ ընտանիքի ավանդույթները իրականանալու հնարավորություն են ձեռք բերում՝ դրա համար նպաստավոր պայմանների առավել ծավալման պայմաններում: Բայց դա բոլորովին էլ չի նշանակում, թե պայմանների թելադրանքով միավորված ընտանիքները վերականգնում են ավանդական ընտանիքի վարք ու բարքը, ներընտանեկան հարաբերությունները, բարոյա-հոգեբանական մթնոլորտը: Այդպիսի միավորումները հարմարվելու (ադապտացիայի) ժամանակավոր ձև է, որը թաքնված-բախումնային (կոնֆլիկտային) է:

Հաջորդ բաժանման միտումը, հակառակ ուղղվածություն ունի և հակված է աճելու: Այսօր արդեն ակնհայտ է եռասերունդ և երկսերունդ ընտանիքների տարանջատման փաստը. ավագ սերունդը Հայաստանում է, երիտասարդը՝ նրա սահմաններից դուրս: Թեև ԱՄՆ և Եվրոպա մեկնողները հաճախ տանում են նաև ընտանիքի տարեցներին՝ այնտեղ նրանց բարձր թոշակների հաշվին իրենց նյութական դրությունը կարգավորելու նպատակով:

Հայկական ընտանիքի կառուցվածքային փոփոխությունները, եկամտի կտրուկ անկումը և արտագաղթողների կողմից Հայաստանում մնացած հարազատներին ուղարկվող օգնության աստիճա-

[186] Р. Карапетян, Армянская семья в контексте переходного периода… с. 56:

նաբար կրճատումը, հարցականի տակ են դնում ընտանիքի կենսապահովման հետագա հնարավորությունը: Դա ուժեղացնում է ընտանիքի քաղաքայման միտումը և, որ առավել կարևոր է, հասարակական գիտակցության մեջ նվազում է այդ ինստիտուտի տնտեսական, հետևաբար, նաև սոցիալական և մշակութային արժեքը, ինչը հայերիս պարագայում հղի է հեռուն գնացող աշխարհքաղաքական հետևանքներով:

Սոցիալականացումը և հասարակական վերահսկողությունը՝ ընտանիքի գործառույթներից հաջորդ կարևորագույններն են, որոնք հնարավորություն են տալիս անհատին յուրացնել կուտակված սոցիալական փորձը և ընդգրկվել հասարակական հարաբերություններում: Ժամանակակից հայ հասարակությունում գաղափարախոսական, տնտեսական նպատակների, հետևաբար նաև սոցիալական և մշակութային ուղենիշների բացակայությունը ընտանիքի նպատակներում հանգեցնում է անկողմնորոշվածության: Մի կողմից ընտանիքը կամ անհատը ունեն գիտակցված, հաստատված արժեքներ ու նպատակներ, որոնք սակայն այսօր գործնական արդյունքի չեն հասցնում, մյուս կողմից՝ իրականություն են ներթափանցել գիտակցորեն, հոգեբանորեն և բարոյապես դեռևս լիովին չընկալված ու չընդունված արժեքներ, որոնք ապահովում են առաջընթաց և հաջողություն: Այդ բոլորը տեղի են ունենում նոր մշակութային արժեքների ներխուժման, կյանքի տեմպերի արագացման, ընտանիքի ավանդական կառուցվածքի քայքայման ֆոնի վրա:

Ավանդաբար հայ իրականության մեջ ընտանիք կազմելը և շատ երեխաներ ունենալը սրբազան պարտականություն և երջանկություն էր տղամարդու և կնոջ համար: Չամուսնացած տղամարդիկ չափազանց հազվադեպ էին հանդիպում, որովհետև նախաձեռնությունն ու ընտրության իրավունքը նրանցն էր: Չամուսնացած աղջիկը հոգս ու դժբախտություն էր և՛ ընտանիքի և՛ իր համար: Աղջկա

կամովին չամուսնանալն ընդհանրապես խելքից ու մտքից դուրս էր: Նույնքան հազվադեպ էր ամուսնալուծությունը եսակենտրոն, զգացմունքային նկատառումներով: Ընտանիքը սրբություն էր, և թե՛ կինը, թե՛ տղամարդը ձգտում էին ամեն գնով պահպանել այն: Ներկայումս դրությունը նկատելիորեն փոխվել է: Ազատական, անձակենտրոն գաղափարներով տոգորված նոր սերունդը չի շտապում ընտանիք կազմել: Բավական մեծ թվով տղաներ և աղջիկներ ուզում են նախ կրթություն ստանալ, աշխատանք ունենալ, ինքնահաստատվել, աշխարհ տեսնել, հետո միայն մտածել ամուսնանալու մասին: Եվ հետաքրքիր է, որ ծնողների մի զգալի մասն էլ հանգիստ են վերաբերվում դրան: Անգամ աղջիկների ծնողները համաձայն են իրենց զավակների ազատամիտ որոշումներին: Եվ հասարակությունն էլ առաջվա նման չի դատապարտում: Ակնհայտ է, որ հանրապետությունում նկատելիորեն մեծացել է նաև ամուսնալուծությունների թիվը՝ այդ թվում նաև կանանց նախաձեռնությամբ: Մանկատներում երեխաների թվի աճը վկայում է այն մասին, որ հայ տղամարդիկ ու կանայք դարձել են ավելի եսակենտրոն: Ամուսնալուծությունների և լքված մանուկների թվի աճը վկայում է Հայաստանում ընտանիքի ինստիտուտի ճգնաժամի մասին:[187]

Այսպիսով, ընտանիքի սոցիալական անհարմարվողականությունը (դեզադապտացիա) կարող է դիտարկվել որպես շրջակա միջավայրի հետ ընտանիքի փոխազդեցության խախտում, ինչի հետևանքով ընտանիքը չի կարողանում լիովին իրականացնել իր ավանդական սոցիալական գործառույթներն ու հայ ավանդույթներին համապատասխան դրական սոցիալական դերակատարում ունենալ ստեղծված պայմաններում: Ընդ որում, պետք է նշել, որ անապահով

---

[187] *Ս. Խաչկալյան, Գենդերային հարաբերությունների փոփոխություններն արդի Հայաստանում, Գենդերային հետազոտություններ, N 20, Եր., 2004, էջ 14-19:*

ընտանիքը կրկնակի վտանգավոր է, քանի որ նրանում առկա են ռիսկի երկու խումբ: Այն կարող է վտանգավոր լինել հասարակության համար իր (հաճախ) ապասոցիալական արժեքներով, նորմերով և վարքով: Այսպիսի ընտանիքի գոյությունը վտանգավոր է հենց իր անդամների համար, որոնց՝ հատկապես երեխաների, սոցիալականացումը չի կարող բնականոն ճանապարհով ընթանալ, քանի որ դրանցում բացակայում են հոգեբանական, ֆիզիկական և սոցիալական զարգացման համար անհրաժեշտ նույնիսկ մինիմալ պայմանները:

### *Ներընտանեկան հարաբերություններն ու դերային վարքի փոփոխությունները*

Ընտանիքը բավականին պահպանողական ինստիտուտ է: Սոցիալական դերերի ու վարքի, կարգավիճակների, արժեքային կողմնորոշումների փոփոխության հետևանքով ընտանիքը հաճախ դադարում է կրել ավանդույթով ժառանգած սոցիալական արժեքներն ու իրականացնել իրեն վերապահված գլխավոր մի շարք գործառույթներ, որի արդյունքում ներընտանեկան հարաբերությունները բարոյահոգեբանականից անցնում են տնտեսական դաշտ: Արմատական տեղաշարժերը որոշ դեպքերում խախտում են ոչ միայն ընտանիքի տնտեսական գործունեության մեխանիզմները, այլև ընտանեկան ու ներընտանեկան հարաբերությունները կարգավորող մշակութային տարբեր մոդելները: Հետադետյան հասարակությունում  տեղի ունեցած խորքային փոփոխությունները՝ բնակչության կենսամակարդակի անկումը, գործազրկությունը և զանգվածային աղքատությունը, սոցիալական ծայրահեղ բևեռացումը և դրանցով

պայմանավորված արտագաղթը, առաջացրին լուրջ հիմնախնդիրներ ընտանիքի կազմում, կառուցվածքում, ներընտանեկան հարաբերություններում, որը դրսևորվեց հատկապես ավանդական դերերի ու կարգավիճակների փոփոխմամբ:[188] Ընտանիքում կատարված դերային փոփոխություններն ու նոր ձևավորված կարգավիճակներն ավելի հստակ ներկայացնելու համար անդրադառնանք դրանց առանձին-առանձին:

***Տղամարդիկ***. Պետք է նշել, որ երկրաշարժի արհավիրքն ավելի ծանր հետևանքներ ունեցավ տղամարդկանց համար: Ինչպես վկայում են մեր կողմից անցկացված հարցումները, տղամարդիկ հոգեբանորեն ավելի դժվար հարմարվեցին կորուստներին: Երկրաշարժի ժամանակ կանանց կորցրած ամուսինները հայտնվեցին անելանելի վիճակում, շատերը չկարողացան ընտանիք կազմել, կողմնորոշվել ու բարոյապես կոտրվեցին: Հարազատներ կորցրած տղամարդկանց կանայք, հաճախ մոռանալով իրենց վիշտն ու ապրումները, ստիպված էին սատարել ամուսնուն, հորը, եղբորը: Հայոց մեջ, ավանդաբար տղամարդը միշտ կնոջ խնամքի ու հոգածության օբյեկտն է եղել: Առավել ևս՝ արտակարգ իրավիճակի հետևանքով կյանքի ճամփեզրին հայտնված տղամարդիկ ավելի անպաշտպան են դառնում, և հոգածության կարիք ունենում: Այս առումով հատկանշական է մեր կողմից գրանցված հետևյալ պատմությունը. *«Հորս վիճակը ապրումների իմաստով շատ վատ էր, մեծ եղբորս մահից հետո նա սկսեց իրեն մահապարտի պես պահել, անգամ մեքենայով փորձել է այնպես արագ քշել, որ իրեն դժբախտ պատահարի մեջ գցի: Ես նրան մի անգամ, երբ սթափ էր, կանչեցի ինձ մոտ ու ասեցի, դու գիտես, որ քաղաքում երեխա կորցրած մարդիկ թոռնուններին իրենց*

[188] *Գ. Շագոյան, Արդի հայ ընտանիքը արտագաղթի լույսի ներքո, Արտագաղթը Հայաստանից, Եր., 2003, էջ 96-102:*

*երեխաների անուններն են տալիս, ու ասեցի հայրիկ, դու կտեսնես թե ինչ մարդիկ կան, դու միայն Կարուշի պապան չես, մենք էլ կանք, ու ես նրան փորձեցի սթափեցնել ու հասկացնել, որ նա էլի երեխաներ ունի: Մի քանի օր հետո նա հանկարծակի ասաց, որ մեկնելու է Աղդամ: Հետո ամիսներ անցան, ու լուր բերեցին թե Ավետ, Ռոզա եկեք ձեր պապան վերադարձել է: Դա երևի 1993-ին էր, երբ մեքենան կանգնեց, մեքենայի միջից մեզ էր նայում բրդոտ դեմքով, տարիքով մի մարդ, եղբորս ասեցի, թե սա պապան չի, սակայն նա իջավ ու մեզ փաթաթվեց: Հորս հոգեբանությունը այդ ժամանակ փոխվեց, նա ասում էր տղամարդը այն տղամարդն է, որը կորցնելով պատերազմում իր 5 որդիներին, 6-ին և 7-ին դնում էր իմ մեքենան, որ տանի կռիվ: Կարելի է ասել, որ աղետը տեսած հայրս Ղարաբաղի ֆենոմենով իրեն բուժեց»* :[189]

Տարբեր մշակութային համակարգերում, այդ թվում և հայկականում, հարյուրամյակներ շարունակ ընտանիքի նյութական բարեկեցության երաշխավորը եղել է տղամարդը: Հայոց մշակույթում դա դրսևորվել է «Տղամարդը դրսի պատն է, կինը՝ ներսի» ասացվածքով: Այս բանաձևը, ընտանիքի անդամների պատասխանատվությունը ցուցելուց զատ, ցույց է տալիս նաև ընտանիքում դերերի ու գործառույթների բաժանման շատ մեխանիզմների կենսունակությունը:

Ավանդական բազմասերունդ ընտանիքներում ավագ սերունդն էր ղեկավարում, և ներընտանեկան հարաբերությունները կարգավորելու գործում վճռորոշ դեր ուներ տան տղամարդը՝ իրեն հատուկ իրավունքներով ու պարտականություններով, իսկ կինը կառավարում էր տնտեսությունը՝ լինելով ամուսնու լծակիցն ու խորհրդատուն: Ընտանիքի այս մոդելն արդեն գրեթե անհետացած երևույթ է, քանի որ բազմասերունդ ընտանիքները խիստ պակասել

---

[189] *ԴԱՆ, փորձագետ Ռոզա Հովհաննիսյան, Գյումրի, 2016:*

են: Ավագների մեծ մասը և երիտասարդները ձգտում են հնարավորության դեպքում առանձնանալ: Տան տղամարդը, ով ընտանեկան հարցերը լուծելու ժամանակ որոշիչ ձայն ուներ, պահպանելով հեղինակությունը, որոշ չափով իր տեղը զիջել է ընտանիքի մյուս անդամներին: Սովորույթի համաձայն երիտասարդներն ու միջին սերունդը ընտանիքի գլխավոր շարունակում են համարել ավագ տղամարդուն (նրա բացակայության դեպքում՝ կնոջը), նրանց հարգանքով են վերաբերվում, տեղեկացնում իրենց գործերից և խորհուրդ հարցնում, բայց հարցերի լուծման վերջնական որոշումը իրենք են կայացնում: Այն ընտանիքներում, որտեղ շատ եկամուտ են ստանում աշխատող երեխաները կամ կանայք, առաջ է եկել մի նոր երևույթ. եթե անգամ միասին են ապրում, որպես կանոն, առանձին են տնօրինում իրենց վաստակը (սա կապված չէ միայն արտակարգ իրավիճակի հետ):

Տղամարդկանց համար ծանր հոգեբանական հետևանքներ ունեցավ նաև աշխատատեղերի կորուստն ու գործազրկությունը: Դրանց արդյունք կարելի է համարել նաև քրոնիկ հարբեցողությամբ և թմրամոլությամբ տառապող հիվանդների թվի կտրուկ աճը Աղետի գոտում և ի մասնավորի Գյումրիում:[190] Հուսալքության բարդույթն առավելապես տարածված էր տղամարդկանց շրջանում, ինչը փաստել են մեր բանասացներից շատերը. *«Իմ սկեսրայրը մահացավ 1990 թ.*,-պատմում է երկրաշարժից հետո Երևանից Գյումրի հարս եկած Լիանա Կոստանյանը,- *քանի որ չէր դիմանում այդ պայմաններին,*

---

*[190] Նարկոլոգիական դիսպանսերի նախկին աշխատակից Համլետ Աթոյանի վկայությամբ 1990-ականներին տնակային պայմաններում տեղակայված իրենց հիմնարկում ազատ մահճակալ չկար և ցավով նշում է, որ նարկոլոգների մոտ զաղտնի կամ այսպես կոչված «անանուն» հակաալկոհոլային բուժում էին ստանում քաղաքում հայտնի շատ տղամարդիկ, ԴԱՆ, Գյումրի, 2015:*

*երբ ոչինչ չկար, իսկ գները շատ թանկ էին, տանը (տնակում) հարմարություններ չկային, իսկ նա սովոր էր դրանց, բացի սրանից մեծ սթրես էր նրա համար նաև երկրաշարժը: Մենք նոր էինք ամուսնացել և նա ուզում էր լավ հարս պահեր, բայց քաղաքը և ստեղծված սոցիալական պայմանները հնարավորություն չէին տալիս: Հաճախ նա գալիս էր տուն ու ասում. բա թե ջահելն է՞լ տունը նստի»*:[191] Կամ այլ կարծիք. «*Ես մինչև աղետը չեմ հիշում տղամարդկանց որևէ ինքնասպանության դեպք, դժբախտ սիրո պահերով դեպքեր եղել են, բայց սոցիալական պատճառներով (ընտանիքին ապահովելու անկարողությունից) ինքնասպանություններ չեն եղել, որոնք այժմ տարածված են և ունեն աճի միտում, ես մեկին գիտեմ, որի եղբայրը գերեզմանոցում կախվել էր, պարանը կտրվել էր ու նա կրկին կախվել էր: Այսպիսի դրությունը շատ մեծ հարված է, շատ տղամարդիկ այսպես նվաստացած շարունակեցին ապրել և իրենց դերն ու պահվածքը շրջապատում լրիվ փոխվեց»*:[192]

Աղետից հետո, աշխատանքի բացակայության պայմաններում չհարմարվելով՝ ստեղծված իրավիճակին, տղամարդիկ սկսեցին երկրից մեկնել: Նրանք, ովքեր մնացին ընտանիքում, կորցրին նախկին սոցիալական կարգավիճակը: Շատերը հույսը դրեցին պետության կողմից տրվող օգնության կամ կնոջ վաստակի վրա: Հայ տղամարդու համար սա բոլորովին նոր իրողություն է, երբ տան նյութական կարիքները հոգում է կինը: Այս առումով հետաքրքիր են Գյումրիում 2001 թ. անցկացված սոցիոլոգիական հարցումների արդյունքները: Ըստ այդ, ընտանիքում տղամարդու՝ գլխավոր դերի ու կերակրողի մասին ավանդական պատկերացումներով կանանց

---

[191] *ԴԱՆ, Գյումրի, 2015:*

[192] *ԴԱՆ, փորձագետ Հասմիկ Հարությունյան, Գյումրի, 2015:*

միայն 35,7 %-ն է բացասական վերաբերվում ամուսնու չաշխատելուն, նույն մոտեցումն ունեն կնոջ ծնողների 39%-ը: Ծնողներն ավելի անհանդուրժող են աղջկա ամուսնու չաշխատելու նկատմամբ, քան վերջինիս ծնողները և կինը: Սա նշանակում է, որ ավանդույթով ամրագրված ընտանեկան արժեքները նահանջում են անձնական կրթության և քաղաքակրթության փորձի հետևանքով: Նկատենք, որ հարցումն անցկացվել է բարձրագույն կրթություն ունեցող կանանց շրջանում, ովքեր ապահովված են աշխատանքով (79,3%) և նյութապես անկախ են: Հետաքրքիր է այն, որ հարցված չաշխատող կանանց միայն 6,4%-ը չի ցանկանում աշխատել, իսկ տղամարդկանց՝ 10,7%-ը, ինչը վկայում է տղամարդկանց մեջ ընտանիքի գլխավորի ու կերակրողի ավանդական դերի փաստական արժեզրկման մասին:[193]

Աշխատատեղերի տոտալ բացակայության պայմաններում տղամարդկանց ադապտացիոն վարքի երեք ձև կարելի է առանձնացնել՝ պասիվ, միջին և ակտիվ: Առաջինը այն մարդիկ են, ովքեր մինչ օրս չեն ադապտացվել, գրավել են սպասողական դիրք, իներտ են, պատրաստ չեն ակտիվ գործողությունների իրենց ու ընտանիքի անդամների կենսագործունեությունն ինչ-որ ձևով ապահովելուն: Դա հիմնականում բնակչության այն թշվառ ու չքավոր մասն է, որ ապրում է տնակներում՝ ծայրահեղ կարիքի մեջ: Սրանց մեջ գերակշռում է սպառողական տրամադրությունը. անորոշ իրավիճակը, ապագայի նկատմամբ անվստահությունը, հուսալքությունը այս մարդկանց մոտ առաջացրել են ոչ ադեկվատ վերաբերմունք իրականության նկատմամբ, ապակողմնորոշել ճիշտ որոշումներ ընդունելու և համարժեք գործողություններ իրականացնելու՝ թուլացնելով

193 *Ս. Խաչկալյան, Արժեքային կողմնորոշումների և էթնոմշակութային նույնականացման ձևափոխումները Գյումրիում, Գենդերային իրավիճակի դինամիկան Գյումրիում, (ըստ սոցիալական հարցման արդյունքների), Գյումրի, 2001, էջ 55:*

նրանց պաշտպանական ակտիվությունը: Այս մարդիկ իրենց ընտանիքների գոյատևման ողջ պատասխանատվությունը դրել են պետական ու հասարակական կառույցների վրա, ողջ ակտիվությունն ուղղելով մեկ բանի՝ իրենց ներկայացնելով որպես «զոհ»՝ հույսը դնելով սոցիալական նպաստների ու օգնության վրա: Օրահացի խնդրի լուծումը այս խմբի տղամարդկանց համար առաջնայինն է, իսկ մնացածը՝ աշխատանքը, երեխաների դաստիարակությունը, առողջական խնդիրների լուծումը մղվել են երկրորդ պլան: Այս առումով բնութագրական է վանաձորցի կանանց գնահատականը. *«Բոլոր տղամարդիկ դիվանագետ են դարձել:Ասում եմ՝ ինչ ա անում մարդդ, ասում է՝ դիվան ա քշում: Տղամարդը ամբողջ օրը դիվանին նստած, իսկ կինն էլ դրսում ի՞նչ անի»:*[194] Վանաձորի փորձագետներից մեկը նշեց, որ «*իրենք փորձում են օգնել, աշխատանք են գտնում, բայց շատերը չեն ուզում գնալ աշխատելու, քանի որ աշխատավարձը ցածր է և պատճառաբանում են, որ նպաստից կզրկվեն, եթե աշխատանք ունենան, իսկ այդպես տանը նստած ստանում են այնքան, ինչքան որ աշխատանքի պարագայում: Կամ ասենք, ընտանիքը աղքատ է, ամուսինն էլ ամեն օր տունն է, ուշ է վեր կենում, իսկ երեխան, որ 8-րդ դասարանցի գեղեցիկ աղջիկ է, դպրոց չի հաճախում, քանի որ ծնողներն ասում են թե «չենք ուզում որ գնա, քանի որ կամուրջով, որով անցնում է երեխան, անվտանգ չէ, այնտեղ տարբեր տեսակի մարդիկ են հավաքված ու դա կարող է նրա համար վտանգավոր լինել» բայց հայրը չի էլ մտածում իր երեխային դիմավորելու մասին»* :[195]

Փորձագետներից մեկի դիպուկ գնահատմամբ. «*ոմանք շատ հեշտությամբ հանձնեցին այդ դերը* (ընտանիքն ապահովողի-Թ.Ա.) *ու հարմարվեցին այն ապրելակերպին, երբ կանայք էին լուծում*

[194] *Գ. Շագոյան, Արդի հայ ընտանիքը արտագաղթի լույսի ներքո, Արտագաղթը Հայաստանից, էջ 100:*

[195] *ԴԱՆ, փորձագետ Նինա Հովհաննիսյան, Վանաձոր, 2016:*

*խնդիրները: Ինձ վրա շատ ազդում է, երբ տեսնում են պարապուրդից անընդհատ նարդի խաղացող, նույնիսկ գյուղերում խմբված, անգործ տղամարդկանց, այսպիսի վիճակի պատճառները սոցիալական են, եթե տղամարդիկ նորմալ աշխատանքով ապահովված լինեին, չեմ կարծում որ մեծ փոփոխություններ կլիներ նրանց վարքում, կարելի է ասել որ տղամարդիկ այսպիսի պահվածքով՝* ***չադապտացվելով ադապտացվել են*** *նոր պայմաններին»* :[196]

Երկրորդ՝ միջին ադապտացման ձևը որդեգրած տղամարդիկ փորձում են ինչ-ինչ քայլեր ձեռնարկել ընտանիքի առջև ծագած խնդիրները լուծելու ուղղությամբ: Չկարողանալով իրենց բնակավայրում հասնել հաջողության, նրանք դիմում են արտագաղթի: Արտագաղթը փաստորեն դարձավ ադապտացման այն ձևը, որը տարիների ընթացքում գնալով գերակշռող դարձավ՝ ընդգրկելով միջին և երիտասարդ տարիքի տղամարդկանց:

Երրորդ խումբը կազմում են ակտիվ հարմարվողական վարք որդեգրած տղամարդիկ, խոսքը վերաբերում է հատկապես երիտասարդ սերնդին, որը փորձում էր որոշակի քայլեր ձեռնարկել, արհեստներով, գործարարությամբ զբաղվել և եթե առաջ նրանք իշխանություններից գործ էին պահանջում, ապա հետագայում, հույսը դնելով իրենց վրա, բացեցին կրպակներ, խանութներ, վարսավիրանոցներ, ծաղկի և հանդիսությունների սրահներ, սպասարկման կենտրոններ և այլն:

Փորձագետի գնահատականի համաձայն ադապտացման գործընթացը պայմանավորված է նաև տղամարդկանց տարբեր տարիքային խմբերով. *«Երիտասարդ սերունդն ավելի նախաձեռնող է և ցանկանում է ինքը ստեղծել իր միջավայրը, ավագ սերունդն ավելի շատ ինքն է հարմարվում միջավայրին, դրա համար էլ տեսնում ենք, որ*

[196] *ԴԱՆ, փորձագետ Հասմիկ Հարությունյան, Գյումրի, 2016:*

*միտինգների ժամանակ եթե առաջ գնում էին տարիքով մարդիկ, ապա այժմ բողոքավոր զանգվածը ավելի շատ երիտասարդներն են: Ու դա լավ է, քանի որ տարիքավոր մարդիկ ավելի շատ պահպանողական են ու չեն ուզում կյանքում կտրուկ փոփոխություններ, իսկ երիտասարդները, ուսումը ավարտելուց և աշխատանք չգտնելուց հետո դառնում են բողոքավոր: Շատերը, չկարողանալով այստեղ իրենց ինքնաիրականացնել,ստիպված հեռանում են, այսինքն նրանք ցանկանում են օտարության մեջ աղապտացվել քան իրենց հայրենիքում»*:[197] Պետք է նշել, որ երիտասարդությունն էլ իր հերթին տարբեր է: Մեկ այլ փորձագետ այսպես է բնութագրում. *«Ես երկու տիպի երտասարդներ եմ տեսել, առաջինը ամեն ինչ բացառում է, այսինքն ոչինչ չի ընդունում և պատրաստ է անմիջապես հեռանալ, մյուս մասը ակտիվ, պայքարող և իր իրավունքների շահերը պահող մասն է, կապ չունի գավառում է ապրում թե մայրաքաղաքում, այսպիսով երկու ծայրահեղություն կա, մեկը լքված ու հեռանալու ցանկություն ունեցող զանգվածն է և երկրորդը դա ակտիվ մասսան է, որը պատրաստ է իր ներուժի համաձայն ինչ որ բան փոխել երկրում: Կա նաև երրորդ տարբերակը, սրանք ուղղակի իներցիայով ապրողներն են, սրանք այն երիտասարդներն են, որոնց հարցերը ծնողներն են լուծում և սրանք հիմնականում պասիվ են»*:[198]

Այսպիսով, աղետը վերապրած տղամարդիկ դարձան կրկնակի խոցելի խումբ, քանի որ չաշխատող, ընտանիքի նվազագույն նյութական (ինչու չէ՝ նաև հոգևոր) պահանջմունքները բավարարելու համար հնարավորություններ չունեցող տղամարդը չի կարող կամ չի ուզում հարմարվել իր նոր դերային կողմնորոշմանը, որը խիստ

---

*[197] ԴԱՆ, փորձագետ Արտաշես Բոյաջյան, Գյումրի, 2016:*
*[198] ԴԱՆ, փորձագետ Նինա Հովհաննիսյան, Վանաձոր, 2016:*

տարբերվում է ավանդականից: Իսկ այս իրավիճակը նաև բարոյահոգեբանական լուրջ հիմնախնդիրների պատճառ է դառնում:[199]

***Կանայք.*** Հետաղետյան ընտանիքներում վերը հիշատակված փոփոխությունները, բնականաբար, իրենց ազդեցությունն ունեցան հատկապես կնոջ կարգավիճակի, դերի ու գործառույթների վրա: Հատկանշական է, որ 2000-2001թթ. Գյումրում և Վանաձորում տարբեր հասարակական կազմակերպությունների կողմից անցկացվել են սոցիոլագիական հարցումներ, որոնց նպատակն էր գնահատել աղետի գոտու կանանց վիճակը՝ հետագայում որոշակի ծրագրեր իրականացնելու նպատակով: Այդ հարցումների արդյունքները խիստ հետաքրքիր են ու արժեքավոր մեր առջև դրված խնդրի պարզաբանման համար: Խոսքը նախևառաջ վերաբերում է կնոջ դերային փոփոխություններին:

Հարցումները փաստում են, որ տղամարդկանց գործազրկության և արտագնա աշխատանքների մեկնելու հետևանքով ընտանիքում կնոջ դերը մեծացավ: Նա իր վրա վերցրեց օջախի պահպանության, տնտեսության, երեխաների խնամքի և դաստիարակության հոգսերը՝ փաստորեն հանդես գալով որպես տան գլխավոր: Այսպես. համեմատելով խորհրդային տարիների հետ, երբ 1980-ականներին հարցվողների 65 %-ը այն հարցին թե. «ո՞վ է ընտանիքում որոշում կարևոր հարցերը» պատասխանել է՝ ամուսինը կամ հայրը, ապա 1990-ականներին նույն պատասխանը կազմել է 47 %: Ըստ 1980-ական թթ. հարցումների արդյունքների տան գլխավորի հետ ճաշի էին նստում հարցվողների 52 %-ը, իսկ 90-ականներին՝ 32 %-ը:[200]

---

[199] *Հ.Մելքոնյան, Սոցիալ-տնտեսական վերափոխումները և կանանց իրավիճակը Գյումրիում, Գենդերային իրավիճակի դինամիկան Գյումրիում, (ըստ սոցիալական հարցման արդյունքների), Գյումրի, 2001, էջ 59-60:*

[200] *Թ. Զաքարյան, նշվ. աշխ., էջ 211:*

Սեփականության վերաբաշխման և տնտեսական համագործակցության ստեղծված իրավիճակը տղամարդկանցից շատերին զրկեց ընտանիքում իր դերը պահպանելու հնարավորությունից, որը շատ ցավագին ընդունեցին թե' տղամարդիկ, թե' կանայք: Շատ կանայք մտավախություն ունեն, որ ընտանեկան կյանքում տղամարդու դերի կորուստը կարող է առաջացնել հիասթափություն ամուսնուց, որը տեղի է ունենում ընտանիքում տղամարդու դերի փոփոխմանը հոգեբանորեն դժվար հարմարվելու կամ չհարմարվելու հետ, կամ ամուսնու ինքնագնահատականի իջեցման, ինչը կարող է հանգեցնել բարոյահոգեբանական լուրջ խնդիրների կամ ներընտանեկան բախումների: Երբ կինը ստիպված է գործառույթի որոշ մասը վերցնել իր վրա՝ նրա համար տղամարդը հոգեբանորեն դադարում է լիարժեք լինելուց: Սա հաստատվել է նաև սոցհարցումների տվյալներով. գյումրեցի կանանց սպասելիքների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ նրանք կարևոր դեր են հատկացնում տղամարդուն՝ որպես դրականին հասնելու հիմնական առանցքի, որը պետք է դառնա լավ սպասելիքի հիմնական կերտողը (74%): Հարցվողներից շատերի համար տղամարդու և կնոջ դերերի ու գործառույթների խախտումները դիտվել են որպես ոչ նորմալ երևույթ: Կանայք, որոնք փաստացի հանդես են գալիս որպես ընտանիքի կերակրողներ, դժգոհ են իրենց սոցիալական այս կարգավիճակից (78%)՝ համարելով այն ոչ բնական և հայ կնոջը անհարիր վիճակ: Ապագայի սպասելիքների մեջ հստակ դիտվում է հարցվող կանանց ցանկությունը տեսնել տղամարդու՝ որպես ընտանիքի հիմնական կերակրողի դերի բարձրացում:[201]

---

[201] *Գ. Աղանյան, Կանանց սպասելիքները Գյումրիում (ըստ 1999-2001թթ. Սոցիոլոգիական հետազոտությունների, Գենդերային իրավիճակի դինամիկան Գյումրիում, (ըստ սոցիալական հարցման արդյունքների), Գյումրի, 2001, էջ 84-85:*

Այս երևույթը հաստատում են նաև մեր կողմից անցկացված հարցումները: Այսպես է գնահատվում դերային փոփոխությունը Գյումրիում. *«Իմ բարեկամներից մեկի ընտանիքում կինը աշխատում է ռուսական զորամասում որպես սպա, իսկ ամուսինը տանը երեխաներին է պահում, խորհրդային տարիներին այդպիսի բան չէր կարող լինել, ես դա դեգրադացիա եմ համարում: Այդուհանդերձ այս դեպքերում կարևորն այն է որ ընտանիքը կա, սակայն սոսկալի է երբ ընտանիքը քայքայվում է»:*[202] Նկատենք, որ նման դեպքերում քայքայվողը ոչ թէ կոնկրետ ընտանիքն է, հակառակը այն կա, այլ ընտանիքի սոցիալական ինստիտուտը՝ իրեն հատուկ դերա-վարքային դետերմինացիայով (բաժանումներով) և գործառույթներով, ինչը տագնապի զգացողություն է առաջացնում թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց շրջանում:

Կնոջ դերային փոփոխության երկվությունը հաստատվում է նաև Շիրակի մարզի գյուղերում 1999-2000 թթ. անցկացված մեկ այլ ուսումնասիրության արդյունքներով, այսպես. հարցման ենթարկված կանայք «Ո՞վ է ղեկավարում ձեր ընտանիքը» հարցին պատասխանել են՝ ամուսինս (67%), ես և ամուսինս միասին (14%), ամուսնուս ծնողները (19%) այն դեպքում, երբ որոշումների ընդունման պարագայում նրանց մեծամասնությունը (68%) նշել է, որ ամուսնու հետ միասին են որոշում, իսկ 86%-ը պատասխանել է, որ իր կարծիքը հաշվի են առնում: Պարադոքսը նրանում է, որ բանավոր զրույցներից պարզվել է, որ շատ դեպքերում այդ կանանց ամուսինները փաստացի բացակայում են երկրից:[203]

---

*[202] ԴԱՆ, Գյումրի, 2015:*

*[203] Ա. Միքայելյան, Գ. Մարկոսյան, Ս. Ղազարյան, Շիրակի մարզի գյուղերի կանանց գիտելիքները գենդերային իրավահավասարության և մարդու իրավունքների մասին, Հասարակության գենդերային հիմնախնդիրները Գյումրու արտակարգ իրավիճակում, Գյումրի, 2001, էջ 47-50:*

Կնոջ կարգավիճակի փոփոխությունն առաջին հերթին կապված է տղամարդկանց զանգվածային արտագաղթի հետ: Այսպես է գնահատում վիճակը գյումրեցի բանասացը. *«Զարմուհիս գնացել էր դպրոցներից մեկում պրակտիկայի ու մատյանը ստուգելիս նկատել է, որ աշակերտներից ոչ մեկի հայրը Հայաստանում չէ: Սա արդեն խոսում է սոցիալական ողբերգության մասին, այսօր մայրը դարձել է ընտանիքի ունիվերսալ դերակատարի կերպար՝ կատարելով տան բացակայող անդամների գործառույթները երեխաների համար, առանց այդ էլ կնոջ ուսերին ի վերուստ ծանր պարտականությունների բեռ է դրված»:*[204]

Գյումրու փորձագետների գնահատմամբ ամուսնու արտագնա աշխատանքը Շիրակի մարզի կանանց մոտ տարբեր արձագանք է գտնում. *«Կանանց մի խումբ կա, որը հարմարվել է այն իրողությանը, որ ամուսինները տարվա մեջ 1-2 ամիս են տանը լինում՝ հյուրի կարգավիճակով: Այս կանայք սովորել են ապրել ինքնուրույն, առանց վերահսկողության և տղամարդու երկարատև ներկայությունը, որի ժամանակ իրենք ստիպված են ենթարկվել ամուսնուն, արդեն իրենց դուր չի գալիս: Կանանց մյուս խումբը, որ ավելի փոքրաթիվ է, ամուսնու բացակայությունը բավականին ծանր է տանում, դա նրանց մոտ հոգեբանական խնդիրներ է առաջացնում: Սրանց կարելի է միացնել այն կանանց, որոնք չեն արտահայտվում իրենց խնդիրների մասին, չնայած դրանք առկա են»* :[205]

Պետք է նշել, որ ընդհանրություններով հանդերձ, քաղաքաբնակ և գյուղաբնակ կանանց ադապտացիոն գործընթացներում նկատվում են նաև որոշակի տարբերություններ՝ կապված քաղաքային և գյուղական մշակույթների առանձնահատկությունների հետ:

---

[204] *ԴԱՆ, Գյումրի, 2015:*

[205] *ԴԱՆ, փորձագետ Գոհար Մարկոսյան, Գյումրի, 2016:*

Աղետի գոտու քաղաքներում՝ հատկապես Գյումրիում ու Սպիտակում, որտեղ քանդվեց գործող ձեռնարկությունների մեծ մասը և դրան հաջորդած սեփականաշնորհման գործընթացի հետևանքով իրար հետևից փակվող արտադրությունները ծնեցին գործազրկության աննախադեպ մակարդակ: Արդյունքում գործազուրկների բանակի գերակշիռ հատվածը կազմեցին կանայք: Առանց աշխատանքի մնացին ինչպես բազմահազար բանվորական խավը ներկայացնող, այնպես էլ ոչ պակաս թիվ կազմող բարձրագույն կրթություն ունեցող կանայք: Գործազուրկի կարգավիճակում հայտնված կանայք իրենց կյանքը լիարժեք չեն համարում, քանի որ նրանց համար աշխատանքը բազմագործառութային նշանակություն ունի: Մի կողմից՝ աշխատանքը ընտանիքի ֆինանսական աջակցության կարևորագույն գործոն է, մյուս կողմից՝ այն ինքնարտահայտման միջոց է: «Մարդամեջ դուրս գալը», մարդկանց հետ շփվելը, հաղորդակցվելը, կանայք համարում են անձի կայացման պարտադիր պայման:[206]

Ստեղծված պայմաններում կանայք ևս, ինչպես տղամարդիկ, հարմարվողականության տարբեր եղանակներ գտան: Ըստ Գյումրիում անցկացված հարցումների, այստեղ առանձնացվել են կանանց երեք հիմնական խմբեր. ա/ կանայք, ովքեր առանձնանում են սոցիալական ակտիվությամբ, իրենց հետ են կապում իրենց հիմնախնդիրների լուծումը և որևէ բան արել են ծանր վիճակը մեղմելու, թեթևացնելու ուղղությամբ, բ/ կանայք, ովքեր ավելի պահպանողական են և համեմատաբար պասիվ, գ/ խիստ պասիվ ու անտարբեր կանայք:[207] Ուշագրավ է այս խմբերի տոկոսային հարաբերությունը՝ առաջին և երկրորդ խումբը միասին կազմում են հարցման ենթարկվածների

---

[206] *Ս. Պողոսյան, Աշխատող կինն արդի հայ հասարակությունում (նախնական դիտարկումներ), Ընտանիքի հետազոտման հիմնախնդիրներ, Եր., 2001, էջ 87-91:*

[207] *Հ. Մելքոնյան, Սոցիալ-տնտեսական վերափոխումները և կանանց իրավիճակը Գյումրիում, էջ 59-64:*

մոտավորապես 50%-ը: Կարելի է ասել, որ այս երևույթը բնորոշ է ոչ միայն Գյումրու, այլև ողջ տարածաշրջանի համար:

Առաջին խմբի կանայք արագ հարմարվեցին նոր իրավիճակին ու ներգրավվեցին տարբեր տիպի գործընթացներում, ի տարբերություն տղամարդկանց, ովքեր բավականին ծանր էին տանում սոցիալական հիերերխիայում նախկին դիրքի կորուստը: Նրանք դիմեցին ամենատարբեր միջոցների՝ փորձելով ինչ-որ ձևով լուծել ընտանիքի կենսապահովման խնդիրները. անցան փողոցային առևտրի, դիպվածային վարձու աշխատանքների, ապրանքափոխանակության: Հատկապես աղքատ ընտանիքներում կանայք ավելի նախաձեռնող են, ավելի համարձակ, ավելի աշխատող: Երեխաների օրվա հացը վաստակելու համար կանայք ավելի, քան տղամարդիկ, համաձայնում են ստորակարգ աշխատանքների: Որոշ դեպքում ուրվագծվում է Հայաստանի ներընտանեկան մշակույթի համար բոլորովին նոր երևույթ՝ չաշխատող տղամարդիկ սկսել են վերահսկել կանանց վաստակը:[208]

Պետք է նշել, որ հետաղետյան տարիներին աշխատանքային միջպետական տեղաշարժերում գրանցվեց կանանց թվաքանակի աճ: Այդ գործընթացին նրանց մասնակցությունը ձեռք բերեց կազմակերպված բնույթ՝ պարբերաբար մեկնելով Ռուսաստան, Թուրքիա, Սիրիա, Արաբական Էմիրություններ, Լեհաստան, Բուլղարիա, Հունաստան և այլուր՝ այնտեղ զբաղվելով առևտրի տարբեր ձևերով և կատարելով զանազան աշխատանքներ:[209] Կանանց մյուս մասը սկսեց զբաղվել մանր առևտրով՝ Բագրատաշենից բերելով հագուստ

---

[208] *Հ. Խառատյան, Աղքատության միջավայրը Հայաստանում, Պատմություններ աղքատության մասին, գիրք երկրորդ, Եր., 2007, էջ 487:*

[209] *Մ. Գալստյան, Ընտանիքի հիմնախնդիրները տնտեսական տեղաշարժերի համատեքստում, էջ 27-28:*

և տնտեսական ապրանքներ ու դրանք վերավաճառելով կամ փոխանակելով գյուղմթերքների հետ, ինչպես նաև Արարատյան դաշտի գյուղերից գյուղատնտեսական ապրանքներ բերելով և վերավաճառելով շուկաներում ու փողոցային կրպակներում:

Գյուղական կանանց կարգավիճակի փոփոխությունները նույնպես ունեն դրսևորման տարբեր առանցքներ:[210] Ընտանիքների մեծ մասում այսօր էլ արտահայտված են դերերի և գործառույթների բաժանման իրողությունները: Դրանք դրսևորվում են և' երկսերունդ և' եռասերունդ ընտանիքներում, որոնցում ընտանիքի գլխավորը սովորաբար ավագ տղամարդն է, ով և ներկայացնում է ընտանիքը հասարակական հարաբերություններում,ինչպես նաև զբաղվում տնտեսական գործունեության կազմակերպման հարցերով: Միաժամանակ, որոշ ընտանիքներում, արտահայտված է նաև մեկ այլ առանցք, որը, ինչպես խորհրդային տարիներին, այնպես էլ մեր օրերում կապված է կնոջ կարգավիճակի և նրա դերային գործառույթների աճի հետ: Ինչպես քաղաքում, այնպես էլ գյուղում այդ փոփոխությունը պայմանավորված է տնտեսական գործոններով: Այն կանայք, ովքեր արագ հարմարվեցին շուկայական հարաբերություններին, ներգրավվելով առևտրի մեջ, փաստորեն իրենց վրա վերցրին ընտանիքի գոյամիջոցների ապահովման հոգսերի մեծ մասը: Կանանց այս խմբի դերն ու հեղինակությունը բարձրացավ այնքան, որ նրանք սկսեցին հանդես գալ նաև որպես համայնքային-հասարակական հարաբերությունների կարգավորիչ ու կազմակերպիչ, իրենց գործառույթներին ավելացնելով այնպիսիք, որոնք նրանք նախկինում չունեին:

Գյուղական կանանց գործառույթներում շարունակում են կարևոր դեր խաղալ խորհրդային շրջանում ձևավորված բազմաթիվ

---

[210] *Մ. Գաբրիելյան, Կնոջ դերը ժամանակակից հայկական գյուղական ընտանիքում, Ընտանիքի հետազոտման հիմնախնդիրները, Եր., 2001, էջ 22-26:*

իրողություններ: Աշխատանքային նախկին միջավայրի (կոլեկտիվ և խորհրդային տնտեսություններ) բացակայությունը և անցումը անհատական գյուղացիական տնտեսությունների սահմանափակել են կանանց աշխատանքային շփումները: Գյուղերի կրթամշակութային հիմնարկություններում, սպասարկման ոլորտում ընդգրկված կանայք, եթե նախկինում հիմնականում դուրս էին գյուղատնտեսական աշխատանքներից, սկսեցին զբաղվել և բանջարաբոստանային բույսերի մշակությամբ, և կաթնեղենի վերամշակմամբ, բազմաթիվ դեպքերում նաև գյուղատնտեսական մթերքների վաճառքով: Այսինքն, հիմնական զբաղմունքների պահպանվածության պայմաններում, փաստորեն աճեց նրանց ծանրաբեռնվածությունը:

Կնոջ այսօրվա վիճակը պայմանավորող գործոնների շարքում կարևոր են նաև ընտանիքի կազմը, ունեցվածքային հնարավորությունները: Այսօր ևս եռասերունդ ընտանիքներում, ամուսնական զույգի ծնողների հետ ապրելու դեպքում, պահպանված է աշխատանքի բաժանման իրողությունը: Կանանցից մեկը՝ սովորաբար տարիքով ավագը, զբաղվում է կաթնեղենի վերամշակմամբ, հնարավորության սահմաններում նաև տնային տնտեսության հետ կապված գործերի որոշ մասով: Երիտասարդ հարսների հիմնական գործառույթը երեխաների խնամքն է, տնային տնտեսության հետ կապված աշխատանքները, հնարավորության դեպքում նաև հողամասերի մշակումը: Եռասերունդ ընտանիքներում տան ավագ կինը օգնում է նաև գյուղում բնակվող զավակների ընտանիքներին: Այսպիսի ընտանիքներում բավականին տարածված է նաև տարբեր աշխատանքները համատեղ կազմակերպելը: Երկսերունդ ընտանիքներում արդեն աշխատանքների ծանրությունն ընկած է միայն կնոջ ուսերին: Ծանր է հատկապես այնպիսի ընտանիքներում, որոնցից մեկ կամ երկու տղամարդ պարբերաբար մեկնում է արտագնա աշխատանքի:

Թե՛ քաղաքներում և թե՛ գյուղերում մեծ տոկոս են կազմում պասիվ հարմարվողականության կանայք: Ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց դեպքում, այս խումբն իրեն համարում է «խոցված» սոցիալական խումբ, որի շահերը ոչ ոք չի պաշտպանում:[211] Սրանց մեջ մեծ թիվ են կազմում նրանք, ում ամուսինները արտագաղթել են, սակայն չեն օգնում ընտանիքներին: Այս խումբը ներկայացնողներն ունեն ցածր ինքնագնահատական, ուստի ոչինչ չեն ձեռնարկում հասարակության մեջ և ընտանիքում իրենց դիրքը փոխելու համար: Նրանք, ի սկզբանե դաստիարակված լինելով ենթարկվելու, հնազանդվելու ոգով և հույսը դնելով տղամարդու վրա, ակտիվություն չեն դրսևորում: Դա է պատճառը, որ անգամ երբ ամուսինը հազվադեպ է փող ուղարկում, ինքը չի փորձում աշխատանք գտնել կամ ինքնուրույն որևէ քայլ ձեռնարկել ստեղծված իրավիճակից դուրս գալու համար:

***Երեխաները.*** Սպիտակի երկրաշարժից մեծապես տուժած և սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներն ու պատանիներն արդեն երրորդ տասնամյակն է շարունակում են ապրել աղետի դեռ չհաղթահարված հետևանքների պայմաններում: Սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային փոփոխությունների պայմաններում պատանիների և երեխաների հիմնախնդիրները խիստ արդիական են, քանի որ ցանկացած ճգնաժամ ուղեկցվում է նորմայից կտրուկ շեղումներով: Խոսելով պատանեկան հասակի մասին, պետք է նշել, որ նույնիսկ սոցիալական երաշխիքներով ապահովագրված կայուն քաղաքական ու տնտեսական համակարգերում այն համարվում է դժվար տարիք, որը պահանջում է պետական աջակցություն կրթության ու դաստիարակության գործում:

[211] *Մ. Շահվերդյան, Միգրացիան և գենդերային կարծրատիպերը. Գենդերային հետազոտություններ, N 20, Եր., 2004, էջ 37-48:*

Քանի որ հայ երեխաների ու պատանիների ժամանակակից սերունդը ծնվել ու մեծացել է սոցիալ-տնտեսական ու քաղաքական անկայուն պայմաններում՝ կոնֆլիկտային, սրված հասարակական հարաբերությունների մեջ, ուր մեծ է հանցագործ միջավարի ազդեցությունը, ուստի նրանց մեջ ձևավորվել է «սոցիալական պարտվածության հոգեբանություն»: Վերջինս արտահայտվում է զանգվածային դժգոհությամբ, բարձիթողությամբ, իր նյութական պահանջները բավարարելու անհնարինությամբ, բարձր նպատակադրության ու արժեքների բացակայությամբ, թաքնված ու արտահայտված ագրեսիվությամբ, ինչը դժվարություններ է առաջացնում նրանց սոցիալական ադապտացիայի գործընթացում: Սոցիալական ու մշակութային ցանկացած փոփոխություն արհեստականորեն նրանց մեջ առաջ է բերում հակաադապտացիոն վարք, որի հետևանքով ձևավորվում է մարգինալություն ու ապակառուցողականություն ոչ միայն սոցիումի, այլև սեփական անձի նկատմամբ: Հիշյալ երևույթներն առավել սուր են արտահայտվում աղետի ենթարկված բնակչության մեջ, որտեղ աղքատության ցուցանիշներն ամենաբարձրն են:[212]

Ըստ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ երեխաների աղքատության ամենաբարձր ցուցանիշը Շիրակի մարզում է. այն 2015թ. կազմել է 55.8%, իսկ ծայրահեղ աղքատ երեխաներինը՝ 5.8%: Համեմատաբար բարձր են նաև Լոռու մարզի ցուցանիշները՝ համապատասխանաբար 39.5% և 3.6%:[213]

Աղքատությունն իր հետ բերում է բազմաթիվ հիմնախնդիր-

---

[212] *Аганян Т., Попытка исследования социально-культурной адаптации детей зоны бедствия (на примере города Гюмри 1989-2015гг.),Balkanistic forum, № 1, Blagoevgrad, 2018. с. 222-223.*

[213] *Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2016, էջ 90, http://armstat.am/file/article/poverty_2016a_2.pdf*

ներ: Աղքատ ընտանիքները գերազանցապես ապրում են ժամանակավոր կացարաններում կամ տնակներում՝ հաճախ խիստ անբարեկարգ ու քայքայված և զուրկ կոմունալ-կենցաղային պայմաններից: Կացարանային հիմնախնդիրները բացասաբար են ազդում երեխաների առողջության, անվտանգության, կրթության և սոցիալականացման վրա:

Մանկական աղքատության չափման մեկ այլ եղանակ է երեխաների կարիքների դիտարկումը, որը գնահատում է աղքատությունը սոցիալական և մշակութային տեսանկյունից և կարող է ավելի շատ ազդել երեխաների զարգացման վրա, քան նյութականը: Ըստ վիճակագրության՝ ՀՀ աղքատ երեխաների ընդհանուր թվաքանակից առավել շատ բացասական պատասխաններ տրվել են սպորտային ակումբ կամ նմանատիպ խմբակ ամիսն առնվազն մեկ անգամ այցելելու հարցին՝ 68%: Ոչ լրիվ բավարարված կարիքներից՝ երկրորդ տեղում է երեխայի համար որևէ մանկական լրագիր, ամսագիր կամ նմանատիպ այլ պարբերական չգնելը՝64%: Երրորդ, չորրորդ և հինգերորդ տեղում է գտնվում, համապատասխանաբար, երեխայի սիրած զբաղմունքի (հոբբի) համար առարկաներ չունենալը՝ 61%, տնից հեռու առնվազն մեկ շաբաթ տևողությամբ արձակուրդ չանցկացնելը: Երբ չբավարարված կարիքները դիտարկվում են ըստ աղքատության մակարդակի, ապա պարզ է դառնում, որ աղքատ և ծայրահեղ աղքատ երեխաների մոտ՝ ոչ աղքատ երեխաների համեմատ, կարիքների անբավարարվածության աստիճանը հիմնականում ավելի մեծ է: Ծայրահեղ աղքատ երեխաների 74-80%-ը զրկված են ամիսն առնվազն երկու անգամ ընկերների կողմից հրավիրվելուց կամ ընկերներին հրավիրելու ժամանցի, ինչպես նաև զրկված են սիրված զբաղմունքի (հոբբի) առարկաներից: [214]

---

[214] *Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2016, էջ 101*

Աղքատ և ծայրահեղ աղքատ ընտանիքները նաև բազմազավակ են, ինչը ավելի է բարդացնում երեխաների նորմալ կենսագործունեությունը: Նման մի ընտանիքի նկարագիր է տվել բանասացներից մեկը. *«Ճիշտն ասած մեր թաղամասը շատ աղքատ թաղամաս էր ու ցածր ինտելեկտով մարդկանցով էր բնակեցված, ովքեր տարբեր պատաճառաբանություններ բռնելով չէին զբաղվում իրենց երեխաների կրթությամբ: Կային երեխաներ, որ ընդհանրապես դասի չէին գնում, մասնավորապես մեր հարևան ընտանիքի երեխաները, ովքեր բոլոր 7-ն էլ դպրոց չէին գնում՝ ծանր սոցիալական պայմաններից ելնելով: Չնայած նրանք վառարան ունեին, բայց վառելիք հաճախ չէին ունենում, ձմեռները հաճախ տաքանում էին մոմի լույսի միջոցով, քնում էին շների հետ՝ տաքանալու համար, ընդամենը ունեին մի մատրաս և մի վերմակ, չնայած ես անձամբ չգիտեմ, թե ինչն էր նրանց այդպիսի ծանր վիճակի պատճառը: Երկու ծնողներն էլ այդ ընտանիքում ողջ էին, իսկ հայրը աշխատանք ուներ: Երեխաները տարիքով շատ փոքր էին ու չէին կարող աշխատել ու միջոցներ հայթհայթել ընտանիքի համար, նրանք թերսնված էին, նույնիսկ ուրիշի տան շան կերը փախցնում ու տանում էին, որ ուտեին: Նրանց օգնում էին հարևանները հագուստով ու սնունդով, բայց մեր պայմաններն էլ լավը չէին: Զարմանալի էր, որ այդ երեխաները ձմեռը չէին հիվանդանում, չնայած որ ոտաբոբիկ էին, ես երբ դա տեսնում էի, մի բան տալիս էի սկեսուրիս, որ տար այդ ընտանիքին, որ հագնեին»:*[215]

Շատ ծնողներ, սոցիալական ծանր պայմաններից դրդված, երեխաներին հանձնում են տարբեր խնամքի հաստատություններ, ուր երեխան ստիպված է լինում ապրել՝ զուրկ ծնողական խնամքից: Վանաձորի փորձագետի գնահատմամբ *«Շատ դեպքերում այնտեղ*

[215] *ԴԱՆ, Գյումրի, 2015:*

*մնացող երեխաները նորմալ երեխաներ են, որոնք ստիպված սովորում են գիշերօթիկների և հատուկ դպրոցների ծրագրերով: Այդ պատճառով, այդ երեխաները արդեն 6-7-րդ դասարաններում չեն կարողանում սովորել հանրակրթական դպրոցներում, օրինակ՝ մի աղբ հավաքողի աղջկա հետ 2-3 տարի աշխատեցինք, որ նորմալ մարդ դառնա: Հիմա նա ուսումնարանում դիզայն է սովորում: Սակայն այս ամենը դժվար է, քանի որ հատուկ դպրոց ավարտած երեխաների ավարտական վկայականի մեջ գրանցում է, որ սովորել ու ավարտել են հատուկ դպրոց, ու դա դառնում է պիտակ իրենց վրա: Սպիտակի տնակային թաղամասի ընտանիքների մեծ մասը երեխաներին տալիս էին հատուկ դպրոց, քանի որ դա մոտիկ էր, նրանց ուտելիք էին տալիս, որոշ դեպքերում նաև հագնելու շորեր, բայց երեխաների ապագայի մասին, թե ինչպես կդասավորվի նրանց հետագա կյանքը, չէին մտածում»:*[216]

Երեխաների ռիսկային խմբերի ադապտացիայի գործում դրական տեղաշարժ կարելի է համարել ներառական կրթության պետական ծրագիրը, որով կարծես լուծվում է սահմանափակ ընդունակություններով երեխաների՝ հասարակությունում ընդգրկվելու խնդիրը: Սա թերևս պետական ադապտացիոն քաղաքականության միակ քայլն է, թեև անմիջականորեն կապված չէ արտակարգ իրավիճակի հետ:

Ծնողների բացթողության ու երեխաների նկատմամբ անտարբերության պատճառով նրանց մոտ զարգանում է հակասոցիալական վարք: Գյումրիում անչափահասների կողմից կամ նրանց ներգրավմամբ կատարվող իրավախախտումների կամ հակասոցիալական վարք դրսևորած երեխաների 10 դեպքից 8-ը գողություններ են, որոնք իրականացվում են հիմնականում անապահով

*[216] ԴԱՆ, փորձագետ Նինա Հովհաննիսյան, Վանաձոր, 2016:*

ընտանիքների երեխաները:[217] Երբ ծնողները գործազուրկ են կամ երեխան միակողմանի ծնողազուկ է, կամ ընտանիքը բազմանդամ է, որի հետևանքով ծնողը չի կարողանում հոգալ հացի խնդիրը, երեխան ստիպված, երբեմն նաև ծնողի գիտությամբ, բռնում է հանցավոր ուղին: Այս երևույթը շատ վտանգավոր է, քանի որ երեխան գտնվում է անցումային շրջանում, և եթե ճիշտ ժամանակին չի հաջողվում հասնել նրան, որպեսզի չկիրառվի կալանավորում, ապա անչափահասը, հայտնվելով ուղղիչ հաստատություններում՝ ավելի է մասնագիտանում իր «նոր ընտրած մասնագիտության» մեջ: Հետագայում նման երիտասարդները հայտնվում են իրավապահների տեսադաշտում՝ արդեն ավելի լուրջ հանցագործություններ կատարած: Ճիշտ ժամանակին նման վարքագծի կանխումը և երեխային ծնողին հանձնելու հնարավորությունը խթան է հանդիսանում երեխայի հետագա սոցիալականացման և ինտեգրման համար:

Մուրացկանության, գողության և այլ տեսակի հակասոցիալական վարքի պատճառների տակ թաքնված են հոգեբանական լուրջ խնդիրներ, որոնք գալիս են ընտանիքի սոցիալական ծանր պայմանների և ընտանիքում տիրող ոչ առողջ մթնոլորտից: Ինչպես նշվեց, այդպիսի ընտանիքները բազմազավակ են, դրա հետևանքով ծնողները չկարողանալով զբաղվել և՛ երեխաների դաստիարակությամբ, և՛ գումար հայթայթելու խնդրով, ամբողջովին բարձիթողի են անում զավակներին: Շատ հաճախ այդպիսի ծնողները չունեն երեխաների դաստիարակման վերաբերյալ գիտելիքներ, ինչպես նաև երեխաների հոգեբանության վերաբերյալ ինֆորմացիա:[218] Իսկ նախկինում

---

[217] *Գյումրի քաղաքի սոցիալապես անապահով ընտանիքների անչափահաս երեխաներին վերաբերող խնդիրների բացահայտման սոցիոլոգիական փորձամասշտաբ հետազոտություն, Գյումրի, 2014, էջ 16:*

[218] *Գյումրի քաղաքի սոցիալապես անապահով ընտանիքների անչափահաս երեխաներին վերաբերող խնդիրների բացահայտման սոցիոլոգիական փորձամասշտաբ հետազոտություն, էջ16:*

գործող և մեծ պահանջարկ վայելող արտադպրոցական մանկական հաստատությունները, որոնք դրական դեր էին կատարում դժվար երեխաների դաստիարակության և սոցիալականացման գործում, ներկայումս չեն գործում: Ինչ էլ որ գործում է, վճարովի է, հետևաբար՝ անհասանելի անապահով ընտանիքների համար:

Երեխաները չեն կարողանում ինտեգրվել և դառնալ հասարակության լիարժեք անդամ: Ծնող-երեխա խաթարված փոխհարաբերությունների խնդրի հիմնական պատճառը աղքատությունը չէ, քանի որ նույն բարձիթողի վիճակում կարող է հայտնվել նաև ապահովված ընտանիքի երեխան: Ծնողները օրինաչափ են համարում երեխային ծեծի ենթարկելը, հոգեբանական բռնություն կիրառելը:[219] Ընտանիքի անդամներից մեկի՝ մյուսի հանդեպ բռնություն կիրառելը ևս ազդում է երեխայի հոգեկան աշխարհի վրա: Մեր հասարակությունում սա գերխնդիր է, քանի որ ծնողը համարում է, որ նման «դաստիարակչական» մեթոդներ կիրառելը իր իրավունքն է:

Ինչպես ողջ հանրապետությունում, այնպես էլ Աղետի գոտում երեխաների նկատմամբ առավել տարածված են անտեսման, հոգեբանական, ֆիզիկական բռնության ձևերը: Շիրակի մարզում անցկացված հարցումները[220] ցույց են տվել, որ երեխաների նկատմամբ կիրառվող անտեսման երևույթը առավել շատ տարածված է սոցիալապես անապահով ընտանիքներում և հատկապես այն երեխաների հանդեպ, ովքեր գտնվում են գիշերօթիկ դպրոցներում: Զգացմունքային անտեսման ժամանակ երեխան լքվում է ծնողի կող-

---

[219] *Кон И.С., Ребенок и общество, Учебное пособие, Москва, Изд. центр"Академия", 2003, с.166-169.*

[220] *Մ. Գալստյան, Երեխաների նկատմամբ կատարվող բռնությունները Շիրակի մարզում (ըստ սոցիոլոգիական հետազոտության արդյունքների) ՇՊՄԺ 6-րդ գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2004, էջ 66-70:*

մից, ենթարկվում է անտարբերության, սառնության, քնքշանքի բացակայության և չի արժանանում պատշաճ ուշադրության: Անտեսման դրսևորման ձև կարելի է համարել նաև ծնողների կողմից երեխաների նկատմամբ շփման, մեկուսացման և նախասիրություններով զբաղվելու արգելքների կիրառումը:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ կապված պատժամիջոցների ուժգնության, հաճախականության, տարածվածության աստիճանի հետ, բռնությունները երեխաների հետագա զարգացման վրա թողնում են սոցիալ-հոգեբանական բացասական լուրջ հետևանքներ: Դրանք ոչ միայն մարմնական տարբեր աստիճանի վնասվածքներն են, այլև տրամադրության անկումը, ընկճվածությունը, ճնշվածությունը, գլխացավը, անքնությունը, վախի, ագրեսիայի դրսևորման երևույթները, դպրոցը թողնելու, դասերից փախչելու ցանկությունը: Բռնությունների հետևանքով երեխաները դառնում են դեպրեսիվ, և նրանց մեջ ձևավորվում են ընտանիքում և դրսում չսիրված և անցանկալի լինելու, ինչպես նաև ճնշված անձի հատկանիշները, ինչը ազդում է նրանց բնավորության գծերի ձևավորման վրա:

Շատ ծնողներ կան, ովքեր զգում են երեխայի դաստիարակության նոր մոտեցումների և ծնողավարման նոր հմտությունների կարիք, սակայն չկան որևէ սոցիալ-հոգեբանական, ծնողավարության հմտություններ ուսուցանող կենտրոն կամ որևէ կառույց, որը կտրամադրի նման ծառայություններ: Այսօրվա ծնողների մեծ մասը հետերկրաշարժյան տարիներին դժվար պայմաններում մեծացած, տնտեսական նոր հարաբերությունների, երկրի դժվարությունների միջով անցած, ուշադրությունից զուրկ մնացած երեխաներն են, ովքեր տեսել են պատերազմ, երկրաշարժ և այլն: Երկրաշարժի հետևանքով բազմաթիվ երեխաներ զրկվեցին մորից: Իսկ մայրը, ընդհանրապես, երեխայի ներքին վստահությունն է: Երեխան, զրկվելով մորից, կորցնում է նաև վստահության զգացումը: Երեխաների մոտ

սոցիալական դաստիարակության ներդրման համար խնդիր է նաև այն, որ իրենց ծնողները, ովքեր անցել են 1988 թ. երկրաշարժի սարսափները և կորցրել իրենց ծնողներին, չունեն կամ զրկված էին ընտանիքի մոդելի գաղափարից և իրենք էլ ունեն հոգեբանական լուրջ և չլուծված խնդիրներ: Ահա այսպիսի, հոգեբանական լուրջ խնդիրներ ունեցող երեխաներն էլ դարձան ծնողներ, սրանից բացի ավելացան սոցիալական և տնտեսական խնդիրները, որոնք տարիների ընթացքում միայն վատթարանում էին: Այսպիսի արտաքին հզոր ազդակների ճնշման պատճառով ծնողները բացարձականապես բարձիթող են անում երեխայի սոցիալական դաստիարակության խնդիրները՝ թողնելով դրանք դպրոցին կամ էլ ամբողջովին անուշադրության են մատնում:

Ծնողների առջև ծառացած է հիմնականում երեխաներին կերակրելու և հագցնելու խնդիրը և վերջիններս միայն հոգում են դրանց ապահովումը՝ բարձիթողի անելով երեխաների մյուս հիմնախնդիրները: Փորձագետներից մեկը նշում է, որ անապահով ընտանիքներում երեխաները թերսնված են, նրանց ամենաառաջնային կարիքներն անգամ բավարարված չեն, ծնողները չեն կարողանում արձագանքել երեխայի պահանջմունքներին, երեխաները հիմնականում ապրում են մեկ ծնողի հետ, հաճախ ստիպված առնչվում են գիշերօթիկ հաստատությունների հետ: Ընտանիքի բարեկեցության համար գումար հայթայթելու անկարողությունից, ծանր սոցիալական պայմաններում գտնվող ծնողը մոռանում է սեփական երեխայի մասին: Այս տեսանկյունից կարևոր է դառնում երեխայի կրթական հարմարվողականությունը: [221]

[221] *Ա. Թաղևոսյան, Կրթությունը և ընտանիքը Գյումրիում վերջին ութ տարիների ընթացքում, ՇՊՄԺ հանրապետական երկրորդ գիտաժողով, զեկուցումների թեզիսներ, Գյումրի, 1996, էջ 82-84:*

Վերջին տարիներին Հայաստանում սոցիալական վիճակում կատարված փոփոխությունները հանգեցրին կրթական համալիրի նյութատնտեսական մակարդակի կտրուկ անկմանը: Ուսուցիչների խավը այս տարիներին հանրապետության սոցիալական սանդղակում սահեց ամենաստորին աստիճանի, ինչը չէր կարող չազդել նաև աշակերտների փոխհարաբերությունների, մասնավորապես ուսուցչի հեղինակության վրա: Ուսուցչի հեղինակազրկումը ուղեկցվեց նրա ազդեցության թուլացմամբ, հետևաբար և դաստիարակության գործընթացի անկմամբ: Դպրոցի գիտելիքի և դաստիարակության համակարգերում արմատավորված կարծրատիպերի քայքայումը տարբեր արձագանքներ առաջացրեց հանրության մեջ: Շատերի մոտ դա տագնապն է աճող սերնդի ապագայի նկատմամբ: Բնակչության մեծամասնությունը բացասաբար է վերաբերվում դպրոցական տարիքի երեխաների՝ չարչիությամբ, մանր առևտրով ու բեռնակրությամբ զբաղվելու երևույթին՝ դա համարելով անպատվաբեր երևույթ: Նկատի ունենալով մանր առևտրականների անհրապույր, անկիրթ ու գռեհիկ միջավայրը՝ ծնողների մեծ մասը սխալ է համարում երեխայի շփումը այդ միջավայրի հետ: Հայ ընտանիքների մեծամասնությունը դպրոցը համարում է երեխայի դաստիարակության կարևորագույն օղակը: Դպրոցի դերը ժողովուրդը հակադրում է փողոցային դաստիարակությանը, այնպես, ինչպես բարին՝ չարին, լավը՝ վատին, զարգացումը՝ կործանումին:

Սակայն կան նաև ծնողներ, որ արգելում են երեխաներին հաճախել դպրոց: Դա բացասաբար է ազդում նրանց սոցիալականացման վրա, քանի որ դպրոցը տալիս է երեխային գիտելիքներ իր սոցիալական վարքի, էթիկայի, արժեհամակարգի վերաբերյալ: Իսկ եթե ծնողն արգելում է երեխային հաճախել դպրոց, ապա նա հայտնվում է բարձիթողի վիճակում և արդյունքում ցուցաբերում հակասոցիալական վարք:

Երեխաների սոցիալ-հոգեբանական խնդիրների պատճառ է դառնում նաև դպրոցում առկա անտարբեր, հաճախ նաև արհամարհական վերաբերմունքը: Այդ անտարբերությունն առկա է ոչ միայն աշակերտների, նրանց ծնողների կողմից, այլև ուսուցիչների, ընդհուպ նաև տնօրենի կողմից: Պատճառը դպրոցում ստեղծված անառողջ հարաբերություններն են ուսուցչի և աշակերտների մեջ. որքան էլ լավ առաջադիմություն ցուցաբերի սովորողը, միևնույնն է, երբ ծնողը չի ներկայանում դպրոց համապատասխան ձևով՝ նվերներ, ծաղիկներ և այլն, ապա այս ամենն անդրադառնում է երեխայի նկատմամբ վերաբերմունքի և նրա գնահատականների վրա: Այլ խնդիր է նաև, երբ ուսուցիչը պարտադրում է բոլորին արտաժամյա պարապմունքների համար վճարել, սակայն ծնողը չունի այդ գումարը:

Սոցիալ-տնտեսական ծանր պայմանների հետևանք են նաև կրթական ոլորտում առկա այլ խնդիրները: Իրականությունն այն է, որ դպրոցներում միևնույն դասարանում կարող են սովորել թե՛ աղքատ ընտանիքի երեխան և թե՛ ապահովված ընտանիքի երեխան: Դպրոց չհաճախող երեխաները չեն խուսափում ուսումից, ավելին՝ յուրաքանչյուր երեխա ցանկանում է լինել կրթված, գրագետ, լավ մարդ: Սակայն երբ աղքատ ընտանիքի երեխան մտնում է դասարան, տեսնում է իր դասընկերոջ լավ հագուստը, համեմատում իր աղքատիկ հագուկապի հետ ու իր քաղցած կյանքի, զգում է իրենց մեջ ընկած սոցիալական իսկայական տարբերությունները, այլևս չի ցանկանում դպրոց գնալ:

Նույն պրոբլեմները կան նաև քոլեջներում և այլ նմանատիպ կրթական հաստատություններում, մեծ է այնպիսի երեխաների քանակը, որոնք թողնում են ուսումը ու մեկնում են արտասահման (հիմնականում ՌԴ) ծանր սոցիալական պայմանների պատճառով:

*«Կրթության պրոբլեմներից մեկն այն է, որ ընտանիքներում պակասել է սերը ուսման նկատմամբ, գրքի նկատմամբ: Երեխաների*

*հետ տարվող աշխատանքները նուրբ պետք է լինեն, սակայն զբաղվողների մեծ մասը հեռու է մանկավարժությունից: Կրթության ոլորտում էքսպերիմենտները, ոլորտի քաղաքականացումը և բիզնեսացումը բերեց կրության որակի անկման: Կրթությունը մղվեց երկրորդ պլան, ավելի կարևոր դարձան ոչ թե գիտելիքները, այլ անձնական կապերը՝ հետագա կյանքը ապահովելու համար»:*[222]

Երեխան ընտանիքի հայելին է, նա կրկնօրինակում և արտաբերում է այն վարքագիծը, որը տեսնում է իր ծնողների կողմից: Մարդը հակված է ընկալել վարքագիծը, այլ ոչ թե խոսքերը: Երեխաների՝ ուսման նկատմամբ վերաբերմունքը կախված է դաստիարակությունից: Եթե նախկինում դաստիարակության սուբյեկտները ընտանիքը, դպրոցը և մանկական հիմնարկներն էին, ապա ներկայումս դրանք երկրորդ պլան են մղված հեռուստատեսության, համացանցի, սոցիալական ցանցերի, կասկածելի որակի ակումբների և այլ հաստատությունների կողմից:

Ծնողը և դպրոցը չեն կարող անընդհատ վերահսկել երեխայի հետաքրքրությունները և նախասիրությունները, բայց պետք է կարողանան ճիշտ աշխարհայացք ու արժեհամակարգ ձևավորել, որոնք կապահովեն երեխայի ճիշտ ընտրությունը: Այսինքն, երեխաների ճիշտ սոցիալականացման համար անհրաժեշտ է իրականացնել կրթական ծրագրեր նաև ծնողների գիտակցական մակարդակը բարձրացնելու նպատակով, այլ ոչ թե ասել, թե աղքատությունը պատճառն է անգրագիտության:Շատ հաճախ այդ անգրագիտության պատճառով ոտնահարվում են նաև երեխաների իրավունքները:

Սոցիալապես անապահով ընտանիքների գերխնդիրը թերևս սոցիալական ինտեգրացիայի չափազանց ցածր մակարդակն է: Երե-

---

*[222] ԴԱՆ, փորձագետ Սեյրան Մարտիրոսյան, Գյումրի, 2016:*

խան ծննդյան առաջին վայրկյանից տեսնում է անբարենպաստ պայմաններ, աղքատություն: Շրջապատի համար նա աղքատ ընտանիքի երեխա է, ով ունի բազմաթիվ խնդիրներ: Երեխան մեծանում է իր փակ միջավայրում և գրեթե չի շփվում ոչ ոքի հետ: Նրա շփումները սահմանափակ են, կապերը՝ խաթարված:

Երեխայի սոցիալականացումն իրականանում է մի միջավայրում, որտեղ չեն բավարարվում երեխայի ոչ միայն առաջնային պահանջմունքները (սնունդ,հագուստ և այլն), այլև նա չունի պաշտպանվածության զգացում, չի ստանում սեր, խնամք և իր անձի նկատմամբ հարգալից վերաբերմունք: Հետագայում երեխան հայտնվում է դպրոցում, որտեղ սոցիալական բնեռացումը օրեցօր աճում է, և երեխան համարվում է այն խմբի ներկայացուցիչ, որը մշտապես պիտակավորված է, անտարբերության է մատնված: Այս խնդիրների հետևանք է դառնում ոչ լիարժեք անձի ձևավորումը և զարգացումը: Ինչպես տեսնում ենք, այն կոնկրետ միկրոմիջավայրը, որտեղ գտնվում են երեխաներն ու պատանիները, կողմնորոշիչ դեր է կատարում սոցիալական փոխգործունեության այն նորմերի վերարտադրման համար, որոնք հակասում են սոցիումի մշակույթին:

Աղքատ երեխաներով հետաքրքրվող մարդիկ շատ քիչ են: Չնայած պետության կողմից իրականացվող աջակցությանը, երեխաների կենսապահովման (հագուստ, սնունդ) սոցիալ-մշակութային, առողջապահական և այլ խնդիրներով զբաղվում են հատկապես բարեգործական հասարակական կազմակերպությունները:

Այսպիսով կարելի է փաստել, որ ընտանիքը, կրթական հաստատությունները, ռեֆերենտ խմբերը, ԶԼՄ-ները, ապրելավայրն են ձևավորում երեխաների մեջ հասարակության կողմից ընդունված նորմերի ու արժեքների յուրացման արտաքին պահանջը-անհրաժեշտությունը, որոնք էլ միաժամանակ կարող են վերծվել նաև հզոր հակաադապտացիոն գործոնի:

***Առողջություն.*** Աղետը վերապրած բնակչության հարմարվողականության աստիճանը կարելի է գնահատել նաև առողջապահական ոլորտի նկատմամբ մարդկանց վերաբերմունքով, քանի որ այստեղ արտացոլվում են սոցիալ-տնտեսական պայմաններից բխող բազմաթիվ երևույթներ: Առողջապահական խնդիրների լուծումը պետք է դիտարկել երկու կտրվածքով՝ երկրաշարժից հետո, երբ ակնթարթային աղետը մարդկանց մոտ առաջացրեց ամենատարբեր բնույթի ծանր, բազմակի և զուգորդված վնասվածքներ և դրան հաջորդած տասնամյակներին, երբ սոցիոմշակութային փոփոխությունների արդյունքում առաջացան առողջական այլ բնույթի խնդիրներ:

Աղետից անմիջապես հետո հազարավոր բժիշկներ ժամանեցին ԽՍՀՄ բոլոր հանրապետություններից ու արտասահմանից՝ իրենց հետ բերելով դեղորայք, բժշկական սարքավորումներ, դոնորական արյուն: Նրանք փլատակների տակից հանեցին ավելի քան 40 հազար մարդու, փրկեցին 16 հազարի կյանքը: Հազարավոր խեղված մարդիկ, այդ թվում երեխաներ ու պատանիներ բուժման նպատակով ուղարկվեցին ԽՍՀՄ և արտասահմանյան տարբեր բուժհաստատություններ:[223]

Հանրապետության առողջապահական հիմնարկները ևս իրենց լուրջ ներդրումն ունեցան այդ գործում: Բուժական գործունեությանը զուգընթաց, որն ընդգրկեց գրեթե ողջ գիտական բժշկական հանրությունը, առաջ քաշվեցին կարևոր հարցեր, գիտական նոր մշակումներ, որոնք համապատասխանում էին գործնական բժշկության պահանջներին՝ օգնելու երկրաշարժից տուժածների բուժմանը և բժշկա-սոցիալական վերակառուցմանը:

---

*[223] Ռ. Ազիզբեկյան, Սպիտակի երկրաշարժը և համաշխարհային հանրության օգնությունը (1988-1990 թթ.), ՇՀՀԿ Գիտական աշխատություններ, VII, Գյումրի, 2004, էջ 169:*

Հետագա տարիներին, երբ լուծվեցին աղետի հետևանքով առողջական առաջնային խնդիրները, առաջ եկան նոր հիմնախնդիրներ, որոնց լուծումը թողնվեց բնակչության վրա:

2002թ. փետրվար-մարտ ամիսներին Գյումրիում անցկացվել էր սոցիոլոգիական հետազոտություն, որի նպատակն էր բացահայտել բնակչության առողջական վիճակը, մատուցվող առողջապահական ծառայությունների քանակն ու որակը, դրանց մատչելիությունը և գնահատման չափանիշները: Նկատի ունենալով ներկայացված խնդրի ուսումնասիրման կարևորությունը, հաշվի էին առնվել նաև հարցվողների սննդի, դեղորայքի, ջրի, բնակարանային և սանիտարահիգիենիկ պայմանների նկատմամբ ունեցած բավարարվածության չափը:[224]

Հարցման արդյունքները ցույց են տվել, որ Գյումրի քաղաքի բնակչության մեծ մասի ցածր կենսամակարդակը, սննդամթերքի անհրաժեշտ տեսականու ոչ բավարար ապահովվածությունը, սանիտարահիգիենիկ նվազագույն նորմերին չհամապատասխանող կենցաղային պայմանները, բարոյահոգեբանական լարվածությունը և այլ ազդակներ, իրենց անմիջական ազդեցությունն են թողել բնակչության մեջ հիվանդների քանակի ավելացման վրա: Հարցվողների 86,1 %-ը նշել է, որ առողջական վիճակի վատթարացման ժամանակ ընտանիքի անդամները բժշկի չեն դիմել, իսկ որպես պատճառ նշել են տնտեսական ծանր պայմանները, անհրաժեշտ ֆինանսների բացակայությունը և սպասարկման բարձր գները: Նույնիսկ պետական անվճար բուժսպասարկման դեպքում հիվանդը պարտադրված է որոշակի վճարումներ կատարել բուժման համար:

---

[224] *Լ. Վարդանյան, Թ. Զաքարյան, Գյումրի քաղաքի բնակչության առողջության և սոցիալական առաջնային հիմնախնդիրները /ըստ 2002 թ. սոցիոլոգիալան հարցումների / ՇՊՄԺ հանրապետական հինգերորդ գիտաժողով, Զեկուցումների հիմնադրույթներ/, Գյումրի, 2002, էջ 50-51:*

Բժշկական ծառայություններից օգտվելու բնակչության հնարավորությունները կապված են ընտանիքի սոցիալական պաշտպանվածության աստիճանից: Մարդկանց գերակշռող մեծամասնությունը հիվանդանալու դեպքում դիմում է ծանոթ բժիշկներին կամ ժողովրդական բժշկության հմտություններին, օգնություն է ակնկալում Հայաստանում և արտերկրում ապրող բարեկամ-ազգականներից, հումանիտար, բարեգործական և հասարակական կազմակերպություններից: Իսկ առողջության պահպանման պետական և մասնավոր ծառայություններից օգտվողների քանակը բավականին ցածր է: Գյումրիի բանասացներից մեկն այս մասին ասում է. *«Ոչ մի վստահություն չկար առողջապահական ոչ մի հաստատության հանդեպ, հետո հայտնվեց «Բժիշկներ առանց սահմանների» կազմակերպությունը, այս դրսի բժիշկների նկատմամբ մեծ վստահություն կար, այդուհանդերձ հենց բնակչության մեջ մինչև օրս էլ բժիշկների նկատմամբ վստահություն չկա: Դեռևս մարդիկ ապրում են այն հին համոզմունքներով, որ մարմինը ինքը իրեն կապաքինի կամ էլ տնական, ժողովրդից եկող հայտնի բուժանյութերին են վստահում: Մարդիկ դիմում են բժիշկներին, երբ դանակը ոսկորին է հասնում, դրա պատճառը ոչ միայն անվստահությունն է, այլև տարրական՝ ֆինանսական միջոցների բացակայությունն է, ծայրահեղ դեպքում դիմում են ամբողջ ազգության օգնությանը ու հարազատներին, կամ էլ բարեգործներին ու բացում են բանկային հաշիվներ»:*[225]

Հիվանդությունների աճին նպաստող գործոններից են նաև սանիտարահիգիենիկ նվազագույն նորմերին չհամապատասխանող բնակարանների ընդհանուր և կենցաղային վատթար պայմանները, որտեղ առանձնահատուկ նշանակություն ունի բնակչության կողմից

[225] *ԴԱՆ, Գյումրի, 2015:*

օգտագործվող խմելու ջրի քանակը և որակը: Վերը նշված սոցհարցման տվյալներով, հարցվողների 78,7%-ը բավարարված չէ ջրի մատակարարումից, որի քանակն ու որակը չի ապահովում նրանց անձնական և կենցաղային հիգիենայի տարրական կանոնների պահպանումը, ինչը առողջական և սանիտարահիգիենիկ լուրջ խնդիրների պատճառ է հանդիսանում:[226]

Աղետի գոտու բնակչության մի զգալի մասը դեռևս անօթևան է և բնակվում է տնակներում, որտեղ պայմանները սարսափելի են՝ հատկապես աշնան և ձմռան ամիսներին: Բացակայում են տարրական կենսական անհրաժեշտության պայմանները: Ժամանակավոր կացարանում ապրողը չի կարողանում հոգալ վառելիքի խնդիրը, և տնակներում անգամ բաժակում լցված ջուրը ձմռան ամիսներին սառչում է:

Շիրակ կենտրոն ՀԿ նախագահ, փորձագետ Վ. Թումասյանը ներկայացրեց մի տխուր վիճակագրություն, նշելով. *«Հիմա գրեթե յուրաքանչյուր տնակում հիվանդ երեխա կա, որովհետև այդ տնակները դրվել են երկու-երեք տարվա համար, և ոչ ոք չէր նախատեսում, որ մարդիկ այդտեղ պետք է 28 տարի ապրեին: Եթե նորմալ իշխանություններ ունենայինք, ապա իրենք կհասկանային, որ այդ տնակային ավանները պետք է շտապ վերացնել, տնակում ապրող տղաներից շատերը բանակ չեն զորակոչվում տարատեսակ հիվանդությունների պատճառով: Երիտասարդները հաճախ գնում են բանակ՝ արդեն իսկ բազմաթիվ հիվանդություններ ունենալով: Երեխաները ծնվում են բազմաթիվ արատներով, այնուհետև ծնողների ֆինանսական անկարողության, անբարենպաստ պայմանների արդյունքում հանրապետությունում աճում է մանկամահացությունը»*:[227]

---

[226] *Լ. Վարդանյան, Թ. Զաքարյան, Գյումրի քաղաքի բնակչության առողջության և սոցիալական առաջնային հիմնախնդիրները…, էջ 51:*

[227] *ԴԱՆ, փորձագետ Վահան Թումասյան, Գյումրի, 2016:*

Փորձագետ բժիշկ Ստեփան Մելքոնյանը ցավով նշում է. *«Դեռ խորհրդային տարիներին բուժօգնությունն անվճար էր և բոլորը՝ ապահով թե անապահով, չափահաս թե անչափահաս անխտիր օգտվել են անվճար բուժօգնությունից: Այսօր մեր հասարակությունում, նույնիսկ երեխաների և անչափահասների շրջանում կան այնպիսի հիվանդություններ, որոնցից կարելի էր խուսափել ժամանակին կանխարգելման կամ համապատասխան բուժման դեպքում»:*[228] Անվճար բուժօգնությունը և անվճար կրթությունը առավելագույնս ապահովում են հասարակության լիարժեք անդամ հանդիսացող անձի ձևավորումը:

Թերսնվածությունը, կյանքի դժվար պայմանները հանգեցնում են անառողջ սերնդի ձևավորմանը: Փորձագետներից մեկը նշել է, որ անապահով ընտանիքներում 0-5 տարեկան երեխաները հիմնականում ունենում են արհեստական սննդի և դեղորայքի պակաս: Այս ընտանիքները անհրաժեշտության դեպքում չեն կարող, ի վիճակի չեն գնել արհեստական սնունդ, կամ հիվանդությունների դեպքում՝ դեղորայք: Համաձայն ոլորտի փորձագետի կարծիքի՝ պետությունն ապահովում է 0-9 տարեկան երեխաների, սոցիալապես անապահով, ծնողազուրկ, հաշմանդամ և այլ արտոնյալ պայմաններում գտնվող երեխաների դեղորայքը, սակայն այդ դեղորայքի չափաքանակն այնքան սակավ է, որ չի բավականացնում բոլոր ընտանիքներին: Ֆոկուս-խմբի մասնակիցներից երկուսը նշում են, որ պետական կառույցներից իրենք ոչ մի օգնություն չեն ստանում: Նրանք երբևէ չեն ստացել անվճար դեղորայք, անգամ ծանր վիճակում երեխային հիվանդանոց տեղափոխելու դեպքում չեն ստանում համապատասխան բուժօգնություն: Խմբի անդամներից մեկի երեխան կարիք ուներ շտապ վիրահատության, սակայն նա չէր կարողանում

---

[228] *ԴԱՆ, փորձագետ Ստեփան Մելքոնյան, Գյումրի, 2015:*

անգամ մուտք գործել ՏԻՄ կառույց, որպեսզի ստանար որևէ աջակցություն:

Բարվոք վիճակում չէ նաև մեծահասակների առողջության մակարդակի ցուցիչը: Բնակչության առողջական վիճակի վրա ազդող սոցիալ-տնտեսական առաջնային գործոններից են բնակչության մեծ գործազրկությունը, ընտանեկան փոքրիկ զամբյուղը, հոգեբանական ոչ առույգ վիճակը, այսինքն՝ ծանր սթրեսները, ինչպես նաև առօրյա սթրեսները, որ մարդն ապրում է սնունդ չլինելու, միջոցներ չունենալու պատճառով: Գյումրիում կատարված բժշկաաշխարհագրական վերլուծությունից պարզվել է, որ քաղաքում 2002թ. տիրապետող են դարձել սիրտ-անոթային, ուռուցքային, նյարդային համակարգի և այլ հիվանդություններ: Մեծացել է մահացությունների թիվը սրտի իշեմիկ հիվանդություններից. 1985թ. համեմատությամբ մահացության գործակիցը մեծացել է 2 անգամ: [229]

Իրավիճակը նույնն է նաև գյուղերում, որտեղ առաջնային են ոչ միայն մանկական, այլև կանանց առողջական խնդիրները: Գյումրիի «Կանայք հանուն զարգացման» ՀԿ-ը 2000-2008թթ. իրականացրել է «Առողջապահական հարցերին կանանց մասնակցության խթանում» ծրագիրը Շիրակի մարզի գյուղերում: Իրավիճակը ավելի ակնառու ներկայացնելու համար մեջբերում ենք կազմակերպության նախագահ Գոհար Մարկոսյանի խոսքն ամբողջությամբ. *«Ծրագիրը խիստ արդիական էր, քանի որ երկրաշարժի հետևանքով ի թիվս բազմաթիվ սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների առաջ եկան նաև մինչ այդ երբևէ չհանդիպած առողջապահական հիմնախնդիրներ, որոնք իրենց ցայտուն արտահայտությունը ստացան առանձ-*

[229] *Ա.Վալեսյան, Կյանքի որակը Գյումրիում, ՇՊՄԺ հանրապետական հինգերորդ գիտաժողով, Զեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, 2002, էջ 52-53:*

*նապես Հյուսիսային Հայաստանի հեռավոր և սահմանամերձ գյուղերում: Գյուղեր, որտեղ ոչ միայն չկային տարրական սոցիալ-կենցաղային պայմաններ, որտեղ տիրում էր համատարած աղքատությունը, որտեղ տղամարդկանց 80%-ից ավելին տարվա 11 ամիսները գտնվում էին արտագնա աշխատանքում, այլ նաև նրանց մեծ մասում անգամ չկային բուժկետեր, հաճախ նույնիսկ չկար բուժքույր, որին կարողանային դիմել կանայք անհրաժեշտության դեպքում, իսկ Գյումրի կամ մոտակա շրջկենտրոն տանող ճանապարհները համարյա 6 ամիս փակ էին: Գյուղերում մեծ արագությամբ սկսել էր գլուխ բարձրացնել քոսը, տուբերկուլյոզը, մաշկավեներական և սնկային հիվանդությունները: Սոցիալական հիմք ունեցող այս վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելը չէր պահանջում ֆինանսական մեծ միջոցներ, այն կարելի էր հաջողությամբ իրականացնել ազգաբնակչության առողջապահական գիտելիքների բարձրացման միջոցով: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ընտանիքի անդամների առողջության պահպանման հոգսը և պատասխանատվությունը հիմնականում ընկած է կանանց ուսերին՝ որոշվեց գյուղերի բուժկետերում հիմնել «Առողջ ընտանիք» կենտրոններ՝ հագեցված դիդակտիկ նյութերով, բուկլետներով, վերոնշյալ հիվանդությունների և դրանց տարածման կանխման մասին հանրամատչելի գրականությամբ: Կենտրոններում բարձր որակավորում ունեցող բժիշկ-մասնագետների կողմից պարբերաբար անցկացվում էին զրույցներ, կարիքի դեպքում տրվում անհրաժեշտ բժշկական խորհրդատվություն տեղերում, իսկ եթե հարկ էր լինում գործիքային զննման կամ ավելի նեղ մասնագիտական բժշկական քննության, ուղարկվում էին Գյումրու Էնրիկո Մատեի անվ. պոլիկլինիկա: Մեկ տարվա ընթացքում ծրագրին մասնակցեցին 20 գյուղի 500-ից ավելի կանայք, իսկ հետո ընդլայնվեց ծրագրի աշխարհագրությունը՝ ընդգրկելով 40 գյուղ, 2000-ից ավելի կանայք, ավելի քան 60 բուժքույր:*

*Ավելացան նաև զրույցների թեմաները՝ «Վերարտադրողական առողջություն և Ձեռքբերովի իմունային անբավարարություն»: Ինչու՞ հենց այս թեմաները, որովհետև ծրագրի ընթացքում անցկացված հարցումներից, զրույցների ընթացքում բարձրացված հարցերից պարզ դարձավ, թե որքան է հուզում կանանց վերարտադրողական առողջության և ՁԻԱՀ-ի հարցերը, որ նրանք իրենց մեջ հաղթահարելով ազգային մենթալիտետին և գյուղի կնոջը բնորոշ կարծրատիպերը, փորձում էին մասնագետներից ստանալ իրենց հուզող հարցերի պատասխանները: Առողջապահական ծրագրերի ընթացքում մենք համագործակցում էինք «Բժիշկներ առանց սահմանների»(MSF) հունական կազմակերպության հետ: Կազմակերպության բժիշկ-վեներոլոգները մեզ հետ լինում էին գյուղերում, մասնակցում սեռավարակիչ հիվանդությունների և ՁԻԱՀ-ի մասին զրույցներին, ինֆորմացիա տարածում Գյումրիում գործող «Ինֆորմացիոն կենտրոնի» և նրա գործունեության մասին: Կենտրոն, ուր շատ կանայք հետագայում դիմեցին և հնարավորություն ստացան ոչ միայն գաղտնիության ապահովության պայմաններում անվճար բուժվել, այլև պարբերաբար հակաբեղմնավորիչ միջոցներ ստանալ: Գյուղերում մեր իրականացրած առողջապահական ծրագրի ամենամեծ հաջողությունը եղավ այն, որ փոխվեց կանանց մտածելակերպը: Նրանք հասկացան, որ այսօր իրենք մեծ պատասխանատվություն ունեն իրենց և իրենց ընտանիքի անդամների առողջության պահպանման գործում, որ արդեն անցել են այն ժամանակները, երբ բուժքույրը կամ բժիշկը «տաս անգամ» կթակեն դուռը և քեզ կհրավիրեն բուժկետ երեխային հերթական պատվաստման բերելու կամ քեզ անվճար զոնե տարին մեկ անգամ կուղարկեն ռենտգեն և գինեկոլոգիական ստուգման, որ դու պետք է լինես ավելի զգոն, իմանաս, որ չնայած ապրում ես հեռավոր գյուղում, բայց ՁԻԱՀ կոչվող «դարի հիվանդությունը» կարող է*

*նաև քեզ հասնել: Ծրագրի ավարտին մենք ուրախությամբ արձանագրեցինք, որ գյուղերում արդեն վերացել է քոսը, սնկային հիվանդությունները, որ կանայք սեռավարակիչ հիվանդությունների նշաններ ունենալու դեպքում չեն վարանում դիմել բժշկի, որ ընտանիքի պլանավորումը նրանց համար միայն հղիության արհեստական ընդհատումը չէ»:*[230]

## *Ազգակցական հարաբերությունները*

Ստեղծված պայմաններում, երբ պետությունն իր սոցիալական ծառայությունների հետ ի վիճակի չէ ուշադրություն դարձնել և արժանի լուծում տալ մարդու պաշտպանության խնդիրներին կյանքի տարբեր բնագավառներում, օգնելու երեխաներին ու ծերերին կամ ծանր իրավիճակում հայտնված մարդկանց, դրացիական ու ազգակցական համայնքն է դառնում ընտանիքի գոյատևման ու անտանելի կենսապայմաններին հարմարվելու կարևոր մեխանիզմներից մեկը: Ազգակցական, համայնական, հարևանական սերտ կապերը այսօր էլ շարունակում են մնալ այն արժեքավոր «սոցիալական կապիտալը», որն օգնում է հասարակության խոցելի խմբերին գոյատևել սոցիալական ցնցումների պայմաններում՝ դարձնելով նրանց առավել կայուն առաջացած փոփոխությունների շրջանում:

Ինչպես վկայում են դաշտային նյութերն ու սոցհարցումների արդյունքները, ընտանիքը, ազգակցական և համայնական խմբերը շարունակում են մնալ հասարակության սոցիալական կյանքի կա-

[230] *ԴԱՆ, փորձագետ Գոհար Մարկոսյան, Գյումրի, 2016:*

բնոր օղակները: Դրանցում շարունակվում են պահպանվել ավանդական հարաբերությունների բազմաթիվ ձևեր, չնայած նրան, որ հայոց սոցիանորմատիվ մշակույթի այս ոլորտում ևս կատարվել են մեծ փոփոխություններ: Դրանք կապված են առաջին հերթին ներընտանեկան հարաբերությունների «դեմոկրատացման» և «ազատականացման» ու դրա արդյունքում կանանց և ցածր տարիքային խմբերի դերի ու կարգավիճակի բարձրացման, առօրյա, որոշ դեպքերում նաև տոնածիսական կյանքում սեռատարիքային տարբեր խմբերի նախկին սահմանափակումների թուլացման կամ վերացման հետ և այլն:

Ինչպես վերը ներկայացվեց, ազգակցական փոխօգնությունը հատկապես մեծ չափեր ընդունեց աղետից անմիջապես հետո, երբ անտուն մնացած, կորուստ ունեցող հարազատներին առաջինը ձեռք մեկնեցին մերձավորները: Հետագայում այդ օգնության բնույթը փոխվեց, երբ առաջ եկան սոցիալ-տնտեսական նոր հիմնախնդիրներ: Մոտ և հեռու ազգականների համագործակցությունն ու փոխօգնությունը կարևոր գործոն դարձան անցումային հասարակության ճգնաժամի պայմաններում ընտանիքի կենսունակության, հոգևոր և նյութական պահանջների բավարարման համար: Այդ օգնությունն առաջին հերթին դրսևորվեց հարազատներին նյութապես ապահովվելու նպատակով նրանց օժանդակելու տարբեր ձևերով: Հասարակական օգնության ամենատարածված ձևը նվիրատվությունն է: Սակայն օգնությունների հասարակական սանդղակում ոչ այնքան գումարով կամ ընծայով աջակցելն է գնահատվում, ինչքան աշխատանքի տեղավորելու, ինքնուրույն վաստակելու հնարավորություն ստեղծելը:

Համաձայն Գյումրիում անցկացված հարցումների՝ ազգականների հետ համագործակցելու և նրանց հետ «գործ բացելու» ցանկություն են հայտնել 1980-ական թթ. հարցվողների 24%-ը, իսկ 1990-ական թթ.՝ 40%-ը: Վարչական մարմինների հետ գործ ունենալիս

հարազատների օգնությանն են դիմում 1980-ական թթ.՝ 25%-ը, իսկ 1990-ականներին՝ 48%-ը:[231]

Ազգակցական, ընկերական գործոնը մեծ է հատկապես աշխատանքային արտագաղթի պարագայում: Ինչպես նշում է փորձագետներից մեկը. *«Երբ որևէ մեկը հանրապետությունից դուրս գործ էր դնում ու հաջողությունների էր հասնում, իր բարեկամին, հարազատին կանչում էր ու այդ բարեկամությունը՝ հարազատությունը հավաքվում էր այնտեղ: Այդպիսով ստեղծվում էին ազգակցական-համայնքային ինքնուրույն կառույցներ ՌԴ տարբեր բնակավայրերում ու տարածաշրջաններում: Օրինակ, ասենք Ոսկեհասկցի գյուղացիները գնում են հեռավոր արևելք՝ Սախալին, Ազատանից ու Մարմաշենից գնում են Յակուտսկ, գյումրեցիները վերջերս շատ են գնում Կրասնոդարի մարզ, Դոնի-Ռոստով, Արմավիր, Սև ծովի ափամերձ շրջանները, նաև Աբխազիա են մեկնում»*:[232]

Օգնության ցանկացած համակարգ, լինի այն ընտանեկան, հասարակական կամ պետական, աջակցության սահմանափակ ժամանակահատված է ենթադրում, որի ընթացքում կարիքավոր ընտանիքը պետք է ինքնապահովման որևէ միջոց գտնի: Եթե համեմատենք ճգնաժամի սկզբում իրականացվող փոխօգնության չափերը և բնույթը, կտեսնենք, որ այս ժամանակահատվածում ավանդական փոխօգնության կանոնները լավագույնս էին գործում: 1990-ականների սկզբում ամրացել էին քաղաքի և գյուղի, Հայաստանում և արտասահմանում ապրողների բարեկամական կապերը: Հիշենք հարևանների, հեռու ու մոտ բարեկամների հետ մի վառարանի շուրջ անցկացրած մութ ձմեռները: Դեռ գործում էր «դժբախտությունը համախմբում է» սկզբունքը: Բերենք մի օրինակ. *«Այդ ժամանակ շատերը,*

---

[231] *Թ.Զաքարյան, Գյումրիի ներընտանեկան և ազգակցական փոխհարաբերությունների մի քանի հարցեր, էջ 211:*

[232] *ԴԱՆ, փորձագետ Արտաշես Բոյաջյան, Գյումրի, 2016:*

*որոնք ապրում էին գյուղում, քաղաքում սովորելու կամ աշխատելու դեպքում գալիս և մնում էին իրենց հարազատների տանը: Մենք անձամբ այդ առիթով լրացուցիչ մահճակալներ էինք դրել, սկզբից մեզ համար էլ էր դժվար, բայց եղբայրս հետո մեր տնակի կողքին նոր շինություններ կառուցեց, ընդհուպ հասել էինք մինչև Մանուշյան փողոցի եզրը: Մարդիկ՝ հարազատները առհասարակ հավաքվում էին մի տեղ, մեր տուն շատ հաճախ գալիս էին և իմ և հարսիս հարազատները, նույնիսկ ընկերուհիս էր գալիս մեր տանը մնալու, քանի որ մեր ընտանիքում կային շատ ջերմ հարաբերություններ բոլորիս միջև: Ինչն էր հետաքրքիր, որ աղետից հետո մենք բոլորս դարձել էինք շատ հարեհաս, բոլորը օգնում էին իրար՝ նույնիսկ չլինելով մոտիկ բարեկամներ: Իրար շատ էին այցելում, իրար կարիքը շատ ունեին, թեպետ իրար հանդիպելիս անընդհատ նույն սյուժեն էին պատմում»:*[233]

Սակայն ճգնաժամային վարքը՝ իր մարդկային և հասարակական ուժերի այդպիսի լարվածությամբ, չէր կարող անվերջ տևել, բոլոր դեպքերում իրավիճակի կանոնակարգում պիտի կատարվեր: Ժամանակի հետ ոչ միայն մարդկային համբերությունն է սպառվում, այլև՝ օգնելու հնարավորությունը:

Դիտարկված փաստական նյութը թույլ է տալիս եզրակացնել, որ արտակարգ իրավիճակներում ընտանիքի սոցիոմշակութային հարմարվողության ընդհանրական մոդել չկա և չի կարող լինել: Այն բարդ, ներքնապես հակասական, տևական և բազմադեմ գործընթաց է: Ընտանիքի հարմարվողության տևողությունը, տեսակը, արդյունավետությունը, սոցիալական, տնտեսական, բարոյա-հոգեբանական, մշակութային հետևանքները մեծապես կախված են կոնկրետ

---

[233] *ԴԱՆ, Գյումրի, 2015:*

ընտանիքի սոցիալական կարգավիճակից (կրթական ցենզ, հասարակական դիրք, նյութական ապահովվածություն), ընտանիքի անդամների սոցիալականացման որակից՝ աշխարհայացքից, գործնական հմտություններից, արժեհամակարգից, հավակնությունների սանդղակից, պահանջմունքների ձևավորման ու բավարարման դրդապատճառներից և այլն:

Արտակարգ իրավիճակներում ընտանիքի սոցիոմշակութային ադապտացիան հիմնականում ընտանիքի ներքին խնդիրն է, բայց այն ավելի դյուրին ու արդյունավետ է ընթանում սատարող սուբյեկտների (պետություն, ՀԿ-ներ, բարեկամ–ազգականներ, հիմնադրամներ և այլն) թիրախային, խելամիտ աջակցության դեպքում: Մեր պարագայում այդպիսի աջակցություն չիրականացվեց և արտակարգ իրավիճակում հայտնվածները տարբերայնորեն փորձեցին լուծել խնդիրը՝ իրենց պատկերացումներին և հնարավորություններին համապատասխան:

Արտակարգ իրավիճակի պայմաններում օտար մշակութային արժեքների, գաղափարախոսությունների, ավանդույթների անարգել ներթափանցումը նպաստեցին ընտանիքի ինստիտուտի արընթաց ձևափոխմանը: Արմատապես փոխվեց հայ ընտանիքների մեծ մասի կառուցվածքը, ներքին փոխհարաբերությունները, տղամարդու և կնոջ դերա-վարքային կատարումները, հոգեբանությունը: Հայ հասարակության համար չափազանց կարևոր այս սոցիալական ինստիտուտի գոյությունն այսօր վտանգված է և լուրջ մտահոգությունների տեղիք է տալիս:

## ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

# ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐՆ ՈՒ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ

### *Մշակութային էկոլոգիայի և մշակութային ադապտացիայի խնդիրները հետաղետյան շրջանում*

Աղետի գոտու վերականգնումը չի սահմանափակվում միայն տնտեսական և սոցիալական խնդիրների լուծմամբ: Նոր իրադրությանը հարմարվելու գործընթացում պակաս կարևոր չեն մշակույթի էկոլոգիական գործառույթի դերն ու նշանակությունը: Բնական միջավայրի փոփոխություններին մշակույթի համապատասխանությունն ու ժառանգորդությունը համարվում է մարդու բնական, սոցիալական և տեխնոգեն վերափոխություններին հաջողությամբ ադապտացվելու անհրաժեշտ պայմաններն են՝ հասարակության առաջընթացի և կայուն զարգացման գրավականը:

Մշակութային ադապտացիայի երևույթի (ուրիշ արժեքային համակարգի, վարքի նորմերի ու կարծրատիպերի յուրացման գործընթացի) ուսումնասիրությունը առաջին հերթին բախվում է մարդկանց աշխարհընկալման տարբեր համակարգերի ու հայեցակարգերի համատեղելիության խնդրի հետ: Երկրորդ. ելնելով երևույթի գործընթացային բնույթից՝ հնարավոր է հետևել նոր գաղափարների փոխանցման ու յուրացման շարժընթացին և նախկին արժեքային համակարգի (կամ կյանքի իմաստի) վերակազմավորմանը: Երրորդ հերթին, թույլ է տալիս պարզել կամ վեր հանել սեփական սոցիոմշա-

կութային տարածության կառուցման և սեփական անձնային հատկանիշների ձևավորման գործում մարդու ակտիվության բնույթն ու մակարդակը:

Նոր արժեքների փնտրտուքը, նոր իմաստների բացատրությունը և նոր գաղափարների համադրումը դառնում են մարդկանց կենսափորձի կիրառման տարածքը: Ըստ այդմ նոր իրականության մեկնությունը դառնում է մշակութային հարմարվողականության գլխավոր գործիքը՝ դիտարկվելով որպես յուրաքանչյուր մշակույթի հիմնաստեղծ որակ: Վերջինիս էությունը մարդու կողմից սեփական կենսական տարածքի վերաձևավորման մեջ է: Ադապտացիոն գործընթացները, որոնք համաձայնեցնում են իրականությունն ու իրականության մոդելը, ապահովում են վստահության, կայունության և պաշտպանվածության զգացում, որոնք թույլ են տալիս մեկնաբանել պաշտոնապես ընդունված մոդելը (ձևանմուշը)՝ առաջացնելով այլընտրանքային ձևեր:

Այսպիսով, մենք կարող ենք ասել, որ հարմարվողականությունը կրում է ընդհանրական բնույթ՝ իր մեջ ներառելով ներքին և արտաքին հարաբերությունների վերաշտկումն ու վերակառուցումը. Արտաքին կապերի փոփոխությունն իր հետ բերում է ներքին կապերի փոփոխություն, ինչում էլ արտահայտվում է հարմարվողականության ուղղվածությունը: Այդ կապերի ինտեսիվությունը որոշում է հարմարվողականության գործընթացների շարժընթացը: Ժամանակակից մշակույթը պահանջում է բարձր շարժունակություն, որպեսզի հավասարակշռի, ներդաշնակեցնի այլընտրանքային՝ մեկը մյուսին հակասող, ժխտող ու իրար կլանող մոդելների ճնշումը:

Մշակույթն ունի հարմարողական համակարգեր և մեխանիզմներ, որոնք կայունացնում են վիճակը և պաշտպանում օտար մշակույթների անմիջական ազդեցություններից և որպես մեկուսաց-

ման արդյունք՝ լճացումից: Մարդիկ անցյալից ստացել են մշակութային մեծ ժառանգություն, սակայն հաճախ չեն կարողանում զգալ դրա ներկայությունն իրենց կենսական տարածքում և տրամադրության տակ ունենալով հարուստ հոգևոր-բարոյական փորձ, ի վիճակի չեն այն ճանաչել, յուրացնել և կիրառել՝ իրենց կենսամիջավայրը առավել լավ կազմակերպելու համար: Նոր, խիստ փոփոխված պայմաններում այդ փորձն արդեն չի կարող օգտագործվել նախկին ձևերով և չափերով: Նախկին արժեքներից ու նորմերից գիտակցված կամ չգիտակցված հրաժարումը, ինչպես ցույց է տվել մարդկության փորձը, հղի է ամենավտանգավոր հետևանքներով:[234]

Ադապտացիոն գործընթացները ներքին և արտաքին միջմշակութային փոխանակումներին օժանդակող, դրանք հավասարակշռության բերող գործընթացներ են: Հետևաբար դրանց արդյունավետ աշխատանքից է կախված մշակութային տարածության կայունությունն ու ամբողջականությունը: Հարմարվող մշակույթի կողմից նորի ընկալման արգելափակումը կամ այդ ուղղությամբ ոչ հետևողական քաղաքականությունը առաջ է բերում մի նոր խնդիր՝ սոցիալ-մշակութային մարգինալությունը: Դառնալով զանգվածային երևույթ՝ հասարակության մարգինալ խմբերը ստեղծում են սեփական հակամշակույթը՝ որպես այլընտրանք պաշտոնականին, որը ակնառու կերպով ցույց է տալիս սոցիալական և մշակութային տարածության պառակտվածությունը:[235] Դրա վառ օրինակ կարելի է համարել Գյումրու տնակային թաղամասերի մշակույթը: Մինչ օրս աղետի գոտու 4000-ից ավել ընտանիք ապրում է տնակներում, իսկ

---

[234] **Полторанина Г. В.** *Теоретические аспекты культурной адаптации, Автореферат на соискание ученой степени кандидата философских наук, СПб, 2001. http://www.dissercat.com/content/teoreticheskie-aspekty-kulturnoi adaptatsii#ixzz4vBFzfKjf*

[235] *Նույն տեղում:*

տնակային կյանքը հոգեբանության վրա ազդող գործոն է՝ տարիների ընթացքում բնակչության մեջ ձևավորելով յուրատեսակ «տնակային մշակույթ», որը ոչնչով չի համապատասխանում ազգային ավանդական մշակույթի՝ ժողովրդի մեջ եղած պատկերացումներին:

Մշակութային էկոլոգիայի խնդիրների մեջ առաջնային տեղ է գրավում շրջապատող միջավայրի նյութական, մշակութային-առարկայական ճիշտ և գեղագիտական կազմակերպումը: Իրեն շրջապատող տարածքում տարրական կարգուկանոնը և մաքրությունը նպաստում են մարդու մոտ լավ տրամադրության վերականգնմանն ու պահպանմանը, հոգեկան հավասարակշռության և ապագայի նկատմամբ վստահության ձևավորմանը: [236]

Հույզերն ու զգացմունքները էկոլոգիական գիտակցության գոյատևման միջոցներն են, ուստի կենսական միջավայրի կամ մշակութային լանդշաֆտի զգայական ընկալումը հիմնարար նշանակություն ունի մարդու համար: Տվյալ դեպքում ինքնազգացողությունը դիտվում է որպես աշխարհում մարդու գոյության համեմատաբար կայուն բնութագրիչ: Ինքնազգացողությունը ձևավորվում է հուզական հիշողության մեջ պարբերաբար կուտակվող անթիվ տպավորությունների և ապրումների ազդեցության տակ, որոնք առաջանում են կենսամիջավայրի յուրահատուկ բնութագրիչների ու բովանդակության հիման վրա: Որպես օրինակ բերենք նկարիչ Սամվել Գալստյանի զգայական հիշողությունը նախաերկրաշարժյան Գյումրու՝ Լենինականի մասին. *«Քաղա՞քն էր անտառի մեջ, թե՞ անտառը քաղաքի՝ դժվար է ասել... Մեր թաղում՝ Անտառավանում, երեք անտառային շերտ կար՝ հատուկ քաղաքը հյուսիսային քամիներից պաշտպանելու համար: Ծառրվանները անտառային այդ ֆոնի վրա*

---

[236] ***Бгажноков Б. Х.***, *Экофутуризм и проблемы этической рационализации жизненной среды /Адаптация народов и культур к изменениям природной среды, социальным и техногенным трансформациям/ М. 2010, с. 245.*

*կառուցեցին: Բուլվարային հետաքրքիր միջավայր էր ստեղծված, տոնավաճառներ էին կազմակերպվում, մի հատ տոնակատարություն էր: Միրահարվել էի Գյումրուն,-ասում է նա: Արհեստների քաղաք է, իսկ երբ արհեստը արդեն պաթոլոգիայի է հասնում, դրանից վեր արվեստն է ծնվում»:*[237]

Ինչպես տեսնում ենք բնությունը մեծ ազդեցություն է ունենում մարդու ինքնազգացողության վրա, քանի որ նա բազմակողմանիորեն կապված է բնության հետ, կարելի է ասել, բնության մի փոքրիկ մասնիկն է: Բնությունից կախվածության հուզական զգացումը ենթագիտակցորեն ապրում է մարդու մեջ, բնության գործոնները հզոր բարենպաստ ազդեցություն են գործում մարդու հոգեկան, ֆիզիկական վիճակի եւ տրամադրության վրա: Միաժամանակ մեծ վնաս են հասցնում մշակութային լանդշաֆտի ազրեսիվ, բարձիթողի հատվածները: Հայտնի է, թե մարդու հոգեկերտվածքի վրա ինչ վատ ազդեցություն են թողնում կեղտոտ, քանդված փողոցներն ու անցուղիները, բակերում և շենքերի մուտքերի մոտ կուտակված աղբը, կիսակառույցները կամ կիսավեր կառույցները, արհեստական լճակները, որոնք վերածվել են կեղտոտ ճահիճների, աղբի հավաքատեղիի վերածված այգիները, զբոսայգիները և պուրակները:[238] Ցավոք նման պատկերներ այսօր էլ կարելի է տեսնել Գյումրիում և Վանաձորում. դեռևս կանգուն են երկրաշարժից ավերված բազմաթիվ շինություններ, ամայացած ու աղբակույտերով լի այգիներ, չգործող շատրվաններ և աղետի այլ հետևանքներ, որոնք խաթարում են վերականգնվող քաղաքի ճարտարապետական դեմքը: Իսկ տնակային թաղամասերը ապամշակութային լանդշաֆթի դասական օրինակ են, որոնց միջավայրում տասնամյակներ շարունակ ապրող մարդն

---

[237]https://www.armenianow.com/hy/society/the_spitak_quake/50443/spitak_earthquake_gyumri_culture

[238] *Бгажноков Б. Х., նշվ. աշխ., էջ 251:*

այլևս ուրիշ կերպ է ընկալում մշակույթը: Նման իրավիճակը վանաձորցի երիտասարդը բնութագրում է հետյալ կերպ. *«Վանաձորը դեպրեսիվ քաղաք է: Կանգուն են չշահագործվող գործարանների ավերակները: Ամեն օր կիսաքանդ շենքեր տեսնելը ոչ միայն բացասաբար է ազդում մարդու տրամադրության վրա,այլև ծանր է անդրադառնում հանրության ու մշակույթի վրա»:*[239] Այստեղից եզրակացություն, որ անհրաժեշտ է բարելավել կենսական միջավայրի ցուցանիշները ոչ միայն բժշկական ու կենսաբանական, այլև բարոյա-հոգեբանական տեսանկյունից, որպեսզի մարդկանց մեջ առաջանա երջանկության, հարմարավետության և ապագայի նկատմամբ վստահության հնարավորինս ամենաբարձր զգացում:

Աղետի գոտու, ինչպես և անցումային շրջանում գտնվող այլ քաղաքների ամենաբնորոշ գծերից մեկն այն է, որ այստեղ մի կողմից դեռևս գործում են նախկին սոցիոմշակութային արժեքներն ու նորմերը, մյուս կողմից հասարակական կյանքի վրա սկսում են ազդեցություն թողնել նաև նոր՝ դեռևս վերջնական որակական որոշակիություն չստացած սոցիոմշակութային կարգավորիչները: Նման դեպքերում առկա սոցիալականացված մշակույթը բախվում է այն միջավայրի հետ, ուր գործում են վարքի այլ շարժառիթներ ու սկզբունքներ: Ընդ որում, նոր մշակույթի ազդեցությունը կարող է պայմանավորված լինել ինչպես մշակութային գլոբալիզացիայի, այնպես էլ «ավանդական» կենսաձևի նորացման արդյունքում առաջացած սոցիալական փոփոխություններով: Մարդիկ հայտնաբերում են, որ իրենց նոր գործելակերպը հակասում է նախորդ սոցիոմշակութային նորմերին: Եվ քանի դեռ նոր կենսակերպը չի ամրագրվել նոր մշա-

[239] *https://www.civilnet.am/news/2017/03/30/*

կութային նորմերում, ավանդական մշակույթը կորցնում է ինքնըս-տինքյան ենթադրվող լինելու իր հատկությունը՝ վերածվելով պրոբ-լեմատիկի, պարտադրվողի և հնացածի:[240]

## *Արվեստն ու գեղարվեստական արհեստագործությունը հետաղետյան Գյումրու բնակչության հարմարվողականության գործընթացներում*

Հզոր մշակույթը ցանկացած հասարակության մեջ կարգա-վորում և բավարարում է անհատի հումանիտար, գեղագիտական և նեղ առումով հոգևոր պահանջմունքները: Այս առումով Գյումրին ևս բացառություն չէ, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ երկար ժամանակ քաղաքը համարվել է Արևելյան Հայաստանի մշակութա-յին կենտրոն, քանզի և' նախախորհրդային, և' խորհրդային շրջանում քաղաքն աչքի էր ընկնում իր մշակութային բազմապիսի ձեռքբե-րումներով, աշխույժ մշակութային կյանքով և հայտնի գործիչներով: Նշված ժամանակաշրջանում հայ ինտելեկտուալ և մշակութային ընտրանու մի զգալի մասը Գյումրի-Ալեքսանդրապոլ-Լենինականի ներկայացուցիչներ էին: Սակայն ձեռքբերումները չէին սահմանա-փակվում միայն անհատներով, դրանք առկա էին մշակույթի բոլոր ասպարեզներում՝ կինո, թատրոն, գրականություն, ճարտարապե-տություն, երաժշտություն, կերպարվեստ, ժողովրդական արվեստ, ինչպես նաև կրթության ոլորտ:

[240] *Ա.Ղարագուլյան, Սոցիոմշակութային անորոշությունը տրանսֆորմացիոն գործ-ընթացների համատեքստում //Անցումային հասարակություն. Սոցիոմշակու-թային փոխակերպումներ, ժողովածու, Երևան, Նոյյան տապան, 2002, էջ 89-104:*

1960-1980-ական թթ. բնակչության բարեկեցության աճը պայմաններ ստեղծեց քաղաքային բնակչության նոր կերպարի ձևավորմանը. դա ինքնահաստատված, կայուն կենցաղով ապրող, իր աշխատանքային ու հանգստի ժամանակը կազմակերպող, ընտանիքում ու հասարակության մեջ իր որոշակի դիրքն ունեցող լենինականցին էր: Պատահական չէ, որ երկրաշարժից հետո բնակչության հիշողության մեջ քաղաքը պահպանվել է որպես «դրախտային» բնակավայր, որտեղ ամեն ինչ կանոնակարգված էր, կյանքը ընթանում էր իր բնական հունով (երեխաները գնում էին մանկապարտեզ, դպրոց, մեծերը՝ աշխատանքի) և բոլորը երջանիկ էին ու անհոգ, որովհետև բոլոր քաղաքացիներն ունեին իրենց սիրած զբաղմունքները և հարգանք էին վայելում հասարակության մեջ:[241]

Երկրաշարժն, ինչպես նշվեց, ավերեց ոչ միայն քաղաքը, այլև խախտեց քաղաքային մշակույթի համակարգը: Փոփոխությունների մի մասը կրեց ժամանակավոր, անցողիկ բնույթ և ընկրկեց հաստատուն ավանդույթների առջև, իսկ մյուս մասն էլ, հարմարվելով նոր իրապայմաններին, սկզբում շերտավորվեց, հետո էլ միաձուլվեց եղածի հետ՝ նոր երանգ տալով ավանդութային հիմնակմախքին: Հետևելով ավանդույթների փոփոխման բնույթին՝ կարելի է նշել, որ թե' երկրաշարժը, թե' նոր տնտեսաձևին անցնելու ընթացքը զգալիորեն անդրադարձան և անդրադառնում են արդի մշակույթի ձևավորման վրա: Կենցաղի տարբեր ոլորտներում կատարված փոփոխությունները նշանակալիորեն ներազդեցին որոշ իմաստով հաստատուն դարձած ընդհանուր մշակույթի վրա՝ երբեմն խարխլելով ու վերացնելով կարծես մնայուն համարվող ծեսերն ու սովորությունները, իսկ երբեմն էլ վերականգնելով արդեն մոռացված ավանդույթները:

[241] *Г.Шагоян, Город как рай и рай как город (о некоторых восприятиях Гюмри до и после землетрясения), ՇՊՄԺ հանրապետական յոթերորդ գիտական նստաշրջանի նյութեր, էջ 179-184, Գյումրի, 2007:*

Ավանդույթների և սովորությունների մեջ դիտվում են նաև այնպիսի փոփոխություններ, որոնք հնի և նորի երբեմն ոչ ներդաշնակ սինթեզումն են:[242]

Ինչպես արդեն նշվեց, աղետից անմիջապես հետո առաջնայինը ծանր հոգեբանական վիճակից մարդկանց դուրս բերելն էր: Հոգեբանական տրավմայի բարդության աստիճանը որոշվում է հոգեբանական պաշտպանության մեխանիզմների զարգացման յուրահատկություններով և այն վարքագծային ունակություններով, որոնք կապված են անհատի կողմից հոգետրավմատիկ իրադրության ակտիվ հաղթահարման, ինչպես նաև արտաքին աջակցության գործոնների (այլ մարդիկ, մասնագետներ, տարբեր կազմակերպություններ) առկայությամբ կամ բացակայությամբ: Հոգեկան տրավման կամ տրավմատիկ սթրեսը հետսթրեսային տարբեր խանգարումների զարգացման հիմնական գործոնն է: Համաձայն հոգեկան հիվանդությունների միջազգային դասակարգման մեջ նշված հատկանիշների՝ նման վիճակը դասվում է ոչ հոգեկան, այսպես կոչված նևրոտիկ խանգարումների խմբի այն ենթախմբին, որը բնորոշվում է որպես «ծանր սթրեսի հակազդեցություն և հարմարվողականության խանգարում»:[243]

Նման դեպքերում, այսինքն հետաղետյան արտակարգ պայմաններում, երբ մարդն ապրում է բարձր նյարդային լարվածություն, մեծ նշանակություն է ստանում հոգեկան ադապտացիայի ունակու-

---

242 *Սեղբոսյան Կ., Ավանդների վերափոխման բնույթը Գյումրիում, Արդի էթնոմշակութային գործընթացները Հայաստանում, Հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումների հիմնադրույթներ, Երևան 1997, էջ 41:*

243 *Копытин А.И. Методы арт-терапии в преодолении последствий травматического стресса. https://cogito-shop.com/blog/?page=post&blog=main&post_id=kopytin-ai-metody-artterapii-v-preodolenii-posledstviy-travmaticheskog. Վերջին դիտումը 13.08.2018 թ.*

թյունը, իսկ հոգեկան կոնֆլիկտների հաղթահարման հատուկ ձև կարող է դառնալ արվեստը: Արվեստի ստեղծագործության ընկալումը բերում է ներքին լարվածության թուլացման, օգնում է վերականգնել հոգեկան հավասարակշռությունը: Արվեստի ցանկացած տեսակ կարող է լինել կամուրջ անհատի ներքին ու արտաքին աշխարհի միջև և որպես խոսուն հաղորդամիջոց՝ օգնել մարդկանց կապ հաստատելու միմյանց հետ, հաղթահարելու սթրեսները և հայտնաբերելու իրենց անհատականության տարբեր կողմերը: Նրա միջոցով հնարավոր է անհատի մոտ մնայուն, հիմնականում դրական հույզեր արթնացնել: Արվեստը մարդուն օգնում է ավելի լավ ինքնաարտահայտվել, ինքնադրսևորվել և ինքնաբացահայտվել: Արվեստն, այդպիսով, դառնում է անհատի հոգեկան գործընթացների չգիտակցված արտահայտման միջոց: [244]

Հոգեբանական սթրեսի հաղթահարման գործում մեծ դեր են կատարում նաև ստեղծագործական բնույթի աշխատանքները: Ստեղծագործելու ընթացքում անցնում է հուզական լարվածությունը, տեղի է ունենում հոգեկան լիցքաթափում: Ստեղծագործելու ձգտումը հաճախ այլ բան չէ, քան պաշտպանական մեխանիզմ, որը նվազեցնում և մեղմացնում է հոգեկան լարվածությունը, օգնում է վերացնել բացասական հույզերի ներգործությունը, ազատվել սթրեսային վիճակից, իսկ բուն ստեղծագործելու գործընթացը դրական ազդեցություն է ունենում անելանելիության զգացումը հաղթահարելու և ինքնագնահատականը բարձրացնելու վրա:

Այս բոլորից ելնելով է, որ հոգեբանության մեջ լայն կիրառություն է ստացել արվեստի միջոցով հոգեբանական խանգարումների բուժման այն եղանակը, որը ստացել է արտթերապիա անունը: Արտթերապիայի մեթոդը կարելի է վերագրել հուզական վիճակների

[244] *http://www.emergency.am/. Վերջին դիտումը 13.08.2018 թ.*

շտկման ամենահին և բնական մեթոդների շարքին, որից մարդիկ օգտվում են կուտակված հոգեկան լարվածությունից ազատվելու, հանգստանալու նպատակով: Այն մի կողմից հոգեբանության, իսկ մյուս կողմից արվեստի հիմքի վրա ձևավորված զարգացող ուղղություն է, որն իր լայն կիրառությունն է գտել ինչպես երեխաների, այնպես էլ մեծահասակների հետ հոգեթերապևտիկ, հոգեշտկող և ինքնաճանաչմանն ուղղված աշխատանքներում:

Արտթերապիայի գլխավոր նպատակը արվեստի միջոցով մարդու ինքնարտահայտումն ու ինքնաբացահայտումն է: Մարդիկ հաճախ են իրենց մեջ բացահայտում ստեղծագործական կարողություններ և արտթերապիայից հետո շարունակում են ինքնուրույն զբաղվել արվեստի տարբեր ձևերով: Հատկապես արդյունավետ է արտթերապիան երաժշտության զուգակցությամբ, քանի որ այն օգնում է ղեկավարել և բարելավել տրամադրությունը: Բացի դրանից երաժշտական թերապիան նվազեցնում է հիվանդագին սարսափները, վերականգնում է կապը շրջապատող միջավայրի հետ, վերացնում է նյարդային լարվածությունը և ընկճվածությունը: Արտթերապիան օգնում է աղեկվատ վարքի մշակմանը, ինքնագնահատման բարձրացմանը, դրական «Ես»-հայեցակետի ձևավորմանը: Արտթերապիան, բացի հոգեթերապևտիկ ծրագրերում ընդգրկելուց, լայնորեն կիրառվում է սոցիալ-վերականգնողական բնույթի տարբեր աշխատանքների շրջանակներում՝ նաև կլինիկապես և փաստացի առողջ մարդկանց հետ: [245]

Արտթերապիան մեծապես օգնել է նաև Գյումրու՝ հետաղետային ծանր սթրեսային վիճակում հայտնված բնակչության, ինչպես

[245] *Մ. Սարգսյան, Արտ-թերապիան որպես ստեղծագործական որոնում, Արդի հոգեբանության տեսական և կիրառական հիմնախնդիրները, N 2, Երևան, 2012, էջ 129-136:*

մեծահասակների, այնպես էլ երեխաների հոգեբանական վերականգնման ու հարմարվողականության գործընթացին: Արվեստի հետ շփումն ու արվեստով զբաղվելը գյումրեցիների ներքին պահանջմունքն է, նրանց էությունը, որը շատերի համար դարձավ ծանր իրականության հետ հարմարվելու, դժվարությունները հաղթահարելու և կյանքը շարունակելու հիմնական գործոններից մեկը: Այդ է վկայում հետևյալ իրողությունը, որի մասին պատմել է Շիրակի մարզպետի նախկին խորհրդական Հասմիկ Կիրակոսյանը.*«Երկրաշարժից 1 ամիս անց Սպիվակովի համերգն էր: Դագաղները դեռ քաղաքում դրած են, մարդ կա՝ դեռ իրա մեռելին չի գտել, լացում եմ, կըսեմ՝ մարդ չի գա: Սպիվակովը կըսեր՝ մի՛ք նեղվեք, մե քանի հոգի էլ էղնի՝ կնվագեմ: Մեկ էլ տեսնիմ՝ կամաց-կամաց դռների միջից, սև շալերով կանայք, սև տուլուպներով, փոշոտ տղամարդիկ գերեզմաններից զուքան ու զուքան: Սպիվակովի դեմքից արցունքները կերթային, կըսեր. «Տո էս ի՞նչ ժողովուրդ են, էս ի՞նչ քաղաք է, գերեզմանոցից՝ դահլիճ»: Ի՞նչ ծափերով դիմավորեցին... Այս տարվա համերգին տեսավ ծաղիկներով դահլիճ, սիրուն հագած մարդիկ, բայց ասաց. «Ամբողջ կյանքում էն օրը չեմ մոռանա»:*[246]

Մշակութային յուրօրինակ էներգիան Գյումրու բացառիկ այցեքարտն է: Քաղաքի գիտական և մշակութային գործիչները փաստում են, որ մշակույթը Գյումրիում կենդանի օրգանիզմ է, որը երկրաշարժից հետո ապրելու, շարունակվելու, արարելու և ստեղծագործելու ուժ տվեց աղետյալներին: Երկրաշարժից հետո շատ գյումրեցի արվեստագետներ արտերկրում էին, մշակութային կյանքը աննախադեպ անկում էր ապրում, բոլոր ուժերը մոբիլիզացվում էին

---

[246] *Արվեստը վերապրում է. Գյումրու կյանքի աղետալի փոփոխությունից մշակութային կյանքը չի ցնցվել* https://www.armenianow.com/hy/society/the_spitak_quake/50443/spitak_earthquake_gyumri_culture. *Վերջին դիտումը 13.08.2018 թ.*

միայն երկրաշարժի հետևանքները լիկվիդացնելու և վերականգնողական գործընթաց ծավալելու համար: Սակայն ժամանակի ընթացքում Գյումրի սկսեցին վերադառնալ երկրաշարժից հետո քաղաքից ստիպված հեռացած մտավորականները և արվեստագետները, ովքեր մշակութային նախաձեռնություններ և միջոցառումներ անցկացնելու մեթոդով փորձում էին նպաստել Գյումրու վերականգնմանը: Այսպես. երկրաշարժից մեկ տարի անց Գյումրիում բացվում է «Սթիլ» կերպարվեստի թանգարանը, որտեղ առաջին «մոդեռն արթ» ցուցահանդեսը անցկացնում են «դվիժոկով»: *«Քանդուքարափ քաղաք, մարդիկ՝ վշտի մեջ, գերեզմաններ կերթան, սիրտ ու հավես չունին ցուցահանդեսի, թանգարանի: Տնակներում կապրին, ժողովուրդը սոված է, ապազա չկա, լույս չկա, ու հանկարծ մե լուսավոր սրահի մեջ կտեսնին արվեստի գործեր, ընդ որում՝ մոդեռն արթ: Թանգարանը ստեղծվեց, որպեսզի ցույց տար, որ կյանքը շարունակվում է: Մենք չմեռանք, ով որ կենդանի է, կլցնե նաև մեռածների տեղը: Ըսիգ կյանք էր, էս թանգարանը, էս թատրոնը՝ ըսոնք կապացուցեն,որ կյանքը չմեռավ»,*- պատմում է թանգարանի տնօրեն Արտուշ Մկրտչյանը:[247]

1996թ. կայացավ Վազգեն Պահլավունի-Թադևոսյանի անհատական նախագիծ-ցուցահանդեսը՝ «Մետապոլիս-58», որը տևեց շուրջ մեկ տարի: Նույն թվականին կայացավ նաև Գնորգ Սարգսյանի «1+1+1+1» ցուցահանդեսը, ինչպես նաև «Աշտարակներ» նախագիծը, որը օգտագործում էր շինհրապարակները և լքված գործարանները իբրև ցուցադրության տարածք: Այս նախագծերը նախատիպ դարձան մի ավելի մեծ նախագծի համար: 1997 թ. ամռանը Գյումրիում

[247] *Արվեստը վերապրում է. Գյումրու կյանքի աղետալի փոփոխությունից մշակութային կյանքը չի ցնցվել*

անցկացվեց ավանգարդիստ-արվեստագետների հավաք, որին մասնակցեցին նկարիչներ, լուսանկարիչներ, պոետներ, երաժիշտներ Գյումրիից և Երևանից: Այս բոլորի հիման վրա 1996-1997 թթ. հիմնադրվեց Գյումրու ժամանակակից արվեստի կենտրոնը, որը նպատակ ուներ որոշակի խնդիրների և դրանք լուծելու համար ստեղծել հատուկ մշակված քաղաքականություն՝ մշակութային քաղաքականություն, որի արդյունքը դարձավ Գյումրիի միջազգային Բիենալեն:[248]

Բիենալեն առաջին անգամ կազմակերպվել է անցած դարի վերջին Վենետիկում: Այն հրավիրվում է երկու տարին մեկ անգամ՝ սովորաբար արհավիրք տեսած վայրերում, տվյալ քաղաքի հիմնախնդիրները բարձրացնելու,միջազգային կապեր հաստատելու, զարգացման հետագա ուղիներ կանխորոշելու նպատակով: Պատահական չէ, որ Գյումրու երկրորդ Բիենալեի նշանաբանն էր «Անցում զրոյական կետ»: Մարդկությունը հասել է իր գոյության սահմանեզրին, որից հետո նա դեռևս չգիտի՝ ուր է գնում: Բազում տարերային աղետներն ու կատակլիզմները կարծես հավաստում են Ապոկալիպսիսին ու Նոր Գալստյան մոտալուտ սպասումները: Մյուս կողմից՝ ժամանակն է վերագտնելու մարդկանց միջև կտրված կապը՝ արժևորելով նոր բովանդակությամբ ու չափանիշներով: Աղետյալ Գյումրին այն վայրն էր, որտեղ այս հարցերը հնչում էին առավել սուր և հրատապ՝ պահանջելով հիմնավոր ու համոզիչ պատասխաններ:[249] Սրանով էլ պայմանավորված Բիենալեն դարձավ պարբերական միջոցառում, որը շարունակվում է մինչ օրս:

Նույնը կարելի է ասել թատրոնի մասին: Դերասանուհի Անահիտ Քոչարյանը հիշում է. *«Երկրաշարժից հետո մեր թատրոնի*

---

*[248] https://arvestabanots.wordpress.com/2011/08/21. Վերջին դիտումը 13.08.2018 թ.*

*[249] Ա. Մարգարյան, Երկրորդ միջազգային Բիենալեն Գյումրիում, ՇՊՄԺ հանրապետական չորրորդ գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, 2000, էջ 60-61:*

*կազմն ամբողջովին տեղափոխվեց Երևան: Մեկ տարի անց վերադարձանք Գյումրի՝ Շեքսպիրի «Սիրո ապարդյուն ճիգերը» ներկայացմամբ: Փորձել էինք մի քիչ ավելի ուրախ ներկայացում անել: Վախով էինք սպասում առաջին օրվան. և՛ կորստի վիշտն էր թարմ, և՛ քաղաքն էր ավերակ: Ո՞նց պետք է ընդուներ հանդիսատեսը, կգա՞ր, թե՞ ոչ: Բայց պատկերացրեք՝ վարագույրը բացվեց և լեփ լեցուն դահլիճ* տեսանք:»[250]

Հասմիկ Կիրակոսյանի վկայությամբ երկրաշարժից հետո մշակույթում մեծացավ պրոֆեսիոնալիզմը: *«Ի հեճուկս բնության արհավիրքի՝ մշակույթը կարծես ավելի ուժեղացավ, որ պահի ժողովրդին: Երկրաշարժից հետո պակասեցին ինքնագործ խմբերը՝ կապված արտադրական մակերեսների ոչնչացման հետ: 1988-ից հետո ավելացան պետական նվագախմբերը՝ սիմֆոնիկ, ժողովրդական, այսօր արդեն թանգարանների թիվը հասնում է 9-ի, ավելացել են պրոֆեսիոնալ խմբերը»:*[251] Հետերկրաշարժյան Գյումրիում գործող թանգարանների շարքը համալրեցին համայնքապատկան երկու՝ Հովհաննես Շիրազի և Մհեր Մկրտչյանի տուն թանգարանները:

Գյումրու մշակութային կյանքում նշանակալի դերակատարում ունեցավ «Գոհար» սիմֆոնիկ նվագախումբը և երգչախումբը, որը հիմնադրվեց բեյրութաբնակ Խաչատուրյան ընտանիքի կողմից: 1996 թ. Գոհար Խաչատրյանն (Խաչատուրեան) այցելեց Հայաստանի այն շրջանները, որոնք տուժել էին երկրաշարժից և որոնք դեռ գտնվում էին ոչ նպաստավոր նյութական և հոգևոր վիճակում:

---

[250] *Փաստորեն թատրոնը փրկեց մեր կյանքը, Անահիտ Քոչարյանը 1988 թ. Գյումրու աղետի մասին. https://www.aysor.am/am/news/2015/12/07/. Վերջին դիտումը 13.08.2018 թ.*

[251] *https://www.armenianow.com/hy/society/the_spitak_quake/50443/spitak_earthquake_gyumri_culture.*

Տեսնելով այդ պայմանները, նա որոշեց աշխատանքի հնարավորություն ստեղծել մարդկանց համար։ 1997-1999 թթ. նրա որդիներ Հարութ, Շահե և Նառ Խաչատրյանները Գյումրու կենտրոնում կառուցեցին մշակութային համալիր, որտեղ սկզբում բնակություն հաստատեցին երկրաշարժից դեռ անօթևան մնացածները։ 1999 թ. իր գործունեությունն սկսեց նաև «Գոհար» երաժշտանոցը, որտեղ աշխատում էր մոտավորապես 20 ուսուցիչ և անվճար սովորում մոտ 100 ուսանող, որոնց երաժշտական գործիքները սովորելու տարիներին տրվում էր անվճար։ 2000 թ. հիմնադրվեց Գոհար սիմֆոնիկ նվագախումն ու երգչախումբը Սեպուհ Աբգարյանի գլխավորությամբ։ Համույթը համերգներով հանդես է գալիս ոչ միայն Հայաստանում, այլև սփյուռքահայ օջախներում։

Քաղաքի մշակութային մթնոլորտի ձևավորմանը մեծապես նպաստում են երկրաշարժից հետո ստեղծված Երևանի պետական երաժշտանոցի, Կինոյի ու թատրոնի պետական և Գեղարվեստի ինստիտուտների առկայությունը, որոնք տեղավորված են Լ. Ճգնավորյանի հանգանակությամբ վերանորոգված շենքում։

Չնայած սոցիալ-տնտեսական վատ պայմաններին՝ Գյումրու արվեստի դպրոցներն ու գրադարանները լեցուն են աշակերտներով։ Գյումրեցիները կարևորում են հոգևոր արժեքների նշանակությունը երեխաների դաստիարակության գործում։ Մերկուրովի անվան նկարչական դպրոցի վատ պայմաններում տասնյակ երեխաներ են սովորում։ Դպրոցի տնօրեն Սամվել Գալստյանը ասում է, որ ուժեղ սերունդ է գալիս՝ ուժեղ ինքնարտահայտմամբ։ *«Զարմացած եմ էս ջահելների մտածողության վրա, ֆանտաստիկ բաներ են մտածում,*

*էն որ շունչդ կտրվում է, էն որ տիեզերական է լինում*»,- ասում է Գալստյանը: [252]

Հետերկրաշարժյան Գյումրու գիտա-մշակութային կյանքում նշանակալի եղավ 1994-ի աշնանը կիսավերակ Գյումրիում Շիրակի Երկրագիտական թանգարանի մի փոքր խումբ երիտասարդ գիտնականների կողմից «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» խորագրով հանրապետական առաջին գիտաժողովի անցկացումը: Ի հեճուկս բոլոր դժվարությունների, մթի ու ցրտի, անտեսելով բարդությունններն ու ամեն տեսակի անհարմարությունները, Գյումրի հրավիրվեցին հանրապետության մի քանի տասնյակ հայտնի հայագետներ՝ քննարկելու Շիրակի պատմամշակութային ժառանգության գիտական ուսումնասիրության վիճակը: Գիտաժողովի հաջողությունն աներկբա էր, Գյումրին էլ առաջին հերթին ինքն իրեն ու ապա նաև բոլորին ապացուցեց, որ չի մարել այստեղ ո՛չ գիտության լույսը, ո՛չ վաղվա օրվա հավատը: 1994թ-ից մինչ օրս Գյումրիում ավանդաբար գումարվող «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» հեղինակավոր գիտական նստաշրջաններն ակնառու երևույթ դարձան ոչ միայն Գյումրու, այլև հանրապետության գիտական ու մշակութային կյանքում և էապես նպաստեցին Գյումրիում ակադեմիական հումանիտար կառույց ունենալու վաղեմի ու չարչրկված հարցի վերակենդանացմանը: 1997 թ.-ի կեսերից սկսեց գործել առաջին տարիներին Հնագիտության և ազգագրության ինստիտուտի մասնաճյուղ հանդիսացող, իսկ 2002 թ.-ից ինքնուրույն գործող Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնը, որը մեր երկրում առայսօր միակ ակադեմիական հումանիտար կառույցն է մայրաքաղաքից դուրս:

---

[252] *https://www.armenianow.com/hy/society/the_spitak_quake/50443/spitak_earthquake_gyumri_culture.*

Կենտրոնում, բացի գիտական ուսումնասիրություններից, բազմաթիվ ծրագրեր են իրականացվում Շիրակի պատմության ու մշակույթի հանրահռչակման ուղղությամբ: Դրանցից հիշատակության են արժանի Տեառնընդառաջի համաքաղաքային ազգագրական տոնակատարության և «Հացի տոն» մարզային ազգագրական փառատոնի կազմակերպումը, որն արդեն ավանդական է դարձել Գյումրիում:[253]

Գյումրեցիների ստեղծագործական ունակությունները չեն սահմանափակվում միայն արվեստի հիշյալ ոլորտներով: Իր ստեղծումից մինչ օրս Գյումրին հայտնի է նաև որպես արհեստավորական քաղաք՝ իր նշանավոր արհեստավորական գերդաստաններով: Պատահական չէր, ուստի, որ արհեստները, որոնք խորհրդային տարիներին հետընթաց էին ապրել, երկրաշարժից հետո նոր զարգացում ստացան: Ընդ որում ստեղծագործող վարպետներից շատերը աշխատում էին ոչ այնքան տնտեսական և կենցաղային խնդիրների լուծման, որքան ներքին հոգեկան պահանջները բավարարելու համար: Ըստ Գյումրու ժողվարպետների միության նախագահ Սամվել Հովհաննիսյանի՝ 1980-90 ական թթ. քաղաքում կային մոտ 900 վարպետներ: Հետագա «ցուրտ ու մութ» տարիներին, սոցիալ-տնտեսական ծանր պայմանների բերումով շատերը նաև հեռացան քաղաքից, կամ դադարեցին ստեղծագործելուց, սակայն այսօր էլ գործում են բազմաթիվ վարպետներ, որոնք իրենց աշխատանքները ներկայաց-

[253] Հայրապետյան Ս., Շարունակվող երթ, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» հանրապետական յոթերորդ գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2007, էջ 3-6:

նում են Ռիժկով փողոցի հուշանվերների վաճառատանն ու Գյումրիում պարբերաբար կազմակերպվող ցուցահանդես-տոնավաճառներում։ [254]

Գյումրու գեղարվեստական արհեստագործության ու արվեստների առաջին տոնավաճառը, կամ, ինչպես ժողովուրդն է ասում՝ վերնիսաժը, կազմակերպվել է 2012 թ. հունիսի 30-ին «Սրբազան հող» բարեգործական ՀԿ կողմից, որի նախագահ Սուսաննա Էլբակյանի հավաստմամբ դարձել է Գյումրու ժողվարպետների ու արվեստի գործիչների ստուգատես։ Սբ. Ամենափրկիչ եկեղեցուն հարակից տարածքում անցկացվող ամենամյա ցուցահանդես-վաճառքը շատ վարպետների համար ոչ այնքան իրենց աշխատանքները իրացնելու, այլ հայրենակիցներին իրենց ստեղծագործությունները ներկայացնելու, կարծիքներ լսելու ու փոխանակելու, գնահատվելու ու ճանաչվելու նպատակ է հետապնդում։ [255]

Գյումրիում ապրող ու ստեղծագործող վարպետներից, որոնք չեն վաճառում իրենց աշխատանքները, հիշատակության է արժանի ուլունքագործ Գրիգոր Դրմեյանը, որը մասնագիտությամբ ձնարար է, արհեստը սովորել է ինքնուրույն, երբ երկրաշարժից հետո բուժման նպատակով մեկնել է ԱՄՆ։ Ժողվարպետը գտնում է, որ դա աստվածատուր շնորհք է։ Սկզբում նա զբաղվել է ասեղնագործությամբ, իսկ հետո ուլունքագործությամբ։ Պատրաստում է դեկորատիվ պաննոներ հիմնականում աստվածաշնչյան և ազգային թեմաներով։

Ինքնուս ասեղնագործող է նաև Լիլիա Պետրոսյանը, որն իր ստեղծագործական ձիրքը ժառանգել է ծնողներից։ Հայրը փայտի

---

[254] *Շիրակի արդի արհեստները (2012 թ. դիտանցման նյութեր)։ Դիտանցումն իրականացվել է ՀՀ մշակույթի նախարարության «Հովհ. Շարամբեյանի անվ. Ժողովրդական ստեղծագործության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից։*

[255] *Տե՛ս «Գյումրին է քաղաքը արհեստի ու արվեստի» ֆիլմը, հեղինակ Արփինե Թամրազյան, Ցայգ հեռուստաընկերություն, 2009 թ։*

փորագրությամբ է զբաղվել, իսկ մայրը եղել է քաղաքի հայտնի դեր-ձակուհիներից մեկը, որը նաև ասեղնագործել է: Տիկին Լիլիան նույ-նիսկ ժողվարպետի կոչում չունի և չի էլ ձգտում դա ստանալ, քանի որ աշխատում է իր հաճույքի համար: Նա, իր վկայությամբ, փոքր հա-սակից է գործել և իր պատրաստած սեղանի սփռոցները, բարձի երեսներն ու այլ իրեր մեծ քանակությամբ նվիրել է մտերիմներին: Հետերկրաշարժյան տարիներին սկսել է զբաղվել խաչկար ասեղնա-գործությամբ, որի միջոցով վերարտադրում է գեղարվեստական կտավներ, որոնք ևս չի վաճառում, այլ նվիրում է հարազատներին:[256]

Եթե մեծահասակներն ինքնուրույն են ընտրել ժողովրդական արվեստով զբաղվելն ու այդ կերպ ինքնարտահայտվելը, ապա երե-խաներին այդ հարցում օգնում են Գյումրու մի շարք կազմակերպու-թյուններ և մասնավորապես Գյումրու «Ընտանիք» բարեգործական հասարակական կազմակերպությունն ու դրան կից ստեղծված «Ըն-տանիք» մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն ՊՈԱԿ-ը:[257] «Ընտանիք» բարեգործական կազմակերպությունը հիմնադրվել է 1990 թ. և առաջինն էր հետաղետյալ Գյումրիում, որ ձեռնամուխ եղավ դեռահասների հիմնահարցերով զբաղվելուն: Կազմակերպու-թյունն իր առջև նպատակ է դրել նպաստել ծնողազուրկ, հաշման-դամ, սոցիալապես անապահով, հատուկ դժվարություններ ունեցող և բազմանդամ ընտանիքների երեխաների բարոյահոգեբանական վիճակի վերականգնմանը: Բարեգործական կազմակերպությանը կից, 1991թ-ին հիմնադրված «Ընտանիք» մանկապատանեկան ստեղ-ծագործական կենտրոն ՊՈԱԿ-ը ևս զբաղվում է Գյումրի քաղաքի դեռահասների հիմնահարցերով, սակայն ոչ թե բարեգործական, այլ

---

[256] *Կ. Բազեյան, Շիրակի արդի արհեստները (ըստ 2012 թ. իրականացված դիտանց-ման), ՇՀՀԿ Գիտական աշխատություններ, հ. 15, Գյումրի 2012, էջ 148-157:*

[257] *https://entanik.am/hy/. վերջին դիտումը 13.07.2018 թ.*

կրթադաստիարակչական բնույթի:Կենտրոնի գործունեության նպատակը սովորողների ազատ ժամանցի կազմակերպման միջոցով նրանց հետաքրքրությունների զարգացման համար պայմանների ստեղծումն է, նրանց հոգևոր, ստեղծագործական ունակությունների, գեղագիտական, բնապահպանական և կիրառական գիտելիքների ձևավորումը: Կենտրոնի հիմնական նպատակն է մինչև 18 տարեկան սովորողների ստեղծագործական ունակությունների զարգացումն ու նպատակային զբաղվածության ապահովումը՝ արհեստի ու արվեստի խմբակներում տարվող բազմաբնույթ աշխատանքի և ուսուցման միջոցով: Կենտրոնում դասավանդում են գեղանկարչություն, փայտի գեղարվեստական փորագրություն, խեցեգործություն, արծաթագործություն, գորգագործություն և կարպետագործություն, ասեղնագործություն և ժանեկագործություն, կարուձև:

Նույն գործունեությունն է իրականացնում նաև Գեղագիտության ազգային կենտրոնի Գյումրու մասնաճյուղը, որը հիմնադրվել է 1978թ. ԳԱԿ-ի հիմնադիր, արվեստաբան Հենրիկ Իգիթյանի առաջարկով և Ռոբերտ Արզումանյանի աջակցությամբ, գեղանկարիչ, ՀՀ նկարիչների միության անդամ պրոֆեսոր Սուսաննա Մկրտչյանի մինչ օրս տնօրինությամբ: Կազմակերպությունը գտնվում է քաղաքի կենտրոնում, որտեղ դասավանդում են մասնագիտական բարձրագույն կրթություն ունեցող մասնագետներ և մանկավարժներ: 32 տարուց ավելի կենտրոնի տարբեր խմբեր են հաճախում 3-18 տարեկան 300-400 սաներ ոչ միայն Գյումրի քաղաքից, այլ նաև հարակից գյուղերից ու շրջաններից: Կենտրոնի սաների ստեղծագործություններն ու ելույթները շրջել են աշխարհի շատ երկրներում՝ արժանանալով խրախուսանքների:

Այս կազմակերպություններն իրենց գործունեությամբ մեծապես նպաստում են երեխաների ու պատանիների գեղագիտական

դաստիարակությանը, ստեղծագործական ունակությունների զարգացմանը, ազգային արհեստների, Գյումրու հարուստ մշակութային ժառանգության պահպանմանը: Հաշվի առնելով Հայաստանի և հատկապես Գյումրի քաղաքի ներկայիս սոցիալ-տնտեսական պայմանները՝ այս կազմակերպությունների աշխատանքը առավել քան կարևոր դեր ու նշանակություն է ստանում երիտասարդ սերնդի սոցիալականացման գործում:

Որպես վերջաբան բերենք Գյումրու մտավորականների հետևյալ միտքը․ «Ինչ խոսք, ազգային ծեսերն ու տոները, ժողովրդական արհեստներն ու արհեստավորական ավանդույթների պահպանումը նպաստում են բնակչության հոգեկան հավասարակշռմանը, հզորացնում քաղաքի հոգեբանական պաշտպանական մեխանիզմները, ակտիվացնում ներքաղաքային մշակութային կյանքը, ստեղծում միջմշակութային հաղորդակցման հնարավորություն՝ նոր սերնդի մեջ դրական վերաբերմունք ձևավորելով ավանդական արժեքների հանդեպ և նպաստելով ավանդույթների փոխանցմանը: Թվում էր սթրեսը սպառեց խոնարհված քաղաքի հարմարվողական կարողությունները, բայց տոները և տոնական մշակութային դրսևորումները գյումրեցու կյանքում ինքնամաքրման ու ինքնահաստատման նշանակություն են ձեռք բերել: Ստեղծածար քաղաքը՝ ազգային ինքնություն ու արժեքներ կրող, իր պատմամշակութային ժառանգությամբ ու ավանդական մշակութային նկարագրով կարող է դառնալ ժամանակակից արվեստի միջազգային կենտրոն:»[258]

[258] *Կ. Սահակյան, Ռ. Հովհաննիսյան, Ստեղծարար քաղաքը՝ ազգային ինքնության ու արժեքների կրող (Գյումրու օրինակով), ՇՀՀԿ Գիտական աշխատություններ, 19 (2016), 160-163, էջ 163:*

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սպիտակի 1988թ. երկրաշարժն ու դրան հետևած սոցիալ-տնտեսական ճգնաժամը խախտեցին բնակչության հիմնական մասի կեցության հիմքերը, սոցիալական ինստիտուտներն ու ամբողջությամբ վերցրած հասարակական կյանքը:

- Աղետի գոտու բնակչության հիմնախնդիրները սկսվեցին երկրաշարժից անմիջապես հետո, երբ, անկախ իրենց կամքից, կտրուկ փոխվեց ապրելակերպը՝ խոչընդոտելով մարդկանց նորմալ կյանք վարելուն, ապագայի ծրագրեր կազմելուն, երեխաների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունք ձևավորելուն և այլն: Խզվեց կապը ժամանակների միջև, խաթարվեց սովորական դարձած սոցիալական միջավայրը, փոխվեց նաև շրջակա միջավայրը՝ անհնար դարձնելով ավանդական տնտեսավարումը:
- Դաշտային ազգագրական նյութի, սոցհարցումների ու թեմային վերաբերող բազմաբնույթ գիտական, տեղեկատվական նյութերի համադրմամբ իրականացված ազգաբանական հետազոտությունը ցույց տվեց, թե ինչպես է ընթացել նոր իրողությունների հետ Աղետի գոտու բնակչության սոցիալ-մշակութային ադապտացիան հետերկրաշարժյան քաղաքական և սոցիալ-տնտեսական ճգնաժամի պայմաններում: Հետազոտության արդյունքում արվել են մի քանի եզրահանգումներ:
- Հանրապետության անկախացումից հետո ընթացող սոցիալ-տնտեսական բարեփոխումների հետևանքով հասարակության սոցիալական կառուցվածքի բնույթի և ընդհանուր ձևի կտրուկ փոփոխությունը հանգեցրին ոչ միայն առարկայական, այլև արժեքային ու սոցիալական նոր շերտավորումների: Հայաստանի ամենաաղքատ, տնտեսապես առավել պասիվ և սոցիալապես ամենախոցելի մարզերը երկրաշարժից մինչ օրս Շիրակն ու Լոռին են: Աղքատությունն այստեղ դարձել է ապրելակերպ, նրան հարմարվելու մեխանիզմը՝ սոցիալական հավասարության, արդարության, կրթության և առողջապահության հավասար մատչելիությունից հրաժարումը, որը հանգեցրել է անձի սոցիալական նշանակության կորստի:

